

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА  
INSTITUTE OF ARTS NAS RA

---

# ԿԱՆԹԵՂ

## ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ

КАНТЕХ  
НАУЧНЫЕ ТРУДЫ

KANTEGH  
ARTICLES

4 (61)



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱՎԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2014

ՀՏԴ 001  
ԳՄԴ 72  
Կ 203

**Գլխավոր խմբագիր՝ Աննա Գ. ԱՍԱՏՐՅԱՆ**

**Խմբագրական խորհուրդ**  
**ԱՂԱՍՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ, ԳԱՍՊԱՐՅԱՆ**  
**Սեդա, ԶԱՔԱՐՅԱՆ Անուշավան, ԽԱՌԱՏՅԱՆ Ալբերտ, ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ,**  
**ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ, ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն, ՄԵԼԲՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ**  
**Մանե (գլխավոր խմբագրի տեղակալ), ՅՈՒՐԵՎԱ Տառյանա, ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ,**  
**ՊՈԿՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա, ՊՈՂՈՍՅԱՆ Գևորգ, ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն,**  
**ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

**Главный редактор Анна Г. АСАТРЯН**

**Редакционная коллегия**

**АГАСЯН Арарат, АВETИСЯН Павел, АРЗУМАНЯН Лилит, АСПАТЯН Мурад,**  
**ГАСПАРЯН Седա, ЗАКАРЯН Анушаван, КАЗАРЯН Виген, МЕЛКОНЯН Ашот,**  
**МКՐՏՉԿԿԿԿ Մանե (заместитель главного редактора), НЕРСИՏԿԿԿ Աշոտ, ՕԳԱՆԵՏԿԿԿ**  
**Գենրիկ, ՕԳԱՆԿԿԿ Կադժիկ, ՍՕԳՕՏԿԿԿ Գեվորգ, ՍՕԿՐՕՎՏԿԱՅԱ Նադեժդա, ՏԱԱԿԿԿԿ**  
**Արմեն, ՏԱՐԳՏԿԿԿ Լեվոն, ՄԱՐԱՏԿԿԿ Ալբերտ, ՄՕՐԵՎԱ Տաթյանա**

**Editor-in-Chief Anna G. ASATRYAN**

**International Editorial Council**

**AGHASYAN Ararat, ARZUMANYAN Lilit, AVETISYAN Pavel, GASPARYAN Seda,**  
**GHAZARYAN Vigen, HASRATYAN Murad, HOVHANNISYAN Henrik, KHARATYAN Albert,**  
**MELKONYAN Ashot, MKRTCHYAN Mane (Deputy Editor-in-Chief), NERSISYAN Ashot,**  
**OHANYAN Kadjik, POGHOSYAN Gevorg, POKROVSKAYA Nadejda, SAHAKYAN Armen,**  
**SARGSYAN Levon, YURIEVA Tatiana, ZAKARYAN Anoushavan**

Կանթեղ: Գլխական հոդվածներ /Գլխ. խմբ.՝ Ա.Ասատրյան. - Եր.:  
Կ 203 Աստղիկ, 2014.-336 էջ:

ՀՏԴ 001  
ԳՄԴ 72

---

---

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԿՆՈՋ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

### ԹԱՄԱՐԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Արևմտահայ գրականության մեջ 19-րդ դարի ութսունականները համարվում են գրական նոր զարթոնքի շրջան՝ չնայած այն հանգամանքին, որ Օսմանյան Թուրքիան կայսրությունում ապրող քրիստոնյա փոքրամասնությունների և մանավանդ ամենից խոցելի դարձած հայերի նկատմամբ գործադրում էր անհանդուրժողական քաղաքականություն: Թուրքական գրաքննությունը պարզապես արգելում էր այն ամենը, ինչը կարող էր ազգային համարվել, իսկ հայ, Հայաստան, Մակեդոնիա, հայրենիք, ազգ, հեղափոխություն, հավասարություն և այլ բառեր ոչ միայն արգելվում էին, այլև կարող էին ճակատագրական լինել հեղինակների կյանքի համար:

Մտքի և ոգու համատարած ճնշման և արգելքի մթնոլորտում գրականությունը և մամուլն էին հակազդեցիկ այն ուժերը, որոնք արևմտահայությանը հնարավորություն էին տալիս դիմագրավելու, տոկալու և պահելու ազգային դիմագիծը:

Իր բարձրության վրա էր հայ մամուլը, որը, գրականության և հրապարակախոսության ամբիոնը լինելով, իր շուրջը համախմբեց առաջադեմ հայ մտավորականներին: «Արևելք», «Հայրենիք» օրաթերթերը և «Մասիս» պարբերականը մեծ նշանակություն ունեցան գրական կյանքի և գեղարվեստական մտքի աշխուժացման գործում: Այս շրջանում էր, որ էական փոփոխություններ կրեցին գեղարվեստական մտածողությունը, գրականության ժանրային կազմը. ռոմանտիկական, զգայապաշտական և կենցաղային մանրաթեմա երկերի փոխարեն զարկ տրվեց ռեալիստական փոքր արձակին, որն իրականության ճշմարտացի պատկերումը՝ «կյանքը ինչպես որ է» սկզբունքի գործադրումով, համարում էր իր գերխնդիրը: Թեմաներն իրական կյանքից էին, իսկ հերոսները՝ գյուղացին, քաղաքացին, դերձակը, պանդուխտը, արհեստավորը: Ինչպես նշել է Մինաս Թեոլեոյանը. «Իրապաշտ շարժումի մեկնակետ կը նկատենք Պոլսո «Արևելք» օրաթերթի հրատարակության թվականը (1 հունվարի,

1884)»<sup>1</sup>: Հենց «Արևելքի» շուրջն էլ հավաքվել էր պոլսահայ իրապաշտ գրական մտավորականության տաղանդավոր մի սերունդ՝ Արփիար Արփիարյանը, Լևոն Բաշալյանը, Գրիգոր Զոհրապը, Մելքոն Կյուրճյանը, Տիգրան Կամսարականը և ուրիշներ, ովքեր իրենց գեղարվեստական գործերով ու քննադատական հոդվածներով հետևողական պայքար մղեցին արևմտահայ գրականության մեջ նոր գրական ուղղության ամրակայման և զարգացման համար: Դա գրական մի հզոր երևույթ էր, որը նրա գաղափարական առաջնորդների համոզմունքների և ստեղծագործական սկզբունքների շնորհիվ էլ կոչվեց 80-ականների իրապաշտական կամ ռեալիստական շարժում: Հակոբ Օշականն այդ գրողներին անվանում էր իրապաշտների սերունդ:

Ռեալիզմի մուտքը և հաստատումը գրական ասպարեզում միանգամից ու կտրուկ չեղան, այլ իրականացվեցին մեծ դժվարությամբ, որովհետև տևական էր մինչ այդ իշխող ռոմանտիզմի ազդեցությունը: Հին մեթոդի կողմնակիցներն ու ջատագովները ոչ միայն չէին խրախուսում ու ողջունում նոր գրական մեթոդի ի հայտ գալը, այլև անզիջում պայքար էին մղում նրա դեմ: Դեռևս Պարոնյանի ժամանակներում ռոմանտիզմն արդեն կորցրել էր իր երբեմնի հասարակական հնչեղությունը: «Հոսոսի ձեռատետրի», «Ազգային ջոջեր»-ի առաջաբաններում և «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի սկզբնամասում նա հետևողականորեն պայքարում էր արդեն իրենց պատմական դերը կատարած ռոմանտիզմի ու սենտիմենտալիզմի ուշացած դրսևորումների դեմ: Արդեն անթույլատրելի էր ժողովրդին կերակրել ռոմանտիկական սին երազանքներով ու լուսավոր ապագայի անիրականանալի սպասելիքներով և աչք փակել ու չխոսել իրականության աղաղակող հակասությունների, հասարակական, քաղաքական ու սոցիալական հրատապ լուծում պահանջող հարցերի շուրջ: Անմիջաբար կյանքին առնչվող ու նրանից բխող գեղարվեստ ստեղծելու նպատակադրումով էին թելադրված այդ գրողների ժողովածուների վերնագրերն անգամ. Արփիար Արփիարյան՝ «Կյանքի պատկերներ», Երովսան՝ «Կյանքին մեջ», Գր. Զոհրապ՝ «Կյանքը ինչպես որ է»:

Լ. Բաշալյանն ութսունականների գրական շարժման առաջամարտիկներից էր, ով իր գեղարվեստական արձակով, քրոնիկներով, հոդվածներով կարողացավ շոշափել ժամանակաշրջանի համար հրատապ կարևորություններկայացնող հարցեր: Բաշալյանը, սակայն, միանգամից չհայտնվեց ռեալիզ-

<sup>1</sup> Թեղեղյան Մ., Դար մը գրականություն, հ. Ա, Բոստոն, 1977, էջ 304: Minas Teoleo-leyan, Dar my grakanutyun, Hator A, Boston, 1977, ej 304:

մի մայրուղում, այլ ունեցավ անցման մի շրջան, երբ նրա գրած պատմվածքներում ու նորավեպերում ռեալիզմի տարրերն աստիճանաբար գերակշռող ու գերակա դարձան: Զարգացման այս ընթացքում Լ. Բաշալյանը ճիշտ ըմբռնեց ռեալիզմի խնդիրներն ու առանձնահատկությունները: Նա գրականության մեծագույն արժեքը համարում էր կյանքի ճշմարտացի արտացոլումը գեղարվեստական իմաստավորմամբ: Դրա խոստուն վկայությունն են նրա «Կյանքն ինչպես որ է», «Ժողովրդական գրականություն», «Կեղծ գրականություն» խորագրերով հոդվածները: Տեսական այդ աշխատություններում Լ. Բաշալյանը, առաջ քաշելով իրականության ճշմարտացի արտացոլման «կյանքն ինչպես որ է» ռեալիստական սկզբունքը, առաջարկում է գերծ մնալ կյանքի լուսանկարչական պատճենումից, խորանալ հերոս-միջավայր առնչությունների, իրերի, երևույթների պատճառահետևանքային հարաբերությունների մեջ, գեղարվեստական հիմնավորումով բացահայտել այնտեղ թաքնվածը, ծածուկը: Իսկ ինչ վերաբերում է գրական հերոսի կերպավորմանն ու մարդու ներաշխարհի բացահայտմանը, այդ կապակցությամբ նա հստակորեն գրել է. «Իսկական գրողը պետք է կարողանա արտաքին պատյանին տակ ներքին մարդը տեսնելու»<sup>2</sup>: Եվ իսկապես էլ իր գեղարվեստական արձակով Բաշալյանը գրականություն բերեց իրական մարդուն՝ իր թուլություններով, ներաշխարհի բոլոր վայրիվերումներով՝ գրողական մանրադիտակի տակ առնելով մարդու հոգու ամենածածուկ անկյունները: Դա գրողին հնարավորություն էր տալիս համակողմանիորեն ճանաչելու թե՛ տղամարդուն և թե՛ կնոջը՝ իրենց բնավորության ու ներաշխարհի յուրահատկություններով:

Կինը Աստծո ստեղծած ամենաառեղծվածային էակն է, ամենաանմեկնելին: Թափանցել կնոջ ներաշխարհը, տեսնել այնտեղ այն նրբագծերը, որոնք արտաքուստ մատչելի չեն սովորական ընթերցողի տեսողությանը: Մինչդեռ գեղագետ գրողն է ի զորու տեսածն ու զգացածը գեղարվեստական պատկերով հաղորդելու ընթերցողին, իսկ Բաշալյանը դա արել է վարպետորեն:

Անդրադարձ կատարելով Լ. Բաշալյանի փոքր արձակին՝ փորձեցինք մեր ուսումնասիրությամբ ցույց տալ, թե ինչպիսին է կինը այդ հեղինակի ստեղծագործություններում առհասարակ. կինը՝ իր բնական թուլություններով, իր արժանապատվությամբ, իր նվիրումով ու դավաճանությամբ, իր նյութեղեն և աննյութեղեն էությանը:

<sup>2</sup> **Բաշալյան Լ.**, Ժողովրդական գրականություն, «Հայրենիք», 1893, N 629: Bashalyan L., Joxovrdakan grakanutyun, «Hayreniq», 1893, N 629:

Ինքնատիպ են Լ. Բաշայանի պատումի եղանակը, ոճն ու կերպավորման արվեստը. իր նորավեպերում ու պատմվածքներում նա կնոջը պատկերել է տարբեր տեսանկյուններից: Նրա ներկայացրած կինը մեկ զսպված կիրք է, մեկ բուռն զգացմունքների տարափ, մեկ աղջկական այտերին հայտնված շիկնանք, ամոթ, մեկ արժանապատվություն է, հպարտություն, մայրական քնքուշ զգվանք, հոգատարություն: Բազմազան է կինը Բաշայանի ստեղծագործություններում՝ պարուրված գույների ու բույրերի անդիմադրելի խաղով: Կենդանի է, շարժուն և ամենակարևորը՝ բնական: Հեղինակի ներկայացրած կինը մարդկային արատներից ու թերություններից վեր կանգնած էակ չէ, որ կարող է միայն հիացմունքի ու ներշնչանքի աղբյուր լինել հեղինակի և ընթերցողի համար ու նրանց տեղափոխել երևութական, առօրյա միջավայրից կտրված մի աշխարհ: Լ. Բաշայանը, որ արդեն ռեալիզմի համոզված հետևորդն ու ջատագովն էր, չէր կարող ստեղծել մաքրագործված, բոլոր տեսակի թերություններից զերծ գրական կերպարներ. նրա առաջնահերթ խնդիրն էր վեր հանել կյանքի լավ ու վատ կողմերը, մարդկային հոգիներում գեղեցիկի կողքին ցույց տալ այլանդակն ու տգեղը:

Բաշայանի ներկայացրած կնոջը մենք տեսնում ենք սոցիալական տարբեր հարթակներում, կենսական տարբեր պայմաններում ու հանգամանքներում՝ թե՛ կյանքում իր տեղը գտնելու համար գոյության կոիվ տալիս, թե՛ հուսահատ անձնատրության ու ընկճվածության մեջ: Ընդ որում՝ որոշ պատմվածքներում կնոջը ներկայացնելիս նա չի ճանաչում ազգային սահմանափակում և չի պատկերում նրան ըստ ազգային յուրահատկությունների: Օրինակ՝ «Դրացուհին» պատմվածքի համակրելի անանուն հերոսուհու հույն լինելն իմացվում է միայն երկի վերջնամասում՝ նրա թաղման տխուր ծիսակարգն իրականացնող հույն հոգևորականների խռպոտ երգեցողությունից:

Լ. Բաշայանի տարազգի կին հերոսներին միավորում է կյանքը՝ իր բոլոր դրսևորումներով: Սոցիալական ծանր ու դժվարին պայմաններում հայտնըված ու դրանց դեմ մաքառող կինն է կերպավորված Լ. Բաշայանի «Դրացուհին», «Երկու կիներ», «Կաղանջեք» պատմվածքներում և «Զարթոնք» նորավեպում: Այս գործերում ներկայացված կանանցից յուրաքանչյուրի պայքարի միջոցները տարբեր են: Մեկը լուռ քարշ է տալիս իրեն բաժին հասած լուծը՝ գորշ իրականության մեջ փնտրելով հուսադրող մի շող, մյուսին կարիքը հանել է փողոց, որտեղ, մարմինը վաճառելով, օրվա մի կտոր հացն է վաստակում: Ոմանք էլ ծայրահեղ աղքատության ու կարիքի մեջ սրբորեն պահպանում են կանացի արժանապատվությունն ու հպարտությունը: Այս գործերում պար-

զորոջ ընդգծվում է ռեալիստ հեղինակի հետևյալ դիրքորոշումը: Բաշալյանն իր գրչակից ընկերներին խորհուրդ է տալիս. «...Սիրտ վարժեցնել ըմբռնելու բոլոր ցավերը, որ կան մարդկության մեջ, կարեկցելու բոլոր տառապանքներուն, անոնք որ դուրսեն կը տեսնվին և անոնք որ մութին մեջ կը կողկողին»<sup>3</sup>: Եվ նա մեկը մյուսի հետևից ընթերցողի համար բացահայտում է կնոջ հոգու ցավոտ անկյունները, մասնակիցը դարձնում նրա լուռ տառապանքին: Այժմ փորձենք այդ ամենը դիտարկել վերը նշված ստեղծագործությունների օրինակով:

Նուրբ ու քնքրույ արարած է «Դրացուիին» պատմվածքի անանուն հերոսուհին: Լուռ, ամբողջովին տարված իր գործով՝ նա ջերմեռանդորեն կար է անում. դա է իր գոյամիջոցը: Հերոսուհուն ճանաչում ենք պատմվածքի մյուս հերոսի՝ Միհրանի պատումից, որ մտերմաբար նրանից «կորզում» է հեղինակն ինքը: Գործողությունների ծավալվող շղթայում տեսնում ենք միայն պատուհանի քով նստած ու կար անելիս և միայն երբեմն Միհրանի հետ հեռահաղորդակցվելիս: Գործող գլխավոր կերպարի՝ Միհրանի պատումից, սակայն, կարողանում ենք պատկերացնել, որ կարիքն ու սոցիալական ծանր վիճակն են աղջկան դրդում անդադար աշխատելու: Այսպես է նկարագրում նրան Միհրանը. «Տասնհինգ տարեկան կար չկար, սիրուն, անուշ դեմքով. երեսը գույն չկար, ճիշտ իմ սիրածիս պես, քիչ մը նիհարկեք, խոշոր կապույտ աչվըներով. մազերը դեղին էին, բայց աչքի զարնոդ դեղին մը, ոսկիի գույն... Հիվանդի այնպիսի դեմք մը ուներ, որ առաջին անգամեն սրտիս դիպավ...»<sup>4</sup>: Հենց նրա՝ լուռ, ինքնամոռաց գործով տարված վիճակն է շարժում Միհրանի հետաքրքրությունը: Պարզ, մաքուր, աննյութեղեն կապ է ստեղծվում երկուսի միջև: Աղջիկը շարունակում էր կար անել, բայց «ասեղին մեն մի հարվածը մեկ-մեկ կաթիլ կպակսեցներ իր արդեն պակաս արյունեն»<sup>5</sup>: Բայց ահա մի չարաբաստիկ օր այդ արյան վերջին կաթիլն էլ է ցամաքում: Ու արևի հետ իր մայրամուտն է գտնում նաև այդ արևանման աղջիկը՝ կապույտ աչքերով ու ոսկեգույն վարսերով: Աշխարհը մթնում է Միհրանի համար: Այն աղջիկը, որ մահվան հանդերձներից ավելի էր ճերմակել ու գեղեցկացել, իր հետ տարել էր ամեն բան՝ սիրո նորափոթի ծիլերը, հոգու ամենանվիրական զգացումները: Այդ գեղեցկությունն ավելի է ընդգծվում նրան հաջորդող, նույն պատուհանի առջև նստող, դարձյալ ասեղը ձեռքին կար անող կապկանման մի աղջկա

<sup>3</sup> «Հայրենիք», 1894, N 983: «Hayreniq», 1894, N 983:

<sup>4</sup> **Թվատինցի**, Լևոն Բաշալյան. Առանձար, Երկեր, Երևան, 1982, էջ 289: Tikatinci. Levon Bashalyan. Arandzar, Erker, Erevan, 1982, ej 289:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 289: Nuyt texum, ej 289:

հայտնությամբ, որի հանդեպ, բացի կարեկցանքից, չի դրսևորվում որևէ դրական վերաբերմունք ո՛չ պատմող հերոս Միհրանի, ո՛չ էլ հեղինակի կողմից: Հերոսուհին անուն չունի. նա մեկն է այն հազարավոր աղջիկներից, որոնք լուռ կուլ են գնում սոցիալական ճահճին, մաքառում են, փորձում կառչել որևէ հույսից, բայց քչերին է հաջողվում ափ դուրս գալ, այդ ճահիճը ժամ առ ժամ ազնիվ հոգիներին քաշում տանում է իր գարշահոտ ընդերքները:

Բոլոր ռեալիստ հեղինակների համար առաջնահերթ կարևորություն ունի հերոս – միջավայր կապի ներդաշնակ պատկերման խնդիրը, որովհետև նրանք, ի տարբերություն ռոմանտիկների, ունեն հերոսի միջոցով միջավայրը պատկերելու գեղագիտական նպատակադրում:

Սոցիալական ծանր խնդիրների պատճառով կյանքի հատակը նետված մի կնոջ պատմություն է ներկայացված «Ձարթոնք» նորավեպում: Այս գործի կարևոր առանձնահատկություններից է Լ. Բաշալյանի այն տեսակետը, որ ռեալիզմը սահմանափակ տեղայնություն չունի: Ռեալիզմի որոշ տեսաբաններ այն կարծիքն էին զարգացնում, որ այս ուղղության հետևորդ հեղինակը նյութը անպայմանորեն պետք է վերցնի իրեն հարազատ ու քաջածանոթ միջավայրից: Լ. Բաշալյանը, որ հանգամանքների բերումով ապրել է ասիական ու եվրոպական տարբեր միջավայրերում, վեր է ռեալիզմի այսպիսի սահմանափակ ընկալումից ու մեկնաբանությունից: Նա գրականություն է բերում ոչ միայն հային ու հայկականը պատկերող գործեր, այլև մեծ վարպետությամբ կարող է ընթերցողին իր հերոսների հետ տեղափոխել իրեն ծանոթ ֆրանսիական միջավայր, որտեղ նա էլ կդառնա խելահեղ զվարճանքների մեջ եռացող Փարիզի մի մասնիկը: Նրան հայկականի հետ միասին հուզում է համամարդկային ցավը, ինչը և մենք տեսնում ենք «Ձարթոնք» նորավեպում: Պատկերվող գործողությունները ծավալվում են Փարիզում, որտեղ, մանավանդ ծննդյան տոներին ընդառաջ, ետում է կյանքը, և մի ներքին բնազդ ուղղորդում է դեպի վայելքը, որտեղ ամեն ոք ձգտում է դուրս գալ իր փակ անկյունից և խելագարի նման նետվել խլրտացող ամբոխի մեջ: Պատկերը տպավորիչ է. զվարճանում է ողջ Փարիզը: Բայց կյանքը նույն բարեհաճ այքով չի նայում բոլորին: Այս ցնձացող բազմության կողքին կան նաև թշվառներ, ովքեր, ինչպես հետո Ավ. Իսահակյանն է պատկերել «Նոր տարվա գիշերը Փարիզում» պատմվածքում, փողոցի անկյունում կանգնած, դողում են՝ կարոտ հանապազօրյա հացի: Այդ թշվառ մարդկանցից մեկն է «Ձարթոնք» նորավեպի հերոսուհին, ով, մարմինը վաճառելով, հազիվ քարշ է տալիս իր թշվառ գոյությունը: «Իր նայվածքը իմ նայվածքիս կհանդիպի: Աչքն է միայն կենդանի իր ամբողջ դեմքին վրա,-



գրում է հեղինակը, - խոշոր հիվանդ աչքեր, որոնց ճերմակը ախտավոր բան մը ունի կարծես, պտղած գիծերու պես, ու նայվածքը՝ անասունի ու մանկան նայվածքի միամիտ պարզությունն ունի, անգիտակից համակերպություն մը»<sup>6</sup>:

Ո՞վ էր այս կինը, որ լուռ համակերպվել էր իր զազրելի վիճակին: Կյանքի հատակը նետված այն հազարներից մեկը, ովքեր արդեն պայքարելու, կյանքին նոր ընթացք տալու ուժ չունեն: «Ուրկե՞ սկսելով, ի՞նչ թավալվոր վայրէջքով մը հասած է այդ աստիճանին,- չէ՛, այդ հատակին, ուրկե անդին ալ աստիճան չկա»<sup>7</sup>: Նա կին է՝ իր ապրումներով, իր կարոտով ու տխրությամբ: Կնոջ՝ դեպի մշուշոտ հեռուները ձգվող հայացքն ու նրա կարոտակեզ պատմությունը հարազատ գյուղի, հեռվում թողած բարեկամների մասին, կարծես լույս են սփռում նրա թշվառ ու ողորմելի ներկայի վրա:

Գալիս է հերոսուհու հոգեբանության բացահայտման գեղագիտական պահը: Ու հեղինակը, որ մինչ այդ կարծում էր, թե իր ու այդ կնոջ միջև մի հսկայական անդունդ կա, հանկարծ նկատում է, որ այդ անդունդը սկսում է աստիճանաբար լցվել հայրենի եզերքի հանդեպ ահագնացող կարոտով, որից ճառագող լույսը սփռվում էր սենյակում, որն առաջվա նման այլևս մութ չէր թվում:

Կարիքի, հոգսի, զրկանքի մեջ գտնվող երկու ընտանիքների պատմություն է ներկայացված «Երկու կիներ» (Ղալաթիո սալահատակեն) ստեղծագործության մեջ: Սոցիալական ծանր կացության մեջ հայտնված երկու կին, բայց երկու տարբեր հոգեկերտվածք: Երկու կանայք էլ հայտնվել են դժվարին իրավիճակում, երբ բացվող օրն իր հետ բերում է բազմաթիվ խնդիրներ, երբ կուշտ փորով քնելը դարձել է երազանքի նման մի բան, երբ ներկան գորշ է, չհուսադրող, իսկ ապագան՝ անորոշ:

Երկու կանայք մի կերպ քարշ են տալիս իրենց գոյությունը, սակայն տարբեր են նրանց պայքարի ու գոյատևման եղանակները: Հեղինակը շեշտը դնում է նրանց ազգային հոգեկերտվածքի ու նկարագրի վրա, երբ հատկապես խոսում են գեները: Մի փոքրիկ դրվագով հեղինակը կարողանում է ընթերցողի համար վեր հանել իրականությունը՝ իր ցուրտ ու անհաղորդ կողմերով: Առաջին կինը Բոլոնիայից է, թե Հունգարիայից՝ պարզ չէ: Նա մատներն անտարբեր սահեցնում է հնամաշ ակորդեոնի ստեղնաշարով, իսկ երկու փոքրիկ

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 425: Nuyt texum, ej 425:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 427: Nuyt texum, ej 427:

աղջիկները կաքավում են՝ փորձելով իրենց վրա հրավիրել հասարակության ուշադրությունը: «Օ՛, լավ սորվեր էին իրենց արհեստը»<sup>8</sup>:

Հիսուն քայլ այն կողմ՝ փողոցով անցնում էր մեկ այլ կին: Արտաքինից երևում է, որ գավառացի պանդուխտ է՝ Մշո դաշտից: «Կարմիր կտավ մը ծածկած էր ամբողջ դեմքը մինչև բերանը. արևակեզ այտերը միայն կերևային ու մանրիկ սևուկ աչքերը, որոնց մեջ ցուրտ կորով մը կտեսնեի ես»<sup>9</sup>: Նրան կրնկակոխ հետևում էր փոքրիկ մի աղջիկ: Մայր ու աղջիկ քայլում էին սալահատակ փողոցով՝ անտարբեր շուրջը կատարվող իրարանցմանը, փորձում մանր փայտի կտորներ ժողովել: Բայց «քաղաքակրթությունը ամլության էր դատապարտել բնությանը»<sup>10</sup>: Տեսնելով, որ թափած ջանքերը համարյա թե անցնում են ապարդյուն՝ կինը քայլերն ուղղում է դեպի կողմնակի փողոցը՝ ամուր բռնած աղջկա ձեռքը: Ու՛ր էր շտապում այդ կինը. իհարկե, ժողոված փայտերով կրակ անելու, տաք ճաշ պատրաստելու, որպեսզի ամբողջ օրը բանած ամուսինը, վերադառնալով տուն, սեր, հոգատարություն, ընտանեկան ջերմություն գտներ այնտեղ:

Լ. Բաշայանը երկու կանանց հակադրության միջոցով տալիս է հայ կնոջ, հայ մոր ինքնատիպ նկարագիրը: Առանց բառերի տարափի, առանց ավելորդ պաճուճանքի հեղինակը կենդանի մի քանի բնորոշիչների օգնությամբ ցուցադրում է գավառացի հայ կնոջ բարոյական նկարագրի վեհությունը:

Հայն ու հայեցիությունն ամփոփող բաշայանական կանացի կերպարներից է Աղավնին՝ «Կաղանդչեքը» պատմվածքի հերոսուհին: Նա էլ է հայրենագրկվել ու հայտնվել օտարության մեջ՝ արժանանալով իր ազգակիցների ողբերգական ճակատագրին:

Ամանորը ամենազեղեցիկ, ամենագորովալից տոներից մեկն է, երբ յուրաքանչյուր մարդու հոգում ծավալվում է նորի սպասումի, նոր իրողությունների, նոր անակնկալների մի հորդառատ հեղեղ: Այսպիսի երազանքներ ունի նաև Աղավնին, բայց նրա ամենամեծ երազանքն է քաղցած չտեսնել իր եղբայրներին: Իսկական հայուհու տիպար է Աղավնին: Նա իր փխրուն ուսերին լուռ ու մունջ տանում է իր ընտանիքի ծանրամեծ հոգսը՝ խնամում եղբայրներին ու հիվանդ հորը:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 380: Նսյո տեքստ, էջ 380:

<sup>9</sup> Նույն տեղում: Նսյո տեքստ:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 381: Նսյո տեքստ, էջ 381:

Աղավնին ազնիվ է. ուզում է ամեն կերպ պատասխանել, վարձահատույց լինել Հակոբի բարեհոգությանը, ով, իր գրքերը վաճառելով, մրգեր ու անուշեղեն էր գնել Աղավնու եղբայրների համար: Ոչինչ չունենալով՝ Աղավնին՝ իբրև կաղանդչեք, վեհերոտ շարժումով նրան է մեկնում իր վարսերից կտրած մի գեղեցիկ խոպոպ:

Սոսկալի աղքատության մեջ անգամ Աղավնին պահում է իր արժանապատվությունն ու հպարտությունը, իր ազնվությունն ու կուսական մաքրությունը, ինչը հայ օրիորդի ամենից բնորոշ ու յուրահատուկ գծերից է:

Հայ կինն օժտված է և այլ բարեմասնություններով՝ նեղության մեջ չընկճվելու, կյանքի պարտադրած դժվարությունները կամքի ուժով, հնարագիտությամբ, համառ աշխատանքով հաղթահարելու կարողությամբ: Որևէ մասնագիտության մեջ նա հմտանում է, դառնում անմրցելի վարպետ և ազնիվ աշխատանքով, թեկուզև համեստ վաստակով, բայց արժանապատվությամբ պահում է իր տունն ու յուրայիններին: Աշխատանքի պաշտամունքը ազգային բնավորություն է ու մտածողություն, զավակներին բարության, ազնիվ աշխատանքի ընտելացնելը՝ ծնողական պարտք ու հպարտություն: Հակառակ օտար միջավայրի բարքերի, որտեղ վաղ մանկությունից իրենց զավակներին դաստիարակում են չաշխատելու, այլակրոններին անարգել թալանելու և կողոպտելու, անգամ մարդասպանությունն արդարացնելու «բարոյախոսությամբ», «Սյուզենիի վարպետ» պատմվածքում տեսնում ենք «հանուն պատառ մը հացի» Կարինից Պոլիս գաղթած մի հայ ընտանիքի ցավալի պատմություն: Պատմվածքի առաջին մի քանի տողերում Լ. Բաշալյանը հարկ է համարում ընդգծել կյանքի դեպքերը ճշմարտացի ներկայացնելու իր ռեալիստական նախասիրությունը. իր «պարզ պատմությամբ» ինքը ոչ թե հորինված կամ երևակայական եղելություն է ներկայացնում, այլ բուն իրողությունը. «մեր ընտանեկան խաղաղ հարկերու մեկ պարզ դրվագն է. ու եթե բանի մը չ'ծառայե, գեթ գաղափար մը կուտա, թե ջքավոր ընտանիք մը ինչ միջոցներով կ'ապրի Կ. Պոլստ մեր այլազան հայ ընկերության մեջ»<sup>11</sup>:

Տարիներ առաջ Պոլիս հաստատված ամուսինը, որ հակառակ Գր. Ջոհրապի «Այրին» նորավեպի Մարտիրոսի, իր վաստակի ավելցած մի մասը բարեխղճորեն Կարին՝ հարազատներին էր ուղարկում և արդեն փոքրիկ մի սրճարանի տեր էր, նամակով Պոլիս է կանչում իր ընտանիքը՝ կնոջը՝ Մարիամին ու չորս երեխաներին՝ «երեք աղջիկ, մեկ մանչ»: Սակայն կարճ էր տևել եր-

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 311-312: Te's nuyh texy, ej 311-312:

ջանկության վայելքը, որովհետև երեք-չորս ամիս անց ժանտախտը տարել էր ամուսնուն, և այրիացած կինն ու որբ զավակները հայտնվել էին անմխիթար վիճակում: Այս հանգամանքներում է իր կամքի ուժը, բարոյական ու կամային լավագույն որակները դրսևորում գավառացի հայ կինը. «Առջի մեկ քանի օրվան ցնցումեն ետքը, Մարիամ տուտուն ինքզինքը ժողվեց: Գավառացի կնոջ այն կորովի և հաստատ բնավորությամբ, որ տարակա պանդուխտին տունը կանգուն կը պահե գավառաց մեջ, սրտին խորը թաղեց իր վիշտը, սրբեց արցունքը և գործի սկսավ»<sup>12</sup>: Կարգավորեց բոլոր հարցերը՝ զավակների ապագան հուսալի հունի և ընթացքի մեջ դնելու համար, և սկսեց խնայողությամբ: Կրթության արժեքն ու կարևորությունը լավ հասկացող կինը ցավ զգաց որդուն՝ տասներեքամյա Մկրտիչին, թաղային վարժարանից ճարահատ հանելով և հարևանի մոտ արհեստագործության տալով, որ հետո նեցուկ լինի իրեն: Ամուսնու համեմատաբար հարմարավետ բնակարանը վաճառեց և գնեց մի խրճիթ, որի առաստաղի տախտակների արանքներից երկինքը երևում էր, և քամին սուրում էր անարգել: Դրամ վաստակելու համար ինքը մութից մութ աշխատում էր՝ լվացք անելով և զանազան տնային աշխատանքներ կատարելով: Անուրդով վաճառեց ամուսնու սրճարանի հնամաշ կահույքն ու սպասքը: Տարաբախտ այրին նյութական որոշ ապահովություն ստեղծեց իր ընտանիքի համար, «սկոռն սեղմեց... ու ապրեցան»: Սակայն ընտանիքի հույսը ավագ դուստր Թագուհին էր, արտակարգ ընդունակությունների տեր մի աղջիկ, որը, ասեղնագործության մեջ հմտանալով, դարձել էր «սյուզենիի» վարպետ: Իրոք հուզիչ է հրավիրվածների ներկայությամբ Թագուհուն «սյուզենիի վարպետ» օժելու արարողությունը, որը մոր՝ Մարիամի աչքերից այս անգամ բերում էր երանության արցունքներ:

Դասային անհավասարության, այդ հողի վրա ձևավորվող անհաջող ամուսնությունների ու այս ամենի մեջ տառապող հայ կնոջ կերպարին է Բաշայանն անդրադարձել իր «Անժել» և «Վերջին համբույրը» պատմվածքներում:

Երիտասարդ տարիքում արյունը մարմնովդ վեր ու վար է անում, գլխումդ խառնում ամեն բան, ու չես կարողանում իրականում տարբերել այն խոր զգացումը, որ խլրտում է ներսումդ: Այդպես եղավ նաև «Անժել» պատմվածքի համանուն հերոսուհու հետ: Սիրած տղային՝ Արսենին, կորցնելուց հետո է նա գիտակցում, թե որքան կարևոր էր այդ երիտասարդն իր համար: Գտնվելով թվացյալ երջանկության մեջ՝ սթափվում է միայն այն ժա-

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 312: Nuyn texum, ej 312:

մանակ, երբ գետնին ընկած է տեսնում Արսենի անշնչացած դին: Այդ վայրկյանից սկսած՝ կանգ է առնում կյանքը, ամեն ինչ գորշ երանգ է ստանում, Անժելը դադարում է ապրել ու զգալ: Արդյոք մեղավոր էր Անժելը, որ թողեց Արսենին և նշանվեց մեկ ուրիշի՝ «փայլուն ու դյուրակեցիկ» երիտասարդի հետ: Չէ՞ որ այդ ամենը նա կատարեց ծնողների ճնշման ներքո: Հետո նրան մխիթարեց նոր փեսացուն՝ իր աշխույժ ու մարդամոտ բնավորությամբ: Այստեղ իր դերակատարումն ունեցավ նաև երիտասարդությունը, երբ կյանքին նայում ես ավելի թեթև հայացքով: Անժելը զոհն է հասարակության մեջ դարերով կարծրացած դասային անհավասարության, շահադիտական նկատառումներով ստեղծվող ընտանիքների, իր ծնողների անգիտակցաբար մատուցած զոհը՝ հանուն «բարեկեցիկ» և «ապահով» ապագայի:

Ժամանակի հայ հասարակության համար նույն ցավոտ խնդիրն է արժարժված նաև «Վերջին համբույրը» պատմվածքում: Այստեղ դարձյալ պատկերված է մի իրավիճակ, երբ ամուսնության ամենասուրբ առազաստը կազմելու համար առաջնությունը տրվում է ոչ թե սիրուն, այլ նյութական կարողությանը: Իսկ այսպիսի դեպքերում սովորաբար կազմվում են դժբախտ ընտանիքներ, որտեղ կինը շարունակ տառապում է՝ չգտնելով սեր և ընտանեկան ջերմություն: «Ճերմակեղենի խանութի վարիչ» հայրն իր 22-ամյա դստերն անկեղծորեն սիրող, բժշկականի՝ «աղքատ ներկայով ու անստույգ ապագայով» 24-ամյա շրջանավարտ Տրդատից, որն իր վկայականին էր սպասում, նախընտրելի համարեց «շնորհքով ուզող» ոսկերիչ մեկին: Եթե նախորդ պատմվածքում մենք տեսնում ենք տառապող Անժելին, ապա այստեղ Վերգինի տառապանքին հեղինակը գրեթե չի անդրադառնում. միայն հիշում է, որ աղջկա և հոր միջև եղել են տևական կռիվներ, որոնք ավարտվել են աղջկա պարտությամբ: Իր ամուսնու կողքին դժբախտ է Վերգինը, թե՞ երջանիկ. Բաշայանն այդ մասին չի խոսում, բայց հենց այն իրողությունը, որ, մահից առաջ ճանաչելով իր երբեմնի սիրած տղային՝ արդեն համբավավոր դոկտոր Տրդատին, Վերգինը փարվում է նրան ու շուրթերին թողնում մահվան շնչով պարուրված վերջին համբույրը, ամեն ինչ է ասում:

Բաշայանի կերպավորած կանացի այս նուրբ ու գեղեցիկ կերպարների կողքին մենք առնչվում ենք կնոջ մեկ այլ տեսակի՝ հարուստ ու քաղքենի կնոջ, ում շողշողուն ու առինքնող արտաքինի տակ տեսնում ենք դատարկ ու անհրապույր ներաշխարհ: Հետին պլան են մղվում բոլոր բարոյական արժեքները, իշխող են դառնում փողը, կիրքը և անմաքուր զգացմունքները: Այս են վկայում Բաշայանի «Ա՛յս է եղեր» պատմվածքը և «Հմայաթափ» նորավեպը:

«Այս է եղեր» պատմվածքում Մառի Սիմյանի կերպարով հեղինակը մերկացնում է պոլսահայ հասարակության վերին խավերի վարած զեխ ու շվայտ կյանքը: Ո՞վ էր մեծահարուստ Պողոս Էֆենդուն կինը՝ տիկին Սիմյանը: Հրաշագեղ արտաքինով մի կին, ում բնությունը չէր խնայել զարդարելու կանացի գեղեցկությամբ ու հմայքներով: Այսպես է նկարագրում հեղինակը Մառի Սիմյանին. «...Երեսուն տարեկանին մոտ կին մըն էր, գոեք տը շինե կաթնագույն շրջագեստ մը հագած, որուն պարանոցին քառակուսի բացվածքեն՝ միսը կերևար սպիտակ և վարդերանգ... Աջվըները, սևաթույր լայն թարթիչներու տակ նվաղկոտ ցոլք մը ունեին, որուն մեջ ճերմակը կկորսվեր. այդ աչքը, մրագույն ծիրով շրջանակյալ, ամբողջ ապականություն մըն էր, չես գիտեր ինչ հրավեր մը, հրամայական և խուսափուկ միանգամայն... Գլխուն վրա պողիկան գլխարկը կբարձրանար հոխորտ, պատերազմիկ և անառակ կեցվածքով...»<sup>13</sup>: Այդ կնոջ յուրաքանչյուր շարժումից մեղք էր հորդում, բայց ցանկալի ու առինքնող մի մեղք, որ իր գալարքի մեջ էր առնում ամեն բան: Այդ մեղքի հորձանուտը ինքնամոռաց նետվեց Միքեն՝ պատմվածքի գլխավոր հերոսը, գեղեցիկ ու վայելչակազմ մի երիտասարդ, ով զգում էր, թե ինչպես «...մեքենային ատամներուն տակ դրված էր արդեն իր մեկ թևն... քիչ-քիչ, իր բոլոր մարմինը պիտի թավալեր այդ ատամներուն տակ և ջախջախվեր»<sup>14</sup>: Գիտակցելով այս ամենը՝ Միքեն գնում էր առաջ. նրան իր մոտ էր կանչում Մառիի թովչանքը:

Պատմվածքում ուշագրավ են նաև հեղինակի՝ Պողոս Էֆենդուն տրված բնութագրումները: Նա ընթերցողի համար բացում է պոլսահայ բարձրաշխարհիկ ընտանիքների վարագույրները և թույլ տալիս աչք ձգել պատուհանից ներս, տեսնել նրա ապականված կողմերը: Հասարակության այս խավն է, որ ոսկու և արծաթի փայլով փորձում է սքողել իր ներքին այլանդակությունը, ինչը չէր կարող չմատնանշել ռեալիստ Բաշայանը:

Իսկ «Հմայաթափ» նորավեպում (Բաշայանի անդրանիկ գործն է, լույս է տեսել 1888թ.) մենք հանդիպում ենք քաղքենի կնոջ մեկ այլ տեսակի, ում համար դիմացինի զգացմունքներն ու տառապանքը ոչ մի արժեք չունեն: Տիկին Ջյունայույանը քիչ թե շատ զարգացած կին է՝ ծանոթ ֆրանսիական գրականությանը: Նա հաճելի արտաքին ունի, բայց միևնույն ժամանակ փոքրոգի է: Իմանալով Գևորգի թշվառ կյանքի, նրա նուրբ հոգու ու տառապանք-

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 298: Nuyñ texum, ej 298:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 307: Nujñ texum, ej 307:

ների մասին՝ վերջինիս դարձնում է խամաճիկ, իր ընկերուհիների ծաղրուծանակի առարկա: Ոչ միայն տիկին Ջյումայուլյանն է այդպիսին, այլև նրա ընկերուհիները: Նրանք հազիվ են զսպում իրենց ծիծաղը, երբ Գևորգը հուզմունքով ընթերցում էր իր սրտառուջ բանաստեղծությունները: Գևորգը զվարճալի խաղալիք է վերջիններիս համար, ում հետ կարելի է խաղալ և դուրս նետել, երբ արդեն պետք չէ: Այսպես էլ վարվում է նրա հետ տիկին Ջյումայուլյանը, երբ Գևորգը խոստովանական նամակով տիկնոջը հայտնում է իր սիրո մասին: Վերջինս նրան ազատում է աշխատանքից, ծառայի միջոցով հաղորդում, որ իրենք նրա ծառայությունների կարիքն այլևս չունեն: Փողի ամենազոր ուժն է, որ թույլ է տալիս հասարակության «վերնախավ» կոչվածներին տրորելու կարողությամբ իրենցից ցած գտնվողների արժանապատվությունը: Ռեալիստ հեղինակը մատնանշում է նաև կենսական մեկ այլ ճշմարտություն, որ վերածվում է գեղարվեստական ու գաղափարական ընդհանրացման. Գևորգի նման երազող, թույլ կամքի տեր մարդիկ չեն կարող գոյատևել մի հասարակության մեջ, որտեղ գործում են հակամարդկային օրենքներ:

Լ. Բաշալյանի պատմվածքներն ու նորավեպերը պատկերում են մեզինից ժամանակով ու տարածությամբ հեռացած մի ուրույն աշխարհ, որտեղ կար բոլոր ժամանակների համար ընկալելի ու մարդկայնորեն հասկանալի մի կյանք՝ իր այլազան դրսևորումներով: Այդ բազմաշերտ ու բազմախորհուրդ կյանքը, անշուշտ, պայմանավորված չէ միայն կանանցով, և Լ. Բաշալյանի երկերում էլ այն պատկերված է ռեալիստական ճշգրտությամբ: Բարձր արվեստը դրսևորվել է թե՛ ժամանակի ու միջավայրի հարազատ վերարտադրության և թե՛ կերպարաստեղծման վարպետության մեջ:

Այս փոքրիկ ուսումնասիրությամբ, սակայն, մենք փորձեցինք բացահայտել միայն կնոջ կերպավորման արվեստը, ցույց տալ, թե ինչպիսի վարպետությամբ է հեղինակը վրձնել կնոջ ներքինն ու արտաքինը: Բաշալյանական կինն աննյութեղեն էակ չէ՝ օժտված միայն առաքինություններով ու դրական հատկանիշներով: Նա մարդ է՝ նաև այդ տեսակին բնորոշ թերություններով ու թուլություններով: Նա գեղեցիկ է, առինքնող, բնության նման վայրի ու կուսական, նաև քաղքենիության ճահիճը մխրճված մի զազրելի արարած: Նա պարզապես կին է:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածով անդրադարձ կատարելով Լ. Բաշալյանի փոքր արձակին՝ նպատակ ունեինք մեր կատարած ուսումնասիրությամբ ցույց տալ, թե ինչպիսի նոր գաղափարներ, տեսակետներ է բերում հեղինակը գրականություն (հատկապես ռեալիստական մեթոդի հաստատման և զարգացման տեսանկյունից):

Անդրադառնալով հեղինակի ստեղծագործություններում ներկայացված կանանց կերպարներին՝ աշխատեցինք նրանց օգնությամբ ներկայացնել Բաշալյանի գրական – գեղագիտական դիրքորոշումները, գրականության և կյանքի փոխհարաբերության շուրջ նրա առաջ քաշած տեսակետները, հեղինակի՝ հերոսների հոգու ծածուկ անկյունները թափանցելու կարողությունները:

**Բանալի բաներ** - ռեալիզմ, ռոմանտիզմ, գեղագիտություն, կերպավորման արվեստ, դասակարգային անհավասարություն:

## ОБРАЗ ЖЕНЩИНЫ В ПРОЗЕ ЛЕВОНА БАШАЛЯНА

ТАМАРА АНДРЕАСЯН

В данной статье, обратившись к краткой прозе западноармянского автора Левона Башаляна, мы постарались нашими изучениями показать, какие новые идеи, точки зрения привносит автор в литературу (особенно относительно утверждения и развития реалистического метода).

Обратившись к образам женщин, показанных в произведениях автора, мы постарались с их помощью представить литературно–эстетическую позицию Башаляна, выдвинутые им аспекты взаимоотношений литературы и жизни, умение автора проникать в тайники души героев.

**Ключевые слова** - реализм, романтизм, эстетика, искусство создания образа, классовое неравенство.

## LEVON BASHALYAN'S PORTRAYAL OF WOMEN

TAMARA ANDREASYAN

This article is a study of Levon Bashalyan, a Western Armenian writer. Its aim is to highlight the new concepts and viewpoints that Bashalyan introduces to literature, especially the ones that establish and develop realistic methods.



---

The author, through her analysis of Bashalyan's portrayal of women, presents Bashalyan's literary and aesthetic stance, his thoughts concerning the correlation between literature and life that he has put forward and his unique way of penetrating into the souls of the female heroes he has created.

**Key words** - realism, romanticism, aesthetic, the art of creating an image, class inequality.

# ՄԱՐԴՈՒ ՕՏԱՐԱՑՄԱՆ ԹԵՄԱՆ ԹԵՆՆԵՍԻ ՈՒԻԼՅԱՄՍԻ «ԱՊԱԿԵ ԳԱԶԱՆԱՆՈՑԸ» ԴՐԱՄԱՅՈՒՄ

## ԽՈՍՐՈՎ ԽԱՆՄՈՐԱԴԻ ԴՐԱՐՔԻ (ԻՐԱՆ)

Ամերիկյան դրամատուրգիայում իր ուրույն տեղն ու դերն ունի Թեննեսի Ուիլյամսը (1911-1983): Ավելի քան կես դար առաջ քննադատները Ուիլյամսին անվանել են նշանավոր ամերիկացի դրամատուրգ: Ոչ ոք չի կարող ժխտել Թ.Ուիլյամսի ազդեցությունը համաշխարհային և մասնավորապես ամերիկյան գրականության վրա: Նա առանձնակի հմտությամբ է ստեղծել իր պիեսները, որոնք աչքի են ընկնում ստեղծագործական առանձնահատկություններով, հոգեբանական մեթոդի կիրառմամբ, կերպարներ կերտելու ինքնատիպ արվեստով<sup>1</sup>:

Դրամատուրգը հայտնի է իր «Ապակե գազանանոցը», «Ցանկություն» «Տրամվայը», «Կատուն շիկացած տանիքի վրա», «Պատանեկության քաղցրահնչյուն թռչունը» և այլ բարձրարժեք դրամաներով: Նա երկու անգամ արժանացել է Պուլիտցերյան մրցանակի, ինչպես նաև Դոնալդսոնի մրցանակին, Նյու Յորքի Դրամատիկ քննադատների միության, Թոնի, Սիդնեյ Հովարդի Հիշատակի մրցանակներին և այլ պարգևների: Ուիլյամսի խաղացանկը ներառում է ավելի քան երեսուն պիես, մի շարք կարճ ներկայացումներ, պոեզիայի երկիատորյակ, ակնարկների հինգ հատոր, նովելներ և էսսեներ:

Նրա դրամաների հիմքը կազմում են հասարակական, ընտանեկան, սեռական ու հոգեբանական խնդիրների շուրջ ստեղծված կոնֆլիկտները: Գրեթե իր ողջ կյանքն անցկացնելով ճանապարհորդությունների և դեգերումների մեջ՝ Ուիլյամսը ողբերգական կերպով իր մահկանացուն կնքեց 1983թ. փետրվարի 23-ին՝ թողնելով մի շարք հաջողված պիեսներ, որոնք մինչև այսօր թարգմանվում և բեմադրվում են աշխարհի տարբեր բեմերում<sup>2</sup>:

Ուիլյամսին առանձնապես չի հետաքրքրում անհատականության ծագման, նրա ակունքների խնդիրը: Նրա համար ավելի կարևոր է, թե որքանով է կայացել տվյալ անհատականությունը, որքանով նա կարող է դիմակայել շրջա-

---

<sup>1</sup> Gussow M., Holditch K., Tennessee Williams: Plays 1937-1955, 2<sup>nd</sup> V., America, 2005, p. 19.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 31:

պատի կամ հանգամանքների ճնշմանը, կկործանվի՝ նա այդ ճնշման տակ, թե՞ հակառակը՝ կկուփի իր կյանքն ու միտքը:

Այսպիսով, «անհատականություն» հասկացությունը Ուիլյամսն ի սկզբանե ընկալում է գեղագիտական առումով: Ըստ հեղինակի՝ ժամանակակից հասարակությունը սահմանափակում է մարդու ներքին ազատությունը: Այդ հասարակության մեծագույն չարիքը «հարմարվողականությունն» է: Սակայն Ուիլյամսը ցույց է տալիս, որ այդ «հարմարվողականությունն» ավելի շատ բնորոշ է ուժեղ, կամային անհատներին: Դա բացատրվում է նրանով, որ վերջիններս պակաս զգայուն են հասարակության ճնշումների հանդեպ, ավելի շուտ են հարմարվում կյանքի «խաղի կանոններին»: Վերջիններս ավելի հեշտ են հարթում կյանքի ուղին, դառնում իրավիճակի տերը, ենթարկեցնում իրենց շրջապատող մարդկանց: Ակնհայտ է, որ դրամատուրգի համակրանքը թույլերի և չհարմարվողների կողմն է, թեև նա երբեք չի իդեալականացնում նրանց: Ուիլյամսի դրամաներում ակնհայտ է նաև հակումը դեպի հոգեվերլուծության մեթոդը:

Թ. Ուիլյամսի «Ապակե գազանանոցը» դրամայի հիմքում ընկած է մարդու միայնակության, առանձնության, մահվան դատապարտվածության թեման: Ուիլյամսի հերոսի ճակատագիրը կանխորոշված *ողբերգական է:*

Այս դրամայում սոցիալական և պատմական խորապատկերը պահպանված է: Գործողությունների ժամանակահատվածը 1930-ականների վերջերն է, երբ Ամերիկայի ժողովուրդը դեռ չէր հաղթահարել Մեծ դեպրեսիայի արհավիրքները:

Ուինգֆիլդների ընտանիքում մայրն ապրում է հիշողությունների ցնորական աշխարհում, աղջիկը՝ Լաուրան, ով ֆիզիկական արատ ունի, սիրո հիվանդ է, որդին՝ Թոմը՝ մոլորված մի երիտասարդ: Խաթարված է Ուինգֆիլդների կյանքը: Նրանք փակված են իրենց «ապակե գազանանոցի» մեջ, որը լցված է մարդու ներքին անհատական աշխարհի նկատմամբ դաժանությամբ: Դրամասիրությունը, ընչաքաղցությունը կուրացրել են Ամանդային, և նա չի էլ նկատում, թե ինչպես է խորտակում զավակների կյանքը, որը նրանց համար դարձել է ձանձրալի մահապատիժ:

Թոմը, ով այնքան կապված է մորն ու քրոջը, անմնացորդ սիրում է նրանց, դավաճանում է: Նա վերջապես հասկանում է, որ «ապակե գազանանոցը» վարկաբեկում է կյանքը, որ այն իրենց օտարացման գլխավոր պատճառն է: Գիտակցելով իրենց կյանքի անիմաստությունը, «ապակե գազանանոցի» անհեթեթությունը՝ նա ընդվզում է, որը սկզբում արտահայտվում է մոր

նկատմամբ դավաճանությամբ, ապա գազանանոցի մոմերը հանգցնելու ցանկությամբ:

Թ. Ուիլյամսն անողոք խստությամբ է խոսում ամերիկյան իրականության մասին, թե մարդու համար որքան դժվար է ապրել այն հասարակության մեջ, որտեղ նրան սպասում են Լինչի դատաստանը, ամենօրյա հետապնդումները, ապականված բարքերն ու շրջապատի սառը անտարբերությունը: Հերոսներն ապրում են դաժան իրականության մեջ, որտեղ, ինչպես իրենք են ասում, «մարդկանց գնում և վաճառում են»: Նրա հերոսներն օտար են այդ հասարակության մեջ: Մենության, օտարության զգացումը Թ. Ուիլյամսի հերոսները փորձում են լուծել իրենց անկոտրում միասնությամբ, միմյանց նկատմամբ ունեցած փոխադարձ սիրով, որը, նրանց կարծիքով, կփրկի ինչպես իրենց, այնպես էլ աշխարհը կործանումից, իրենց կօգնի դիմակայել կյանքի բոլոր դժվարություններին, անգամ՝ մահվանը: Նրանք ընդվզում են մահվան դեմ, թեև գիտակցում են դրա անխուսափելիությունը: Իրենց գոյության խորհուրդը հերոսները տեսնում են ապրելու և ուրիշին երջանակացնելու մեջ:

Ընտանիքի մորը՝ Ամանդային, մշտապես մի հարց է հուզում, թե ինչ է լինելու իր ընտանիքի հետ, երբ դատեր՝ Լաուրայի ուսման և հետագա առաջխաղացման հետ կապված ծրագրերը չիրականացան: Նա դատերը հորդորում է, որ վերջինիս համար միակ այլընտրանքն ամուսնությունն է՝ ընդգծելով, որ այսպես թե այնպես, միևնույնն է, Լաուրան ի վերջո պետք է ամուսնանա: Լաուրան մորը հիշեցնում է, որ ինքը «ներփակված է», և որ իր մի ոտքը մյուսից մի քիչ կարճ է: Ամանդան պահանջում է, որ իր դուստրն այլևս երբեք չօգտագործի այդ բառը և հորդորում է նրան՝ լինել ավելի հմայիչ ու ցանկալի:

Դիտարկելով Թոմին՝ ուշագրավ է նրա անմիջական շփումը հանդիսատեսի հետ, երբ նա նկարագրում է պիեսի իրադարձությունները և խոսում այլ կերպարների մասին: Պարզ է դառնում, որ այստեղ մենք գործ ունենք արվեստի ստեղծագործության հետ, և որ դա կապ չունի իրականության հետ: Այն գաղափարը, որ պիեսի մեջ կարող է ներգրավված լինել պատմող անձ, նորություն չէ: Թոմի երկակի դերն առաջ է բերում որոշակի կոնֆլիկտներ: Որպես պատմող՝ Թոմը շարադրում և մեկնաբանում է պիեսի իրադարձությունները ինչ-որ մի ապառնի անորոշ ժամանակակետից, երբ նա արդեն այդ գործողությունից, զգացմունքային և նաև ժամանակային առումով բավականաչափ հեռավորության վրա է գտնվում: Սակայն որպես կերպար, Թոմը և՛ ֆիզիկապես, և՛ զգացմունքային առումով ներգրավված է գործողության մեջ: Այսպիսով, Թոմը սկզբից հանդես է գալիս որպես սառը և անկողմնակալ

պատմող, շարադրող անձ, ով ձեռք է բերում հանդիսատեսի վստահությունը, սակայն ռուպեներ անց նա վերափոխվում է մի մոլորված երիտասարդի, ով մշտապես վիճաբանության մեջ է իր մոր հետ: Որպես հետևանք՝ հանդիսատեսը չի կողմնորոշվում ինչպես ընկալել Թոմին: Արդյոք լրջորեն ընդունել նրա կարծիքներն ու գործողությունները՝ որպես պատմողի, թե՞ որպես մի բուլրորովին այլ կերպարի, ով հիմնականում կենտրոնացած է իր սեփական անձի վրա: Արդյոք նա դրակա՞ն, թե՞ բացասական հերոս է:

Ուիլյամսի այս մոտեցումը միանգամայն նորարարական է, ինչպես թատերական, այնպես էլ, ընդհանուր առմամբ, դրամատուրգիայի առումով: Հեղինակն զգում է, որ ռեալիզմը, կոչված չլինելով ներկայացնել կյանքն առանց գունազարդումների, արդեն վերապրել է իրենը<sup>3</sup>:

Ուիլյամսի թատրոնն առաջարկում է այն, ինչը Թոմն անվանում է «պատրանք, որը ճշմարտության տեսք ունի»: Դրամատուրգը փորձում է գտնել դրա հակառակ տարբերակը տվյալ պիեսում. ճշմարտությունն է ձգտում պատրանքի: Ռեալիզմի ամբողջական վերարտադրման համար պիեսը գործի է դնում տեսողական և լսողական էֆեկտներ և էքսպրեսիոնիստական արտահայտչամիջոցներ՝ ընդգծելու այս կամ այն խորհրդանշանի նշանակությունը: Պատրանքը պիեսում բացահայտելու համար Թոմը գործի է դնում այս բոլոր միջոցները՝ իր մենախոսությունները պատմելու ընթացքում:

Առաջին հայացքից օտարացման արտահայտությունը մենք տեսնում ենք ի դեմս Լաուրայի: Նա մի մեկուսացած աղջիկ է, ով օրվա մեծ մասն անցկացնում է իր ապակե գազանիկներով խաղալով, թողել է դասերն ու դպրոցը՝ առանց մորը տեղեկացնելու: Նա ձևացնում է, թե ամեն օր դպրոց է գնում, մինչդեռ թափառում է փողոցներում կամ գնում է կենդանաբանական այգի: Ակնհայտ է, որ Լաուրան ընկերներ կամ որևէ սիրած զբաղմունք չունի: Նա միայնակ է և ներփակված: Թերևս սա է նրա օտարացման հիմնական պատճառը:

Ամանդան շատ աշխույժ անձնավորություն է, ով իրեն պատասխանատու է զգում իր ընտանիքի համար: Եթե ավելի խոր ընկալենք նրա անհատականությունը, միանգամայն պարզ կդառնա օտարացման դրսևորումը: Նրան լքել է իր ամուսինը, և նա մշտապես ապրում է անցած-գնացած փառավոր օրերի հիշողություններով, հպարտանում այն բազմաթիվ երկրպագու-

<sup>3</sup> Spoto, D., The Kindness of Strangers: The Life of Tennessee Williams, Cambridge, Massachusetts: Da Capo Press, 1997, p. 171.

ներով, որոնք նա ժամանակին ունեցել է: Ամանդան չի ցանկանում ընդունել իրականությունը՝ անտեսելով իր դատեր անկարողությունը: Նա ամեն կերպ ջանում է օրինակ ծառայել դատեր համար:

Թոմը մեզ ներկայանում է որպես շատ զգացմունքային մի երիտասարդ, ով խճճվել է մոր մեղադրանքների տեղատարափի մեջ: Նա չի սիրում իր աշխատանքը և հետաքրքրվում է պոեզիայով: Կարող ենք եզրակացնել, որ նա նույնպես չունի ընկերներ և մեկուսացած է բոլորից: Թոմը սիրում է իր քրոջը և երբեմն անում է այնպիսի քայլեր, որ գոհացնի նրան:

Երրորդ գործողության վերջնամասում Թ.Ուիլյամսը հստակ դասակարգում է Ուինգֆիլդների ընտանիքի բոլոր երեք անդամներին՝ ի ցույց դնելով վերջիններիս միջև առկա կոնֆլիկտը: Թոմի խոր հիասթափությունը աշխատանքից և ընտանեկան կյանքից, Ամանդայի կարոտախտը անցյալի հանդեպ և նրա պահանջները՝ կապված ընտանիքի ապագայի հետ, և վերջապես՝ Լաուրայի սոցիալական անապահովությունը և ֆիզիկական արատը: Այս ամենն ի հայտ են գալիս վերջիններիս երկխոսությունների մեջ:

Գրեթե ամբողջ գործողությունն անցնում է լարված մթնոլորտում, և չկան դադարի պահեր: Բոլորն զգացմունքային առումով լարված են, ինչն առաջին հերթին կապված է հիմնական խնդրի հետ, այն է՝ Լաուրայի ամուսնության հարցը: Պիեսում բոլոր կերպարները ներկայացվում են ինչ-որ չափով երկակի դիտանկյունից:

Ամանդան շատ մոտ է բացասական հերոս լինելուն: Նրա մշտական դժգոհություններն ու բողոքները ծանծրացնում ու վիրավորում են երեխաներին: Վերջինիս մանրախնդրությունը կոտրում է զավակների վստահությունն իր հանդեպ: Ամանդայի ամուսնու՝ պարոն Ուինգֆիլդի լուսանկարը, որը կախված է սենյակի պատից, հուշում է, որ թեև արդեն երկար տարիներ են անցել, ինչ նա լքել է ընտանիքը, բայց և այնպես շարունակում է կարևոր դեր խաղալ ընտանիքի կյանքում:

Թոմի կերպարը հետաքրքիր է, այն խորհրդանշում է երիտասարդի փախուստի ուղին՝ «մարդկային հուսալքվածության հրդեհից», որը մշտապես բռնկվում է Ուինգֆիլդների ընտանիքում:

Թոմի օտարացումն աշխատանքից, Ամանդայի օտարացումը՝ կապված ամուսնու հետ, Լաուրայի օտարացումն իր սեփական ես-ից՝ կապված իր ոտքի արատի հետ, մշտապես առկա են այս պիեսում: Օտարացման ճիրաններից փրկվելու միջոցը Թոմի համար պոեզիան է և կինոն: Ամանդայի փրկությունը

դասեր համար կյանքի ընկեր փնտրելու դժվարին խնդիրն է, իսկ Լաուրայի փրկությունն իր ապակե գազանանոցն է:

Համերաշխ ընտանիքը Թ.Ուիլյամսի սիրած թեմաներից է ընդհանրապես և «Ապակե գազանանոց» պիեսում՝ մասնավորապես: Այն սերտորեն կապված է Ուիլյամսի սեփական կյանքի հետ: Վերջինս դժվար տարիներ է անցկացրել Սենթ Լուիս փոքր քաղաքում իր ընտանիքի հետ:

Իր կյանքի ընթացքում Ուիլյամսը երբեք չմոռացավ իր մորը՝ Հարավային գեղեցկուհուն, ով Ամանդայի նման գերիշխող էր և խիստ կարգուկանոն էր պահանջում: Կապույտ վարդեր (անգլերեն՝ Blue roses) մականունը, որը պիեսում տրվել էր Լաուրային, բացառիկ տուրք էր Ռոուզ Ուիլյամսին՝ դրամատուրգի քրոջը:

Թ.Ուիլյամսի աշխարհայացքն ուշագրավ է: Նրա գրական լեզուն ճկուն է, դինամիկ, ինքնատիպ, ավելի խոսակցական ու գունեղ: Հետաքրքրական է նրա հակումը դեպի հոգեբանական խորքային շերտերի բացահայտումը: Եվ այս ամենը դրսևորվել է նրա պիեսներում:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Ամերիկյան դրամատուրգ Թեննեսի Ուիլյամսը (1911-1983) հայտնի է դարձել «Ապակե գազանանոցը» ստեղծագործությամբ, որի հիմքում ընկած է դրամատուրգի դժբախտ ընտանիքի կյանքի պատմությունը: Դրամատուրգն իր ստեղծագործություններում, այդ թվում՝ նաև «Ապակե գազանանոցում», արժարժել է օտարացման թեման: Թ.Ուիլյամսն արժանացել է բազմաթիվ պարգևների, այդ թվում նաև՝ երկու Պուլիտցերյան մրցանակների:

**Բանալի բաներ** – Թեննեսի Ուիլյամս, ամերիկյան դրամատուրգ, դրամա, պիեսներ, օտարացման թեմա, կերպարներ, «Ապակե գազանանոց»:

#### ТЕМА ОТЧУЖДЕНИЯ В ДРАМЕ ТЕННЕСИ УИЛЬЯМСА “СТЕКЛЯННЫЙ ЗВЕРИНЕЦ”

ХОСРОВ ХАНМОРАД ДАРАБИ

Теннесси Уильямс (1911—1983) американский драматург, дважды лауреат Пулицеровской премии. Прототипом Уингфилдов в пьесе "Стекло-зверинец" послужила семья драматурга. Драматург в своих произведениях, в частности в "Стеклозверинец", отображает тему отчужденности.

**Ключевые слова** - Теннесси Уильямс, американский драматург, драма, тема отчуждения, пьесы, персонажи, “Стеклозверинец”.

## THE NOTION OF ALIENATION IN TENNESSEE WILLIAMS' "GLASS MENAGERIE"

KHOSROW KHANMORAD DARABI

This article elaborates about the play *The Glass Menagerie* by Tennessee Williams (1911-1983), one of America's most highly regarded playwrights. Williams earned fame with *The Glass Menagerie*, an autobiographical revaluation of his own unhappy family background. In *The Glass Menagerie*, as in all his other dramas, the playwright elaborates on the notion of alienation, which suggests feelings of isolation, loneliness and lack of self-realization. Williams was awarded many prizes, among which two Pulitzer Prizes.

**Key words** - Tennessee Williams, American playwright, drama, plays, theme of alienation, characters, The Glass Menagerie.



## ԼՈՒՍԵՂԵՆ ԵՐԿՐԻ ԱՌԱՍՊԵԼԸ. ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

### ԱԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20-րդ դարի սկզբի հայոց բանաստեղծության ամենամեծ հայտնագործությունը Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներն» էր: «Տերյանի երևումով,- գրում է Ավ. Իսահակյանը,- մեր քնարերգության մեջ մի նոր էջ բացվեց, նոր մեկնակետ՝ սիմվոլիզմը, որից ծայր առան նոր բանաստեղծներ»<sup>1</sup>: «Նոր խոսք» ասելու պահանջը դառնում է Տերյանի բանաստեղծական գեղագիտության սկիզբը:

Տերյանը և Մեծարենցը ոչ միայն նոր թեմաներով և ձևերով հարստացրին հայ բանավեպը, այլև ամենահարուստ և ամենանուրբ եղանակներով վերադարձրին միջնադարյան անկրկնելի քերթության ազնվաշխարհիկ կենսագրությունը, և հայ գրականության երկու հատվածներում սկիզբ դրվեց նոր գրական դպրոցի՝ սիմվոլիզմի գեղագիտությանը:

«Թումանյանը,- գրում է Հր. Թամրազյանը,- դպրոց չունեցավ: Այնինչ Տերյանը, մի շարք հարցերում զիջելով Թումանյանին և Իսահակյանին, դարձավ նոր դպրոցի հիմնադիր: Նրանից սկիզբ առավ Չարենցը: Տերյանի ազդեցությունը շատ ուժեղ էր 10-20-ական թվականների բոլոր բանաստեղծների վրա (Գառնիկ Քալաշյան, Արմ. Տիգրանյան, Ազատ Վշտունի, Ն. Չարյան, Գ. Սարյան)»<sup>2</sup>:

Ինչպե՞ս ձևավորվեց Տերյանի քնարերգության գեղագիտական համակարգը:

Հայնեի ասպետական հպարտությունը, անհաշտ մենությունը, ծուլված բողիկերյան «սրտախոց» թախծի նվազներին, ազնիվ հույզերին ու միստիկ որոնումներին, դարձան Տերյանի գեղագիտական հայացքների հիմնաքարը:

Տերյանը դեռ «Մթնշաղի անուրջներից» առաջ՝ 1906 թվականից, սկսել է թարգմանել Բողիկի «փոքրիկ արձակ պոեմները»: 1916 թվականի հոկտեմբերի 7-ին Ց. Խանզադյանին գրում է. «... Չթարգմանվածների մեջ կան սքանչելի բաներ, բայց ես գրեթե բոլոր պոեմներն եմ սքանչելի համարում, ուստի այդ պոեմների թարգմանությունը լոկ պատահական բան է,- ասիք ես ամբողջ»

<sup>1</sup> Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, Հայպետհրատ, 1964, էջ 30:

<sup>2</sup> Թամրազյան Հ., Գրական դիմանկարներ, հոդվածներ, Երևան, «Հայաստան», 1975, էջ 88:

էի ուզում թարգմանել մի ժամանակ (10 տարի առաջ), թարգմանել և հրատարակել»<sup>3</sup>:

Թարգմանությունը շատ բարձր է գնահատվել, իսկ «Թարգմանության լեզուն,- գրում է «Հորիզոնի» թղթակիցը,- «շատ գեղեցիկ է, իսկ տեղ-տեղ մինչև անգամ շքեղ» (1917, 22, 31 հունվարի): Անկասկած է, որ արձակ այդ և մյուս թարգմանությունների ընթացքում Տերյանը աշխատել է նախապատրաստել անցումը «սեփական արձակին» - իր վեպերին, արձակի ինքնուրույն ոճ մշակելու»<sup>4</sup>:

Շուրջ տասը տարի Տերյանը հաղորդակցվել է Բողլերի քնարերգության կենսաթրթիռ տազնապներին, մենության ու թախծի անամոք նվազներին, լքվածության, անջատվածության խռովքներին, կյանքի ու մահվան, բողլերյան ըմբռնումներին, Անհայտի, Անվերջության որոնումներին:

1907 թվականի ապրիլի 20-ին Օ. Օհանջանյանին ուղարկած նամակներից մեկում Տերյանը գրում է. «Չես կարող պատկերացնել, թե ինչպես եմ հոգնել, հոգնել ոչ թե աշխատանքից, այլ այս հավերժական թափառումից, հավերժական որոնումից... Եվ ահա ուզում եմ մեկնել որևէ տեղ, մի քիչ հանգստանալ՝ «ուր ուզում է լինի, միայն թե հեռու այս աշխարհից», ինչպես ասում է Բողլերը...»<sup>5</sup>:

Խորին անձկությամբ, նրբացած տանջանքների ցավագին թրթիռներով բանաստեղծի հոգին տեսչում է ինքնամոռացման: Նամակի շարունակությունը հետո պիտի հնչեր որպես բանաստեղծություն՝ լուռ, ցավուտ, անքննելի, տողերի ներսում ծավալվող նրբին մեղեդայնությամբ («Մթնշաղի անուրջներ», էջ 80).

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,  
 Ամենին մոռանալ,  
 Չըսիրել, չըխորհել, չափսոսալ,  
 Հեռանա՛լ...  
 Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,  
 Գիշերում այս անշող  
 Արդյոք կա՞ իրիկվա մոռացման  
 Մոռացման ոսկե շող...

<sup>3</sup> **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ., 1973, էջ 386-387:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 387-388:

<sup>5</sup> Նույն տեղում, 46. Օ. Օհանջանյանին, էջ 221:

«Փույթ չէ թե ուր, միայն թե դուրս այս աշխարհից» արձակ այս պոեմը կարծես դարձավ ընդհանուր տրամադրություն, հոգեվիճակ սիմվոլիստ բանաստեղծների համար:

Բողերից հետո եկած բոլոր մեծ բանաստեղծները մեկնել են Բողերից ու նոր միայն հասել իրենք իրենց. այնքան մեծ էր նրա արվեստի ուժը: Ոչ ոք այնքան տառապագին չի զգացել հոգու և մարմնի մեջ թաքնված ճշմարտությունը, այնքան կատարյալ չի արտահայտել մեղքի և անմիջական զղջման բարդույթը, կյանքի անձկությունը, Գեղեցիկի հավերժական տենչանքը, ինչպես մեծ պատնասականը: Տերյանը Բողերից վերցրեց ոչ թե կյանքի նրբացած արատների ու անկման տանջանքների մեջ կործանվող բանաստեղծի անհասկանալի վիճակները, այլ անհայտ ու վեհ իդեալի անհագ ծարավով տառապող հոգու վեհագույն ձգտումները, նաև այն անորսալի, երբեմն մշուշոտ, առեղծվածային, բայց և միաժամանակ լուսեղեն թախիժը, որ հատուկ է զգալուն հոգիներին:

Իր հոգվածներում և նամակներում Տերյանը հաճախ հիշատակում է ոչ միայն Շ. Բողերի, այլև Կ. Համսունի, Իբսենի, Պ. Վերլենի, Է. Վերհարնի անունները:

Սակայն Տերյանին իր տրամադրություններով ավելի հարագատ է Պոլ Վերլենը: «Սիմվոլիստներից թերևս ոչ ոք,- գրում է Կ. Գրիգորյանը,- ավելի ուժեղ ազդեցություն չի ունեցել Տերյանի վրա, որքան «մեղմախոս Վերլենը»<sup>6</sup>: Ստ. Մալարմեի և Ա. Ռեմբոյի հետ միասին Վերլենը դարձավ սիմվոլիստական քնարերգության հիմնադիրը: Ավա՛ղ, Վերլենի հանճարը չգնահատվեց ժամանակին: Այն կորովն ու քնքշությունը, ողբերգությունն ու վեհությունը, որ նրա տիեզերագնացողության տարրերն էին, այն օդում լուծվող բանաստեղծությունը, որ սահմանակից էր հավերժությանը, պիտի արժևորվեր ավելի ուշ:

Պոլ Կլոդելն իր «Վերլեն» բանաստեղծության մեջ գրում է. «Նա այն նավագն եղավ լքված...» կամ «անծով նավագ, անկիլոմետր ուղիների թափառական»:

Սակայն գույնի ու երանգի բանաստեղծը իր մահից հետո միայն պիտի բացահայտվեր որպես մեծ գեղագետ.

Արդ, միաձայն փառաբանենք մենք Վերլենին այսօր, երբ  
մեզ ասում են, թե մեռած է նա:

<sup>6</sup> Գրիգորյան Կ., Վահան Տերյան, Երևան, ԳԱ հրատ., 1983, էջ 78:

Փառաբանանք է, որ չկար նրա կյանքում, և հրաշքն էլ  
այն է հիմա,  
Որ բոլորս հասկանում ենք իր երգերը<sup>7</sup>:

Վերլենի «Արվեստ քերթողականը» դառնում է սիմվոլիստների գեղագիտության ծրագիրը: Վերլենի երաժշտական բանաստեղծությունը: ... Այն բոլորովին նոր էր՝ գույնի, երանգի, լույսի, մեղեդայնության ներհյուսված զգայնություններով՝ «Երաժշտություն նախքան ամեն ինչ», «ոչ մի գույն, միայն երանգներ» («Ֆրանսիական պոեզիա», Երևան, համալսարանի հրատ., 1984, էջ 292)։

Թող տողը լինի անանուխ ու թյում՝  
Շոյող վաղորդյան քամու մեջ ցրված,  
Մի բարեպատեհ, երջանիկ դիպված...  
Ողջ մնացյալն է գրականություն...

Արդյոք Վերլենի «Ձգացական գրույցից» չե՞ն սկիզբ առել Տերյանի «Ուրվական», «Երկու ուրվական» բանաստեղծությունները:

Խզված է կապը իրականության հետ: Բանաստեղծն այլևս տեսանող է: Երևակայությամբ ուղղորդված պայծառացումներում նրա հոգին թևածում է դեպի այնաշխարհային կարոտները: Նա այլևս այս աշխարհում չէ. նրա հոգին թափառում է կորցրած կարոտների, կորցրած սիրո երկիներանգության մեջ: Նա ստվեր է, ուրու, տեսիլ: Հին, ամայի այգում նա գտել է անցյալի սիրո իր ստվերը, և երկու ուրուներ ոգում են անցած սիրո զմայլանքը հին.

Հին ու ամայի այգու մեջ ցրտին  
Երկու ուրուներ անցյալն ոգեցին.  
-Հիշու՞մ ես դու մեր զմայլանքը հին.  
-Ինչու՞ եք ուզում, որ հիշեմ կրկին...  
-Հույսն ինչքա՞ն մեծ էր, երկինքն ինչքա՞ն բաց  
-Մութ երկինք թռավ հույսը պարտված...<sup>8</sup>

<sup>7</sup> Ֆրանսիական դասական քնարերգության ծաղկաքաղ, Երևան, «Սովետական գրող», 1976, էջ 198-200:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 142:

Տերյանի «Երկու ուրվական» բանաստեղծության մեջ վերիրական կարոտների լուսեղեն աշխարհում երկու ուրուներ հավերժորեն ձուլվում են իրար: Կյանքը հաստատվում է անհայտ մի աշխարհում: Այլևս չկան իրական կյանքի խելահեղ տանջանքները, ահարկու օրերի խավարը. կյանքի իրական գույները մշուշվում են, մեկ ուրիշ Լույս է հավերժորեն ցոլում-Անհայտ աշխարհի Հավերժական Լռության մեջ («Մթնշաղի անուրջներ», Երկու ուրվական, էջ 178).

Ես եմ, դու ես, ես ու դու  
Գիշերում այս դյուֆական,  
Մենք մենակ ենք,- ես ու դու.  
Ես էլ դու եմ, ես չկամ...

Մոռացել ենք անցյալում  
Տրտունջ, թախիժ ու խավար.-  
Մի ուրիշ լույս է ցոլում  
Մեղմ ու անուշ մեզ համար...

Նույն՝ Գեղեցկության Տեսիլքի թրթռացող ստվերն է «Ուրվական» բանաստեղծության մեջ: Չկա սեր իրական աշխարհում. այն ապրում է անհայտ հեռուներում՝ որպես թրթռացող լույս, անանց կարոտ լույս հեռուներում. մեկ այլ, ուրիշ աշխարհի («Մթնշաղի անուրջներ», Ուրվական, էջ 166 ).

Մթնշաղային ժամերին, երբ ես  
Ընկնում եմ, հոգնած օրերից ունայն,  
Հայտնվում ես դու նուրբ ու լուսերես  
Ու հետըս նստում քնքշությամբ անձայն...  
...Ու քեզ հետ նստած, գիտեմ,- դու չես այն,  
Ըստվերդ է միայն, ըստվերդ է միայն...

Այո՛, անվիճելի են Վերլենի «Չգացական գրուցի» միստիկ տրամադրությունների նուրբ անցումները Տերյանի այս երկու ստեղծագործություններում:

1871 թվականի մայիսին սիմվոլիստ բանաստեղծներից ամենախենթը՝ Արթյուր Բեմբոն, գրում է. «Ես ուզում եմ լինել պոետ, և ես փորձում եմ դառնալ պայծառատես... Խոսքն այն մասին է, որ հասնեմ բոլոր անհասկանալի զգացումների բացահայտմանը: Տառապանքները մեծ են, սակայն հարկավոր է

լինել ուժեղ, եթե ծնվել ես պոետ... Նա փնտրում է ինքն իրեն, նա ինքն է խմում ամբողջ թույնը»<sup>9</sup>:

Այս խոսքերի մեջ է կարծես սիմվոլիզմի գեղագիտական ըմբռնումների հոգևոր կողմը: Բանաստեղծը, փորձելով վերձանել անհասկանալին, մինևնույն ժամանակ խորանում է իրական կյանքի ցավերի մեջ. նա ինքն է խմում կյանքի ամբողջ «թույնը»՝ հավերժական Թախիծը, և քանի որ մեծ Տեսանող է և մեծ մարդասեր, կարող է նաև իր մեջ պահել աշխարհի ողջ ցավն ու դառնությունը:

Տերյանի թախժի երակները նույնպես բխում են համաշխարհային թախժի նույն ակունքներից:

Բողիբը գրեց «թախիժ՝ փողոցի համար», անդունդներում թափառող նրա միտքը փնտրեց անհայտ երկիրը. («Ե՛կ. ճախրի՛ր երազների եզերքում, Անհնարինի աշխարհում, ոլորտներում անհայտի»)՝<sup>10</sup>, փարիզյան թանձր մառախուղների մեջ ապրեց անհայտ հեռուների լուսե անձկությամբ. ամբողջ ժամանակ, ամբողջ էությամբ անձնատուր լինելով մեծ քաղաքների արբեցմանը, խորապես դատապարտված մենության գիտակցությամբ՝ պահեց վսեմ ներշնչանքի մաքուր հույզերը. «Դժգոհ բլուրից և դժգոհ ինձնից՝ կուզեի լիովին մաքրագործվել ու վեհանալ մի քիչ գիշերվա լռության ու մենության մեջ»<sup>11</sup>:

«Անցյալում և մեր օրերում,- գրում է Կ. Գրիգորյանը,- քննադատությունը նշել է միստիցիզմի տարրերը Տերյանի մոտ՝ փորձելով բացատրել այն սիմվոլիզմի ազդեցությամբ, սակայն նա իր լուսեղեն թախիծով հեռու է Մերեժկովսկու կամ Սոլովգուբի մոայլ միստիկական տրամադրություններից»<sup>12</sup>:

Սակայն Տերյանի քնարերգության մեջ միստիկական անհրաժեշտ է դիտել որպես առանձին թեմա, նրա բանաստեղծական գեղագիտության ամենաբարձր ըմբռնում և որակ, նրա հոգևոր լույսի և աշխարհընկալման բացարձակ արտահայտություն: Սկսած «Մթնշաղի անուրջներ» ժողովածուից մինչև «Գիշեր և հուշեր», «Ոսկե հեքիաթ», շարքերից դուրս մնացած երգերում և անգամ սևագրություններում Տերյանն ապրել է Այնաշխարհայինի կարոտներով: Երկու աշխարհների՝ Այսաշխարհի ու Այնաշխարհի սահմանազձեռում ապրող բանաստեղծի հոգին մշտապես թափառել է խորհրդավոր Անհայտի հեռուներում: Տերյանի լռության ու ակնարկների լեզուն դառնում է նրա հոգևոր կյանքի արտահայտիչը: Գեղեցիկի բարձր գիտակցության մեջ Տերյանը հայտնագործում

<sup>9</sup> История зарубежной литературы, Москва, «Высшая школа», 1978, стр. 78.

<sup>10</sup> Բողիբը Ը., Չարի ծաղիկներ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1990, էջ 152:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 168-169:

<sup>12</sup> Գրիգորյան Կ., Վահան Տերյան, Երևան, 1965, էջ 30:

է Աստծուն: Միայն և միայն Գեղեցիկի միջոցով է, որ ընկալվում է բարձրագույն հոգևոր կյանքը: Լուսեղեյան հայտնությունը միակ կարևոր և նշանակալից տարրն է նրա քնարերգության մեջ:

Նարեկացին միստիկ էր և Աստծուն տեսնում էր ամենուր, Թումանյանը միստիկ էր՝ հավերժորեն ձուլված աստվածային էությանը. Տերյանը շարունակում է նրանց՝ իրեն հատուկ նրբությամբ երգելով Լուսեղեն Երկրի կարոտները («Մթնշաղի անուրջներ», Հեռավոր, անել լեռնագագաթներ, էջ 75).

Թող իմ աչքերը լույսից կուրանան,  
 Թող սիրտս լցվի արևի բոցով.  
 -Օ՛, երջանկություն անել բարձրության,  
 Լուսեղեն երկնի անեզրական ծո՛վ...

Ահա «Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում» բանաստեղծությունը: Առաջին հայացքից վերջալույսի բնանկար հիշեցնող բանաստեղծությունը պարուրված է նուրբ, միստիկ շղարշով: Երփնագրողի թրթռուն վրձնահարվածները ստեղծում են իրիկնամուտի դյուբակն հմայքը: Դժգույն լույսերի երփնախաղերը հյուսվում են մուգ սահող տրտմության «ստվերներին»: Ամեն ինչ սուզված է ծաղիկների խնկաբույրի մեջ՝ մենություն, թախիծ, անհայտություն: Զգայուն, արծաթեանգ լույսի պաղ ցուլքերում «Հավետ լուռն է մի տխուր խորհուրդ, Վառվում է հավետ մի անանց կարոտ»: Միայն վերջին տողն է, որ բացահայտում է «անանց կարոտի» առեղծվածը. «Փառքիդ ստվե՛րն է իմ կյանքը կարոտ» («Մթնշաղի անուրջներ», էջ 46):

Հայտնության խորհուրդը. այս է բանաստեղծի բացարձակ ձգտումը: Իրականի և անիրականի, տեսանելիի և անտեսանելիի կապը ընկալվում է վերջին տողի լուռ ակնարկով:

Միշտ անակնկալ, անսպասելի, երբ հուսահատությունն անցնում է բոլոր սահմանները, որտեղ ավարտվում են երկրային տանջանքները, որտեղ նրբորեն ներդաշնակվում են լույսն ու մութը, հայտնվում է մեկը: Մեկն անուն չունի, այն տեսիլք է՝ լույսի և մաքրության, սփոփանքն է ու սեր անվախճան («Մթնշաղի անուրջներ», Կարոտ, էջ 40).

Իմ անվերջ ճամփի տանջանքից հոգնամ՝  
 Ես ննջել էի ոսկեղեն արտում.  
 Ու ճչաց սիրտըս վայելքից անկարծ.

-Թվաց, որ մեկը կանչում է տրտում...

Ամեն, ամեն ինչ չնչին ու ողորմելի է դառնում լուսեղեն երկրի առեղծվածի դիմաց՝ սեր, վայելք, հիշողություն: Ահա «Կարուսել» բանաստեղծության այս տողերը («Ոսկի հեքիաթ», հ.1, էջ 202).

Եվ այն վալսը- «Անդարձ ժամանակ»,  
Ծառուղին ամայի պուրակում,  
Եվ գիշեր, և՛ համբույր, և՛ լուսնյակ...  
Տաղտկալի՛, ձանձրալի՛ պատմություն...

Գեղեցիկի չընդհատվող որոնումը իրական կյանքի տանջանքների մեջ մշտապես հայտնագործում է Անհայտին:

Ահա կրկին ուրվագծվում է նրբահյուս մթնշաղի անմոռաց հեքիաթը: Լույս հնչյունների թրթիռը դողում է խավարում, լուծվում վառվող, մարող աստղերի ցուլքերի մեջ, նրբորեն շեշտվում են լույսի անցումները, ստեղծվում է բնանկարը, որտեղ ձուլվում են հոգին ու բնությունը: Տողերի ներսում սահող մեղմ երաժշտությունը հյուսվում է անսահման հեռուների զգացողությանը, լուծվում օդի մեջ: Բանաստեղծը կրկին դիմում է մեկին: Ո՛չ, դա ցնորք աղջիկ չէ. դա ավելին է, քան աշխարհիկ հույզը. «հեռաձավալ անհայտներում» առկայծում է «անձանոթ տաճարի» պատրանքը. («Մթնշաղի անուրջներ», Եվ մոռացված, և անմոռաց հեքիաթներ, էջ 30).

-Կյանքըս հավետ քեզ անձանոթ տաճարում  
Կանթեղի պես առկայծում է քո դիմաց...

Անուրջների այս շղթայում կա մի երգ՝ անասելի նրբությամբ հյուսված մի աղոթք, հոգևոր լույսի պայծառ մի մեղեդի, անմրցելի՝ իր անսպառ քնքշությամբ: Կապույտ հեռուներից հնչում է մի ձայն. երկնային Լույսն է, որ իջնում է երկիր: Տեսիլքը դառնում է իրական, շարժում է թփերը, շրշում ու կանչում: Բանաստեղծի անմահ հոգին հավերժորեն ձուլվում է Լույսին ու անէանում անհայտ հեռուների կապույտ անրջանքում («Մթնշաղի անուրջներ», էջ 90).

Կանչում ես անվերջ  
Կապույտ հեռվից,



Շշուկով անուշ  
Կանչում ես ինձ...

...Այս իրիկնային  
Կապույտ երկրում  
Դու ես միշտ շրջում  
Ու մեղմ երգում...

1912 թվականին Տերյանը Անթառամ Միսկարյանին գրում է. «...Եվ ահա այդ հավերժական շշուկից այն մասին, որ ես մեռած եմ, որ ես մեկի ստվերն եմ, որը մի ժամանակ ապրում էր, մի տեսակ տարօրինակ եմ զգում՝ լավ և տխուր: Այդ պահերին զգում եմ ինչ-որ ազատություն, խանդաղատագին հնազանդություն և «մեղմություն»:

...Եվ հանկարծ տեսնում եմ արևը... Կարծես թե հարություն ես առնում, բայց հարություն ես առնում մի այլ տեսակի կյանքով, ապրում ես ինչ-որ այլ տեսակի զգացմունքներով, սրված ու նուրբ, ես կասեի «երաժշտական զգացմունքներով...»<sup>13</sup>:

Նույն թվականին է գրված «Մահ-ցնորք» բանաստեղծությունը:

Թե՛ նամակում, թե՛ բանաստեղծության մեջ նույն՝ հոգիացած ինքնատուգումն է, Հավերժական հրճվանքը, մեռնելու և հարություն առնելու գաղափարը: Մահը՝ որպես կյանքի սկիզբ, Գեղեցկության անքննելի կարողություն. («Ոսկի հեքիաթ», էջ 187).

Փռված եմ ահա քո գեղեցկության,  
Քո անքննելի կարողության դեմ.  
Լուսավորի՛ր սև համրությունն իմ տան.  
Ամբողջ աշխարհը քո ցուլն է արդեն:  
Հայտնվի՛ր անհուն փայլով ու փառքով,  
Ժպիտղո՞ւ փոփո իմ երկրի մթնում.  
Տանջի՛ր ինձ վերջին քաղցր տանջանքով,  
Քեզ գո՛վք, քեզ օրհնե՛ք, քեզ փա՛ռք անհատնում...

Տերյանի թախիժը հատկապես խորն է 1904-1908 թվականներին գրված բանաստեղծություններում: Նրա նուրբ հոգին անգոյության խավարում մոր-

<sup>13</sup> Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, «Սովետական գրող», 1979, էջ 49:

մոքում է վերահաս տագնապներից. ահագնանում է երկյուղը, ծնվում է մթին կասկածը («Մթնշաղի անուրջներ», Մոայլ թաղումի ջահերի նման, էջ 77).

Իմ սրտում միայն սառած հեկեկանք,  
Բայց արցունք չկա իմ սև օրերում.  
Մեռնում է սիրտըս անհուն խավարում,  
Եվ դու կա՞ս արդյոք, լուսե անրջանք...

Նրա հոգևոր երկինքը, որ թափառում էր Անհայտի ոլորտներում, մշուշվում է դաժան իրականության առջև: Ցավը հայրենիքի, կորուստները անդառնալի, ցուրտ հյուսիսը նրան նետում են խորին անձկության մեջ: Թանձր խավարում սև շղարշով են պատում հոգու արևները: Տենդոտ, խենթ մի ցանկությամբ նա հենարան է փնտրում ու ճնշող մենության մեջ կանչում Լուսեղեն Յնորքին:

1904 թվականին Տերյանը գրում է «Աղոթք» բանաստեղծությունը, որն ունի բնաբան՝ վերցրած Սաֆոյից. «Քո պայծառ գահի անհաս բարձունքից

Մի՛ մերժիր սրտիս աղոթքը անբիժ»:

Լռության գիշերն է հոգու մեջ, հոյսի դռները փակված են հավիտյան, խավար անդունդներում կորցրել է վերադարձի ուղին:

Տագնապի սարսուռներով հնչում է հուսահատ աղոթքը. միայն Նա՛ է փրկությունը («Մթնշաղի անուրջներ», Յնորք, էջ 76).

Ես ընկա անդունդները խավար,  
-Իմ ցնորք, նորից քեզ եմ կանչում.  
Մոռացա ուղիներըս պայծառ,  
Իմ սրտում դառը մութն է շնչում:

Դու անմութ աշխարհում ես ապրում,  
Հիշի՛ր դու խավարում տանջվողին,  
Քո սրտում արևներ են վառվում,  
Արևի՛ր սև կյանքիս մութ ուղին...

Տերյանը եկել էր գույների և ձևերի անձանոթ աշխարհից: Եվ նրա հոգին ինքնամոռաց տենչանքով թևածում է նույն աշխարհը՝ հայտնագործելով նոր հույզեր: Սրանով նա փախուստի չի դիմում, այլ բացահայտում է, գտնում իրեն՝

հաղորդակցվելով Բացարձակի, Անվախճանի խորհուրդներին («Մթնշաղի անուփքներ», էջ 97).

Հեռու երկրի լուսե հովտում  
 Օրերն ուրիշ երգ են հյուսում,  
 Կյանքից հոգնած սիրտս տրտում  
 Այն երկիրն է միշտ երազում...

Սակայն առանձնանալու զորավոր կարոտը չի կտրում նրան իրական աշխարհից:

Անհայտ հեռուներում կյանքի և մահվան առեղծվածը քննող բանաստեղծի հոգին հույզերի ամբողջ խռովքով ու ողբերգությամբ որոնում է փրկության ուղի իր՝ արդեն տեսիլ դարձած հայրենիքի համար:

Անձնական ցավի ամբողջ դրաման խտանում է հայրենական Տառապանքի մեջ: Սև խոհերի մութ կասկածներում բարձրանում են հուսահատ հարցումները՝ ո՞վ կգա, ո՞վ կփրկի, ո՞վ ցույց կտա տան ճանապարհը (հ. 1, էջ 275).

Մենք նետված ենք բոլորս  
 Երկիրն այս հեռու,  
 Կանչում ենք միշտ – ձայն չկա,  
 Աղոթում ենք ու՛մ,

Ո՞վ կփրկե, ո՞վ կգա,  
 Որ տանի մեզ տուն...

Այս մորմոքումները, անընդհատ ծավալվող վշտի հեծեծանքները հիշեցնում են ֆրանսիացի բանաստեղծի լուռ տառապանքները: Աշխարհի, հայրենիքի ցավով ապրող հոգիների համար համամարդկային վիշտը դառնում է անձնական ողբերգություն. «Բայց ոչ մի հարազատ ձեռք,- գրում է Ա. Ռեմբոն,- և որտեղի՞ց հայցել օգնություն... Երթ, բեռ, անապատ ու զայրույթ: Ու՛մ վարձկանը դառնալ: Ո՞ր գազանին պաշտել: Ո՞ր սրբապատկերը երկրպագել: Ու՛մ սիրտը կտրել: Ո՞ր կեղծիքը պետք է թաքցնել: Ու՛մ արյունով պետք է քայլել» (Ա. Ռեմբո, Խոսքի Ալքիմիա, Մի եղանակ դժոխքում, էջ 87):

Սակայն երկու բանաստեղծների համար էլ փրկության մի դուռ կա միայն: Երկրային տանջանքներից, գիշերային անձկություններից, խավարա-

մած վիհերից այն կողմ հայտնվում է Նա՝ կարեկից, աննվագ, գորովոտ: Անդիմադրելի, ակնթարթային արագությամբ փոխվում են տազնապան ու մահվան սարսուռները, ցրվում է հոգին պարուրած միգամածությունը, հայտնվում է Լույսը. «Անդունդից Քե՛զ եմ դիմում, Տեր», - հնչում է աղաղակը (Ա. Ռեմբո, նույն տեղում, էջ 84):

Նուրբ, թրթռագին, տազնապահար, նաև անորակելի մի խաղաղությամբ Տերյանը հնչեցնում է իր լուսավոր աղոթքը՝ հաղթահարելով սև մշուշների վիատեցնող մղձավանջը (Վ. Տերյան, հ. 1, էջ 289).

Գիշերն իջավ սև ու չարաչք.  
Լինենք խաղաղ, մեղմ աղոթենք,  
Գուցե բացվի լուսե հրաշք,

Գուցե անցնի խավարակուռ  
Մշուշն այս չար, և ազատվենք-  
Լինենք մանուկ, լինենք մաքուր.

Մեր սրտերում պահենք մի հուր,  
Խաղաղ մի լույս խավարում չար,  
Գուցե բացվի գնդանն անդուռ.

Օրհնենք բոլորն, ինչ էլ որ գա,  
Եվ ընդունենք սրտով հոժար,  
Գուցե և Նա մեր ցավն զգա...

1917 թվականին գրված այս երգը իր խորքով հոգևոր աղոթք է և հիշեցնում է միջնադարյան շարականները, պահպանված է անզամ շարականի տաղաչափությունը՝ եռատող, որը խորհրդանշում է Սուրբ Երրորդությունը: Բանաստեղծությունը շնչում է հոգևոր երգերին բնորոշ լուսավոր մեղեդայնությամբ, զգացմունքների բացարձակ մաքրությամբ, միայն Տերյանին բնորոշ լուսեղեն թախծի անցումներով:

Նույն թվականին գրված այլ բանաստեղծություններում՝ «Տեսկն իմ ցուրտ և անզարդ», «Սրտակեզ կսկիծ մի հին», «Երկու դժբախտ մանուկ», «Անզարդ իմ օրվան...», կարծես ընդհատվում է աղոթքը, ցավը թանձրանում է՝ դառնալով անորոշություն, լքվածություն, հուսահատություն: Բոլոր պատկեր-

ներն էլ ունեն ենթատեքստեր: Լուսեղեն, սպասումների մեջ, սև գիշերների անհույս խավարում պայծառատես բանաստեղծի հոգին թափանցել է ներկայից այն կողմ՝ տեսնելով և՛ եկող աղետներն ու մահերը, և՛ մոխիրներից հարություն առնող հրկեզ հոգին («Անզարդ իմ օրվան», հ. 1, էջ 273).

Անզարդ իմ օրվան, անտուն իմ կյանքին  
Դեռ շատ է գալու և՛ բոթ, և՛ աղետ,  
Մինչև ազատվի հրկեզ իմ հոգին,  
Հարություն առնե մոխրից առհավետ...

Կյանքի ոսկեղեն հեքիաթը հյուսող բանաստեղծը հեռվից տեսնում է Նաիրի երկրի արյունոտ համապատկերը: Դատապարտված են սերը, երագանքը, իրական հույզերը: Սաստկանում է մահվան գիտակցությունը, անխուսափելի է կործանումը («Սրտակեզ կսկիծ մի հին», հ. 1, էջ 286).

Գնում եմ ուղին իմ ծուռ  
Եվ գիտեմ՝ դեպի կորուստ.  
Նիշված է բախտս վերուստ...  
Եվ չըկա փրկության դուռ...

Այս նույն՝ եղբրական տագնապներն են հնչում նաև այդ թվականին գրված նամակներում: Երկու զավակների հիվանդությունն ու մահը, իր խորացող հիվանդությունը, հայրենիքից եկող լուրերը, կիսատ մնացած գործերը. ամեն ինչ դառնում է «սրտակեզ կսկիծ»:

«Այստեղ, ոչ ոքի չճանաչելով, հիվանդ, ես անգոր եմ», - գրում է Հովի. Թումանյանին (1917, 17 մարտի, Սուխումի, հ. 4, էջ 309):

«Ես հիմա այնպես տխուր-տխուր եմ, բայց և թեթև, կարծես վախճանվել եմ, կարծես կենդանի չեմ արդեն, այլ սոսկ սավեր, հուշ որևէ տեղ», - հնչում է մի այլ նամակում (1917, հուլիսի II կես, Ախալքալաք, Մ. Շահխաթունուն):

Իսկ Կ. Միքայելյանին գրած նամակում խնդրում է իր համար Մետերլինկ գտնել. «Ես կուզեի Մետերլինկ ևս վերցնել, բայց որտեղի՞ց ճարեմ նրա բնագիրը: Խնդրեմ այդտեղ Գոթիեյի գրախանութում հարցնես, թե արդյոք կա՞ Մետերլինկի երկերի ժողովածուն և ի՞նչ արժե» (1917, 11 փետրվարի, Սուխումի, հ. 4, էջ 107):

Ինչու՞ էր Տերյանը ցանկանում հատկապես Մետերլինկ: Դա միայն մի բացատրություն ունի. Մետերլինկի իմաստասիրությունը կյանքի և մահվան մասին. մահվան եզակի, բացառիկ լինելը, բացարձակ հոգիացումը, սովերների այնաշխարհը: Ծնվում են մութ կասկածները, երկփեղկվում է հավատը. «Լուսեղեն Հրաշքի» պատկերը աղոտանում է, պողթկում են ահով լցված աղաղակներ («Երկու դժբախտ մանուկ», հ. 1, էջ 285).

Ո՛վ մեր հոգին խոցված  
Պիտի փրկե մահից,  
Եթե չըկա աստված...

Նույն անհույս խռովքի մեջ է Ա. Ռեմբոն. «Հոգին մոտիկ է, ինչու՞ Քրիստոսը ինձ օգնական չէ. ինչու՞ չի ընծայում հոգուս ազնվություն և ազատություն: Ավա՛ղ, Ավետարանն էլ սպառեց իրեն: Ավետարա՛ն, Ավետարա՛ն:

Աստծուն սպասում եմ անհագ որկրամոլի նման...

...Այժմ ես անիծված եմ. սոսկում եմ հայրենիքից» (Ա. Ռեմբո, Մի եղանակ դժոխքում, էջ 86-87):

Ինտրայի ներաշխարհային պայծառացումներում նույնպես բեկվում է հավատը. աղոթքները ինչու՞մ են մերթ արտասվագին հափշտակություններով, մերթ ընդհատվում տարապայմանի երկյուղած համադրությամբ. «Վասնզի ու՛րկե է Աստծու գաղափարովը չպաշարվելու, Հիսուսի կերպարանեն չմշտագրավվելու այս անկարողությունը. ինչու՞ ամեն բան Եկեղեցվոյն մեջ այդ տրոսմեցնող տեսիլները կվերակոչե... Ինչու՞ անոնցմով լալագին սպառնալիք մ՛ է ամեն բան»<sup>14</sup>:

Անգամ մեծ Նարեկացին ապրել է տարակուսանքների ու տագնապների մեջ.

Զլինի՛, որ ես երկնեմ՝ չծնեմ,  
Ողբամ՝ չարտասվեմ, խորհեմ՝ չհառաչեմ,  
Ամպեմ՝ չանձրևեմ, քայլեմ՝ չհասնեմ,  
Ես ձայն տամ, սակայն դու ինձ չլսես,  
Պաղատեմ, սակայն անտեսես դու ինձ...

Սակայն այս կասկածները տևական չեն և երբեք չեն մթագնել մեծ

<sup>14</sup> **Զրաքյան Տ.**, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1981, էջ 142:

հոգիների՝ մշտապես խնկարկվող քաղցր իմացականությունը: Նրանց բոլոր պայծառացումները գալիս էին Այնաշխարհից և նյարդ առ նյարդ միանում և ամրանում մեկ Գաղափարի մեջ:

«Քեզ այնքան անգույթ...» բանաստեղծության մեջ արդեն Տերյանը հաստատ է իր հավատի մեջ («Քեզ այնքան անգույթ...», հ. 2, էջ 14).

Քեզ, իմաստնագույն  
Խիզախ նավապետ,  
Հանձնում եմ հավետ  
Նավակն իմ բեկուն.  
Միայն դու, անքուն  
Բոցե նավավար,  
Գիտես ճանապարհ  
Մթնում այս անհուն...

Գրականագիտության մեջ առաջին անգամը չէ, որ Տերյանի և Չարենցի քնարերգության ակունքներից մեկը համարել են Ալ. Բլոկի ստեղծագործությունը: «Մյուս կողմից չի կարելի չնշել,- գրում է Վ. Դավթյանը,- թե Բլոկի պոեզիան ինչպիսի մասնակցություն է բերել հայ երկու այնպիսի մեծ բանաստեղծների ձևավորմանը, ինչպիսիք են Տերյանն ու Չարենցը: Եվ այդ ամենը հույժ բնական է. ժողովուրդների մշակույթները միմյանց փոխազդելով ու հարստացնելով են զարգանում»<sup>15</sup>:

Ինչպես Տերյանի, այնպես էլ Ալ. Բլոկի ամբողջ քնարերգությունը ներթափանցված է այներկրային տազնապներով: Անցողիկ հուզում չէ այդ իմացականությունը, այլ ճշմարիտ խոստովանություն ու կանխագուշակություն. «Ոչ ոք չի մեռել, ու չի ավարտել ապրել ոչ ոք»<sup>16</sup>, - գրում է Ալ. Բլոկը:

Տերյանի «Հիմա երկրում իմ բարձրիկ» բանաստեղծությունն իր խորքով և պատկերային համակարգով հիշեցնում է Ալ. Բլոկի «Տասներկուսը» պոեմը: Խորհրդանիշ պատկերները՝ սև գիշեր, սպիտակ ձյուն, մրրիկ, վարդերով պսակված Հիսուս, որ առաջնորդում է ժողովրդին (Ալ. Բլոկ, Տասներկուսը, էջ 186).

Սև իրիկուն.  
Սպիտակ ձյուն.

<sup>15</sup> Բլոկ Ա., Եսենին Ս., Ընտիր երկեր, Երևան, «Սովետական գրող», 1986, էջ 14:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 32:

Քամի՛, քամի՛.  
 Մարդ հագիվ է ոտքը գցում.  
 Քամի՛, քամի՛.

Ողջ աշխարհում միանգամից...  
 Ձյունափոշու մեջ փայլում,  
 Մթնում առաջ է քայլում  
 Ինքը՝ Հիսուս սուրբ որդին,  
 Վարդե պսակը գլխին...

Ահա Տերյանի բանաստեղծությունը. բարձրիկ մի երկիր, լռիկ ամայություն, ահեղ ու խոր գիշեր, անտուն շրջող մի ճամփորդ՝ ճակատը փշով պատած, բուք, մրրիկ, ձյունի վրա բացվող վարդեր, դառը լացող Հիսուս («Հիմա երկրում իմ բարձրիկ», հ. 2, էջ 64).

Բուքն է, մրրիկն է կոծում,  
 Դառն է թախիժը նրա.  
 Վարդեր են անվերջ բացվում,  
 Վարդեր՝ ձյունի վրա:

Եվ լալիս է Անցորդը - լույս  
 Եվ գնում է դառը լացով.-  
 Օրհնի՛ր, օրհնի՛ր, Հիսուս,  
 Երկիրն իմ՝ երկունքի ծով..

«Տասներկուսը» պոեմը գրվել է 1918 թվականին, Տերյանի բանաստեղծությունը՝ 1913-1916 թվականներին Պետերբուրգում: Անվիճելի է երկու ստեղծագործությունների նույն մտահղացումը, և այն, որ Տերյանն ավելի վաղ է գրել բանաստեղծությունը: Դժվար է այժմ պատճառաբանել երկու բանաստեղծների միևնույն ակունքները, միայն այն, որ իրենց միաստիկ որոնումներում՝ որպես Բացարձակ Ճշմարտություն, հայտնվում է Աստծո Որդին:

«Պետք է համառ դեռ կիզեն» բանաստեղծությունն ամբողջական տպագրվել է 1940 թվականին «Գրական թերթում» և կարծես լրացնում է «Հիմա երկրում իմ բարձրիկ» ստեղծագործությանը (հ. 2, էջ 58).



Նա թևերով հրավառ  
 Նա զորքերով լուսեղեն  
 Գուցե գալիս է արդեն  
 Դեպի երկիրն իմ խավար:

Սիրտ, հավատա, որ լուսե  
 Վառ է մի նոր Բեթղեհեմ-  
 Գուցե պարզված են արդեն,  
 Բաց են թևերը բոցե:

Նա պիտի գա լուսեղեն,  
 Նա պիտի գա հրավառ-  
 Դեպի երկիրն իմ խավար-  
 Խոր է խորհուրդն ու վսեմ...

Եվ այսպես՝ ներանձնյա խորքերում Կատարելության ձգտող բանաստեղծը անբացատրելի անձկությամբ թափանցել է Այնաշխարհային սահմանները, հաղորդակցվել և մարմնավորել լուսանյութ Տեսիլքին՝ որպես փրկության և վերհառնումի գաղափար:

Սա արդեն ոգու հեղափոխություն էր. Հանճարը իր որոնումների ճանապարհին, Ցավի ու Տառապանքի վիթխարի փորձով իմաստնացած, գտել էր ինքնաճանաչման ուղին, հասել ոգու և ստեղծագործական բացարձակ ազատության:

Տերյանի քնարերգության սահմաններն ավելի ընդարձակ են, քան մինչև այժմ ներկայացվել է՝ անձնական ցավի դրամա, աշնան ու թախծի նվագներ, գարնան ու վերադարձի երգեր, հեղափոխական երգեր, մայրական և հայրենասիրական երգեր, սակայն չէին առանձնացվել նրա հոգևոր երգերը: Տարբեր շարքերում կան երեք տասնյակից ավելի հոգևոր երգեր, որոնք դեռ քննելու, վերլուծելու կարիք ունեն:

Բանաստեղծի հոգու պայծառացումներում կա ևս մի նուրբ երակ. դա Գեղեցկության Տեսիլքի պատրանքն է, որ հայտնվում է որպես լուսեղեն անուրջ՝ ճերմակ ու մանրիկ սարսուռներով հավելվով գրեթե բոլոր շարքերում:

Պետք էր հավաքել անըջահյուս այդ նվագները՝ բացահայտելու մեծ սիրահարի հոգու զարթումները, որտեղ արարվում է լուսեղեն երկրի առասպելը: Անդարձության մութ անդունդներ նետված բանաստեղծը խաղաղ

հանգրվան է որոնում նյութական ու չար իրական աշխարհում (Շարքերից դուրս բանաստեղծություններ, հ. 1, էջ 272).

Եթե սեր չկա ինչի՞ համար  
Պիտի չարչարվեմ այս չար աշխարհում-  
Կգնամ հողի գիրկը խավար,  
Կըլռեմ որպես քարն է լռում...

Մութ կասկածների անձկության մրրիկի մեջ, ինքն իրեն ճանաչելուց արդեն ուժասպառ, մտածումների ծավալվող խռովքներում իրական կյանքը բանաստեղծի համար դառնում է ունայն՝ անզոր աշխարհի չարության դեմ («Անդարձ կորել է սրտիս խնդումը», հ. 2, էջ 7).

Աշխարհն անգութ և ահավոր է,  
Եվ ի՞նչ է սերը- անզոր մանուկ մի.  
Չարն է հաղթողը, չարն է հզորը,  
Թախիծն անզոր է, և սերն անօգ է...

Ո՛հ, սա դեռ ավարտ չէ... Սերը՝ «Աստծու այդ երրորդությունը» (ընդ-գծումը՝ Ս. Սարինյանի), միացնում է հուսալքված հոգու կասկածներն ու տագ-նապները անուրջի հայտնության տեսիլքով. անջատման ցավի, կյանքի մոլոր ուղիներում կորցրած հույսի ճանապարհներին սաստկանում է կարտոի և սպասման արբեցնող տենչանքը: Տողերի ներսում հնչում է արծաթե ծիծաղը, բառերը խորհրդավոր արշալույսի հրաշք են քանդակում ու լռում հանդիպման խորհրդի վերջին արձագանքով («Ես չգիտեմ, ուր են տանում...», հ. 1, էջ 72).

Եվ իմ մոլոր ուղիներում, ո՛վ գիտե,  
Գուցե մի օր դու երևաս լուսերես.  
Գուցե ժպտաս քո խոսքերով արծաթե  
Եվ մութ սրտիս նոր խնդության լույս բերես...  
...Արդյոք ու՞ր ես, խորհրդավոր արշալույս,  
Հանդիպումի երջանկության պայծառ օր...

Երբեք չի ընդհատվում «ուրիշ ավերի» քնարական վեպը: Թեթև, մեղմ երանգներով ուրվագծվում է գիշերային մեղմաշունչ մուլթը՝ գարնան կարմիր և

կանաչ տաք գույների շքեղ համադրությամբ: Իրար ձուլված մահվան ու կյանքի խորհուրդների մեջ քաղցր պատրանքը դառնում է փարոս, օրինանք, կյանքի չար մշուշները ցրող մի «անուշ սուտ» («Իմ մոլոր ճամփին դու հանկարծ իջար», էջ 73).

Իրար ձուլվեցին իմ մեջ մահ ու կյանք.  
 Հոգիս մատնեցի քո մառախուղին,  
 Ընդմիջտ օրինեցի անհաստատ ուղին,  
 Ուր փարոսում ես դո՛ւ, քաղցր պատրանք...

Մերթ մարող, մերթ պայծառացող զգայնություններով շնչավորվում է բնությունը: Դալուկ աշնան գունատ դեղինը անէանում է տխրության խորացող ծալքերում, երկնքում դողում են աստղերը՝ ճերմակի ցլացիկ, պաղ, սարսուեցնող դյուֆանքով, անծայր դաշտում միայնակ հոգին գնում է անցնող երազների հետևից, ու մեռնող, մարող գույների ու ձևերի մեջ հայտնվում է հեռացող տեսիլքը՝ նման դյուֆական գիշերվա (14 տող, էջ 82).

Ես ընկած եմ անծայր դաշտում միայնակ,  
 Երազներ՛րս, երազներ՛րս, որ անցան.  
 Արդյոք դու՛ ես գիշերի պես հերարծակ,  
 Գիշերի պես խորհրդավոր, դյուֆական...

Երփնագրի և երաժշտության փոխադարձ ներթափանցումներով են շնչում Տերյանի անանց կարոտները: Իրիկնամուտի տաք գույների անդորրության մեջ, որտեղ երանգները դառնում են հոգու երաժշտություն, այլևս մոռացվում են սիրտ մաշող տագնապներն ու դժգոհությունը: Ինքնասուզումներում թափառող միտքը հայտնագործում է վարդ ամպերի դողացող հրդեհը: Մայրամուտի արևից վարդագունած ամպերը և առվի կանաչ երփներփությունը համադրվում են տպավորապաշտների լուսային թրթռումների դյուֆական ցլանքին, և ստեղծվում է երկնային հնչեղ մաժոր՝ ցրելով մոպե կյանքի սև ստվերների տրտմությունը («Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում», էջ 91).

Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում,  
 Իրիկնաժամին նստում եմ մենակ  
 Կանաչ առվի մոտ, ուռիների տակ,  
 Ու հոգնած սիրտս էլ չի դժգոհում:

...Եվ իմ մութ կյանքի սևերում դժկամ՝  
 Ես գիտեմ, պիտի ժպտաս, լուսավոր,  
 Պիտի ողջունես ուղիս հեռավոր,  
 -Սրբազա՛ն երագ, կարոտալի՛ ժամ...

1910 թվականի ապրիլի 7-ին Տերյանը Մարթա Միսկարյանին գրում է. «Տխուր է: Արդյոք երազա՞նքն է անլինելիի մասին, թե՛ կարոտը անդառնալի – հեռավորի մասին, չգիտեմ: Ինչ-որ տարօրինակ զգացողություն է: Կարծես թե նամակը հին, վաղուց ծանոթ, մի ժամանակ մոտիկ և անակնկալ հեռացած մեկից է: Կարծես հարազատ և տարրորեն- հեռու, գուցե առհավետ, նույնիսկ ամենից հավանական է, առհավետ հեռու մեկից: Մի՞թե մենք կհանդիպենք...» (Վահան Տերյան, հ. 3, էջ 108, Մ. Միսկարյանին):

Այո՛, միևնույն ժամանակ հարազատ և այնքա՛ն հեռու Տերյանը ստեղծում էր իր «լուսե երազը»: Ինչպես երգեհոնային համանվագում, երբ անընդհատ հնչող, ստվերային մի ելևէջ իրեն է ենթարկում ամբողջ մեղեդին, այնպես էլ Տերյանը նետվում է դեպի աստվածացրած այդ անրջանքը՝ մշտանույն անձկությամբ հավաքելով իր հորինած լուսեղեն հեքիաթի բոլոր թելերը («Հեռու ես, անհաս, իմ լուսե երագ...», հ. 1, էջ 96)։

Քո հեռու երկրի ուղին չգիտեմ.-  
 Գուցե ես ինքս ստեղծել եմ քեզ,  
 Աստվածացրել եմ, որ քեզ աղոթեմ,  
 Հրամայել եմ, որ վրաս իշխես...

Բնության բոլոր առարկաներն ու բոլոր հրապույրները՝ ծաղիկներ, դաշտեր, գիշեր, ջրեր, ամեն ինչ կյանք է առնում այդ խոսուն և միևնույն ժամանակ անգո ցնորքի զորավոր զգայնություններից: Ամենուր նա է՝ սրբազան տեսիլքը անուրջ կույսի ծավալուն սարսուռներով, երագի և իրականության մեջ ծփացող հիասքանչ գեղեցկությամբ («Իմ ցնորքին», հ. 1, էջ 199)։

Գեղեցկությանդ, որպես մահապարտ,  
 Երկրպագում է բանաստեղծը միշտ  
 Եվ ողջունում է խնդությամբ հպարտ  
 Տառապանք ու վիշտ...  
 ...Ո՞վ է քո ոսկի ժպիտը վառել  
 Այս աղջամուղջում...

Անհունորեն հարուստ այս գույների և զգացումների մեջ չկան արյան խոռվքի ու անցողիկ վայելքների ծանձրույթն ու արբեցումը. զգայական տարրերը բացակայում են ամբողջովին, և այս բոլոր տեսակի հուզումներից վեր Տերյանը կերտում է ցնորք աղջկա երփնագիրը («Ցնորք», հ. 1, էջ 45).

Նա ուներ խորունկ, երկնագույն աչքեր,  
Քնքուշ ու տրտում, որպես իրիկուն,  
Նա մի անձանոթ երկրի աղջիկ էր,  
Որ աղոթքի պես ապրեց իմ հոգում...

«Անդարձ աշխարհի վարդագույն միգում» թրթռում են անանց հույզերի ծփանքները: Բանաստեղծն այլևս չի ապրում այս աշխարհում: Նա ունի այդ շնորհը՝ չտեսնելու իրական աշխարհի հեքերն ու հեծեձանքները: Նա հայտնագործել է «թովիչ առասպելը մի անանուն երկրի: Եվ տարաշխարհիկ գույների և ձևերի աշխարհում թրթռուն գծերով պատկերվում է Նա՝ Ցնորք աղջիկը»: Բանաստեղծն այլևս մենակ չէ, Նա հաղթել է Մահին («Ես նստում եմ մեն-մենակ», հ. 1 էջ 191.).

Ես գիտեմ լուսեղեն մի երկիր,  
Ես գիտեմ դյուրթական մի հովիտ,  
Ուր հոգին թափում է վշտակիր  
Իր թևերն ու հագնում է ժպիտ:  
Ես գիտեմ մի թովիչ առասպել,  
Ուր ողջ կյանքը հրաշք է դառնում.  
-Քո անուշ անունով միշտ արբել,  
Եվ երգով, որ բնավ չի մեռնում...

Եվ այս սիրո համանվագի ամենաբարձր, տիեզերական տոնը, որ իր մեջ է հավաքում բոլոր խորքային ու ծայնական մեղեդիները, դառնում է համամարդկային սերը՝ որպես մարդեբոցության բարձրագույն արտահայտություն: Այս երգերում այլևս չկան Այնաշխարհային ծայների և հնչյունների պատրանքները:

Տերյանը հեռանում էր... Անմահություն: Հեռանում էր՝ անանձնական սերն ու կարոտները ընծայելով բոլոր մարդկանց, և դա նման էր ինքնագր-հաբերումի («Իմ դուռը բաց է ...», հ. 2, էջ 79).

Իմ դուռը բաց է՝ եկեք բոլոր  
 Անուղիները՝ բաց է հոգիս,  
 Ով թափառում է ուղեմուր,  
 Ում սիրտը չունի քուն ու հանգիստ.  
 ...Հոգիս բացված է ծաղկի նման,  
 Իմ սերը խորն է և անսպառ,  
 Չէ՞ որ լուկ սերն է, սերն է վահան,  
 Եվ սիրտն է, սիրտն է սրտին ասպար...

Տենդագին որոնումների մեջ, որտեղ «մուֆ հավերժության դառնությունն» էր քայլում, կյանքի ու մահվան առեղծվածը քննող բանաստեղծը հայտնագործում է «մարդկային» սերը, սերը մարդու, որ ավելի գեղեցիկ է, խոր: Այս սիրո մասին է ակնարկում Անթառամ Միսկարյանին գրած մի նամակում. «Ես հիմա սովորել եմ շատ բարձր գնահատել «մարդկային» սերը, սերը մարդու նկատմամբ, այլ ոչ թե սեռի, նույնիսկ պատրաստ եմ ավելի բարձր դասել, գերադասել այն սիրուց, որ հազվադեպ է գեղեցիկ ու խոր լինում»<sup>17</sup>:

Նամակը գրվել է 1909 թվականին, իսկ 1914 թվականին Ց. Խանզադյանին մի նամակի հետ ուղարկում է նաև այս բանաստեղծությունը, որի մեջ հոգու վերագարթնումի հոյակապ սլացքը ներհյուսված է ներաշխարհի անապակ շարժումներին, որտեղ սերը դառնում է ինքնընծայման պատարագ («Սիրում եմ ես նրանց...»):

Սիրում եմ ես նրանց, որոնք խենթ են ու անտուն,  
 Նրանց, որոնք կայան չունեն և չունեն խնդում:

...Ա՛խ, կուզեի ես հարազատ և ընկեր լինել  
 Նրանց, որոնք մոռացված են բանտերում անել:

Եվ կուզեի եղբայր լինել նրանց, որ մթին  
 Չարչարանքում կորցրել են կրակը հետին...

<sup>17</sup> Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, «Հայաստան», 1979, էջ 297-298:

«Միսաք Մեծարենցը սիրելի- գրում է Հ. Օշականը,- կը նշանակե Վահան Տերյանը հասկնալ (ինչպես է եղած արդէն իրականութիւնը արեւելահայ մեկ հատիկ իրաւ քնարերգակին համար»<sup>18</sup>:

Այսպես է մտածում Հ. Օշականը՝ «արեւելահայ մեկ հատիկ քնարերգակը», այսպես էր մտածում նաև Ավ. Իսահակյանը՝ «Վերջին երգիչը մեր քնարի»։ գուցե ծայրահեղությո՞ւն է այսպիսի գնահատականը: Սակայն, ո՛չ: Նա տենչաց Գեղեցկությունը՝ որպես փրկություն, որպես գերագույն բարիք: Նրա համար Գեղեցկությունը միակ ճանապարհն էր դեպի Անսահմանն ու Անիմանալին: Նա հյուսեց անուրջների գիրքը և բոլոր բանալիները հանձնեց ժամանակին:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Տերյանի քնարերգության մեջ միատիկան անհրաժեշտ է դիտել որպես առանձին թեմա, նրա բանաստեղծական գեղագիտության բարձրագույն ըմբռնում և որակ, նրա հոգևոր լույսի և աշխարհընկալման բացարձակ արտահայտություն: Սկսած «Մթնշաղի անուրջներ» ժողովածուից մինչև «Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ», շարքերից դուրս մնացած երգերում և անգամ սևագրություններում Տերյանն ապրել է Այնաշխարհայինի կարոտներով:

Երկու աշխարհների՝ Այսաշխարհի և Այնաշխարհի սահմանագծերում ապրող բանաստեղծի հոգին մշտապես թափառել է խորհրդավոր Անհայտի հեռուներում: Գեղեցիկի բարձր գիտակցության մեջ Տերյանը հայտնագործում է Աստծուն: Լուսեղյան հայտնությունը դառնում է միակ նշանակալից ու կարևոր տարրը Տերյանի քնարերգության մեջ:

***Բանալի բառեր*** - անդարձություն, մթնշաղ, անուրջ, տեսիլ, թախիժ, ուրու, արև, ցնորք, մահ, հարություն:

## ЛЕГЕНДА ЛУЧЕЗАРНОЙ СТРАНЫ: ВААН ТЕРЬЯН

АИДА МАРТИРОСЯН

Мистику в лирике Терьёна следует рассматривать как отдельную тему, наивысшее восприятие и качество его поэтической эстетики, исключительное выражение его духовного света и миропонимания.

<sup>18</sup> **Օշական Յ.**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, իններորդ հատոր, Անթիլիաս, Լիբանան, 1980, էջ 450:

Начиная со сборника «Грезы сумерек» до сборников «Ночь и воспоминания», «Золотая сказка», «Золотая цепь», в невключенных в эти серии работах и даже в черновиках Терьян жил в тоске по потустороннему миру.

Душа поэта, живущая на грани двух миров—реального и потустороннего, всегда бродила в таинственных даях Неизвестного.

В высоком осознании красоты Терьян открывает Бога. Открытие сущности Света становится единственно важным и значимым элементом лирики Терьяна.

**Ключевые слова** - безвозвратность, сумерки, греза, видение, тоска, призрак, солнце, фантазия, смерть, воскресение.

## THE LEGEND OF THE SPIRITUALLY ENLIGHTENED LAND BY VAHAN TERYAN

AIDA MARTIROSSYAN

It is a necessity to consider mysticism in Teryan's lyric poetry as a separate theme, as the highest perception and caliber of his poetic aesthetics, the absolute expression of his spiritual illumination and world-vision.

In all his works, starting with "Twilight Dream", "Night and Memories" "Golden Tale", "Golden Chain", and in other poems not included in these collections and even in his drafts Teryan craves for life in the other world.

The spirit of Teryan, living on the border of these two Worlds, has always wandered in the mysterious faraway obscurities. The poet discovers God in his exceptional perception of Beauty. The revelation of the Essence of Light becomes the only significant element in Teryan's lyric poetry.

**Key words** - irrevocably, twilight, dream, vision, melancholy, ghost, sun, fantasy, death, resurrection.



---

---

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԲԱՅԱՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐՈՒՄ (տեսական և կիրառական քննություն)

#### ԷԴԻՏԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Վերաբերմունքի իմաստի դրսևորման տեսակետից խոսքի մասերը զգալիորեն տարբերվում են միմյանցից և օրինաչափորեն առանձին խմբեր են կազմում:

Այս կապակցությամբ արդյունավետ կլինի անդրադառնալ Ս. Աբրահամյանի՝ խոսքի մասերի դասակարգմանը, քանի որ նրա առանձնացրած խմբերն ուղղակիորեն կապվում են մեզ հետաքրքրող հարցի հետ: Ս. Աբրահամյանը տասը խոսքի մասերը ներառում է երեք խմբի մեջ՝ նյութական իմաստ ունեցող, հարաբերության (քերականական) իմաստ ունեցող և վերաբերմունքային իմաստ ունեցող բառերի<sup>1</sup>: Բոլոր խոսքի մասերն ընդգրկող այս բաժանումը, թեև հիմնված է բառերի հիմնական իմաստների (նշանակյալների) վրա, կարող է օգտագործվել նաև վերաբերմունքի արտահայտման հնարավորությունները որոշելու ժամանակ, քանի որ տարբերակված խմբերը տարբերվում են նաև այդ առումով:

Վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասերում (վերաբերական, ձայնարկություն) վերաբերմունքի իմաստը բառի ուղղակի իմաստն է, ընդ որում դա վերաբերմունք հասկացության անվանումը չէ, այլ վերաբերմունքի անմիջական դրսևորումը: Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերում (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ) վերաբերմունքային իմաստները կարող են դրսևորվել որպես առարկա, հատկանիշ, գործողություն, օրինակ՝ *արել, արելի, արելություն*: Դրանից բացի, այդ բառերում հնարավոր է լրացուցիչ վերաբերմունքային իմաստի արտահայտումը: Այսինքն՝

---

<sup>1</sup> Տե՛ս Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974, էջ 30:

Տե՛ս S. G. Abrahamyan, N. A. Parnasyan, H. A. Ohanyan, Djamanakacic hayots lezu, h. 2, Er., 1974, ej 30.

այս խոսքի մասերում վերաբերմունքը կարող է արտահայտվել և՛ որպես բուն բառիմաստ, և՛ որպես հարանշանակություն:

Հարաբերության իմաստ ունեցող խոսքի մասերը (կապ, շաղկապ) յուրահատուկ են նրանով, որ, որպես կանոն, չեն կարող կապվել վերաբերմունք արտահայտելու հետ: Դրա պատճառն այն է, որ այս բառերը լեզվից դուրս եղած երևույթներ չեն նշանակում, այլ լեզվական միավորների՝ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների հարաբերություններ: Իսկ բառերի կամ նախադասությունների կապերն այն երևույթները չեն, որոնց նկատմամբ խոսողը կարող է հատուկ վերաբերմունք ունենալ: Միայն բացառիկ դեպքեր կան, երբ հոմանիշ կապակցական միջոցների միջև ընտրությամբ ինչ-որ վերաբերմունք է արտահայտվում, օրինակ՝ *պարծառով – շնորհիվ*, կամ էլ ոճական տարբերություններ են հանդես գալիս, օրինակ՝ *սակայն – բայց, և – ու*:

Այստեղ հարկ է հիշատակել 2. Մորրիսի տված դասակարգումը, որով տարբերակվում են սեմանտիկան, սինտակտիկան և պրագմատիկան: Պրագմատիկան՝ գործաբանությունը, որ նշանների և մարդկանց հարաբերություններն են, բոլոր նշաններին է հատուկ: Բայց վերևում ասվածից պարզ է դառնում, որ խոսքի մասերի տարբեր խմբերում այն տարբեր ձևերով և չափերով է հանդես գալիս: Դրա հիման վրա կարելի է բնութագրել այդ խմբերը: Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերում իմաստը (ըստ 2. Մորրիսի՝ սեմանտիկան) կարող է գործաբանական լինել, մյուս կողմից բոլոր իմաստները կարող են լրացվել գործաբանական հարանշանակություններով: Վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասերում գործաբանական իմաստը բառի հիմնական իմաստն է:

Միտքն ու զգացմունքը երկու զուգահեռվող ոլորտներ են, որոնք պարտադիր ներգրավվում են մարդու և իրականության փոխհարաբերությունների մեջ: Դրանք կարող են նույն վերաբերմունքը ձևավորել կամ տարբեր արդյունքների հանգեցնել: Այդ տարբերությունը լեզվում հանգեցրել է երկու տեսակի բառերի՝ վերաբերականների և ձայնարկությունների առաջացման: Այդ բաժանումը հնարավորություն է տալիս արտահայտելու մտքով որոշվող դատողական վերաբերմունք և զգացմունքներով որոշվող հուզական վերաբերմունք:

### 1. Վերաբերականներ

Վերաբերականները կամ եղանակավորող բառերը ծառայում են խոսողի մտածական, դատողական վերաբերմունքի արտահայտմանը: Ինչպես այլ խոսքի մասերի մեջ, այնպես էլ վերաբերականների մեջ կան բառեր, որոնց խոսքիմասային պատկանելությունը միարժեք չէ, և երբեմն դժվար է լինում

դրանք սահմանազատել այլ խոսքի մասերից: Որոշ վերաբերականներ ընդհանրություն ունեն մակբայների հետ: Երբեմն ծագում է անգամ տվյալ բառը վերաբերական կամ շաղկապ համարելու հարցը: Դրան գումարվում է և այն, որ տարբեր լեզուների քերականություններում ընդունված բաժանումներ կան, որոնք հաճախ իրարից տարբեր են լինում, այդ պատճառով միևնույն իմաստն ունեցող բառը տարբեր լեզուներում տարբեր խոսքի մասերի մեջ է դրվում: Բայց մեր խնդիրն այստեղ խոսքի մասերի սահմանները ճշտելը չէ, այլ դրանցով որոշ իմաստներ արտահայտելու հնարավորությունը պարզելը: Այդ պատճառով անցնում ենք վերաբերականների դիտարկմանը: Հայերենի քերականության մեջ վերաբերականները հանգամանալից ներկայացրել են Ս. Աբրահամյանը<sup>2</sup> և Մ. Ասատրյանը<sup>3</sup>: Ս. Աբրահամյանը թվարկում է 46 եղանակավորող բառ և այդ արժեքն ունեցող մոտ երկու տասնյակ բառակապակցություն և դրանք բաժանում է ինը տեսակի, իսկ Մ. Ասատրյանը տեսակներ չի նշում, այլ առանձին-առանձին բնութագրում է իր հիշատակած 67 եղանակավորող բառերը:

Վերաբերականների մեջ Ս. Աբրահամյանի առանձնացրած տեսակներն են՝ հաստատական, ցուցական, երկբայական, սաստկական, սահմանափակման, կամային, զիջական, ժխտական, բաղձանքի: Այս թվարկումը փաստորեն վերաբերականներով արտահայտվող վերաբերմունքների թվարկում է: Հեշտ է տեսնել, որ այդ վերաբերմունքների մեջ բացասական երանգ ունեցողները փոքր թիվ են կազմում. վերաբերականների տեսակների մեծ մասը դրական կամ չեզոք վերաբերմունք է արտահայտում: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ ինքնին չեզոք վերաբերականը խոսքում կարող է գործածվել բացասական երևույթներին առնչվող նախադասության մեջ և դրանով իսկ մասնակցել բացասական վերաբերմունքի արտահայտմանը: Սակայն առանձին բառերի իմաստները նկատի առնելով՝ պետք է ասել, որ բացասական վերաբերմունք կարող են արտահայտել որոշ երկբայական, սահմանափակման, զիջական և ժխտական վերաբերականներ:

Երկբայական վերաբերականներից այդպիսիք են՝ *չիհի, չիհի թե, մի՞թե, հո, խոմ, վայ թե*<sup>4</sup> վերաբերականները: Հատկապես առաջին երկուսը

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 550-568: Tes nuyh teghum, ej 550-568.

<sup>3</sup> Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ, Երևան, 1977, էջ 311-348: Tes M. Asatryan, Djamanakakits hayots lezvi dzevabanutyen hartser, G, Er., 1977, ej 311-348.

ցույց են տալիս, որ խոսքն ինչ-որ անցանկալի բանի մասին է: Օր.<sup>1</sup> *Չլինի՞ թե որևէ վիրավորական բան ասացի:*

Այս նախադասությունն ասողի համար ցանկալի չէ, որ ինքը վիրավորական բան ասած լինի, վիրավորական բան ասելը նրա արժեքային համակարգում բացասաբար է գնահատվում, ուստի նա ուզում է խոսափել դրանից:

*Մի թե՛ն*, խոսակցական *հո-ն* և բարբառային *խոմ-ը* և *վայ թե՛ն* ավելի մեղմ՝ չեզոքին մոտ վերաբերմունք են արտահայտում: Դրանք կասկածի, անհավանականության իմաստ ունեն և կարող են գործածվել տարբեր իմաստներ ունեցող նախադասություններում: Բայց, կարծում ենք, դրանց մեջ մի երանգ կա, որի հետևանքով դրանք ավելի շատ կգործածվեն անցանկալի իրողության վերաբերյալ: Օրինակ՝ շատ ավելի հավանական է *Հո հիվա՞նդ չես նախադասությունը*, քան *Հո առո՞ղջ չես նախադասությունը*, որն ասելու իրողությունը դժվար է պատկերացնել:

Սահմանափակման վերաբերականներից *լոկ-ը* և *միայն-ը* ինքնին բացասական վերաբերմունք չեն արտահայտում, բայց բացասական երանգավորում ունեցող նախադասություններում դրանց գործածությունը հավանական է, քանի որ սահմանափակվածությունը կարող է թերություն համարվել: Օրինակ, *Դու լոկ շարքային ֆիզիկոս ես և ոչ տաղանդավոր գիտնական:*

Զիջական վերաբերականներից հատկապես մեկը՝ *ինչ էլ լինի-ն*, չի կապվում դրական հույզերի հետ: Այն նշանակում է, որ խոսողը դժգոհ է իրավիճակից, թեկուզ և չի ենթարկվում դրան, չի հաշտվում դրա հետ: Օրինակ, *Մենք, ինչ էլ լինի, կայցելենք նրան:*

Հնարավոր է պատկերացնել այս նախադասության հետ կապված տարբեր իրողություններ՝ «նա իրեն լավ չի դրսևորել», «նա վատ մարդ է», «նա մեզ չի սիրում», «նա կարող է մեզ լավ չընդունել», «մեր գնալով նրան չենք օգնի», և այլն, սակայն դրանք բոլորն էլ բացասական գնահատական կստանան, հետևաբար նախադասությամբ կարտահայտվի բացասական վերաբերմունք:

Սրանից կարելի է անել հետևյալ եզրակացությունը. բառը (տվյալ դեպքում՝ վերաբերականը) կարող է բացասական վերաբերմունք չարտահայտել, բայց մասնակցել բացասական վերաբերմունքի արտահայտմանը, ավելին, հակված լինել բացասական վերաբերմունքի արտահայտմանը մասնակցելուն:

*Ոչ* և *չէ* ժխտական վերաբերականները բացասական վերաբերմունքի հետ են կապված այն չափով, ինչ չափով ժխտումը հոգեբանորեն զուգորդվում է բացասականի հետ: Այս բառերի միջոցով կարող է ժխտվել բացասական երևույթը, որ փաստորեն պիտի դառնա դրականի հաստատում: Սակայն, դրա-

կանի և բացասականի ժխտումները միևնույն ձևով չեն արժևորվում: Դրական երևույթի ժխտումը բացասական երևույթ է համարվում, իսկ բացասական երևույթի ժխտումով ներկայացվում է միջին, չեզոք, զրոյական վիճակ, որ դեռևս չի նույնանում դրականի հետ:

Թեև Մ. Ասատրյանը վերաբերականների դասակարգում չի կատարում, կարելի է փորձել խմբավորել նրա ներկայացրած վերաբերականները դրանց իմաստների բնութագրումների հիման վրա: Մենք փորձել ենք ներկայացնել այդպիսի խմբավորում, որով ստացվում է 15-20 իմաստային խումբ կամ ենթախումբ, այսինքն՝ այս դեպքում խմբերի իմաստներն ավելի նեղ ու որոշակի են: Դրանց մեջ որպես բացասական վերաբերմունքների հետ կապված իմաստներ կարելի է նշել հետևյալները՝ ա) ափսոսանքի, ցավակցման, սրտնեղության, բ) թվացողական, անիրական լինելու, գ) երկբայական, տարակուսական, դ) անհավանականության, ե) դժգոհության, զ) սահմանափակման, է) դժվարիրականանալի կամ համարյա անիրականանալի լինելու, ը) անհանգստության, թ) ժխտումը հաստատող: Ափսոսանքի, ցավակցման վերաբերականները դրական բնույթի են: Եթե դիտարկենք Մ. Ասատրյանի թվարկած վերաբերականները, ապա արդեն բերվածներին կարելի է ավելացնել հետևյալները՝ *դժբախտաբար, ցավոք, ցավոք սրտի* վերաբերականներն արտահայտում են դժգոհությունը, մի բան ցավալի համարելը: *Ախր (ախար)* վերաբերականն ափսոսանք է արտահայտում: *Ինչևէ, ինչևհցե* վերաբերականները ցույց են տալիս, որ խոսողն առանց միտքն ամփոփելու անցնում է հաջորդ հարցին: Սա ևս կարելի է բացասական վերաբերմունք համարել կիսատ թողածի, չամփոփածի նկատմամբ:

## 2. Ձայնարկություններ

Ձայնարկություններն արտահայտում են հուզական, զգացական կամ կամային վերաբերմունք: Ինչպես և վերաբերականները, դրանք ոչ թե անվանում են վերաբերմունքը, այլ անմիջականորեն արտահայտում են այն: Ձայնարկությունները նույնպես ներկայացնում ենք ըստ Ս. Աբրահամյանի և Մ. Ասատրյանի, որոնք ձայնարկությունները քննում են նույն սկզբունքով, ինչ որ վերաբերականները: Ս. Աբրահամյանն առանձնացնում է տեսակներ, ապա նշում ամեն մի տեսակի մեջ մտնող ձայնարկությունների օրինակներ, իսկ Մ. Ասատրյանը հերթականությամբ թվարկում է ձայնարկությունները՝ յուրաքանչյուրի համար նշելով հնարավոր իմաստները:

Ս. Աբրահամյանը ձայնարկությունները ենթարկում է աստիճանական դասակարգման: Դրանք նախ բաժանվում են երկու խմբի՝ զգացում արտա-

հայտող և կամային վերաբերմունք արտահայտող վերաբերականների<sup>4</sup>: Զգացում արտահայտողների մեջ նշվում են ուրախություն և հաճելիություն, ցավ, վիշտ, վախ, զղջում, զարմանք և ափսոսանք, դժգոհություն արտահայտող վերաբերականները, քիչ են տհաճություն և զզվանք, անտարբերություն կամ համակերպում, հանդիմանություն և կշտամբանք արտահայտող ձայնարկությունները: Հիշատակված տեսակների մեջ բացասական վերաբերմունք արտահայտող տեսակներն են ցավ, վիշտ, վախ, զղջում, ափսոսանք, դժգոհություն, տհաճություն, զզվանք արտահայտող ձայնարկությունները:

Ձայնարկությունների իմաստային դասակարգումը խիստ դժվարանում է նրանով, որ միևնույն ձայնարկությունը կարող է իրարից բավականին տարբեր վերաբերմունք արտահայտել: Ձայնարկությունների յուրահատկություններից մեկն այն է, որ դրանց ձևավորման մեջ հսկայական դեր ունի հնչերանգը: Կարծում ենք՝ այդ հանգամանքն է նպաստում, որ միևնույն հնչյունը կամ հնչյունների խումբը հնչերանգի որոշ փոփոխություններով փոխի իր իմաստը: Բացի դրանից, ձայնարկության իմաստը որոշակիանում է խոսքաշարի մեջ, նրա իմաստի հիման վրա:

Ուսումնասիրողների ուշադրությունից չի վրիպել նաև ձայնարկությունների բազմիմաստությունը: Ս. Աբրահամյանն այս հարցի կապակցությամբ գրում է. «...վայը կարող է արտահայտել և ուրախության, և ցավի, և վախի, և զզվանքի և այլ զգացումներ»<sup>5</sup>: Մ. Ասատրյանը նշում է *ա՛ր* ձայնարկության տասը իմաստային կիրառություններ, ինչպես նաև մեջբերում է Ստ. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանից» օրինակներ, որտեղ իմաստային տարբերակներն ավելի շատ են<sup>6</sup>: Ի դեպ, Վ. Վինոգրադովը թվարկում է **a!** ձայնարկության տասը տարբեր իմաստներ<sup>7</sup>:

Չնայած ձայնարկությունների իմաստային բազմազանությանը՝ փորձենք ներկայացնել դրանց այն տեսակները, որոնք բացասական տրամադրություն են արտահայտում, հետևաբար նաև խոսքի առարկայի նկատմամբ բացասական վերաբերմունքի արտահայտիչներ են:

Ցավ, վիշտ, վախ արտահայտող ձայնարկություններ են համարվում *վա՛յ*, *վու՛յ*, *վի՛*, *վրի՛*, *ըը՛*, *վա՛շ*, *վու՛շ*, *վի՛շ*, *ա՛*, *ամա՛ն* ձայնարկությունները:

<sup>4</sup> Տե՛ս Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., նշվ. աշխ., էջ 573-576: Tes S. G. Abrahamyan, N. A. Parnasyan, H. A. Ohanyan, nshv. Ashx., ej 573-576.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 573: Nuyn teghum, ej 573.

<sup>6</sup> Տե՛ս Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 356-358: Tes M. Asatryan, nshv. Ashx., ej 356-358.

<sup>7</sup> Տե՛ս Виноградов В.В., указ. соч., стр. 752: Tes V. V. Vinogradov, ukaz. Soch., str. 752.

Զգվանք և տհաճություն արտահայտող ձայնարկությունների մեջ նշվում են *ֆուհ, փուհ, ախ, օ, հի, թյուհ, թուհ, թու, վահ, ուհ* ձայնարկությունները:

Դժգոհության արտահայտություններն են՝ *օ, օհ, էհ, ահ, օֆ, ախ, հը*:

Հանդիմանություն և կշտամբանք արտահայտվում են *այ, այ-այ, այ-այ-այ, վալ-վալ, ախ, ըհ, ուհ, էխ, օֆ, էհեյ* ձայնարկություններով:

Զղջում և ափսոսանք են արտահայտում *ախ, էխ, ավաղ, օհ, օ, վալ, վախ* ձայնարկությունները:

Մ. Ասատրյանը նշում է 55 ձայնարկություն, որոնցից միայն 14-ն են դրական կամ չեզոք հույզ կամ վերաբերմունք արտահայտում, մնացածներից 18-ը միայն բացասական վերաբերմունք են արտահայտում, իսկ մյուսներն այնքան բազմիմաստ են, որ կարող են գործածվել թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունք արտահայտելու համար<sup>8</sup>: Միայն այս հաշվարկը ցույց է տալիս, որ բացասական վերաբերմունքի արտահայտումը ձայնարկությունների մեջ գերակշռում է:

Միայն բացասական վերաբերմունք արտահայտող ձայնարկությունների շարքում, Ս. Աբրահամյանի բերած օրինակներից բացի, նշում են *էի, է, հ, իա, հեյ, ջան, հեյ-վախ, վուշ-վուշ, վաշ-վիշ, փուս* ձայնարկությունները: Դրական կամ բացասական վերաբերմունք արտահայտող ձայնարկություններից բացի, Մ. Ասատրյանի բերած ցանկում ներառված են 11-ը: Դրանք են բարկություն արտահայտող *օ-ն*, դժգոհություն արտահայտող *բաս-ը* և *օ-ն*, սրտնեղություն արտահայտող *ա-ն*, *է-ն*, *վահ-ը* և *վա-ն*, գանգատ արտահայտող *բաս-ը*, սաստող *է-ն*, հեզնանք արտահայտող *էհե-ն*, քմծիծաղ կամ արհամարհանք արտահայտող *հա-ն*, նույն *հա-ն*, *հայ-ը*, *հայ-հայ-ը* և *հայ-հույ-ը*՝ որպես սպառնալիքի արտահայտություն, կշտամբանքի արտահայտությունները՝ *վահ, վա, հայ, հայ-հայ, հայ-հույ*: Այս թվարկման մեջ եղած կրկնությունները պայմանավորված են ձայնարկությունների բազմիմաստությամբ:

Կամային ձայնարկությունների մեջ վերաբերմունքի դրսևորումը փոքր է կամ բացակայում է: Թերևս բացառություն են կազմում կենդանիներին ուղղված այն բացականչությունները, որոնց նպատակը նրանց քշելը, հեռացնելն է՝ *քը՛շ, քշա՛, փի՛շփ*: Պարզ է, որ այս կարգի ձայնարկությունը կօգտագործվի այն իրադրության մեջ, որտեղ տվյալ կենդանու ներկայությունն անցանկալի է: Իսկ անցանկալի համարելը, իհարկե, բացասական վերաբերմունքի նշան է:

Գոյություն ունի ձայնարկությունների ևս մեկ տեսակ, որը վերաբերմունք

<sup>8</sup> Տե՛ս **Ասատրյան Մ.**, նշվ.աշխ., էջ 360-370: Tes M. Asatryan, nshv. Ashx., ej 360-370.

արտահայտելու առումով միանգամայն յուրահատուկ դիրք է գրավում այս խոսքի մասին պատկանող բոլոր բառերի շարքում: Այդ տեսակի մեջ մտնում են բնածայնությունները: Այս ձայնարկությունները բնության մեջ եղած ձայների ընդօրինակումները, նմանակումներն են և զուրկ են վերաբերմունքային իմաստից: Ինչպես և մյուս ձայնարկությունները, դրանք հասկացություն չեն նշանակում, բայց վերաբերմունքի հետ կապվում են ճիշտ այնպես, ինչպես որ հասկացություն նշանակող բառերը՝ նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը: Դրանք օբյեկտիվորեն ներկայացնում են ձայնը, և վերաբերմունքը դրանց մեջ հանդես է գալիս որպես հարանշանակություն: Տվյալ ձայնը կամ այն արձակող առարկան կարող են կապվել որևէ վերաբերմունքի հետ՝ դրական կամ բացասական: Դա կարող է լինել ձայնի գեղագիտական գնահատում կամ առարկայի գնահատում: Օրինակ՝ *խըռռ, դըռռ, դըմկի, ճըզզ, ճըռռ* և նման այլ ձայնարկություններ բացասաբար կգնահատվեն՝ որպես անբարեհունչ ձայներ, իսկ *ֆըռռ*-ը բացասական երանգ ունեցող պիտի համարվի՝ կապվելով օձի հետ: Այս կարգի ձայնարկությունները մասնակցում են գոյականների և բայերի կազմությանը:

Այսպիսով, կարելի է տեսնել, որ և՛ վերաբերականներով, և՛ ձայնարկություններով արտահայտած վերաբերմունքը կարող է բազմազան լինել: Այս երկու խոսքի մասերը նաև իմաստային առանձնահատկություններ ունեն: Վերաբերականներով արտահայտվում է մտածական վերաբերմունք: Դրանք կազմված են իմաստակիր ձևայիններից, ծագումով կապվում են այլ խոսքի մասերի հետ և որոշակի իմաստներ ունեն: Ձայնարկությունները հուզական վերաբերմունքի անմիջական արտահայտություններ են: Դրանցում չկան այլ բառերում հանդիպող ձևայիններ, դրանց իմաստը կախված է իրենց կազմում եղած հնչյուններից և հնչերանգից: Դրա հետևանքով ձայնարկությունները խիստ բազմիմաստ են, կարող են անգամ հակադիր զգացումներ և վերաբերմունք արտահայտել: Ձայնարկությունների մյուս յուրահատկությունն այն է, որ դրանց մեջ կան մի խումբ բառեր՝ բնածայնությունները, որոնցում, ի տարբերություն մյուս ձայնարկությունների և վերաբերականների, հուզական իմաստը հանդես է գալիս որպես հարանշանակություն և ոչ թե բուն իմաստ:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Վերաբերմունք արտահայտելու առումով իրարից հստակորեն տարբերվում են նյութական իմաստ ունեցող, հարաբերության (քերականական) իմաստ ունեցող և վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասերը: Վերա-



բերմունքային իմաստ ունեցող խոսքի մասերում (վերաբերական, ձայնարկություն) վերաբերմունքի իմաստը բառի ուղղակի իմաստն է, ընդ որում դա վերաբերմունք հասկացության անվանումը չէ, այլ վերաբերմունքի անմիջական դրսևորումը:

**Բանալի բաներ** - լեզվաբանություն, գնահատողական վերաբերմունք, դրական վերաբերմունք, բացասական վերաբերմունք, վերաբերական, ձայնարկություն:

## ВЫРАЖЕНИЕ ОТРИЦАТЕЛЬНОЙ ОЦЕНКИ В ЧАСТЯХ РЕЧИ С РЕЛЯЦИОННЫМИ ЗНАЧЕНИЯМИ

ЭДИТА АСАТРЯН

По особенностям выражения оценки четко разграничиваются части речи с материальными, грамматическими и реляционными значениями. В частях речи с реляционными значениями (модальные слова, междометия), выражение оценки совпадает с лексическим значением слова, причем это не обозначение оценочного отношения, а его непосредственное выражение.

**Ключевые слова** - Лингвистика, оценочное отношение, позитивное отношение, отрицательное отношение, модальные слова, междометие.

## NEGATIVE ASSESSMENTS IN SPEECH PARTS EXPRESSING ATTITUDE

EDITA ASATRYAN

In terms of expressing attitude or stance, there is a clear-cut distinction between those parts of speech, which convey denotational, grammatical and connotational (attitudinal) meanings. The first two constitute the central factor in linguistic communication while connotational (attitudinal) meanings provide additional effects to the central meaning. In speech with words expressing attitude (modal words, interjections, etc.) the notion of the attitude is expressed through the denotational (literal) meaning of the given word. It should be mentioned that the aforementioned parts of speech do not specify the notion of an attitude, instead they represent an attitude.

**Key words** - Linguistics, evaluative attitude, positive attitude, negative attitude, interjection, modal words.

## ԱՆԾԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՄԱՐԻԱՆԱ ԲԱԴԻԿՅԱՆ

Հոդվածում ուսումնասիրվում են անծի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորների ձևաբանական առանձնահատկությունները:

Դարձվածային միավորն իր իմաստային, բառաքերականական և գործառական հատկանիշներով բավարարում է լեզվի ձևաբանական և շարահյուսական մակարդակներին ներկայացվող պահանջները. ձևաբանական մակարդակի արտահայտության պլանում այն առնվազն երկբաղադրիչ միավոր է՝ կայուն բառակապակցություն, իսկ բովանդակության պլանում՝ հասկացություն՝ օժտված բառի բովանդակությանը համապատասխան այս կամ այն խոսքի մասին հատուկ քերականական կարգերով ու գործառություններով<sup>1</sup>: Ինչպես պրոֆ. Ջահուկյանն է սահմանում. «Քերականական կարգը ուրիշ կարգի չհանգեցվող, բովանդակության պլանում մեկ կամ ավելի հատկանիշներով հակադրվող և ձևաբանական կամ շարահյուսական միջոցներով արտահայտվող երկու կամ ավելի քերականությաների ամբողջությունն է»<sup>2</sup>:

Անծի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքներն օժտված են բայ խոսքի մասի ձևաբանական հետևյալ առանձնահատկություններով: Օրինակ՝ բայի անվանողական բաղադրիչներն օժտված են **հողի, թվի, սեռի**<sup>3</sup> ռուսերենում քերականական կարգերով, իսկ բայական բաղադրիչները՝ **սեռի, եղանակի, ժամանակի, դեմքի, թվի, հաստատական – ժխտականի** քերականական կարգերով հայերենում, ռուսերենում և անգլերենում և **կերպի քերականական կարգով** ռուսերենում և անգլերենում:

#### Հողի քերականական կարգը

Հայերենի՝ անծի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքներում գոյականը մեծ մասամբ օգտագործվում է առանց որոշյալ հողի, սակայն կան դարձվածքներ, որոնցում առկա է որոշյալ հողը, օրինակ՝

<sup>1</sup> **Բադիկյան Խ.**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986, էջ 210. **Badikyan Kh. G.**, Jamanakits hajereni dartsvatsain miavorneri, Er., 1986, ej 210:

<sup>2</sup> **Джаукян Г.** Общее и армянское языкознание, Ереван, 1978, стр. 113.

**Պոչը թաղկել** (խսկց.) – Ճարպիկ, հնարագետ լինել:

**Կապը կտրել** – Անբարոյական, անառակ դառնալ:

**Լավությունը չանցնել** – Երախտամոռ լինել, անբարեհամբույր գտնվել:

Անզերենում չափազանց շատ են այն դարձվածքները, որոնցում գոյականն օգտագործվում է անորոշ հոդով կամ առանց հոդի, օրինակ՝

**Have a smooth tongue** – Պերճախոս լինել:

**Have a long/loose tongue** – Շատախոս լինել:

**Have a head like a sieve** – Տրված լինել:

**Have a slow wit** – Հնարամիտ չլինել:

### **Սեռի քերականական կարգը**

Բայական դարձվածքներում բայ բաղադրիչները կարող են լինել ներգործական և չեզոք սեռի: Երբեմն չեզոք սեռի բայը կարող է վերածվել ներգործականի, բայց ավելի հաճախ տեղի է ունենում հակառակը: Կան բազմաթիվ բայեր, որոնք սովորական գործածություններում ներգործական սեռի են, դարձվածքի կազմում հանդես գալիս կորցնում են իրենց խնդրառական հատկանիշը և վերածվում չեզոք բայերի, օրինակ, **կտրել** բայը իր բուն իմաստով ներգործական է (ծառ կտրել, թուղթը կտրել), բայց որոշ դարձվածքային միավորներում նրա իմաստը պասիվանում է, բայը գրկվում է խնդիր առնելու հատկանիշից և վերածվում չեզոք սեռի (**առյուծ կտրել, կապը կտրել** և այլն):

Բայի սեռը հաճախ իմաստազատիչ դեր ունի դարձվածքների կազմության մեջ: Այստեղ գործում է չեզոք – ներգործական հակադրությունը: Այս հակադրությունն արտահայտվում է բայ բաղադրիչի սեռափոխությամբ, հիմքերի և արմատների փոփոխությամբ, նաև **տրալ** բայի հարադրությամբ:

Հայերենում անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով դարձվածքային միավորների սեռափոփոխությունն իրականանում է **ցն** սեռանիշ ցուցիչի միջոցով, որի շնորհիվ բայը չեզոքից (անանցողական) դառնում է ներգործական (անցողական), և պահանջվում է կրող խնդիր:

Օրինակ՝

Անանցողական (չեզոք) – **սիրտը քարանայ, սևանայ, մաշել, սառել  
աչքը կշտանայ, լիանայ**

Անցողական –**սիրտը քարացնել, սևացնել, մաշեցնել, սառեցնել  
աչքը կշտացնել, լիացնել**

Հայերենում որոշ դարձվածքային միավորներում **ց**-ի միջոցով ձևավորված սեռային հակադրությունը վճռորոշ իմաստազատիչ դեր է կատարում.

ավելանալով չեզոք դարձվածքային միավորների բայական գերադաս անդամին՝ սեռից բացի, արմատապես փոխում է նրա իմաստը, օրինակ՝

**Աչքը մտնել** – Սիրելի դառնալ:

**Աչքը մտցնել** – Հանդիմանել, սխալը մատնացույց անել:

Կան նաև այնպիսի դարձվածքային միավորներ, որոնցում պատճառանիշ **g** -ն իմաստազատիչ դեր չի խաղում, օրինակ՝

**Մեջքը պնդանալ** – Հզոր պաշտպան ձեռք բերել, հարստանալ:

**Մեջքը պնդացնել** – Հզոր պաշտպան ձեռք բերել, հարստանալ:

Հանդիպում են նաև դարձվածքներ, երբ **g** ածանցը անցողականության իմաստ չի հաղորդում բային, այլ միայն գործողության սաստկացման իմաստ է հաղորդում, օրինակ՝

**Քիթը բարձրացնել** – Ամբարտավանանալ, մեծամտանալ:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերենում բայական դարձվածքային միավորների **չեզոք** – **պատճառական** սեռային երկատման հակադրությունը կատարվում է նաև բայ բաղադրիչի փոփոխությամբ: Սա նշանակում է, որ միևնույն իմաստն արտահայտելու համար տարբեր արմատներ և հիմքեր են օգտագործվում: Կարելի է առանձնացնել բայերի զույգեր, որոնք մասնակցում են դարձվածքային միավորների **չեզոք** – **ներգործական** երկատման կազմությանը, օրինակ՝ **գալ** – **բերել**, **լինել** – **անել**, **ընկնել** – **զցել**, **դառնալ** – **անել**, **կենալ** – **պահել**, **դուրս գալ** – **դուրս բերել/հանել** և այլ տար-արմատ բայերով:

Օրինակ՝

**Երեսը սպիտակ լինել** – Պարզերես լինել:

**Երեսը սպիտակ անել** – Երեսը պարզ անել:

**Սիրտը բաց լինել** – Անկեղծ լինել, զվարթ, ուրախ լինել:

**Սիրտը բաց անել** – Անկեղծ լինել:

Բերված օրինակներում առաջին սյունակինը չեզոք սեռի դարձվածքներ են, իսկ երկրորդ սյունակինը՝ ներգործական:

**Տալ** բայը ևս երբեմն իմաստազատիչ դեր ունի սեռային հակադրություններն արտահայտելու համար: Սակայն անծի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով դարձվածքների շարքում նման դարձվածքները շատ սակավաթիվ են:

Օրինակ՝ **Ականջները վարձու տալ** – Յրված, անուշադիր լինել:

Հայերենում, ռուսերենում և անգլերենում գործում է **ներգործական – կրավորական** սեռային հակադրությունը, որը նշված լեզուներից յուրաքանչ-յուրում ունի տարբեր դրսևորումներ:

Ռուսերենի բոլոր անցողական՝ ներգործական դարձվածքներն օգտագործվում են ներգործական սեռով, չնայած կարող են օգտագործվել նաև կրավորականով:

Օրինակ՝

**Распускаться нюни** – (III իմաստ) Յրված լինել, անուշադիր լինել:

**Сидеть туча тучей** – Մռայլ, վատ, տրամադրության մեջ լինել:

Անգլերենում հիմնականում օգտագործվում են ներգործական սեռով, օրինակ՝

**Be in the pink** – Վատառողջ լինել (բառացի՝ վարդագույնի մեջ լինել):

**Be the limit** – Անտանելի մարդ լինել (բառացի՝ սահման լինել):

**Be white about the gills** – Առողջ տեսք ունենալ:

Որոշ դարձվածքներ կարող են օգտագործվել ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական սեռով, օրինակ՝

**Make/pull a sad/wry face** – Տխուր տեսք անել:

**Show a false face** – Երկերեսանի լինել:

**Put one's best face** – Հմայիչ լինել:

Անգլերենում գործող **ներգործական – կրավորական** սեռային հակադրությունը հիմնականում կախված է դարձվածքի բայ բաղադրիչի անցողական կամ անանցողական լինելուց: Առաջին դեպքում այդ հակադրությունն ունի իմաստազատիչ դեր, իսկ երկրորդ դեպքում դարձվածքները կարող են գործածվել և՛ կրավորական, և՛ ներգործական սեռով, և նրանցում սեռային վերոհիշյալ հակադրությունն իմաստազատիչ դեր չունի:

Հայերենում նույնպես գործում է ներգործական – կրավորական սեռային հակադրությունը, և **վ** – սեռանիշ ածանցը երբեմն ունենում է իմաստազատիչ դեր, սակայն հանդիպում են դարձվածքներ, որոնցում **վ** ածանցի օգտագործումը չի փոխում դարձվածքի իմաստը:

Օրինակ՝

**Մեկի ջրին ձավար չգցվել** – Անհուսալի, անվստահելի լինել:

**Շնորհքը վրայից թափվել** (խսկց.) – Շատ շնորհալի լինել:

**Յոթ չվանով չկապվել** (խսկց.) – Անզուսպ, խենթ լինել:

Հայերենում, ռուսերենում և անգլերենում կարևոր են նաև դարձվածքների բայական բաղադրիչների **եղանակի, ժամանակի, դեմքի և թվի** քերականական

կանական կարգերը, այսինքն՝ բայական դարձվածքային միավորները կարող են ունենալ բայի հարացուցային բոլոր ձևերը: Սակայն երբեմն ամբողջ դարձվածքային կապակցությունը գործածվում է միայն այս կամ այն եղանակով, ժամանակով, դեմքով և թվով: Բայական հինգ եղանակներից ժամանակակից հայերենում դարձվածքային միավորներում առավել բարձր հաճախականություն ունի բայի սահմանական եղանակը, որը խոսողի կողմից հավաստի իրողություններ, եղելություններ է ցույց տալիս, օրինակ՝

**Աչքը կուշտ է** – Գոհ, անկարոտ:

**Մեջքը պինդ է** – Հարուստ, ունևոր:

**Լեզվի փակ օձի թոյն կա** – Չար լեզու ունենալ, կեղծավոր լինել:

Հայերենի հինգ եղանակներին անգլերենում համապատասխանում են երեք եղանակները՝ **Indicative** – սահմանական, **Imperative** – հրամայական և **Subjunctive** – ըղձական:

Երեք լեզուներում էլ առավել շատ են բայի սահմանական եղանակով բաղադրված բայական դարձվածքային միավորները: Սակայն դրանք միշտ չէ, որ ունեն քերականական կարգերի՝ ժամանակի, դեմքի, թվի հարացուցային բոլոր դրսևորումները: Որոշ դարձվածքներ կարող են ունենալ լրիվ հարացույց, սակայն դրանք շատ քիչ են:

Ռուսերենում և անգլերենում անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով դարձվածքային միավորներն օգտագործվում են սահմանական եղանակով:

Օրինակ՝

**Родиться в сорочке/ в рубашке** – Երջանիկ, հաջողակ լինել:

**Садиться в лужу** – Հիմար դրության մեջ ընկնել:

**Считать ворон** – Անուշադիր, ցրված լինել:

**Carry/hold big guns** – Ազդեցիկ մարդ լինել:

**Feel one's oats** – (II իմաստ) Ուրախ լինել:

**Have a thin skin** – Չգայուն լինել:

Ռուսերենում և անգլերենում գործում է նաև **կերպի քերականական կարգը**:

Ռուսերենում հանդիպում են անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով բայական դարձվածքներ, որոնք օգտագործվում են միայն կատարյալ (**совершенный вид**) կամ միայն անկատար կերպում (**несовершенный вид**), սակայն ավելի շատ են այն դարձվածքները, որոնք գործածվում են և՛ կատարյալ, և՛ անկատար կերպում, օրինակ՝

**Обрасти/обрастать мохом** – Անփույթ տեսք ունենալ:

**Разинуть/раскрыть/открыть рот/рты** – (III իմաստ) Անուշադիր լինել:

**Распустить/распускать нюни** – Անուշադիր լինել:

Եթե անկատար կերպով գործածվող բոլոր դարձվածքներն օգտագործվում են ներկա, անցյալ և ապառնի ժամանակներով, ապա միայն կատարյալ կերպով գործածվող դարձվածքներն օգտագործվում են միայն ապառնի և անցյալ ժամանակներով:

Անզլերենում բայական դարձվածքային միավորների մեծ մասը հանդես է գալիս ժամանակային կամ թերի, կամ զրոյական հարացույցով: Եթե հայերենում հանդիպում են երեք ժամանակների հերթագայությամբ հանդես եկող դարձվածքային միավորներ, ապա անզլերենում դրանց թիվը շատ քիչ է:

Պետք է նշել, որ անզլերենում որոշ դարձվածքներ հիմնականում չեն օգտագործվում շարունակական (**Continuous**) և վաղակատար – շարունակական (**Perfect Continuous**) կերպում: Բնական է, որ այդ դարձվածքները չեն կարող կիրառվել նաև այդ կերպերով կազմվող ժամանակաձևերով, սակայն կարող ենք հանդիպել նաև հեղինակային դիպվածային որոշ կիրառությունների:

Օրինակ՝

**Feel one's oats** – (II իմաստ) Ուրախ լինել:

**Have a smooth tongue** – Պերճախոս լինել:

**Have green fingers** – Դալար մատներ ունենալ (բառացի՝ կանաչ մատներ ունենալ):

Անզլերենում որոշ դարձվածքներ օգտագործվում են տարբեր կերպերի ժամանակաձևերով, սակայն հարկ է նշել, որ բայական դարձվածքները, այդ թվում նաև անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով դարձվածքները գրեթե միշտ ժամանակային թերի հարացույց են ունենում, օրինակ՝

**Have the fit of the blues** – Վատ տրամադրության մեջ լինել: (բառացի՝ կապույտների նույնպ ունենալ)

Հայերենում հանդիպում են որոշ դարձվածքային միավորներ, որոնք գործածվում են քերականական կարգերի՝ ժամանակի, դեմքի, թվի հարացույցային բոլոր դրսևորումներով, օրինակ՝

**Քիթը բարձր պահել, սիրտ չունենալ, կապը կտրել, խոսք ուրել, ածելի լիզել:**

Թեև բայական դարձվածքային միավորների կազմում ընդգրկված բայը՝ որպես առանձին բառ, կարող է օգտագործվել բոլոր ժամանակներով, դարձվածքի կազմում ընդգրկված բայը կարող է գործածվել միայն մի քանի ժամանակով:

Հայերենում և անգլերենում ավելի գործուն են թերի հարացույց ունեցող և նույնիսկ մեկ հարացույցով ներկայացող դարձվածքային միավորները:

Դեմքի և թվի քերականական կարգերը նույնպես կարևոր գործոններ են բայական դարձվածքային միավորների ձևավորման համար: Դիտարկվող երեք լեզուներում բայական դարձվածքային միավորների, այդ թվում և անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներ պարունակողների ճնշող մեծամասնությունն օգտագործվում է բայի սահմանական եղանակի եզակի երրորդ դեմքով, ավելի քիչ են երկրորդ դեմքով կիրառվող դարձվածքները, իսկ դիմավոր ձևով գործածվողների դեպքում առաջին դեմք չի գործածվում:

Օրինակ՝

**Գրի սևն ու սպիտակը չգարբերել** – Գրաճանաչ չլինել:

**Կոպեկի վրա դողալ** – Խիստ ժլատ լինել:

**Հյուրի պես պահել** – Անհամարձակ լինել, քաշվել:

**Յոթ չվանով չկապվել** (խսկց.) – Կատաղի, անզուսպ, խենթ լինել:

**Շուն կոլ փալ** (գռիկ.) – Փորձված լինել:

Թվի քերականական կարգը սերտորեն կապված է բայի իմաստի հետ և բխում է դարձվածքային միավորի էությունից:

Հայերենի բայական դարձվածքների մեծ մասում բայ բաղադրիչն օգտագործվում է եզակի թվով, շատ հազվադեպ են հանդիպում հոգնակի թվով գործածվող դարձվածքներ: Պետք է նշել, որ դարձվածքային միավորներում արտահայտված ընդհանրացման գաղափարը թույլ է տալիս եզակիով արտահայտել բոլորին վերաբերելու գաղափարը, օրինակ՝ **Քիթը բռնես՝ հոգին կրա** – Շատ նիհար, վտիտ մարդ:

Ռուսերենում թվի քերականական կարգը իմաստագատիչ դեր չունի: Բայ բաղադրիչները կարող են օգտագործվել թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով, օրինակ՝

**Оброс/обросли мохом** – Անփույթ տեսք ունենալ:

**Сидел/ходил/стоял** – **сидели/ходили/стояли туча тучей** – Մռայլ, գայրացած լինել:

**Сел** – **сели на мель** – Ծանր, վատ դրության մեջ լինել:

**Сел** – **сели в калошу/залошу** – Ծիծաղելի դրության մեջ լինել:



Անգլերենի դարձվածքներում բայ բաղադրիչի թվի քերականական կարգը դիտարկվում է այն դեպքում, երբ բայ բաղադրիչի մի մասը օժանդակ բայ է, բայ հանգույց, կամ լիմաստ բայ՝ օգտագործված սահմանական եղանակի պարզ ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքով, օրինակ՝

**Открыл – открыли пот/рты** – (V իմաստ) Շատ անուշադիր լինել:

**Считал – считали ворон** – (I իմաստ) Անուշադիր լինել:

**He/she/they/is/are as brown as a berry** – Ուժեղ արևահարված լինել: (բառացի՝ հատապտղի պես շագանակագույն լինել)

**He/they/makes/make/pulls/pull a sad face** – Տխուր տեսք ունենալ (բառացի՝ տխուր դեմք անել):

**She/they/has/have (got)/two left feet** – Անփույթ լինել (բառացի՝ երկու ձախ ոտք ունենալ):

**She/they/is/are/as fresh as a rose** – Առողջ լինել, աշխույժ (բառացի՝ վարդի պես թարմ լինել):

Դիտարկվող երեք լեզուներում գործում է նաև **հաստատական – ժխտական** քերականական կարգը: Հայերենում դարձվածքային միավորների ժխտականը կազմվում է՝ բայ բաղադրիչի վրա ավելացնելով ժխտական մասնիկը՝ *չ* կամ *մի*:

Օրինակ՝

**Մեկի ջրին ձավար չգցվել** (խսկց.) – Անհուսալի, անվստահելի լինել:

**Մատը մատին չխփել/ մատը մատին չտալ** – Անտարբեր, անուշադիր լինել:

**Մի թիզ լինել – մի թիզ չլինել** – Շատ փոքր:

**Յոթ չվանով չկապվել** (խսկց.) – Կատաղի, անզուսպ, խենթ լինել:

**Ուրջին հասնող չլինել** – Անհամեմատ արագաշարժ լինել:

Կան դարձվածքային միավորներ, որոնք գերազանցապես ժխտական ձևով են օգտագործվում, սակայն կարող են օգտագործվել հաստատական ձևով, բայց այս դեպքում նրանք հանդես են գալիս հարցական նախադասության ձևով, օրինակ՝

**Գրի սեն ու սպիտակը չջուկել** – Անգրագետ լինել:

**Գրի սեն ու սպիտակը ջուկու՛մ էին որ ...**

**Մարը մարին չխփել** – Անտարբեր, անուշադիր լինել:

**Մարը մարին խփու՛մ էին որ ...**

Ռուսերենում, ինչպես որ հայերենում, գերակշռում են հաստատական կառույցները: Չնայած կան այնպիսի դարձվածքներ, որոնք օգտագործվում են միայն ժխտականով, օրինակ՝

**Быть не из робкого/трусливого десятка** – Ուժեղ մարդ լինել:

**Быть не из храброго десятка** (խսկց.) – Վախկոտ մարդ լինել:

**Водой не разольешь** – Շատ մտերիմ ընկերներ լինել:

Անգլերենում ևս բայական դարձվածքների մեծ մասը, այդ թվում նաև անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորները, օգտագործվում են հաստատական ձևով, թեպետ հանդիպում են նաև հաստատական – ժխտական հակադրություններ, օրինակ՝

**Be not as green as one is cabbage – looking** – Այնքան միամիտ ու հիմար չլինել, որքան երևում է (բառացի՝ կաղամբի պես կանաչ լինել):

Հաստատական ձևով օգտագործվելիս նշված դարձվածքները վերածվում են հարցական նախադասությունների, ինչպես որ հայերենում:

Անգլերենում կան որոշ դարձվածքային միավորներ, որոնք ունեն միայն ժխտական ձև:

**Not to have (got) a brain in one's head** – Անխելք լինել (բառացի՝ գլխում խելք չունենալ):

Կարող են հանդիպել **not** կամ **don't**, որտեղ ժխտական մասնիկը վերաբերում է բային, **no** ժխտական մասնիկը, որը վերաբերում է գոյականին, կամ **never**, որը վերաբերում է մակբային:

**Be no better than she should be** – Ոչ այնքան բարեսեր լինել:

**No hand at smth** – Անփորձ լինել:

**Not to know A from B** – Անգրագետ լինել:

**Not quite the clean potato** – Մուգ անձնավորություն:

**There are no flies on** – (Ու իմաստ) Շատ աշխույժ լինել:

Ուսումնասիրվող երեք լեզուներում էլ կան դարձվածքներ, որ կարող են գործածվել և՛ հաստատական, և՛ ժխտական ձևով: Այս դեպքում **not** ժխտական մասնիկը անգլերենում, **չ**-ն հայերենում և **не**-ն ռուսերենում իմաստազատիչ դեր չունեն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայերենում, ռուսերենում և անգլերենում բայական դարձվածքային միավորները քերականական ամենահարուստ կարգերով ու առանձնահատկություններով են օժտված: Բայական դարձվածքային միավորները նաև գործառության ավելի լայն դրսևորումներով հանդես եկող կառույցներն են: Անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչ-

ներով բայական դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում ունեն կառուցվածքային բավականին հետաքրքիր առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են ձևաբանական մակարդակում:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորներն օժտված են բայ խոսքի մասի ձևաբանական հետևյալ առանձնահատկություններով՝ ժամանակի, եղանակի, սեռի, դեմքի, թվի: Նշված ձևերը բնորոշում են ինչպես բայական դարձվածային միավորները, այնպես էլ բայերը: Հայերեն, անգլերեն, ռուսերեն՝ անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորներին հատուկ են բայ բաղադրիչի ձևաբանական տարբեր դրսևորումներ:

**Բանալի բառեր** – բայական դարձվածային միավորներ, ժամանակ, եղանակ, սեռ, դեմք, թիվ:

## МОРФОЛОГИЧЕСКИЕ ПРИЗНАКИ ГЛАГОЛЬНЫХ ФРАЗЕОЛОГИЗМОВ, ВЫРАЖАЮЩИЕ КАЧЕСТВА ЧЕЛОВЕКА

МАРИАНА БАДАДЯН

Глагольные фразеологизмы, как и глаголы, имеют следующие морфологические категории: времени, наклонения, залога, лица, числа. Формы названных категорий, принадлежащих всему фразеологизму в целом, определяют организующую роль ГФЕ, как и глаголов. Для армянских, английских и русских глагольных ФЕ, выражающих качества человека, характерно формоизменение глагольного компонента или глагольных компонентов.

**Ключевые слова** – глагольные фразеологизмы, время, наклонение, залог, лицо, число.

**MORPHOLOGICAL TYPES OF VERBAL PHRASEOLOGICAL UNITS  
CHARACTERIZING A PERSON IN THE ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH  
LANGUAGES**

MARIANA BADADYAN

Verbal phraseological units, just like verbs, have the following morphological categories: tense, mood, voice, person, number. The forms of these categories as well as of the entire phraseology define the organizational role of verbal phraseological units and verbs.

The characteristic feature of verbal phraseological units describing human qualities in Armenian, English and Russian languages is that the verbal components change their form.

**Key words** – verbal phraseological units, tense, mood, voice, person, number.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՇՈՒՇԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բայի սեռի կարգը, անբաժան լինելով բայի թե՛ դիմավոր, թե՛ անդեմ ձևերից, մեծ կարևորություն ունի նրա խոսքիմասային-քերականական բնույթի և մյուս կողմից խնդրառության ու նախադասության կառուցվածքի մի շարք իրողությունների ըմբռնման, պարզաբանման ու բնութագրման գործում: Ժամանակակից գրական թուրքերենը, ժառանգելով հին թուրքերենի և օսմանյան շրջանում գործածվող բայասեռի բնորոշ ածանցները, ինչպես նաև յուրացնելով ժամանակի ընթացքում ստեղծված նորաբանությունները, այսօր ունի բայասեռի յուրահատուկ ձևեր, որոնք խոսքի շղթայում ունեն ձևաիմաստաբանական և շարահյուսական մի շարք դրսևորումներ: Այդ շղթայում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ժամանակակից թուրքերենի կրավորական սեռը (Edilgen Çati), որը կազմվում է անցողական ու որոշ անանցողական բայահիմքերից՝ կրավորական ածանցների հավելումով: Առհասարակ կրավորական սեռը ցույց է տալիս, որ նախադասության տրամաբանական սուբյեկտը ենթարկվում է ստորոգյալով արտահայտված գործողության ազդեցությանը<sup>1</sup>: Կրավորական բայով կազմված նախադասություններում գործողության՝ ում կամ ինչի կողմից կատարված լինելը հայտնի չէ, այսինքն՝ գործողություն կատարող առարկաները չեն բացահայտվում: Այս նախադասություններում գործողություն կատարողից ավելի շատ կատարված գործողություն է առաջին պլան մղվում: Կրավորական սեռի կազմավորման ժամանակ ելակետային հիմքի օբյեկտը վերածվում է կրավորական սեռի սուբյեկտի<sup>2</sup>: Կրավորական սեռը, ըստ էության, ձևավորվում է բայի քերականական փոփոխությամբ: Սեռային այս փոփոխությամբ անցողական (ներգործող) բայերով արտահայտվող գործողությունը կամ եղելությունը ներկայացվում է հակադարձ ուղղվածությամբ: Թեև իրականում կրավորական սեռով արտահայտվում է նույն իրողությունը, որը դրսևորվում է ներգործական բայով, սակայն մի

<sup>1</sup> Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Լոզմագյոզյան Տ., Թուրքերենի դասագիրք, գիրք I, Երևան, 2001, էջ 119: A. Safaryan, A. Soghomonyan, T. Loqmagyozyan, Turqereni dasaqirg, girq I, Erevan, 2001, ej 119.

<sup>2</sup> Джанашиа Н. Морфология турецкого глагола, Тбилиси, 1981, с. 66.

տարբերությամբ, որ կրավորականի դեպքում սեռային հատկանիշն արտահայտվում է քերականական վերադարձումով:

Ինչպես նկատում է հայ լեզվաբան Ա. Աբրահամյանը. «Կրելու իրական գաղափարը քանի դեռ չի անցել քերականական առանձնահատուկ վերացական բովով, չի կարող դիտվել կրավորականության հատկանիշ»<sup>3</sup>: Նույնը կարելի է ասել ժամանակակից թուրքերենի կրավորական սեռի մասին: Կրավորական սեռի ընդհանուր բնութագիրը տալու համար կարող ենք նշել, որ այդ սեռը գործողությունը կրելու գաղափարն արտահայտում է՝ ի հակադրություն անցման գաղափարի: Եթե գործողություն կատարողը կամ միտքը հաղորդողը ցանկանում է ընդգծել, որ առարկան իր վրա է կրում մի ուրիշ առարկայի գործողությունը (եղելությունը), բայը դրվում է կրավորական սեռով և երբեմն էլ օգտվում լեզվական քերականական այն միջոցներից, որոնք արտահայտում են կրավորական սեռ:

Ժամանակակից թուրքերենի կրավորական սեռը ձևավորվում է անցողական և մի քանի անանցողական հիմքերին համապատասխան վերջածանցների կցման միջոցով: Թուրք հետազոտողները, կրավորականության ածանցն ընդունելով որպես անանցողականության մասնիկ, կրավորական բայերը բնութագրում են որպես անանցողական բայեր: Մ. Էրգինը նշում է. «Պասիվության և կրավորականության ածանցով կազմվող բոլոր բայերն արտահայտում են եղելություն, այսինքն՝ անանցողական են: Այդ պատճառով պասիվության և կրավորականության ածանցն անվանում են նաև անանցողականության ածանց»<sup>4</sup>:

Եթե ավանդական սահմանմամբ հնդեվրոպական լեզուներում կրավորական սեռը հաղորդում է լեզվով չարտահայտված կամ թեք հոլովով արտահայտված սուբյեկտից բխող գործողություն և ուղղված է ուղղական հոլովով արտահայտված օբյեկտին, ապա թյուրքական լեզուներում այս ձևի բովանդակությունն ավելի լայն է, և նրանցում բայական կառուցվածքների կրավորականությունը պետք է ըմբռնել որպես գործողության սուբյեկտի անորոշություն կամ ոչ ակնբերություն: Թուրք լեզվաբան Բ. Օղլուի դիտարկմամբ թուրքերենում տարածված է հետևյալը. «Տրամաբանական ենթական անկախ այն բանից՝ արտահայտվում է մակերեսային կառուցվածքում, թե ոչ, ստորոգյալում

<sup>3</sup> Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան 1962, էջ 610: Abrahamyan A., Bajn jamanakacic hayerenum, girq 1, Erevan, 1962, ej 610.

<sup>4</sup> Ergin M., Anaçizigileriyle Evresel Dilbilgisi ve Türkçe, Istanbul: Multilingual Yayınları, 2000, s. 56-57.

առկա դիմային վերջածանցները մեզ հուշում են ենթակայի առկայությունը»<sup>5</sup>: Անցողական-կրավորական սեռի բայերը եղելությունն արտահայտելիս խոնարհվում են միայն 3-րդ դեմքի եզակի թվով, անցողական-կրավորական սեռի բայերը կատարումը փոխարինելիս կարող են խոնարհվել ստորոգման բոլոր վերջածանցներով: Կրավորական բայի անցողական կառուցվածքի դեպքում պարտադիր է, որ նրա շուրջ գտնվի անվերջածանց հայցական հոլովով դրված անվան նշանակությամբ մի միավոր: Անցողական կրավորական սեռի բայի խոնարհման ժամանակ /մեջ/ (վերցվեցի, ուղարկվեցինք, խփվեցինք և այլն) տեղ գտած դիմային վերջածանցը հղում է կատարում ոչ թե գործողությունը կատարողին (ենթակային), այլ գործողությունից ազդված անվերջածանց հայցական հոլովով դրված այդ միավորին (ուղիղ խնդիր): Իսկ սա ցույց է տալիս, որ ստորոգյալի մեջ միշտ չէ, որ թաքնված, առկա է ենթակա, երբեմն նաև ուղիղ խնդիր էլ է հանդիպում<sup>6</sup>:

Ժամանակակից թուրքերենում կրավորական սեռը կազմվում է հետևյալ ածանցներով՝ բաղաձայն հնչյունով (բացառությամբ -l- հնչյունի) վերջացող բայահիմքերին կցվում են կրավորական սեռի (il -il -ul -ül) վերջածանցները: Օրինակ՝ yazmak/գրել – yazılmak/գրվել, seçmek/ընտրել – seçilmek/ընտրվել, vurmak/խփել – vurulmak/խփվել, açmak/բացել – açılmak/բացվել, sevmeک/սիրել – sevilmek/սիրվել: Նախադասության մեջ կրավորական սեռն ունի հետևյալ դրսևորումները: Evimiz çok ucuz satıldı/Մեր տունը շատ էժան վաճառվեց: Mektuplar gönderildi./Նամակներն ուղարկվեցին: Երկրորդ նեղ ձայնավորով մի շարք երկվանկ բայական հիմքերին կրավորական սեռի ածանցներ միացնելիս երկրորդ ձայնավորն ընկնում է: Օրինակ՝çağırmak/կանչել – çağırılmak/կանչվել, devirmek/շրջել – devrilmek/շրջվել: L – բաղաձայնով վերջացող բայահիմքերից կրավորական սեռը կազմվում է (in -in, -un, -ün) վերջածանցների կցմամբ: Օրինակ՝ bulmak/գտնել – bulunmak/գտնվել, almak/վերցնել – alınmak/վերցվել, bölmek/բաժանել – bölünmek/բաժանվել, bilmek/իմանալ – bilinmek/իմացվել: Kitaplar alınıştır./ Գրքերը գնվեցին: Kaybolmuş çocuk bulundu /Կորած երեխան գտնվեց: Ձայնավոր հնչյունով վերջացող բայահիմքերի դեպքում կրավորական սեռը կազմվում է -n- կան – nil (-nil, -nül, -nül) վերջածանցների միջոցով: Օրինակ՝ demek/ասել – denmek, denilmek/ասվել, okumak /կարդալ – okunmak/կարդացվել, yemek/ուտել – yenilmek/ուտվել: Olay herkesten gizlendi./ Դեպ-

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 58:

քը բոլորից թաքցվեց: Bahçeler sulandı. /Պարտեզները ջրվեցին: – Լ բաղաձայնով և ձայնավորով ավարտվող հիմքերից կազմվող կրավորական և անդրադարձ բայերը ձևով համընկնում են: Դրանք տարբերելու համար պետք է նայել նախադասության իմաստին: Որտեղ այս խառնաշփոթությունը կարող է աճել, կրավորականը տարբերակվում է կրկնակի կրավորական ածանցով *söyle-n-il-mek/ասվել*, մինչդեռ անդրադարձ նշանակությունը պարզ կերպով արտահայտվում է *kendi kendim* անդրադարձ դերանվան միջոցով<sup>7</sup>: Օրինակ՝ *Kiz yikandi./Աղջիկը վազցվեց (անդրադարձ բայ): Araba yikandi. /Մեքենան վազցվեց (կրավորական բայ):* Քանի որ կրավորական սեռը կազմվում է անցողական բայերից, ապա անանցողական բայերը պատճառական ածանցների օգնությամբ նախ վերածվում են անցողականի (- d (-t) կամ- dir), և ապա նրանց ավելանում է կրավորական սեռի ածանցը: Օրինակ՝ *uyanmak/արթնանալ – uyandırmaq/արթնացնել, uyandırılmak/արթնացվել, kurumak/չորանալ, kurutmak/չորացնել, kurutulmak /չորացվել: Թուրքերենի հասկանալ, անել բառերը չունեն կրավորական սեռ, և դրանց կրավորական սեռը կազմվում է ոչ թե ներգործական սեռի հիմքից, այլ հարկադրական սեռից՝ *anla-t-il-mak/հասկացվել: Իսկ eylemek (անել) բայը կրավորականի ժամանակ փոխարինվում է edilmeek կամ olunmak բայերով: Անցողական բայերի մի սահմանափակ խումբ թույլ է տալիս զուգահեռ ձևերի կազմավորում՝ -il և -i ածանցներով *görünmek և görülmek/տեսնվել, giyimek և giyinmek /հագցվել, tutunmak և tutunmak/բռնվել, tanılmak և tanınmak/լինել հայտնի, ճանաչված*<sup>8</sup>: Կրավորական սեռը կազմվում է ավելի հաճախ այն բայերից, որոնք ցույց են տալիս շարժում, ընթացք, դրույթյուն կամ վիճակ տարածության մեջ: Անանցողական բայերից ձևավորված կրավորական սեռը ծառայում է անդեմ դարձվածքների արտահայտման համար: Այս բայերը խոնարհում չունեն, արտահայտում են միայն երրորդ դեմքի եզակի թիվ<sup>9</sup>: Թարգմանվում են անդեմ նախադասությամբ: *Bu saatte gelinir mi?./Մի՞թե կարելի է գալ այս ժամին: Kalkılacak! /Վեր կենալ: Պետք է վեր կենալ:***

Ինչպես բնորոշում է թուրքագետ-լեզվաբան Ա. Կոնոնովը, անանցողական բայերից ձևավորված կրավորական սեռը օգտագործվում է անորոշանձնական նախադասության ստորոգյալն արտահայտելու համար: Ըստ նրա՝

<sup>7</sup> Lewis G. Teach yourself Turkish, London, 1955, s. 93.

<sup>8</sup> Иванов С. Курс турецкой грамматики, часть 2, Грамматические категории глагола, Л., 1977, с.14.

<sup>9</sup> Koç N. Yeni dilbilgisi, İstanbul, 1996, s. 333-334.



կրավորական սեռի իրենց իմաստով բաժանվում են երեք խմբի. *անձնական-կրավորական* նշանակության բայեր, *անդրադարձ-կրավորական* նշանակության բայեր, *անորոշ-անձնական* նշանակության բայեր<sup>10</sup>:

1. *Անձնական-կրավորական* նշանակության բայերը կազմվում են անցողական բայերից և արտահայտում գործողություն, որի դեպքում. ա) գործողության իրական օբյեկտը (դրված ուղղական հոլովով), առանց քերականական լրացման (իրական սուբյեկտի), հանդես է գալիս ենթակայի դերում: Օրինակ՝ Ögüle yemeği yendi. / Կեսօրվա ճաշը կերված է: Paltosu çalındı. / Նրա վերարկուն գողացվեց: Tabak kirildi. / Ափսեն ջարդված է (ափսեն ջարդվեց): Վերոհիշյալ օրինակները ցույց են տալիս, որ կրավորական սեռի բայի երրորդ դեմքի եզակի թիվն օգտագործվում է որպես անորոշ-անձնական նախադասության ստորոգյալ: Երրորդ օրինակում կրավորական սեռը բային հաղորդում է անդրադարձ կրավորական նշանակություն: -il ածանցով առանձին բայեր (կախված բայահիմքի նշանակությունից և այլ սեռեր կազմելու հնարավորությունից) ունեն միայն պասիվ-կրավորական նշանակություն՝ vurmak-vurulmak / խփել-խփվել, vuruşmak / կռվել: Yemek pişiti – ճաշը եփվեց: Yemek pişirdi / Նա եփեց ճաշը: Yemek pişirildi / Ճաշը եփվեց նրա կողմից: Օրինակ՝ Yemek pişti. / Ճաշը եփվեց: Yemek pişirdi. / Նա ճաշը եփեց: Yemek pişirildi. / Ճաշը եփվեց (ինչ-որ մեկի կողմից):

Եթե նախադասության մեջ գործողության իրական օբյեկտը բացակայում է, սուբյեկտի ցուցիչը (դիմային ածանցը) տրամաբանորեն հանդես է գալիս այդ գործողության օբյեկտի դերում, իսկ ռեալ իրականացնողը ընկալվում է որպես անորոշ-անձնական<sup>11</sup>: Օրինակ՝ Hastaneye gönderiliyorum. / Ինձ ուղարկում են հիվանդանոց (Ես ուղարկվում եմ հիվանդանոց): Գործողության ռեալ օբյեկտը (ուղղական հոլովով) հանդես է գալիս ենթակայի դերում, իսկ գործողության ռեալ իրականացնողը՝ (ca – ce, ça – ça) ածանցով կամ (tarafından) հետդիրով՝ որպես լրացում: Այս դեպքերում գործողության իրական կատարողը կարող է լինել դեմքի կամ դեմքերի հավաքածու (հաստատության, պետական կամ հասարակական ինստիտուտի անվանումը և այլն): Այսպիսով, տրամաբանական սուբյեկտը կարող է լինել – ca, -ce ածանցով գոյական կամ անձնական դերանուն: Օրինակ՝ Hükümetçe yeni bir vergi kanunu kabul edilmiştir. / Կառավարության կողմից հարկերի մասին մի նոր օրենք ընդունվեց:

<sup>10</sup> Кононов А. Грамматика современного турецкого литературного языка, М. - Л., 1956, с. 198.

<sup>11</sup> Кононов А. նույն տեղում, էջ 199:

Bu kitap sizce okunmuştur. / Այս գիրքը կարդացվել է ձեր կողմից: Ինչպես վերը նշել ենք, տրամաբանական սուբյեկտը կարող է հաղորդվել ուղղական հոլովով դրված գոյական անվամբ *taraf* բառի հետ միասին (երրորդ դեմքի եզակի թվի պատկանելության վերջածանցով և բացառական հոլովի վերջածանցով): *Polis tarafından aranıyorum.* / Ես փնտրվում եմ ոստիկանության կողմից: *Ağaç İlyas tarafından kesilmiştir.* / Ծառը կտրվել է Իլյասի կողմից: *Bu kitap Süleyman tarafından getirilmiştir.* / Այս գիրքը բերվել է Սուլեյմանի կողմից: Տրամաբանական սուբյեկտն արտահայտվում է նաև ստացական դերանուններով և *taraf* բառով՝ համապատասխան պատկանելության վերջածանցներով: *Taraf* բառը, անկախ անհրաժեշտ իմաստից, ընդունվում է ցանկացած դեմքի պատկանող մասնիկ: Օրինակ՝ *Mektup (benim) tarafımdan yazıldı.* / Նամակը գրվեց իմ կողմից: *Mustafa (senin) tarafından çağırılmıştır.* / Մուստաֆան կանչվել է քո կողմից: *Teklif (bizim) tarafımızdan yapılmıştır.* / Առաջարկությունն արվել է մեր կողմից: Առաջին դեմքի եզակի ու հոգնակի թվերի և երկրորդ դեմքի հոգնակի թվի դերանունը կարող է բաց թողնվել: Օրինակ՝ *Mektup tarafımdan yazılmıştır.* / Նամակը գրվել է իմ կողմից: *Taşlar tarafınızdan toplanılmıştır.* / Քարերը հավաքվել են ձեր կողմից: Այն բառը, որը ցույց է տալիս գործողության միջոց կրավորական սեռի բայի դեպքում, ձևավորվում է *ile* / - *la*, -*le* հետդիրով: Օրինակ՝ *Palto firça ile (firçayla) temizlendi.* / Վերարկուն խոզանակով մաքրվեց: *Mektup kirmizi kaleme yazılmış.* / Նամակը գրվել է կարմիր գրիչով:

2. *Անդրադարձ-կրավորական* նշանակության բայերն արտահայտում են կրավորական և ընդհանուր-անդրադարձ նշանակություն: Օրինակ՝ *bozmak* / փչացնել – *bozulmak* / փչանալ, փչացած լինել, *bozunmak* բայ չկա, *atmak* / նետել – *atılmak* / նետվել, *atınmak* բայ չկա: *Saatim bozulmuş.* / Ժամացույցս փչացել է: *Onlar bahçeye atıldılar.* / Նրանք նետվեցին պարտեզ: Կրավորական սեռի անդրադարձ-կրավորական նշանակության դեպքում գործողության ռեալ օբյեկտը, եթե այն առկա է, նախադասության մեջ հանդես է գալիս ենթակայի դերում: Օրինակ՝ *Kapi açıldı.* / Դուռը բացվեց («Դուռը բաց էր» նախադասությունն արտահայտվում է անվանական ստորոգյալով «*Kapi açık idi*»):

3. *Անորոշ-անձնական* նշանակության բայերն արտահայտում են գործողություն, որի իրական կատարողը ընկալվում է որպես անորոշ-անձնական: Օրինակ՝ *Kapı aralıksız çalınıyor.* / Դուռն անընդհատ ծեծում են: *Bana resmen sualler soruldu.* / Ինձ պաշտոնապես հարցաքննեցին: Արդեն նշել ենք, որ անորոշ-անձնական նշանակությամբ հաճախ օգտագործվում են շարժում ցույց տվող բայերը: Օրինակ՝ *Affedersiniz, şu mahalleye nereden gidilir?* / Կներեքմ այդ

թաղամաս ինչպե՞ս գնալ: Անցողական բայերի անորոշ-անձնական նշանակության սովորաբար բարդացվում է գործողության կատարման օբյեկտիվ հնարավորության կամ անհավանականության նրբերանգներով: Կոնտեքստից (խոսքաշարից) կախված՝ կրավորական սեռը բային կարող է տալ անդրադարձ-անդեմ նշանակություն: Օրինակ՝ *Yine sola sapildilar.* /Նորից թեքվեցին ձախ: Ստորոգյալի՝ ուղիղ խնդրի հետ ունեցած կապը, անցողականությունը և անանցողականությունը կրավորականության մի վիճակ են, որ որոշում են ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը: Չնայած այն բանին, որ երկուսն էլ տարբեր կատեգորիաներ են ձևավորում, պետք չէ անտեսել այն հանգամանքը, որ դրանք այդ գաղափարներով սերտաճած են: Քանի որ անանցողականությունից անցողականության անցումը բայի սեռի ածանցների միջոցով է իրականացվում: Սակայն կրավորականության ածանցը անանցողականության ածանց չէ: Եթե այդպես լիներ, պետք է, որ այն չկցվեր անանցողական բայերին: Սակայն այդ ածանցը հնարավոր է կցել անցողական և անանցողական բոլոր բայերին: Մեր կարծիքով, կրավորական բայը պարտադիր չէ, որ անանցողական լինի: Այլ կերպ ասած, կրավորականության ածանցն անցողականությունը վերացնող բնույթ չունի: Այդ պատճառով անցողական բայերը կարող են գործածվել տարբեր ձևերով: Կրավորական բայի անցողական կառուցվածքի դեպքում պարտադիր է, որ նրա շուրջ գտնվի անվերջաձանց հայցական հոլովով անվան նշանակությամբ մի միավոր: Անցողական կրավորական սեռի բայի խոնարհման ժամանակ (վերցվեցի, ուղարկվեցինք, խփվեցինք և այլն) տեղ գտած դիմային վերջաձանցը հղում է կատարում ոչ թե գործողությունը կատարողին (ենթակային), այլ գործողությունից ազդված անվերջաձանց հայցական հոլովով դրված այն միավորին (ուղիղ խնդրին): Եթե բայի սեռը որոշում է ենթակայի և ստորոգյալի միջև առկա կապը, ապա կրավորականությունն էլ ենթակայի և ստորոգյալի միջև իրականացվող կապի տեսակի արտացոլումն է նախադասության մեջ: Օ. Դեմիջանին նշում է հետևյալը. «Իր ենթակայից ազդվող ստորոգյալը կրավորական է համարվում»<sup>12</sup>: Այնինչ Մ. Էրգինի բնորոշմամբ. «Կրավորական բայերը այն բայերն են, որոնք գործող անձ չեն պահանջում, խոնարհման ժամանակ գործող անձ չունեն, և հայտնի չէ, թե գործողությունն ում կողմից է կատարվում»<sup>13</sup>:

Այսպիսով, ժամանակակից թուրքերենում կրավորական սեռի բայերը կազմվում են ներգործական բայերից համապատասխան ածանցների ավելաց-

<sup>12</sup> Demircan O., Türk Dilinde çati, İstanbul, Papatya Yayincilik, Ankara, 2003, s. 13.

<sup>13</sup> Ergin M. Türk dili bilgisi, Sofya, 1967, s. 204.

մամբ: Դրանք դրվում են անմիջապես բայարմատից հետո: Եթե ներգործական սեռի բայերով կազմված նախադասության մեջ իրականության տրամաբանական սուբյեկտը հանդես է գալիս ենթակայի քերականական հասկացությամբ՝ դրվելով ուղղական հոլովով, իսկ տրամաբանական օբյեկտը, որը ենթարկվում է ենթակայի գործողության ներգործությանը, հանդես է գալիս ուղիղ խնդրի քերականական հասկացությամբ և դրվում է հայցական հոլովով, ապա կրավորական սեռի բայերի դեպքում նախադասության տրամաբանական սուբյեկտն արտահայտվում է անուղղակի խնդրով, իսկ տրամաբանական օբյեկտը՝ ենթակայի քերականական կատեգորիայով, այսինքն՝ ներգործական և երկու կրավորական սեռի կատեգորիաները սուբյեկտի և օբյեկտի տրամաբանական տեսակետի մոտավորապես նույն հարաբերությունն են արտահայտում լեզվաբանական տարբեր ձևերով: Եթե ներգործական կառուցվածքի միջոցով արտահայտվում է ակտիվ գործողություն՝ *Rektör öğrencisini ödüllendirdi./Ռեկտորը պարգևատրեց ուսանողին*, ապա կրավորական կառուցվածքի միջոցով՝ պասիվ գործողություն *Öğrenci rektörünü ödüllendirdi./Ուսանողը պարգևատրվեց ռեկտորի կողմից*:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Թուրքերենի կրավորական սեռի բայերն իրենց գործառոյթով հակադրվում են ներգործական և չեզոք սեռի բայերին, դրանք կազմվում են ներգործական բայահիմքերին համապատասխան ածանցների կցմամբ, թուրքերենի ներգործական և կրավորական սեռի կատեգորիաները հայերենի նման հնարավորություն են ընձեռում սուբյեկտի և օբյեկտի տրամաբանական տեսակետից գրեթե նույն հարաբերությունն արտահայտելու լեզվական տարբեր ձևերով՝ նախադասության ակտիվ ներգործական և պասիվ կառուցվածքի միջոցով: Նախադասության մեջ տրամաբանական սուբյեկտը հանդես է գալիս անուղղակի խնդրի, իսկ տրամաբանական օբյեկտը՝ ենթակայի քերականական կատեգորիաներով:

**Բանալի բառեր** – բայերի սեռ, բայի կատեգորիա, քերականական սուբյեկտ և օբյեկտ, կրավորական, ակտիվ և չեզոք բայ:

## СЕМАНТИКО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ПАССИВНОГО ЗАЛОГА В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ

ШУШАН ЗАКАРЯН

Глаголы пассивного залога в турецком языке функционально противопоставляются глаголам активного и нейтрального залогов. Они составляются посредством присоединения к корню глагола соответствующего аффикса. Категории активного и пассивного залогов в турецком, как и в армянском, позволяют выражать с точки зрения логики примерно те же взаимоотношения между субъектом и объектом различными способами, а именно – путем составления активной или пассивной конструкции предложения. Логический субъект выступает в предложении в категории косвенного дополнения, а логический объект – в грамматической категории подлежащего.

**Ключевые слова** – залог глаголов, категория залога, грамматический субъект и объект, пассивный, активный и нейтральный залог.

## SEMANTIC-FUNCTIONAL FEATURES OF THE PASSIVE VOICE IN THE MODERN TURKISH LANGUAGE

SHUSHAN ZAQARYAN

In modern Turkish, the verbs in the passive voice, which are formed by means of adding corresponding affixes to the root of the verbs in the active, functionally contrast with the verbs in the active and neutral voices. The categories of the active and the passive voices in the Turkish language, just like in the Armenian language, give possibilities to express almost identical relationships between the subject and the object of a sentence through different linguistic means, i.e. active or passive sentence structures. In a sentence, the logical subject (entities) as a grammatical category is expressed as an indirect object, while the logical object (observer or thing) as a subject.

**Key words** – verb voice, voice category, grammatical subject and object, passive, active and neutral voices.

## ԲԱՌԱՅԻՆ ՇԵՇՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

### ՍՈՆԱ ԽԱՐԲԵՐՏՅԱՆ

Այս հոդվածի շրջանակներում ուսումնասիրվում են հայերենի և անգլերենի բառային շեշտը և դրա առանձնահատկությունները՝ ըստ բնույթի, դիրքի, աստիճանավորման ու գործառույթի:

Նախքան հայերենի և անգլերենի բառային շեշտի առանձնահատկություններին անդադառնալը, հարկ է հստակեցնել բառային շեշտի սահմանումը, արտահայտման միջոցները և տարբերակիչ հատկանիշները:

Բառային շեշտը սահմանվում է որպես բառի որևէ վանկի առանձնացում, որը կարող է իրականացվել տարբեր միջոցներով: Շեշտին՝ որպես լեզվական երևույթի, համապատասխանում են որոշակի ֆիզիկական երևույթներ՝ ձայնի բարձրություն և հատկապես ձայնաստիճանի բարձրություն, քանի որ շեշտված վանկերն ավելի բարձրաձայն են արտաբերվում, իսկ առանձին արտաբերված բառերի շեշտված վանկին բնորոշ է ձայնաստիճանի առկայություն: Շեշտը մի կողմից համարվում է բառի գոյության կարևոր նախապայման, մյուս կողմից շեշտի առկայությունը պայմանավորվում է բառի բազմավանկությամբ: Դիտարկելով այս խնդիրը՝ որոշ հայ լեզվաբաններ այն կարծիքն են արտահայտում, որ միավանկ բառերը զուրկ են շեշտից: Նրանց բառային շեշտի սահմանումները հենց դա էլ ապացուցում են: Օրինակ՝ Հ.Բարսեղյանն իր «Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանում» սահմանում է շեշտը՝ որպես ոչ միավանկ բառի վանկերից մեկի ընտրում<sup>1</sup>: Մ.Աբեղյանը նույնպես սահմանում է բառային շեշտը՝ որպես բազմավանկ բառերի վանկերից մեկի արտաբերություն՝ արտաշնչության ավելի մեծ ուժով, քան մյուսները<sup>2</sup>:

Բազմավանկ բառերի մեջ անշեշտ վանկերի հակադրության միջոցով ակնհայտ է դառնում շեշտված վանկի էությունը: Միավանկ բառերում նման

---

<sup>1</sup> **Բարսեղյան Հ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Երևան, 1973, էջ 75: Barseghyan H., Hayeren ughagrakan-ughakhosakan terminabanakan bararan, Yerevan, 1973

<sup>2</sup> **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տաղաչափություն, Մետրիկա, Երևան, 1971, էջ 19-33: Abeghyan M., Hayots lezvi taghachaputyun, Metrika, Yerevan, 1971

հակադրության բացակայության պատճառով շեշտի գոյությունը չի նկատվում:

Բոլոր լեզուներում շեշտի գաղափարը գոյություն ունի, սակայն նրա արտահայտման միջոցները տարբեր են: Այդ իսկ առումով լեզվաբանության մեջ ընդունում են երեք տեսակի շեշտ՝ ուժային կամ դինամիկ, քանակական և երաժշտական: Առաջին դեպքում շեշտված վանկն առանձնացվում է արտաբերության առավել ուժեղ լարվածությամբ, երկրորդ դեպքում նրա առանձնացմանը նպաստում է ձայնավորի արտասանության երկարությունը, երրորդում շեշտված վանկն առանձնանում է ձայնաստիճանի բարձրության փոփոխությամբ:

Բազմաթիվ լեզվաբաններ հայերենի համար ընդունում են դինամիկ կամ ուժային շեշտի գոյությունը, սակայն վերջինիս հարաբերությունը մնացած գործոնների (ձայնավորի արտասանության երկարության և ձայնաստիճանի բարձրության փոփոխության) հետ առայժմ ուսումնասիրված չէ:

Բառի սահմանների որոշումը լեզվաբանության դժվարին խնդիրներից մեկն է: Բառային շեշտի հարցը չի կարելի լուծել առանց այդ սահմանների ըմբռնման: Հնչյունական խոսքում բառերի առանձնացման համար մեծ դեր է խաղում բառային շեշտը: Միշտ չէ, որ բառի բառարանային ձևն արտահայտության պլանում կարող է ելակետ ծառայել, քանի որ հնչյունական շղթայում մի քանի այդպիսի ձևեր միանում են կամ անջատվում, և առաջ է գալիս մի նոր ձև՝ այսպես կոչված հնչյունական բառը: Որոշ շեշտազուրկ բառեր հանդես են գալիս շեշտակիր միավորների հետ միասին և ստեղծում նախահար և վերջահար բառեր: Հնչաբառերում նախահար են կոչվում այն անշեշտ բառերն ու մասնիկները, որոնք շեշտված բառին նախորդում են՝ կազմելով նրա հետ մի միություն, իսկ վերջահար են այն բառերը, որոնք շեշտված բառի վերջից են ավելանում<sup>3</sup>:

Այսպիսով, կարելի է ասել, որ յուրաքանչյուր առանձին արտասանված բառ ունի առնվազն մեկ առանձնացվող վանկ, որն ընկալվում է որպես շեշտված: Առանձին բառերի շեշտը կոչվում է բառային շեշտ, իսկ կապակցված խոսքի մեջ կոչվում է նախադասության շեշտ: Միավանկ բառերն ինքնաբերաբար շեշտ են կրում: Բազմավանկ բառերի վանկերից մեկն արտաբերությամբ ավելի է առանձնացվում մյուսներից: Վանկերից մեկի այսպիսի առանձնացումը կոչվում է բառային շեշտ:

<sup>3</sup> Թոխմախյան Ռ., Ժամանակակից հայերենի բառային շեշտը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, 1971, էջ 60-64: Tokhmakhyan R., Zhamanakakits hayereni barayin sheshty, Lraber Hasarakakan Gitutyuneri N 2, 1971:

Համադրելով վերը նշված բոլոր կարծիքները՝ կարող ենք սահմանել բառային շեշտը՝ որպես բառի վանկերից մեկի կամ մի քանիսի առանձնացում որոշակի հնչյունաբանական միջոցների օգնությամբ:

Հայերենի և անգլերենի հնչյունական կազմի և շեշտային կառուցվածքի ուսումնասիրությունը թույլ է տալիս բնութագրել բառային շեշտը ըստ հետևյալ չափանիշների.

- I. ըստ բառային շեշտի բնույթի,
- II. ըստ բառային շեշտի դիրքի,
- III. ըստ աստիճանավորման,
- IV. ըստ բառային շեշտի գործառույթների

I. Լեզուների բառային շեշտի բնութագրման և նրանց զուգադրման համար նախ և առաջ անհրաժեշտ է հաշվի առնել շեշտի բնույթը, այսինքն՝ այն, թե ինչպիսի հնչյունական միջոցներով է իրականացվում շեշտը տվյալ լեզվում: Այս առումով լեզուներն առաջին հերթին իրարից տարբերվում են շեշտի իրականացման արտասանական միջոցներով: Համաձայն ոլորտի մի շարք հեղինակների, ինչպիսիք են՝ Հ. Աճառյանը, Գ. Զահուկյանը, Մ. Աբեղյանը և այլք, բառային շեշտի հիմնական տիպերն են ուժգնայինը և դինամիկը, իսկ մնացած տիպերը կարելի է համարել լրացուցիչ, հիմնական տիպերի հետ զուգընթաց գոյություն ունեցող:

Հայերենի շեշտի բնույթի մասին Հ. Աճառյանը կատարում է հետևյալ դիտարկումը. նա գտնում է, որ թեև հայերենում շեշտը ուժգնության բնույթի է, սակայն այն ցայտուն արտահայտություն չունի<sup>4</sup>:

«Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ Գ. Զահուկյանը, խոսելով հայերենի շեշտի բնույթի մասին, նշում է, որ այն ուժային է, և տևողության ու տոնայնության հատկանիշները լրացական դեր ունեն<sup>5</sup>:

Հայերենի բառային շեշտի առանձնահատկությունների մասին խոսելիս հարկ է նշել, որ հայագետներն այս հարցում գրեթե տարաձայնություններ չունեն: Հայերենի շեշտային համակարգը բնութագրվում է դինամիկ կամ ուժային շեշտով, սակայն շեշտված վանկերի ձայնավորներն ավելի տևական են հնչում, քան անշեշտ վանկերի ձայնավորները:

<sup>4</sup> Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1971, էջ 349: Atjaryan H., Liakatar kerakanutyun hayots lezvi, Yerevan, 1971:

<sup>5</sup> Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 111: Djahukyan G., Hayots lezvi zargatsumy yev karutsvatsky, Yerevan, 1969:



Անգլերենում բառային շեշտը ուժային և երաժշտական է, որը բնութագրվում է շեշտվող ձայնավորի հնչողության փոփոխությամբ: Այն կարելի է սահմանել որպես բառում մեկ կամ երկու վանկերի առանձնացում, որը իրականացվում է արտաբերման ուժի, ձայնի բարձրության, հնչյունի որակական և քանակական հատկանիշների փոփոխության շնորհիվ<sup>6</sup>:

II. Մյուս չափանիշը, ըստ որի՝ կարելի է բնութագրել բառային շեշտը, շեշտի դիրքն է: Ըստ այս սկզբունքի՝ լեզվաբանները տարբերակում են կայուն և ազատ շեշտ:

Կայուն շեշտ ունեցող լեզուներում շեշտվում է բառի մեջ որոշակի դիրք զբաղեցնող վանկը: Այսպես, օրինակ, հայերենում, որպես կանոն, շեշտվում է վերջին վանկը: Հայերենի շեշտը կայուն է և, որպես օրենք, ընկնում է վերջին ձայնավորի վրա:

Այս կանոնից շեղվում են՝ ա) հարաշեշտ բառերը (*ա՛ստղ, ա՛րկղ, տա՛րր* և այլն), որոնց երկրորդ վանկը կազմված է *ր*-ով, որը հայերենում շեշտագուրկ է, բ) *մա՛նավանդ, նա՛մանավանդ* տիպի բառերը, գ) բառեր, որոնց շեշտը կարող է ընկնել թե՛ առաջին և թե՛ վերջին վանկի վրա (*ա՛յսպես, ա՛յդպես, այսքա՛ն, այդքա՛ն*), դ) կոչականները, որոնցում շեշտը կարող է ընկնել ինչպես առաջին ու վերջին վանկերի վրա, այնպես էլ միջին վանկի վրա, ե) հարադրյալ բառերը, որոնցում շեշտվում է նախադաս հարադիրը (*ցո՛ւց տալ, մո՛տ գալ*), զ) բայերի ժխտական բաղադրիչը (*չե՛մ տա, չե՛մ գրում*):

Հայերենի բառային շեշտը համարվում է նաև կայուն-շարժական. բառի նորանոր վանկերի առաջացման դեպքում շեշտն ընկնում է միշտ վերջին վանկի ձայնավորի վրա, ինչպես օրինակ՝ *քաղա՛ք-քաղաքի՛, քաղաքների՛, քաղաքաբնա՛կ, քաղաքաբնակնե՛ր, քաղաքաբնակների՛* կամ *ծա՛ռ – ծառե՛ր – ծառերի՛* և այլն:

Ազատ շեշտ ունեցող լեզուներում բառի ցանկացած վանկ կարող է շեշտված լինել, այսինքն՝ շեշտի դիրքը նման լեզուներում կարող է լինել կանխատեսելի, երբ շեշտի դիրքը պայմանավորված է որոշակի կանոններով, կամ անկանխատեսելի, երբ շեշտի դիրքը հնարավոր չէ գուշակել: Այս դեպքում շեշտը հանդես է գալիս որպես բառային կառուցվածքի բաղադրիչ, որն անհրաժեշտ է հիշել բառիմաստի հետ մեկտեղ:

<sup>6</sup> Crystal D., The past present and future of English rhythm, pp. 8-10 [http://mobile.david-crystal.com/DC\\_articles/English46.pdf](http://mobile.david-crystal.com/DC_articles/English46.pdf)

Անգլերենում բառային շեշտը համարվում է ազատ, սակայն հարկ է նշել, որ գոյություն ունեն որոշ գործոններ, որոնք կանխորոշում են շեշտի դիրքը անգլերենում<sup>7</sup>:

- ռեցեսիվ (նահանջող)
- ռիթմիկ
- պահպանող
- իմաստային

Ռեցեսիվ միտումը դրսևորվում է սահմանափակ և անսահմանափակ տիպերով: Գերմանական լեզուներից փոխառված բառերում շեշտն ընկնում է առաջին վանկի վրա, օրինակ՝ *'father, 'mother, 'husband, 'wonder, 'clever, 'body, 'water, 'singing*, մինչդեռ անգլիական ծագում ունեցող բառերում շեշտակիր է համարվում բառարմատը, օրինակ՝ *a'mong, be'come, be'fore, for'get, mis'take* և այլն:

Ռիթմիկ միտումն ապահովում է անգլերենում շեշտված և անշեշտ վանկերի հաջորդականությունը, օրինակ՝ *revo'lution, organi'sation, as,simi'lation, ar'ticulate* և այլն:

Պահպանող միտումն ապահովում է գլխաբառի շեշտը՝ *'person - 'personal, 'wonder - 'wonderful - 'wonderfully*, իմաստային գործոնը դրսևորվում է բարդ և ածանցյալ բառերի հավասարազոր անդամների կրկնակ շեշտով՝ *'hard-'working, 'blue-'eyed, 'sit 'down, 'take 'off, 'four'teen, 'six'teen* և այլն:

III. Հաջորդ հատկանիշը, ըստ որի կարելի է բնութագրել բառային շեշտը հայերենում և անգլերենում, բառային շեշտի աստիճանավորումն է: Կարելի է եզրակացնել, որ հնչյունաբանական տեսանկյունից բազմավանկ բառն ունի շեշտի այնքան աստիճան, որքան վանկ, սակայն տարբերակում են շեշտի երեք աստիճան՝ գլխավոր, երկրորդական և թույլ:

Գլխավոր և երկրորդական շեշտ ունեցող վանկերը կոչվում են շեշտված, իսկ թույլ շեշտ ունեցող վանկերը՝ անշեշտ, ընդ որում կան լեզուներ, որտեղ առանձնացվում է շեշտի երկու աստիճան, այսինքն՝ հակադրվում են շեշտված և անշեշտ վանկերը:

Որպես կանոն հայերենում բառն ունենում է մեկ հիմնական շեշտ: Որոշ բառեր և հատկապես բաղադրյալ բառեր ունենում են նաև երկրորդ շեշտ, ինչպես օրինակ՝ *ջե'րմաէլեկտրակենտրո'ն, ու'լտրամանուշակագու'յն, վե'ր-երկրյա', հա'կակառավարակա'ն, գե'րհոգնածություն'ն, հե'ծանվակա'զք, հու'շա-*

<sup>7</sup> Vassilyev V.A., English Phonetics: A theoretical course – M., 1970, p. 278.

*կրծքանշա՛ն* և այլն: Այդ կրկնակ շեշտերը տարբերվում են իրենց ուժգնությամբ. մեկն ավելի ուժեղ է, մյուսը՝ համեմատաբար թույլ: Ուժեղ շեշտն ընկնում է բառի վերջին վանկի վրա և կոչվում է հիմնական կամ գլխավոր շեշտ, թույլն ընկնում է բառի առաջին բաղադրիչի առաջին կամ վերջին վանկի վրա և կոչվում է երկրորդական շեշտ:

Հայերենում շեշտադրման ընդհանուր կանոնից բացառություն են կազմում մի քանի կցական բարդություններ, որոնցում շեշտն ընկնում է առաջին վանկի վրա: Ըստ երևույթին, նախկինում լինելով հարադրական բարդություններ՝ դրանց վերջադիր երկրորդ բաղադրիչը շեշտ չի ընդունել և հարել է շեշտակիր՝ առաջին բաղադրիչին, ինչպես, օրինակ՝ *մի՛թե, նու՛յնիսկ, նու՛յնպես, նու՛յնչափ, ե՛րբևէ, ե՛րբևիցե* և այլն: Այս կարգի բառերում նկատվում է շեշտի վերջին վանկի տեղափոխման որոշակի միտում:

Շեշտադրման անկանոնություն նկատվում է նաև *-երորդ* բաղադրիչով կազմված մի շարք դասական թվականներում և դերանուններում: Ինչպես՝ *հի՛նգերորդ, վե՛ցերորդ, ո՛րերորդ, քանի՛երորդ, փասնյո՛թերորդ, քսանհի՛նգերորդ* և այլն<sup>8</sup>: Երկրորդական շեշտերն առավել հստակորեն տարբերվում են բարդ բառերում, երբ երկրորդ շեշտի առկայությունը կարծես, ընդգծում է, թե սովյալ միավորը ինչ մասերից է կազմված, օրինակ՝ *կո՛ւսկազմակերպություն՛ն, բնա՛կկառավարչոթյո՛ւն, էլեկտրո՛մեքենաշինակա՛ն*:

Բազմաթիվ լեզվաբաններ (Գ. Տորսուն, Մ. Սոկոլովա) անգլերենի դեպքում առանձնացնում են շեշտի երեք աստիճան՝ գլխավոր, երկրորդական և թույլ, օրինակ՝ *'funda'mental, ex,peri'mental, in,vesti'gation*, մինչդեռ ամերիկյան լեզվաբաններն առաջարկում են շեշտի չորս աստիճանավորում՝ գլխավոր, երկրորդական, երրորդական և թույլ, օրինակ՝ *in,divi,dua'li,zation*<sup>9</sup>:

IV. Բառային շեշտի բնութագրման հաջորդ չափանիշը շեշտի գործառույթներն են: Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել բոլոր լեզուների բառային շեշտին բնորոշ հետևյալ գործառույթները՝ բառաձևավորող, ճանաչողական և իմաստազատիչ:

1. Բառաձևավորող (կոնստիտուտիվ) գործառույթի շնորհիվ բառի վանկերը միավորվում են ավելի մեծ միավորի՝ մեկ բառի սահմաններում. ոչ մի բառ չի կարող գոյություն ունենալ առանց շեշտի:

<sup>8</sup> Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1974, էջ 76-82: Abeghyan M., Hayots lezvi tesutyun, Yerevan, 1974:

<sup>9</sup> Trager G. L. and Smith H. L., An Outline of English Structure, Washington, 1957, p. 37.

2. Ճանաչողական գործառույթը հնարավորություն է տալիս ունկնդրին ճանաչելու վանկերի հերթականությունը՝ որպես բառի շեշտային կաղապար: Բառերի ճիշտ շեշտադրումը հեշտացնում է հաղորդակցությունը, մինչդեռ բառի շեշտային կաղապարի աղավաղումը կարող է համարյա անհնար դարձնել արդյունավետ հաղորդակցությունը: Այսպիսով, բառային շեշտը կատարում է նաև ճանաչողական գործառույթ:

Հարկ է նշել, որ բառային շեշտի այս երկու գործառույթները բնորոշ են և՛ հայերենին և՛ անգլերենին, սակայն հաջորդ գործառույթը կարող է իրականացվել միայն ազատ շեշտ ունեցող լեզուներում:

3. Իմաստագատիչ կամ հակադրող գործառույթն այն է, որ բառային շեշտի միջոցով որոշ լեզուներում հնարավոր է տարբերակել բառի բառարանային կամ քերականական իմաստները: Այս դեպքում բառային շեշտի կաղապարները կազմում են հակադրություններ:

Անհրաժեշտ է նշել, որ որոշ լեզվաբաններ առանձնացնում են ոչ թե իմաստագատիչ գործառույթ, այլ տարբերակում են ձևաբանական և շարահյուսական գործառույթները: Ձևաբանական գործառույթի շնորհիվ հակադրվում են տարբեր բառային դասերը կամ բառերի տարբեր քերականական ձևեր<sup>10</sup>:

Օրինակ՝ գոյական – բայ

*an 'import - to im'port, a 'present- to pre'sent, a 'frequent- to fre'quent, a 'record- to re'cord, a 'handout- to 'hand 'out, a 'runaway- to 'run a'way, a 'dropout - to 'drop 'out*

Շարահյուսական գործառույթը հնարավորություն է տալիս տարբերակելու բարդ բառերը ազատ շարահյուսական կապակցություններից:

Օրինակ՝ *a 'dancing girl (պարուհի) - a 'dancing 'girl (պարող աղջիկ),*

*a 'loudspeaker (բարձրախոս) - a 'loud 'speaker (բարձրաձայն խոսող),*

*a 'blackbird (կեռնեխ) - a 'black 'bird (սև թռչուն),*

*a 'goldfish (սկե ձկնիկ) - a 'gold 'fish (սկեգույն ձկնիկ):*

Այսպիսով, բառային շեշտը հայերենում և անգլերենում ունի մի շարք ընդհանրություններ: Երկու լեզուներում նրան բնորոշ են բառաձևավորող, ճանաչողական գործառույթները, սակայն անգլերենի շեշտը կատարում է նաև իմաստագատիչ գործառույթ. այն հակադրում է տարբեր խոսքի մասերին

<sup>10</sup> Шевченко Т.И. Теоретическая фонетика английского языка. М., 2006, стр. 80.

պատկանող բառեր, ինչպես նաև բարդ բառերը տարբերում է ազատ շարահյուսական կառույցներից:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել է հայերենի և անգլերենի բառային շեշտը՝ ըստ բնույթի, դիրքի, աստիճանավորման ու գործառույթի: Ըստ բնույթի՝ բառային շեշտը և՛ հայերենում, և՛ անգլերենում համարվում է ուժգնային: Հայերենում բառային շեշտի դիրքը կայուն-շարժական է, մինչդեռ անգլերենում այն ազատ է: Շեշտի տեսակները, ըստ աստիճանավորման, լինում են գլխավոր, երկրորդական և թույլ: Բառային շեշտին բնորոշ են բառաձևավորող, ճանաչողական և իմաստազատիչ գործառույթները:

**Բանալի բառեր** - բառային շեշտ, շեշտի բնույթ, իմաստազատիչ գործառույթ:

## ОСОБЕННОСТИ СЛОВЕСНОГО УДАРЕНИЯ В АРМЯНСКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

СОНА ХАРБЕРТЯН

Изучение фонетической системы и акцентуальной структуры армянского и английского языков дает возможность проанализировать словесное ударение по ряду типологических признаков: по природе, по месту, по степени и по функциональным особенностям. Словесное ударение как в армянском, так и в английском языках является по своей природе динамическим или же силовым, а по месту ударения в слове считается целесообразным отметить, что английский и армянский языки в этом аспекте значительно отличаются друг от друга. Армянское ударение можно в типологическом плане рассмотреть как более постоянное и менее подвижное, а английское ударение – свободное. В обоих языках лингвистически значимыми являются три степени ударности: главное (сильное), второстепенное (слабое) и безударное (нуль ударения). Различаются три функции словесного ударения: конститутивная (образовательная) функция, опознавательная функция (рекогнитивная) и дистинктивная функция – слова с аналогичной звуковой структурой, которые отличаются в речи только по их ударению.

**Ключевые слова** - словесное ударение, второстепенное ударение, конститутивная функция, дистинктивная функция.

## WORD STRESS FEATURES OF THE ARMENIAN AND ENGLISH LANGUAGES

SONA KHARBERTYAN

This article is concerned with the nature, position, grading and function of word stress in both Armenian and English languages. The nature of word stress in both languages is dynamic. The position of word stress in Armenian is fixed while in English is free or variable. The English has been described as having three levels of stress: Primary (stressed), secondary (half-stressed) and weak (unstressed). In English stress is phonemic, that is it can serve to distinguish otherwise identical words and change the meaning and class of words as well. The position of the stress also helps to understand the word and as a result speakers communicate rapidly and accurately.

**Key words** - word stress, nature, position, degree, functional aspect.

## ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

### ԱՐՓԻՆԵ ՄԱԴՈՅԱՆ

Այս հոդվածի նպատակը քննադատման պերլոկուտիվ ակտի քննությունն է, որտեղ կփորձենք լուսաբանել, թե պերլոկուտիվ ներազդեցության այս իմաստային դաշտը ինչպես է դրսևորվում խոսքում, այսինքն՝ իրագործվում խոսողի կողմից և մեկնաբանվում խոսընկերոջ կողմից:

Դիսկուրսի համատեքստային վերլուծությունը ցույց է տալիս, որ խոսողի վերաբերմունքը, տվյալ դեպքում բացասական դիրքորոշումը, արտահայտվում է իլլոկուտիվ մակարդակում որոշակի խոսքային ակտերի ուղիղ և անուղղակի ձևերի կիրառմամբ: Ըստ որում, նշված խոսքային իրադրություններում խոսողի գնահատականը պայմանավորված է խոսընկերոջ կողմից որևէ հասարակական նորմի խախտումով, ինչը խոսողին դրդում է քննադատական ներազդեցություն գործելու նրա վրա՝ փորձելով շտկել կատարված խախտումը, կանխել վերահաս բացասական հետևանքները:

Իլլոկուտիվ իմաստը պայմանադրական բնույթ ունի, և խոսքային ակտերի տեսության մեջ բազմիցս մշակվել են դրանց հաջող իրացման նախապայմանները, քննարկվել իլլոկուտիվ իմաստի ուղիղ/անուղղակի ձևակերպման լեզվական միջոցների հետ կապված խնդիրներ<sup>1</sup>: Խոսքային ակտերի իմաստային կառուցվածքը քննարկելիս պարզ է դառնում, որ պերլոկուտիվ ակտը, ի տարբերություն իլլոկուտիվի, պայմանադրական բնույթ չունի, և այս կամ այն պերլոկուտիվ իմաստն արտահայտելու որոշակի հաղորդակցական կանոններ գոյություն չունեն:

Քննադատումը բացասական գնահատման տարրեր պարունակող խոսքային գործունեության տեսակ է: Ընդամին այս իմաստային դաշտի քննությունը ցույց է տալիս, որ պերլոկուտիվ ազդեցությունն իրագործելու և ընկալելու գործընթացներին նպաստում են հարատեքստը, հաղորդակցվողների համատեղ հենքային գիտելիքները, նրանց հաղորդակցական նպատակները:

---

<sup>1</sup> Austin, J. L., “How to Do Things with Words”, Oxford: Oxford University Press, 1962, Searle, J. R., “Speech Acts” Cambridge; Cambridge University Press, 1969, Searle, J. R., “Mind, Language and Society: Philosophy in the Real World”, New York: Basic Books, 1999.

Մասնավորապես, վերոհիշյալ գործոններով է պայմանավորված խոսողի կողմից ուղիղ կամ անուղղակի խոսքային ակտերի կիրառությունը՝ քննադատական ներազդեցությունն ուժեղացնելու կամ թուլացնելու նպատակով: Ընդամին ուղիղ խոսքային ակտերի միջոցով՝ ուղիղ հանդիմանության, սպառնալիքի, հրամանի կիրառմամբ, խոսողն ուժեղացնում է քննադատական ներազդումը և մեծ ճնշում է գործադրում խոսընկերոջ վրա, իսկ անուղղակի խոսքային ակտերի կիրառմամբ, խոսընկերոջ վրա գործադրված ճնշումը թուլանում է, և նրան ինքնուրույն մտահանգում կատարելու հնարավորություն է տրվում:

Քննադատման պերլոկուտիվ ներազդեցության դրսևորումը խոսքում պայմանավորված է նաև խոսընկերների համատեղ հենքային գիտելիքներից բխող սոցիալ-հոգեբանական դիրքորոշմամբ: Այսպես, հաճախ խոսընկերներից մեկի քննադատական ներազդման դրդապատճառը ոչ թե խոսընկերոջ՝ տվյալ հաղորդակցական իրադրության ընթացքում դրսևորած վարքագիծն է, այլ նրա նկատմամբ եղած կանխակալ, բացասական վերաբերմունքը: Այս դեպքում, անկախ այն բանից, թե խոսընկերն ինչպես է արձագանքում իրեն արված քննադատական ներազդմանը, խոսողը շարունակում է իր հաղորդակցական ճնշումը:

Քննադատման պերլոկուտիվ ներազդման քննությունը ցույց է տալիս, որ դրա դրսևորման ընթացքը մեծապես կախված է խոսընկերոջ արձագանքից: Այն դեպքում, երբ խոսընկերը մեկնաբանում է իր վրա գործադրվող քննադատման ներազդումը, բայց չի ցանկանում հակամարտել, նա որևէ կերպ չի արձագանքում իր հասցեին արված բացասական գնահատմանը և փորձում է հաշտեցման եզրեր գտնել խոսողի հետ: Իսկ այն դեպքում, երբ խոսընկերը նախընտրում է հակադրվել խոսողին, նա հակառակվում է վերջինիս, կամ փորձում ինքն իրեն արդարացնել, կամ հակադարձ քննադատական ներազդում է իրագործում:

Հետևյալ երկխոսական միավորում խոսընկերներն անհաշտ ամուսիններ են, իսկ տվյալ հաղորդակցական իրադրության մեջ հակամարտելու նախաձեռնությունն ամուսնու՝ Բերնարդի կողմն է, քանի որ նա այդ օրը կեսօրին պատահաբար հայտնաբերել է, որ կինը մարմնավաճառությամբ է զբաղվում:

BERNARD [*bitterly*]: *He wanted me to play golf this afternoon.*

JENNY: *You should.*

BERNARD: *This afternoon?*

JENNY: *You need the exercise.*

BERNARD: *Are you trying to tell me what I need? You! You!*



JENNY: *But you do. You're putting on weight.*

BERNARD [*stamping round the room*]: *That is it! That is the end! You stand there criticizing me.*

JENNY: Not criticizing, I was saying. You told me yourself your blue suit was tight<sup>2</sup>.

Բերնարդի հաստատական ասույթը՝ *“He wanted me to play golf this afternoon.”* իրականում ոչ թե հաստատում է ստորոգման իմաստի իսկությունը, այլ անուղղակի բողոք է, որի պերլոկուտիվ ներազդեցությունը իր կնոջը՝ Ջենիին քննադատելն է: Պերլոկուտիվ ակտի այս իմաստը մեկնաբանվում է հարատեքստի ընդգրկմամբ: Ամուսնու նպատակն է ի ցույց դնել կնոջը, որ նա անբարո արարքներ է գործում: Կնոջ պատասխանից պարզ երևում է, որ նա չի ընկալում իրեն ուղղված քննադատական ներազդումը, քանի որ տեղյակ չէ ամուսնու բացահայտման մասին, կամ չի ցանկանում արձագանքել դրան: Նա պարզապես հանդիմանում է ամուսնուն այն բանի համար, որ չի կատարել ընկերոջ խնդրանքը, և դրանով իրենից հեռացնում է հաղորդակցման կիզակետը՝ *“You should”*. Սրան հետևում է *“This afternoon?”* հարցական ասույթը, որի հաղորդակցական նպատակը տեղեկատվություն ստանալը չէ: Բերնարդը կեսօրին է հայտնաբերել կնոջ՝ մարմնավաճառությամբ զբաղվելու փաստը, և ըստ այդմ, նրա հարցի պերլոկուտիվ իմաստը քննադատական ներազդումն է. նա ինչպե՞ս կարող էր գուժ խաղալ այդքանից հետո: Ջենին դարձյալ չի արձագանքում իրեն ուղղված քննադատությանը և դրա փոխարեն հակառակ ուղղությամբ է արտահայտում իր քննադատական վերաբերմունքը՝ *“You need the exercise.”*: Սույն՝ խորհուրդ արտահայտող խոսքային ակտում խոսողը քննադատում է խոսընկերոջն այն բանի համար, որ նա հրաժարվում է անել այն, ինչ օգուտ է իրեն: Ինչպես տեսնում ենք, քննադատության թիրախ է դառնում ոչ թե Ջենին իր անբարո վարքով, այլ Բերնարդը, որ չի հասկանում իր լավն ու վատը: Դրանից Բերնարդն էլ ավելի է բորբոքվում, և նրա հաջորդ խոսքային գործողության մեջ ավելի բացահայտ բացասական գնահատական է արտահայտվում. *“Are you trying to tell me what I need? You! You!”* Իրականում այս հարցական ասույթն անուղղակի բողոք է, որին հետևում է լուսանք: Բերնարդին զայրացնում է այն փաստը, որ կինը համարձակվում է իրեն խորհուրդ տալ, քանզի ըստ նրա՝ մարմնավաճառությամբ զբաղվող կինն իրավունք չունի որևէ մեկին խորհուրդ տալու: Բացականչական ասույթի առկայությունը պայմանավորված է Բերնարդի ծանր ապրումներով: Ինչպես տեսնում ենք,

<sup>2</sup> New English Dramatists 7 էջ 181, United Kingdom: Penguin Books, 1968.

Բերնարդը սուր քննադատական ներազդում է գործում կնոջ վրա և փորձում նրան ներգրավել իրեն հետաքրքրող հարցի քննարկման մեջ, բայց Ջենին այս անգամ էլ է «խույս տալիս»՝ շարունակելով քննադատել նրան այն բանի համար, որ նա չի ցանկանում ֆիզիկական վարժություններ անել և գիրանում է: Բերնարդին խիստ զայրացնում է Ջենիի նման վարքագիծը: Ի պատասխան Ջենիի՝ իրեն ուղղված անուղղակի հանդիմանության, Բերնարդն անուղղակի բողոք է արտահայտում իրեն անհարկի քննադատելու համար. *“That is it! That is the end! You stand there criticizing me.”*: Ինչպես տեսնում ենք, Բերնարդը բարձրաձայնում է իրեն ուղղված քննադատությունը և հակադարձում այն: Այս երկխոսական միավորում առկա է *երկկողմանի* քննադատման դրսևորում, քանզի Ջենին շարունակ հակադարձում է իրեն ուղղված քննադատական ներազդմանը:

Հետևյալ օրինակում երկխոսությունն սկսվում է մեղադրանք արտահայտող անուղղակի խոսքային ակտով, որով Գլորիան քննադատական ներազդում է գործում ամուսնու վրա նրա ապաշնորհության պատճառով, քանզի վերջինս չէր կարողացել իրենց տան վարձակալության համար պայմանավորվածություն ձեռք բերել. *“I can just see you,” she stormed, “letting him back you down!”*

*Internally raging Anthony hurried back to the Ritz to report his discomfiture to Gloria.*

*“I can just see you,” she stormed, “letting him back you down!”*

*“What could I say?”*

*“You could have told him what he was. I wouldn’t have stood it. No other man in the world would have stood it! You just let people order you around and cheat you and bully you and take advantage of you as if you were a silly little boy. It’s absurd!”*

*“Oh, for Heaven’s sake, don’t lose your temper.”<sup>3</sup>*

Գլորիային համակած բացասական հույզերի մասին է վկայում նաև հեղինակի *“she stormed”* նշագրումը: Հասկանալով իրեն ուղղված քննադատությունը՝ Էնթոնին փորձում է արդարացնել իր ծախսողումը. *“What could I say?”*, ինչն էլ ավելի է բորբոքում Գլորիային: Այս անգամ քննադատական ներազդումն ուժեղանում է՝ արտահայտվելով նախ ուղիղ հանդիմանությամբ, ապա ուղիղ մեղադրանքով. *“You could have told him what he was. I wouldn’t have stood it. No other man in the world would have stood it!”*: Ուղիղ հանդիմանությունն արտահայտված է *“could”* եղանակավորող բայի և *“have told”*

<sup>3</sup> F. Scott Fitzgerald, *The Beautiful and Damned*, էջ 158, New York, N.Y.: Literary Classics of the United States: Distributed by Penguin Books, 2000.

պերՖեկտ ինֆինիտիվի համադրությամբ, ինչպես նաև ըղձական անցյալով արտահայտված բայի միջոցով. *“wouldn't have stood”*: Ուղիղ մեղադրանք արտահայտող խոսքային ակտում առկա է շարահյուսական համանմանության ոճական հնարի կիրառություն, որի շնորհիվ ուժեղանում են բացասական գնահատականը և, հետևաբար, նաև քննադատական ներազդումը. *“You just let people order you around and cheat you and bully you and take advantage of you as if you were a silly little boy.”*: Էնթընին, սակայն, հակադրվում է կնոջը և հակադարձում նրան. *“Oh, for Heaven's sake, don't lose your temper.”*: Մեղադրանք արտահայտող խոսքային ակտով Էնթընին բացասական գնահատական է տալիս նրա վարքին: Նրա խիստ բացասական դիրքորոշման մասին է վկայում նաև *“for Heaven's sake”* բացականչությունը: Ինչպես տեսնում ենք, խոսքային ծավալմամբ աստիճանաբար իրագործվում է *երկկողմանի* քննադատում, քանզի խոսքերը չի ընդունում իրեն ուղղված պարսավանքը, և դրա ուժեղացմանը համընթաց ինքն էլ է սկսում հակադրվել:

Հետևյալ օրինակում խոսողն անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով քննադատական ներազդում է իրագործում դիմացինի վրա, քանզի նա առանց փաստաթղթերի մեկ այլ երկիր է եկել. *“Say, what the hell do you want to come ashore without a passport for?”*: Խոսողի բացասական վերաբերմունքն արտահայտված է *“what the hell”* շարույթի միջոցով:

*“I'm from the consulate. ... Say, what the hell do you want to come ashore without a passport for? Don't you think we have anything better to do than to take care of a lot of damn fools that don't know enough to come in when it rains? Damn it, I was goin' to play golf this afternoon and here I've been here two hours waiting to get you out of the cooler.”*

*“That'll teach you a lesson, I hope. ... Next time you have your papers in order.”*

*“Yessirree. ... I shu will.”<sup>4</sup>*

Այնուհետև խոսակիցը դարձյալ անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտերով քննադատում է խոսակցին այն բանի համար, որ նա անխոհեմ վարքագիծ է դրսևորել, և նրան օգնելու համար հյուպատոսը ստիպված է եղել հետաձգել իր բոլոր պլանները. *“Don't you think we have anything better to do than to take care of a lot of damn fools that don't know enough to come in when it rains? Damn it, I was goin' to play golf this afternoon and here I've been here two hours waiting to get you out of the cooler.”*: Ի

<sup>4</sup> John Dos Pasos “1919”, p. 62. New York: New American Library, 1960.

պատասխան իրեն ուղղված քննադատական ներազդման՝ խոսակիցը ոչ միայն չի հակադարձում, այլև հրամանին հետևելու պատրաստակամություն է հայտնում՝ “Yesssirree. ... I shu will.”: Այս երկխոսական միավորի քննությամբ պարզ է դառնում, որ այն *միակողմ քննադատություն* է պարունակում:

Այսպիսով, հիմնվելով մեր կատարած հետազոտության վրա՝ մենք տարանջատում ենք քննադատման պերլոկուտիվ ներազդման *միակողմ* կամ *երկկողմանի* բնույթ ունեցող երկխոսական միավորներ: *Երկկողմանի* քննադատական ներգործություն պարունակող հաղորդակցական միավորների այս տարատեսակի առանձնահատկությունն այն է, որ, ի պատասխան խոսողի պարսավախոսական դիրքորոշման, խոսակիցն իր հերթին փորձում է քննադատել նրան կամ էլ իրագործում է ինքնապաշտպանական խոսքային ռազմավարություն՝ մասամբ ընդունելով իրեն ուղղված քննադատական ներազդումը: Մինչդեռ միակողմ քննադատական ներազդեցության դեպքում խոսակիցն ընդունում է իրեն ուղղված քննադատությունը կամ էլ նախընտրում է չհակադարձել՝ այսպիսով խուսափելով կոնֆլիկտից:

### Գրականություն

1. Austin, J. L., “How to Do Things with Words”, Oxford: Oxford University Press, 1962
2. Searle, J. R., “Speech Acts” Cambridge; Cambridge University Press, 1969
3. Searle, J. R., “Mind, Language and Society: Philosophy in the Real World”, New York: Basic Books, 1999
4. F. Scott Fitzgerald “The Beautiful and Damned” New York, N.Y.: Literary Classics of the United States: Distributed by Penguin Books, 2000.
5. John Dos Pasos “1919” New York: New American Library, 1960
6. New English Dramatists 7 United Kingdom: Penguin Books, 1968

### ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածի նպատակը քննադատման պերլոկուտիվ ակտի քննությունն էր, որտեղ լուսաբանեցինք, թե պերլոկուտիվ ներազդեցության իմաստային դաշտը ինչպես է դրսևորվում խոսքում, այսինքն՝ իրագործվում խոսողի կողմից և մեկնաբանվում խոսընկերոջ կողմից: Հիմնվելով մեր կատարած հետազոտության վրա՝ մենք տարանջատեցինք քննադատման պերլոկուտիվ ներազդման *միակողմ* կամ *երկկողմանի* բնույթ ունեցող երկխոսական միավորներ: *Երկկողմանի* քննադատական ներգործություն պարունակող հաղորդակցական միավորների այս տարատեսակի առանձնահատկությունն այն է,

որ, ի պատասխան խոսողի պարսավախոսական դիրքորոշման, խոսակիցն իր հերթին փորձում է քննադատել նրան կամ էլ իրագործում է ինքնապաշտպանական խոսքային ռազմավարություն՝ մասամբ ընդունելով իրեն ուղղված քննադատական ներազդումը: Մինչդեռ միակողմ քննադատական ներազդեցության դեպքում խոսակիցն ընդունում է իրեն ուղղված քննադատությունը կամ էլ նախընտրում է չհակադարձել՝ այսպիսով խուսափելով կոնֆլիկտից:

**Քանայի բաներ** - քննադատման պերլոկուտիվ ներազդում, պերլոկուտիվ ներգործություն, երկկողմանի քննադատում, միակողմ քննադատում:

## КОММУНИКАТИВНАЯ ХАРАКТЕРИСТИКА ПЕРЛОКУТИВНОГО ВОЗДЕЙСТВИЯ КРИТИКИ В АНГЛИЙСКОМ

АРПИНЕ МАДОЯН

Данная статья анализирует перлокутивный акт критики, т.е. как отражается перлокутивное воздействие критики в английской речи, как говорящий реализует вышеупомянутое воздействие и как это воспринимает слушатель. Наше исследование позволяет отличить одностороннее и двухстороннее перлокутивное воздействие критики. Двухстороннее перлокутивное воздействие критики можно охарактеризовать как коммуникативное воздействие, где в ответ на критику слушатель в свою очередь критикует говорящего или реализует самозащитную коммуникативную стратегию, отчасти признавая свой проступок. В случае одностороннего воздействия слушатель принимает критику в свой адрес или предпочитает никак не реагировать, таким образом избегая конфликта.

**Ключевые слова** - перлокутивное воздействие, одностороннее и двухстороннее перлокутивное воздействие критики.

## THE CHARACTERISTICS OF THE PERLOCUTIONARY ACT OF CRITICISM IN THE ENGLISH LANGUAGE

ARPINE MADOYAN

The article investigates the perlocutionary act of criticizing in English literary discourse. The author has tried to elucidate how the perlocutionary effect

functions in speech, that is: how this communication is realized by the speaker and interpreted by the hearer. Based on these studies, we could set apart two communicative perlocutionary act of criticism: two-sided and one-sided criticism. Two-sided criticism can be defined as a type of communicative act where in response to the speaker's criticism, the hearer criticizes the latter or uses self-defense as his/her conversational strategy. The use of such strategies indicates that the hearer acknowledges some wrongdoing. Whereas, in one-sided act of criticism, the hearer either accepts the speaker's criticism or prefers not to answer at all. Based on research work, it becomes clear that the absence of feedback on the hearer's part is conditioned by his/her desire not to provoke confrontation.

**Key words** - perlocutionary act of criticism, two-sided criticism, one-sided act of criticism.

## ՓՈՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

### ԱԼՎԱՐԴ ՔԻԼԱՐՋՅԱՆ

Վահան Թեքեյանի չափածոն առանձնանում է ձևի հղկվածությամբ ու նրբությամբ<sup>1</sup>:

Թեքեյանի քնարական հերոսը աշխարհի ու մարդկանց հետ հաղորդակցվում է անկրկնելի բանաստեղծական լեզվով, որ միայն իրենն է, իր գոյության կերպը, բուն գոյավիճակը: Բանաստեղծական լեզուն, աշխարհի, մարդկանց, սեփական անձի հետ հաղորդակցվելու միջոց լինելուց բացի, նաև բանալի է, որով ստեղծագործողը փակ դռներ է բացում, նոր դողանջներ է հնչեցնում՝ հոգիների համար պարզելով հրապուրիչ հորիզոնների լայնություններ, որտեղ նրանք նորից են ծնվում՝ վայելելու անփոխարինելի հրճվանքներ, լսելու չլսված մեղեդիներ, ապրելու չապրված կարոտներ, շլանալու դեռ չծիածանված գույներով, դեռ չճաշակած բույրերով: Բանաստեղծական լեզուն արարողի հրաշքն է<sup>2</sup>:

Գեղարվեստական խոսքում ոճական դարձույթների գործածությունը խոսում է տվյալ հեղինակի լեզվական հմտության մասին: Գեղարվեստական գրականության լեզուն անհատականացված ու տիպականացված է և միաժամանակ ունի ընդհանրացումներ կատարելու անսպառ հնարավորություններ: Տարբերվելով զգացմունքայնությամբ, հուզականությամբ՝ գեղարվեստական գրականության լեզուն պատկերավորման համակարգի և արտահայտչամիջոցների շնորհիվ վեր է հանում լեզվի յուրահատկությունները, նրա ճկունությունը, բառապաշարի հարստությունը, քերականական ձևերի կատարելությունը, պատկերավորությունը, բացահայտում մտքի ու հոգու ամենանուրբ ելևէջներն ու թրթռումները: Տաղանդավոր գրողները խոր հետք են թողնում լեզվի զարգացման ճանապարհին, քանի որ շրջանառության մեջ են դնում նոր ոճեր, արտահայտություններ, կերտում նոր բառեր, իրենց ստեղծագործություններով նպաստում լեզվի հարստացմանն ու կատարելագործմանը: Թեև գե-

---

<sup>1</sup> [www.anunner.com/name/biographi/ՎԱՀԱՆ-ԹԵՔԵՅԱՆ-ԳԱԼՈՒՍՏԻ?lang=en](http://www.anunner.com/name/biographi/ՎԱՀԱՆ-ԹԵՔԵՅԱՆ-ԳԱԼՈՒՍՏԻ?lang=en) [www.anunner.com/name/biographi/VAHAN-TEQEYAN-GALUSTI?lang=en](http://www.anunner.com/name/biographi/VAHAN-TEQEYAN-GALUSTI?lang=en).

<sup>2</sup> Տե՛ս Վահան Թեքեյանի 125-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2004, էջ 14: Tes, Vahan Teqeyani 125- amyakin nvirvats gitajoghovi zekutsumner, Erevan 2004, ej 14:

ղարվեստական լեզուն միատարր չէ, այնուհանդերձ գեղարվեստական գրականության լեզուն արտահայտվում է ինքնատիպ ձևով՝ զգացմունքների ու լեզվի յուրահատուկ ներդաշնակությամբ, յուրօրինակ գեղարվեստական պատկերներով: Լեզվի պատկերավորման հիմքում ընկած է բառի փոխաբերական գործածությունը: Երբ բառիմաստը գործածվում է այլ երևույթների փոխարեն, ստանում ենք փոխաբերական նշանակություն: Փոխաբերության մեջ առկա է երկու երևույթների սեղմ համեմատությունը: Ընթերցողն ինքը պետք է բացահայտի դրանց ներքին կապերն ու նմանությունները. այդ երևույթները բացահայտորեն չեն տրվում:

Փոխաբերությունը նշանակության փոխանցում է ըստ նմանության: Իմաստային երկու իրողությունների միջև եղած կապը ենթադրում է մի որևէ ընդհանուր իմաստային տարրի՝ կապակցող միավորիչ իմաստային առկայություն, այդ նշանակությունների տիրույթի մնացած մասը զբաղեցնում են տարբերակիչ իմաստայինները: Հենց ընդհանուր իմաստային՝ նշանակության կերպարանափոխումն իրականացնող ուղու միջոցով գիտակցության մեջ միասնական, հաճախ անսպասելի համակարգվում են սկզբնական և վերջնական, բուն և փոխաբերական նշանակությունները<sup>3</sup>:

Վահան Թեքեյանի լեզուն արևմտահայ գրական լեզվի զարգացման ամենափայլուն նմուշներից է: Նրա փոխաբերություններում խտացված են հեղինակի հոգեկան դրամայի տիպական գծերը: Օրինակ.

*Բայց արվածդ էր իմ ցուրտիս, մուգիս դէմ*

*Յանկարծ ա՛յնպես լուսատուր, ա՛յնքան սրտով, հոգուով լի*

*Որ մոխիրէն իմ սրտիս թռաւ այս բո՛ցը վըսեմ... (62)<sup>4</sup>:*

Որպես լեզվական պատկերավորման միջոց՝ փոխաբերությունը բնորոշ է բանաստեղծական անձնավորմանը, որով մարմնավորվում են հոգեկան բարդ, անըմբռնելի երևույթները, պատկերվող դեպքերին, երևույթներին, գործողություններին, աներևույթ առարկաներին հեղինակը վերագրում է մարդկային այս կամ այն հատկանիշը: Օրինակ.

*Արաքսն իր պորպոր քեզմէ կտրած կ'երթա՛յ, կը վազե՛*

<sup>3</sup> Տե՛ս Աթայան Է., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981: Tes E. R. Atayan, Lezvakan ashxarhi nerqin kerpavorumy ev artaqin veraberutyuny, Erevan, 1981:

<sup>4</sup> Այս և մյուս օրինակները բերված են հետևյալ գրքից՝ Վահան Թեքեյան, բանաստեղծութիւններու հատընտիր, Երեւան, 2012: Ays ev myus orinaknery bervats en hetevyal grqic Vahan Teqeean, banasteghutiunneru hatyntir, Erevan, 2012:



*Հայ աշխարհին մեջտեղէն, զայն երգերով կը լընու,  
Զայն կ'ողողէ բերքերով, մերթ կը գոռա՛յ ահարկու,  
Եւ մերթ ուրախ ու թեթեւ կը ցափկէ վա՛ր ժայռերէ... (158):*

Պատկերավորման այս երկու միջոցները բացահայտում են իրերի հոգին, դրանց շարժումն ու խոսքը: Օրինակ.

*Պէտք ունինք որ՝ մեր անունն ալ սաւառնաթեւ  
Երկրէ երկիր թռչի երթայ(53):*

Իբրև պատկերավորման միջոց՝ փոխաբերությունը ձգտում է կերպարի ճկունության, հոգու ներքին կենսունակության: Նրա հյուսվածքում ամեն անգամ փոխաբերություններ են ծնվում՝ արտահայտելով միմյանցից բոլորովին տարբեր վիճակներ: Եվ դա է նրա արվեստի հարստությունն է: Օրինակ.

*Զի ինչ որ ես ըզգացի եւ, ա՛հ, չըսի վաւորեն,  
Ծով մ'էր անհուն հեշտութեան, որ գրկեց սիրտս ու փարաւ  
Ու զայն խեղդեց ու հիմա անոր դագաղն է անբաւ... (74)*

*Այդքա՛ն անոյշ ջերմութիւն՝ նայուածքիդ մէջ ու ժպտիդ,  
Ու հասակիդ մէջ այդքա՛ն լեցուն, ճըկուն ճոխութիւն,  
Մորթիդ խաւար բուրումին, ձայնիդ շեշտին հեք վըճիպ՝  
Զիս կը խեղդեն հեշտութեան աւազներու փակ ծըփուն... (59):*

Մարդկային հոգեվիճակները՝ վիատությունից մինչև հույս և դառնությունից մինչև բերկրանք, շնորհիվ փոխաբերության, դառնում են տեսանելի, նույնիսկ՝ շոշափելի: Օրինակ.

*-Պէտք է որ **Յոյսը** մափաղ  
Ձեր սրտին մեջ ալ փղա՛ք,  
Ձեզի համար ու մեզի,  
Ամէն, ամէ՛ն երկնի փակ  
Յաւերժաբար **բողբոջի**... (118):*

*Ուրիշ ամէն բան ժանգ է հոգոյն համար, որ պղինձ՝  
Ծիծաղին խիստ շըփումով կը մաքրուի, կը փայլի... (207):*

*Կը նստի՛ գիշերն ու ահեղօրէն  
Զափուած՝ ան կ'երթայ, ամբոխէն հեռու,  
Մենութեան սառին մէջ թաթխըվելու(136):*

Փոխաբերությունը հասկացության արտահայտումն է պատկերավոր եղանակով, գեղարվեստական մտածողության յուրահատկությունների դրսևավորմամբ:

Լեզուն մի համակարգ է, որը նախորդից ընտրում է իր իմաստաբանական աշխարհը և այն բաշխում իր նշանակողների միջև. դրանով պահպանում ու որոշակիացնում է փոխաբերական գործածությունների՝ նախորդ մակարդակում պարունակվող հնարավորությունների մի մասը: Լեզուն յուրովի բեկում է նախորդ մակարդակը և անմիջականորեն ընկած է անհատի խոսքի՝ ռեականորեն սահմանվող կիրառական հնարավորությունների հիմքում, որոնց թվին են պատկանում նաև փոխաբերական գործածությունների հնարավորությունները<sup>5</sup>:

Փոխաբերությունները խոսքում բառի ոչ բառացի գործածության ուղիներն են:

Փոխաբերությունը մտքի ու ճանաչողության շարժման ու զարգացման մայրուղիներից մեկն է:

Ըստ Պոտեբնյայի՝ փոխաբերական և բուն իմաստների միջև գոյություն ունի նշանային հարաբերություն. փոխաբերական իմաստը բուն իմաստի նշանն է: Փոխաբերական ներունակ միավորիչ իմաստույթը նմանության, զուգաձևության իմաստույթ է<sup>6</sup>:

Բանաստեղծական խոսքի և փոխաբերության կապի բնութագիրն առավել ամբողջական դարձնելու համար հարկ ենք համարում քննության առնել փոխաբերության կապը այլաբերության մյուս տիպերի հետ, հատկապես համեմատության հետ: Փոխաբերությունը, ի տարբերություն համեմատության, ցույց է տալիս մի առարկայի կայուն նմանությունը մյուսին: Այդ պատճառով էլ փոխաբերությանը բնորոշ չէ տեղով և ժամանակով սահմանափակումը: Փոխաբերությունը կրճատում է խոսքը, իսկ համեմատությունը՝ ընդլայնում: Փոխաբերությունը երկանդամ է, իսկ համեմատությունը՝ եռանդամ: Համեմատությունները երբեմն կարելի է շփոթել փոխաբերությունների հետ, քանի որ երկուսն էլ կառուցված են նմանության սկզբունքով: Փոխաբերությունը բառի գործածությունն է մեկ այլ բառի իմաստով՝ հենվելով երկու երևույթների նմանության վրա<sup>7</sup>: Սակայն փոխաբերության մեջ համեմատվող անդամը փոխարինվում է այլաբանական իմաստ ստացած բառով: Համեմատությունն ընդ-

<sup>5</sup> Տե՛ս **Աթայան Է.**, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981, էջ 269: Tes E. Atayan, Lezvakan ashxarhi nerqin kerpavorumy ev artaqin veraberutyuny, Erevan, 1981, ej 269:

<sup>6</sup> **Потебня А.А.** Из записок по русской грамматике, М. 1958, с. 17.

<sup>7</sup> Տե՛ս **Էլոյան Ս.**, Ժամանակակից հայերենի բառային ռեաբանություն, 1989, էջ 71: Tes Eloyan S., Djamanakits hayereni barayin ojabanutyu, 1989, ej 71:

հանրապես շեշտում, ընդգծում է պատկերվող երևույթի, առարկայի ամենից բնորոշ հատկանիշը: Թեքեյանի ստեղծագործություններում համեմատություններն ու փոխաբերություններն արտահայտչական մեծ նշանակություն ունեն: Նրա քնարերգության մեջ բառերը հիմնականում հանդես են գալիս զգացմունքային երանգով: Այդպիսի բազում օրինակներ կան Թեքեյանի անտիպ գործերում.

*Իբր աղբիւրէ մը կցուած  
ժայթքէ՛ր համբոյրըդ յանկարծ*

*Փըլէ՛ր իր շենքը վըրաս...<sup>8</sup>*

*Փոխ եթե այսքան սէր թափէր*

*Անձրեւի տեղ ժայռին վրայ*

*Մինչև անգամ ժայռն հիմա*

*Կը բուսցընէր ծաղիկներ...<sup>9</sup>*

*Եւ լուսասփիտ դաշտերուդ սա՛ կանանչ քողն է ցորեն (151):*

**Գտնել բնական փոխաբերություններ** նշանակում է կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը: Վահան Թեքեյանը մեծ վարպետությամբ բնության երևույթների միջոցով հրաշալի փոխաբերություններ է ստեղծում: Օրինակ.

*Բնութիւնը հայելի մ՛ է սոսկ, որուն*

*Կեանքի պատրանք կուտայ մեր կեանքին,*

*Փոթորկորպ ծոցը պատկերն է մեր սըրտին,*

*Որ կը կռփ յար դէմն իր նեղ ասիերուն*

*Եւ մեր սրտէն է, որ կ՛առնէ փոխ գարուն*

*Ամբողջ թուփը վարդերուն ու սոխակին,*

*Այգուն հմայքն, արեգին ալ հուր ոսկին*

*Տժգույն ցոլքերն են մեր սրտին յոյգերուն (Անտիպ-ԳԱԹ-ՎԹԾ, թիվ 24,*

*էջ 3):*

*Ճամփուն եզերքը մանուշակն արդեն*

*Քեզի կը կանչէ.*

*-Եկո՛ւր, մրմունջը լուսե առուակին*

<sup>8</sup> Անտիպ գործեր, Մամուլի մէջ տպուած եւ անտիպ երկեր ու նամականի Վահան Թեքեյանէն-Պեյրութ, 1987, էջ 123: Antip gortser, Mamuli mej tpuats ev antip erker u namakani Vahan Teqeeaneni- Peyrut, 1987, ej 123:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 128: Nuyt teghum, ej 128:

*Անուշ խոսքերով*

*Պիպի ամոքէ քո մըռայլ հոգին*

*Քու հոգին խըռով (Անպիպ-122):*

*Ծառի թեթև ծաղիկներ՝ սալորենտ՛, նըշենտոյ,*

*Նման էիք դուք սիրոյս ծաղիկներուն՝ որ յանկարծ*

*Կը բացուէին երագի երկընքին մէջ ու յեպոյ*

*Կը թափէին, մի առ մի, վերէն՝ գեպնին վըրայ ցած... (94):*

Փոխաբերության գործառույթներն են՝ պատկերավոր մտածողության ստեղծում, անվանողական գործառույթ, մտածողությունը ձևավորող գործառույթ, խոսքին պարզություն ու հասկանալիություն հաղորդելու գործառույթ, խոսքին սեղմություն հաղորդելու գործառույթ: Վերջինս ունի լեզվական խնայողության գործառույթ, որը պահանջում է գործածման հմտություն: Փոխաբերության գործածությունը կապվում է կարևորագույն նպատակների հետ՝ իմացաբանական և պատկերաստեղծ: Փոխաբերությունը հենց լեզվի գործառույթունն է: Բացի պատկերաստեղծ միջոց լինելուց՝ փոխաբերությունը հիմնարար կառուցողական դեր ունի մեր մտածողության դաշտում հասկացական նոր համակարգեր ձևավորելու գործում: Փոխաբերությունը ոչ թե իմաստի կրողն է, այլ դրա ձևավորման միջոցը:

Փոխաբերությունն առաջնային տեղ և ոճաստեղծ դեր ունի Վահան Թեքեյանի չափածոյում: Վահան Թեքեյանը պատկերավորության իսկական վարպետ է: Սովորական բառերն ու արտահայտությունները նրա գրչի տակ դառնում են շնչող ու անփոխարինելի: Պատկերավորության բազմաթիվ միջոցներն իրենց զանազան արտահայտություններով ու ինքնատիպ ձևերով մի առանձնակի փայլ են տալիս նրա չափածոյին:

Պատկերավոր արտահայտչամիջոցների կիրառումը ենթադրում է ընթերցողի մտքերի և զգացմունքների վրա գեղագիտական ներազդեցություն. հեղինակի նպատակն է գեղագիտորեն ներազդել ընթերցողի վրա. ընթերցողը պետք է մտնի հեղինակի մտահղացումների աշխարհը և որսա նրա ասույթի իմաստը:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Փոխաբերությունը պատկերաստեղծ միջոց լինելուց բացի, հիմնարար կառուցողական դեր ունի մեր մտածողության դաշտում հասկացական նոր

համակարգեր ձևավորելու գործում: Փոխաբերությունն առաջնային տեղ և ոճաստեղծ դեր ունի Վահան Թեքեյանի չափածոյում:

**Բանալի բաներ** - փոխաբերություն, գեղարվեստական գրականության լեզու, ոճ, ստեղծագործություն, պատկերավորում, համեմատություն, գործառույթ:

## МЕТАФОРА В СТИХАХ ВАГАНА ТЕКЕЯНА

АЛВАРД КИЛАРДЖЯН

Помимо того, что метафора является средством создания образа, она играет фундаментально-конструктивную роль в нашем мышлении при формировании новых концептуальных систем. Метафора играет первостепенную и стилиобразующую роль в стихах Вагана Текеяна.

**Ключевые слова** - метафора, язык художественной литературы, стиль, произведение, иллюстрация, сравнение, функция.

## THE METAPHOR IN VAHAN TEQEYAN'S VERSE

ALVARD QILARJYAN

The use of metaphor is a means of creating images and has a fundamental role in our thinking, which can engender a new way of awareness and understanding. In Vahan Teqeyan's verse, metaphor is a prerogative and has a part in defining his style.

**Key words** - metaphor, the language of art literature, style, creation, illustration, comparison, function.

---

---

# ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ

Շուրջ երկու հարյուր տարի իր վրա կրելով եվրոպական դիվանագիտության դաժան հարվածները՝ հայրենագրկված հայությունը հավատ ուներ ժողովրդավարություն, արդարություն, իրավունք հասկացությունների նկատմամբ: Այդ հավատն ավելի խորացավ ՄԱԿ-ի բարձրագույն սկզբունքների հանրահռչակումից հետո, և սփյուռքահայությունը, արդեն ավարտվող հաղթական պատերազմը գնահատելով որպես բարենպաստ իրավիճակ, սկսեց նախապատրաստական աշխատանքները Հայկական հարցը միջազգային ատյանների քննությանը ներկայացնելու համար:

Դեռևս 1919թ. ԱՄՆ-ում հաստատված գրող, լրագրող և մշակութային գործիչ Ենոկը Արմենը, հաղթահարելով լեզվական դժվարությունները, ավարտեց ԱՄՆ դեսպան Մորգենթաուի գրքի հայերեն թարգմանությունը: Նվիրյալը հույս ուներ, որ գիրքը նորից ուշադրության կենտրոն կբերի Հայկական հարցը: Սակայն, մեծ արձագանքի արժանացած գիրքը չկարողացավ ճեղքել այն անտարբերությունը, որ ձևավորվել էր Մեծ եղեռնի պատճառով աշխարհասփյուռ հայության՝ հայրենիք վերադառնալու պահանջների նկատմամբ:

Սպասելը համարելով նոր ձախողում՝ Ե. Արմենը դիմեց կտրուկ քայլի և 1920թ. դեկտեմբերի 22-ին նամակ գրեց ԱՄՆ նախագահ Ու. Ուիլսոնին՝ նրան ուղարկելով նաև իր թարգմանած «Դեսպան Մորգենթաուի հիշատակները» գիրքը: 1921թ. հունվարի 22-ին նախագահը պատասխանեց նամակին. «Սիրելի Պ. Արմեն: Թույլ տուեք ինձի հայտնել այն խիստ անկեղծ եւ խոր գոհունակությունը, զոր զգացի՝ ստանալով Ձեր դեկտ. 22 թուակիր սիրագիր նամակը: Անիկա ինձ շատ մեծ հաճույք պատճառեց եւ կը փափագիմ Ձեզի դրկել Ամա-նորի իմ ողջույններս, որոնց հետ նաեւ ջերմագին մաղթանքներս Ձեզի և այն

մեծ ժողովուրդին, որուն զավակն եք: Սրտակցորեն եւ անկեղծորեն Ձերդ Ու Ուիլսըն»<sup>1</sup>:

Ահա ամերիկյան դիվանագիտության առաջին փաստաթղթերից մեկը, որն իր անորոշ բովանդակությամբ առ այսօր շարունակում է ուղղորդել Հայկական հարցի նկատմամբ այդ երկրի քաղաքականությունը:

Սկիզբը դրված էր: Այդուհետ ամերիկյան պատասխանատու գործիչները «սրտացավ» ու «անկեղծորեն» արձագանքելու էին հայության ցանկացած խնդրի՝ իրենց ծանրակշիռ ավանդը բերելով թուրքական ոճրագործ պետության պաշտպանության գործում:

Ժամանակներն իրենց հետ բերեցին նոր սրբագրումներ, սակայն երբեք չփոխվեց, անսասան մնաց Հայկական հարցի նկատմամբ դիրքորոշումը, որի փուլերից մեկն էլ ծնվեց Երկրորդ աշխարհամարտի տարիներին:

Հիտլերյան խմբավորման պարտությունն անխուսափելի էր: Մեծ տերությունները, որոնց ջանքերով ոչնչացվեց ֆաշիզմը, աշխարհաքաղաքական նոր խնդիրներ էին մշակում, ի լուր հայտարարում դեմոկրատիայի ու ժողովուրդների իրավունքների պաշտպանության մասին: Երբ արդեն հայտնի էր, որ հետպատերազմյան շրջանի աշխարհաքաղաքական խնդիրները քննարկվելու են հաղթող տերությունների ղեկավարների առաջիկա խորհրդաժողովում, սփյուռքահայությունը ներգրավվեց եռանդուն աշխատանքի՝ Հայկական հարցը դաշնակից երկրների համաժողովին ներկայացնելու համար:

1943թ. Թուրքիայի արտաքին քաղաքականությունն առավել ակնառու դարձավ Ստալինգրադի ճակատամարտից հետո, անիրականանալի էր դառնում Թուրանի գաղափարը, փոխվում էր նաև Թուրքիայի նկատմամբ ԽՍՀՄ վերաբերմունքը: Սփյուռքահայ հասարակական կազմակերպությունները, կուսակցությունները, վերլուծելով միջազգային հարաբերությունները, որոշեցին միատեղել աշխատանքները և առաջիկա համաժողովներին ու «Մեծ եռյակի» երկրներին ներկայացնել հայրենագուրկ հայության խնդիրները: Այդ նպատակով էլ գաղթօջախներում սկսվեց ազգային կազմակերպությունների կազմավորման գործընթացը: Ասպարեզ եկած Ազգային խորհուրդները մշակում էին գործունեության ծրագրեր, համախմբում էին տարագիր հայությանը, ձևավորում նախաձեռնող խմբեր:

Առաջին խոշոր միավորումը ստեղծվեց 1944թ. մարտի 19-ին: Ամերիկյան Ազգային խորհուրդն ընդգրկում էր Հայ դեմոկրատական լիբերալ կու-

<sup>1</sup> «Հայ զինվոր», 2005թ., 17 դեկտեմբերի:

սակցությունը, Հայկական առաջադիմական լիգան, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը:

Յուրաքանչյուր կուսակցության երեք անդամներ ընդգրկված էին խորհրդի ղեկավար մարմնում: Խորհրդի նախագահ ընտրվեց ռամկավար Պետրոս Ա. Թերզյանը: Ընդգրկելով հայրենակցական քսան կազմակերպություններ՝ Խորհուրդը երկրի տարբեր նահանգներում ձևավորեց հիսունի հասնող մասնաճյուղեր<sup>2</sup>:

ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը Հ. Դարբինյանի ու Ս. Վրացյանի ղեկավարությամբ ԱՄՆ-ում կազմավորեց Հայկական ազգային կոմիտե: Ա. Չոպանյանի գլխավորությամբ ստեղծվեց ֆրանսահայ Ազգային խորհուրդը: Եգիպտոսում Ազգային խորհուրդը ղեկավարում էր նկարիչ Ալ. Սարուխանը: Ազգային խորհուրդներ էին գործում նաև Լիբանանում, Սիրիայում, Հունաստանում, Ուրուգվայում, Պաղեստինում:

1945թ. ցեղասպանությունից մազապուրծ, ԱՄՆ քաղաքացի Սուրեն Տաշյանը նամակով դիմեց ԱՄՆ նախագահ Հ. Ս. Տրումենին. «Թանկագին Միստր նախագահ

Մենք՝ հյուսիս-արևմուտքի հավատարիմ քաղաքացիներս, մեծ դառնություն ապրեցինք, երբ իմացանք, որ մեր կառավարության որոշ պաշտոնատար անձինք պաշտպանում են ֆաշիստական Թուրքիային, որպեսզի դիմադրի առաջիկայում տեղի ունենալիք Թուրքիայի և Ռուսաստանի տարածքային ճշգրտումներին:

Հաշվի չառնելով որոշ թուրքամետ, կարճատես, շահամոլ մամուլի ներկայացուցիչների կեղծ հայտարարությունները՝ փաստ է, որ ոչ հեռավոր ժամանակներում Թուրքիայի քրիստոնյաներն ու մյուս փոքրամասնությունները պարբերաբար հետապնդվել են:

Դժբախտաբար, երբեք թուրքական գազանությունների մեծ ցուցակի առթիվ չեն եղել սիոփանքի նշաններ, չեն եղել փորձեր Թուրքիայի քրիստոնյաներին թույլ տալու ստանալ Ատլանտյան հրովարտակի (Խարտիայի – Հ.Զ.) ազատությունը: Հարյուր հազարավոր տեղահանված հայ քրիստոնյաներ, վերջին պատերազմի թուրքական կոտորածների մնացորդները, մասամբ ապահովված ամերիկյան բարեգործությամբ, Հունաստանի, Սիրիայի, Եգիպտոսի, Ֆրանսիայի ճամբարներում առ այսօր գտնվում են անօգնական գաղթականի կարգավիճակում:

<sup>2</sup> Ահարոնյան Գ., Մեծ երազի ճամբուն վրա, Պեյրուօ, 1964, էջ 195:



Եթե մենք միջամտենք, ապա դա Միացյալ Նահանգների համար կլինի արդարացի և իրավական, առանց երկմտության Թուրքիային հայտարարելու, որ տարածքային ճշգրտումները պետք է տեղի ունենան, որպեսզի Թուրքիայից քշված հայերն իրենց հինավուրց հայրենիքում ինչ-որ տեղ ապաստան գտնեն, որտեղ այդ ունակ և ձեռներեց ժողովուրդը կկարողանա ինքը հոգավ իր մասին:

Սա, Միստր նախագահ, կլինի ոչ միայն կատարումը դարավոր մարդասիրական խոստումների, այլև առաջընթաց քայլ Թուրքիայի բարոյական և հոգեկան արթնացմանը: Դա կլինի մի մեծ խթան Մերձավոր Արևելքի հաձված ժողովուրդների խաղաղության գործում»<sup>3</sup>:

Բնական է, որ արդեն հակամարտությունների փուլ մտած նախկին դաշնակիցների և հատկապես ԱՄՆ-ի համար ստեղծվում էր շահավետ իրավիճակ: Զսպելով ԽՍՀՄ ձգտումները, օր օրի սպառնացող վտանգը չարաշահելով՝ Տրումենի վարչակարգը Թուրքիան վերածում էր անդեմ ու պաշտպանություն մուրացող մի տարածքի, որի վրա կարող էր օգտագործել իր ազդեցության բոլոր լծակները:

Այս պայմաններում ցանկացած դիմում կամ կոչ չէր կարող փոխել ընդգծված քաղաքական ուղեգիծը, որովհետև նրանից փոքր շեղումն անգամ վտանգի տակ կոներ տարածաշրջանում ամրապնդվելու ծրագիրը:

1944թ. փետրվար-օգոստոս ամիսներին ֆրանսահայ երիտասարդությունը մշակեց չորս տեղեկագրեր, որոնք գաղտնի, գերմանական զավթման պայմաններում տարածվեցին Ֆրանսիայի հայկական գաղթօջախներում:

Առաջին տեղեկագիրը (Բյուլետենը) գրված էր 1944թ. փետրվարին: Դիմելով հայրենակիցներին՝ հեղինակները բացահայտում են փաստաթղթի մշակման անհրաժեշտությունը, որը կապված էր «միջազգային իրադարձությունների ժամանակակից փոփոխությունների հետ»: Ինչից էլ ելնելով՝ հայ հայրենասերները հանգել են այն կարծիքին, որ անհրաժեշտ է միավորել ողջ հայկական բարի կամքը, ամրացնել կապը գաղթօջախների միջև և ընթանալ միջազգային առկա հարաբերություններին համահունչ:

Երկու համաշխարհային պատերազմների հետևանքով միջազգային իրադրության ծայրահեղ խառնաշփոթությունը չի կարող երկար շարունակվել: Անկասկած, այս պատերազմում հաղթած տերություններն անելու էին ամեն կարելին, որպեսզի հիմքեր ստեղծվեն այսօրվա ամուր խաղաղության և նոր

<sup>3</sup> Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг., Ереван, 2010, стр. 104-105.

միջազգային կարգերի համար: Այդ կարգերը պարտավոր են տալ քաղաքական, տնտեսական, սոցիալական և տարածքային խնդիրների վճիռներ, որոնք երկար ժամանակ մնացել են անլուծելի<sup>4</sup>:

Հավատարիվ բազմախոստում հայտարարություններին, որոնք ապակողմնորոշում էին աշխարհի ժողովուրդներին և առաջին հերթին Երկրորդ աշխարհամարտի ավերածությունները տեսած ու հուսալի ապագայի ձգտող ժողովուրդներին, տեղեկագիրը կատարում է հարցադրում. «ինչ կարող է տալ հայկական վտարանդիությանը այդ նոր աշխարհը»<sup>5</sup>:

Խնդրի մինչպոստսոստամյան և հետպոստսոստամյան քննարկումները պատասխան էին տալիս այդ հարցադրմանը, հույս ներշնչում, որ կառուցվելիք նոր հարաբերությունները որևէ տեղաշարժ կգրանցեն: Սակայն, մեծ տերությունների ծավալապաշտական քաղաքականության պատճառով աշխարհը դանդաղ ներգրավվում էր առանձնացման գործընթացի մեջ, որին հետագայում տրվելու էր սառը պատերազմ անունը: Այդ պայմաններում կարելի՞ էր հուսալ, որ հայության գերված հայրենիքին կշնորհվի ազատություն, կամ կստեղծվեն հայրենագրկված հայ գաղթականության համար հայրենիք վերադառնալու պայմաններ:

Տեղեկագիրը հիշեցնում էր, որ Առաջին աշխարհամարտից հետո հայրենիքը բաժանվեց երկու մասի: Մի մասից բնիկ ժողովուրդը կոտորվեց, բռնագաղթվեց արտերկիր, մյուս հատվածը, 1918թ. ազատագրվելով դարավոր գերությունից, ստեղծեց իր ազգային միասնությունը և հետագայում մտնելով ԽՍՀՄ կազմի մեջ, դարձավ բոլոր հայերի հույսի հայրենիքը: Այսպես սկսվում է հայության երկու հատվածների միավորման ձգտումը, որը հայ ժողովրդի ապագայի տեսանկյունից տեղեկագիրը համարում է բազմախոստում:

Երկրորդ աշխարհամարտին հայության ակտիվ մասնակցությունը համարելով վճռական գործոն՝ տեղեկագիրը հույս է հայտնում, որ ի վերջո կստեղծվեն հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, իրավաբանական, տարածքային միասնության սպասվելիք հնարավորությունները:

Տեղեկագրի կարծիքով տարագրության մեջ գտնվող հայերը պետք է հուսան, որ կվերացվի անարդարությունը, որ «կգա այն օրը, երբ մեր ժողովրդի երկու հատվածները, որ քսանհինգ տարի առաջ հանցագործ կերպով բա-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 106:

<sup>5</sup> Նույն տեղում:

ժանվել էին» նորից կկարողանան միավորվել, ավելին՝ «հայկական խնդիրը կլուծվի արդար կերպով»<sup>6</sup>:

Փոփոխվող աշխարհում տեղի կունենան իրադարձություններ, երբ ուժի քաղաքականությունն իր տեղը կզիջի իրավական հարաբերություններին, այդ ժամանակ էլ «հայ ժողովուրդը կստիպի լսել իր ձայնը»: Պետք է պատրաստվել այդ պահին, միավորել հայկական բոլոր ուժերը. «...եկող սերունդը չի ների մեզ, եթե բաց թողնենք այդ պահը»<sup>7</sup>:

Անհրաժեշտ է, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը գիտենա, որ մեր ժողովուրդը կարող է օրինական հիմունքներով պահանջել մյուս բոլոր ժողովուրդներին հավասար իրավունքներ<sup>8</sup>:

Լավատեսական գաղափարներով և սպասելիքներով տոգորված առաջին տեղեկագրին հաջորդում է 1947թ. մայիսին գրված երկրորդ տեղեկագիրը:

Այն հիմնականում անդրադառնում է համաշխարհային երկու պատերազմներին հայ ժողովրդի մասնակցության, թուրքական քաղաքականության, միջազգային հարաբերությունների հարցերին և եզրահանգում, որ «Պետք է անել ամեն հնարավորը, որպեսզի չլսված անարդարությունը, որի զոհը դարձավ մեր ժողովուրդը, վերջնական և ընդմիշտ կանոնավորվի: Պետք է ունենանք ամուր հաստատակամություն, անենք մեզանից կախված ամեն ինչ, որպեսզի ապագա խաղաղությունը հնարավոր դարձնի հայ գաղթականության վերադարձը հայրենի երկիր...»<sup>9</sup>:

Երկրորդ տեղեկագիրը, վերլուծելով 1915թ. իրադարձությունները, ընդգծում է, որ երկիրը, գրկվելով հարազատ ժողովրդից «վերածվեց գրեթե անապատի», դա 20-րդ դարում իրականացված այնպիսի ոճրագործություն էր, որի նմանին չենք հանդիպում անգամ «պատմության բարբարոսական փուլում»:

Այնուհետև տեղեկագիրն անդրադառնում է ժողովրդագրական ցուցանիշներին: Վերջին մարդահամարի տվյալներով Թուրքիայի բնակչությունը կազմում է 16.188.000: Բնակչությունը, սակայն, տեղաբաշխված է անհամաչափ: Թուրքական 63 նահանգներից բնակչության խտությունը բարձր է Սև և Էգեյան ծովերին հարող շրջաններում, որտեղ մեկ քառակուսի կմ-ի վրա ապրում են 20-80 մարդ, իսկ հայկական նահանգներում՝ 1-10 մարդ, միջինը՝ 5

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 110:

մարդ: Այստեղից էլ խիտ բնակչություն ունեցող հայկական նահանգները կորցրել են բնակչության 60-70%-ը<sup>10</sup>:

Երրորդ տեղեկագիրը վերլուծում է նաև Թուրքիայի տնտեսության, գյուղատնտեսության, հանքարդյունահանման, արդյունաբերության, երկաթուղու, մինչ Առաջին աշխարհամարտ տնտեսության նշված ճյուղերի ցուցանիշները, հայ ժողովրդի ձեռներեցությունը և կատարելով լավատեսական ամփոփում, հույս հայտնում, որ եթե լուծվի Հայկական հարցը, ապա հայերը կապահովեն հայրենիքի վերածնունդը<sup>11</sup>:

Արձարձված միտքը հաստատելու համար տեղեկագիրը համեմատություն է անցկացնում Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի տնտեսական, ժողովրդագրական ցուցանիշների միջև, վերլուծում 1939-1945 թթ. Թուրքիայի վարած քաղաքականության հետևանքները, որոնք դուրս չեն մնա նոր աշխարհի ուշադրությունից, որ «երկու պատերազմների ընթացքում մեր թափած արյունը իզուր չի կորչի: Բոլոր միջոցներով մենք պահանջելու ենք փոխհատուցում»<sup>12</sup>:

Տեղեկագրերի լավատեսական կանխատեսումները համահունչ չէին միջազգային հարաբերությունների բովանդակությանը: Արձարձված մտքերը յուրաքանչյուր հայի երազանքների արտահայտության հանրագումարն էին, հեռու իրականանալու հնարավորությունից, որովհետև այնքան սպասված նոր աշխարհը կանգնած էր լրջագույն ընտրության առաջ: Բորբոքված պայքար էր ընթանում գերտերությունների ձևավորման համար: «Նոր աշխարհը» արդեն բաժանված էր երկու բևեռների, երկու հասարակական, տնտեսական, քաղաքական ճամբարների: Նրանց միջև մղվում էր թաքուն ու բացահայտ պայքար, որը խորանալով վերածվում էր անկրակոց պատերազմի:

Նման բովանդակություն որդեգրած միջազգային հարաբերություններն անուշադրության էին մատնելու ցանկացած թեկուզ արդարացի խնդիր, քանզի գերագույն նպատակը ուժերի հավասարակշռության, ռազմական ու քաղաքական գերազանցության ապահովումն էր:

Տեղեկագրերը, հոետորաբանությունը զուգակցելով ցանկությունների հետ, սփյուռքահայ սովար զանգվածներին էր մատուցում ապագայի վերադասավորությունները, կանխատեսում Հայկական հարցի այնպիսի լուծում, որը

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 116:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 122:

բխում էր ժողովուրդների իրավունքների պաշտպանության հիմնադրույթներից:

Տեղեկագրերի կարևորությունն այն է, որ միջազգային բարոգագույն հարաբերությունների պայմաններում բարձրացվում էր սփյուռքահայության համախմբման, միակամության գաղափարը, նախանշում գալիք դժվարությունները, դրանց դիմակայելու միջոցները:

Փարիզում տպագրվող «Ժողովուրդ» թերթի հաղորդումից տեղեկանում ենք, որ 1945թ. ապրիլի 5-ին Փարիզում գործող Հայ փախստականների կենտրոնական կոմիտեի նախագահ Ա. Չոպանյանը հանդիպել է Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանին և քննարկել հայկական հողային պահանջների ու հայրենադարձության հարցեր<sup>13</sup>:

Չայետը է մոռանալ, որ արտերկրի ԽՍՀՄ դեսպանատները պատերազմի ավարտի շրջանում չէին խուսափում հայ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներից, հատկապես երբ պարզաբանվելու էին հայրենադարձության հետ կապված հարցերը, որովհետև ԽՍՀՄ ղեկավարությունը ցանկանում էր ճշգրտել մի շատ կարևոր խնդիր՝ սփյուռքահայությունը, նրա կազմակերպությունները ինչ դիրքորոշում և մասնակցություն էին ունենալու հայրենադարձությանը: Դիվանագիտական նմանատիպ պարզագույն միջոցառումները բացարձակապես չէին անդրադառնալու Հայկական հարցի լուծման խնդիրներին, որովհետև, նախ, դեսպանները չունեին այդպիսի լիազորություններ և երկրորդ՝ հանդիպումներով ստեղծվում էր հայապաշտպան տպավորություն, և գաղթօջախի հայրենազուրկ հայությունը հույսի բոլոր թելերը կապում էր ԽՍՀՄ-ի հետ:

Կարևոր նշանակություն ուներ նաև այն հանգամանքը, որ սփյուռքահայ կոմիտեների, խորհուրդների ղեկավար կազմում ընդգրկվել էին գործիչներ, որոնք դեռևս հիշում էին Ազգերի լիգայի վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ: Սփյուռքահայ կազմակերպությունները տեղյակ էին նաև միջազգային նոր կազմակերպության ստեղծմանը և հանդիպելով, ուղերձներ, նամակներ հղելով դաշնակից երկրների ղեկավարներին, փորձում էին հետագա գործունեության համար պարզել նրանցից յուրաքանչյուրի կարծիքը:

Սփյուռքահայությունը քաղաքական, գաղափարական նմանատիպ դրսևորումներից զատ գործնական միջոցառումներ էր ձեռնարկում՝ կազմա-

<sup>13</sup> «Ժողովուրդ», Փարիզ, 1945, 6 ապրիլի:

կերպելով միտինգներ, ցույցեր, երթեր, համախոսականներ ու դիմումներ հղելով մեծ տերությունների ղեկավարներին, միջազգային կառույցներին:

1945թ. ազգային կառույցների ձևավորման շրջանում կազմավորվեց Լիբանանի և Սիրիայի միացյալ Ազգային խորհուրդը: Նրան աջակցում և աջխատանքներին մասնակցում էին հնչակյանները, կոմունիստները, ռամկավարները, Վերածննդի միությունը, այլ հայ հասարակական կազմակերպություններ: Խորհուրդը լայն ընդունելության էր արժանանում տարագիր հայության շրջանում: Խորհրդի աշխատանքներում որոշ տարածայնությունների պատճառով թեև ընդգրկված չէր ՀՅԴ կուսակցությանը, սակայն մասնակցում էր մինչև հուլիսի 29-ը կազմակերպված ինքնաբերական հանրահավաքներին:

Հուլիսի 29-ին Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանի ղեկավարությամբ, Ազգային կուսակցությունների մասնակցությամբ, Ազգային խորհուրդը կազմակերպեց մեծ հանրահավաք: Վերջում հանրահավաքի մասնակիցների անունից հայկական տարածքների վերադարձի պահանջով հեռագիր ուղարկվեց Ստալինին:

«Ժողովրդի ձայն» թերթի հաղորդմամբ 1945թ. սեպտեմբերի 23-ին Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում, Զախում կազմակերպվեցին միտինգներ: Միտինգավորները պահանջում էին Խորհրդային Հայաստանին վերամիավորել Թուրքիայի խլած հայկական տարածքները:

Բեյրութի Ազգային խորհրդի նախագահ Ադամ Մանվելյանն իր ելույթում խնդրի լուծման գործում բարձր գնահատեց տարագիր հայության համախմբվածությունը, միակամությունը: Միտինգում ելույթ ունեցան նաև ճանաչված ազգային գործիչներ Բենիամին Ժամկոչյանը, Բաղդասար Թերեզյանը: Այնուհետև խորհրդի նախագահ Ա. Մանվելյանն ընթերցեց Սիրիայի և Լիբանանի 200000 հայության անունից դաշնակից երկրների ղեկավարներ Ստալինին, Տրումենին և Էտլին ուղղված հեռագիրը, որտեղ մասնավորապես ասված էր. «Բեյրութի, Հալեպի, Դամասկոսի, Զախայի բազմաթիվ հայեր, սեպտեմբերի 23-ին Ազգային խորհրդի ղեկավարությամբ գումարելով միտինգ, խնդրում են ձեզ լուրջ քննարկման ենթարկել Սիրիայի և Լիբանանի հայերի վիճակը, որոնք բռնի հեռացվել են հայրենի հողերից, որպեսզի ստեղծվեն պայմաններ հայերի Հայաստան ներգաղթի համար, պահանջում ենք Խորհրդային Հայաստանին միացնել Թուրքիայի կողմից զավթված հայկական հողերը»<sup>14</sup>:

Այնուհետև հեռագիրն անդրադառնում էր Առաջին աշխարհամարտում

<sup>14</sup> ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 217:

դաշնակիցների բանակների կազմում հայերի մասնակցությանը: Մենք, – ասվում էր հեռագրում, – բոլոր ազգությունների հերոսների արդարության ու ժողովուրդների իրավունքների պաշտպանության համար զոհվածների անունից ենք ներկայացնում մեր պահանջները. «Մենք համոզված ենք նրանում, որ Դուք, ովքեր կոչված են ժողովուրդների միջև անարդարության վերացմանը», կմիջնորդեք կարգավորելու «թուրք-հայկական վեճը, որը չնայած միության անդամների բազմաթիվ խոստումներին, առ այսօր լուծված չէ»<sup>15</sup>:

Պահպանվել է նաև Հովհաննես Աղբաշյանի զեկուցումը: Խոսելով հաղթական ավարտված պատերազմի մասին՝ զեկուցման հեղինակը հիշեցնում է, որ բոլոր մեծ ու փոքր ժողովուրդները, ժողովրդավարության, ազատության, արդարության սկզբունքներից ելնելով, հենվելով հաղթող երկրների տված խոստումների վրա, փորձում են լուծել իրենց խնդիրները: Նրանց թվում է նաև հայ ժողովուրդը, որ դուրս գալով ասպարեզ, պահանջում է իր «ցավոտ ու չլուծված հարցերի» լուծումը:

– Հայկական հարցը, – շարունակում է զեկուցողը, – երկար պատմություն ունի, որը սկսվում է թուրքական խաների կողմից հայ ժողովրդի ճնշման ու պարբերաբար ոչնչացման պահից<sup>16</sup>:

Ապա ներկայացվում են հայ ժողովրդի մինչև 1914թ. պատերազմն ընկած ժամանակահատվածի արյունալի պատմությունը, հայկական ինքնապաշտպանական մարտերը, Սան Ստեֆանոյի, Բեռլինի կոնգրեսի որոշումները, Առաջին աշխարհամարտի տարիներին իրականացված հայոց ցեղասպանությունը, Գերմանիայի մեղսակցությունն այդ արյունոտ, մարդատյաց քաղաքականությանը՝ այդ առթիվ հղում անելով դեսպան Մորգենթաուի հուշերից<sup>17</sup>:

Աղբաշյանի զեկուցագրի շարունակությունը գույք է Խորհրդային Ռուսաստանին, քննարկում և մեծարում է Լենին-Ստալին մտքի հայասիրական դրսևորում Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքի մասին դեկրետը, Սևրի պայմանագիրը, Երկրորդ աշխարհամարտին հայ ժողովրդի մասնակցությունը, ավելացնում, որ Եվրոպան չպետք է հանդես գա մի երկրի պաշտպան, որը պատերազմի ամբողջ ընթացքում խաղում էր կեղծ չեզոքություն:

– Եվ եթե ամբողջ աշխարհում ցրված հայերը ցանկանում են ներգաղթել Հայաստան, ապա միայն նրա համար, որ իրենց եղբայրների հետ զբաղվեն

<sup>15</sup> Նույն տեղում, թ. 218:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում, թ. 220:

խաղաղ, ստեղծագործ աշխատանքով,- եզրափակում է զեկուցագիրը և հայերի երազանքի հույսը կապում է Ռուսաստանի և հայ ժողովրդի իրավունքների պաշտպան Ստալինի հետ:

Անհայտ է, սակայն, ստալինասիրական այս գովքի ճակատագիրը: Հավանաբար Ադրաշյանի պատմավերլուծական ակնարկն ուղարկվել է միայն Մոսկվա, որովհետև այն չէր կարող կցվել Տրումենին ու Էտլիին ուղարկված հեռագրերին:

Սկյուռքահայ կազմակերպությունները, կոմիտեները համախոսականներ էին ուղարկում 1945թ. սեպտեմբերի 15-ին Լոնդոնում գումարվելիք երեք տերությունների ԱԳ նախարարների ժողովին:

Առաջինն այդպիսի նախաձեռնությամբ հանդես եկավ նոր կազմավորված Ֆրանսիայի հայկական Ազգային միությունը: Միության հայտարարությունը պատմական անդրադարձ կատարելուց հետո ավելացնում է. «...թուրքական կառավարությունը սպանությունների և արտաքսման ճանապարհով կոտորեց Օտտոմանյան կայսրության հայ բնակչության մեծ մասը, թուրքերի կողմից գերված 300 000 հայ աղջիկներ և որբեր, որոնք բանտարկված են հարեմներում, բռնությամբ իսլամացվել են, երկու միլիոն և մի քանի հարյուր հազար հայեր, որ պատերազմից առաջ ապրում էին Թուրքիայում, Կոստանդնուպոլսի և Փոքր Ասիայի թուրքական քաղաքներում նրանցից այժմ մնացել է հազիվ 80 000-ը: Թուրքահայաստանի և Կիլիկիայի նահանգներում, ուր մեր ցեղը երբեմնի խաղում էր պատմական կարևոր դեր, այժմ հայ բնակչություն չունի»<sup>18</sup>: Միայն Կ. Պոլսի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի շրջաններից 500 000 հայերի պատերազմի ժամանակ բախտ վիճակվեց փրկվել կործանումից և տեղավորվել Կովկասում, Սիրիայում, Լիբանանում, Ֆրանսիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Եգիպտոսում, ԱՄՆ-ում, Հարավային Ամերիկայում:

Ֆրանսահայ ազգային միությունը, հիշեցնելով ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի որոշումը, Լոզանի խորհրդաժողովի վերջնական ակտը անվանում էր ծանր սխալ՝ հույս հայտնելով, որ այն կուղղվի, և կիրագործվի Սևրի պայմանագիրը:

Դիմելով ԱԳ նախարարներին՝ ֆրանսահայերը խնդրում էին, որ այս անգամ, քննարկելով Հայկական հարցը, կընդունվի վերջնական, ամբողջական և արդար որոշում, և «Անդրկովկասի հայկական հանրապետությանը կմիացվեն

<sup>18</sup> Армения..., стр. 123.



ոչ միայն Կարսի մարզը, այնպես էլ Թուրքիայի հայկական նահանգները»<sup>19</sup>:

– Ներկայումս ուրիշ երկրներում գտնվող հարյուր հազարավոր հայեր, կրելով գաղթական անունը, հիմնականում ցանկանում են իրենց աշխատանքը միացնել Հայաստանում բնակվող իրենց եղբայրների աշխատանքին, եթե չափից ավելի սահմանափակ տարածք ունեցող Հայկական խորհրդային հանրապետությունը ընդարձակվի Կարսի մարզի և Թուրքիայի հայկական նահանգների միացման ճանապարհով... Ներկայումս այդ մարզերի մեծ մասը ամբողջովին զուրկ է բնակչությունից... Միավորված ազգերի ղեկավարները հայտարարում էին, որ հիմնված Ազատության, Արդարության վրա կառուցելու են նոր աշխարհ, իրականացնելով այդ օգտակար իդեալի միայն մեկ արդար նվաճումը, ցուցաբերելով գործնական ծառայություն մարդկային առաջադիմությանը<sup>20</sup>:

Սփյուռքահայությունը թերևս տեղյակ էր, որ հուլիսի 17 – օգոստոսի 2-ին գումարված Պոտսդամի կոնֆերանսում Հայկական հարցի քննությունը հանձնվել էր ԱԳ նախարարներին: Մեծ հույսեր էին կապվում նաև առաջիկայում գումարվելիք միջազգային կազմակերպության հետ, որ վերջապես այն կլուծի աշխարհասփյուռ հայության խնդիրը: Այդ ուղղությամբ դրական տեղաշարժեր էր գրանցում ամերիկահայ Ազգային խորհուրդը: Նրա՝ Պոտսդամի կոնֆերանս ուղարկած դիմումը պահանջում էր օրակարգ բերել և արդար լուծում տալ Հայկական հարցին. հայերին պետք է տրվի հնարավորություն՝ կրկին բնակվելու իրենց պատմական հայրենիքում՝ հայկական նահանգներում, որոնք ներկայումս գտնվում են Թուրքիայի կազմում, և որոնք այժմ պետք է վերադարձվեն իրենց միակ օրինական տիրոջը՝ Խորհրդային Հայաստանին<sup>21</sup>:

Այնուհետև խորհրդի հեռագիրը ներկայացնում է դրվագներ հայոց պատմությունից, նկարագրում 1894-1896 թթ., 1915 թ. կոտորածների կործանարար հետևանքները, Թուրքիայի շարունակվող թշնամական քաղաքականությունը, հավելում, որ եկել է ժամանակը. «...երբ թուրքերը պետք է վճարեն հայերին՝ դարավոր անարդարության համար, թեև նրանք երբեք չեն կարող քավել իրենց մեղքը»<sup>22</sup>:

Ամերիկայի հայ Ազգային խորհուրդը դիրեկտոր Ազնախանյանի ղեկավարությամբ աչալուրջ էր հետպատերազմյան միջազգային իրադարձություն-

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 110:

ների, հատկապես մեծ եռյակի բանակցությունների, ՄԱԿ-ի կազմավորման գործընթացների նկատմամբ և, արձագանքելով դրանց, նորից հիշեցնում էր անլուծելի թողնված Հայկական հարցի մասին:

1945թ. հունիսի 8-ին Խորհուրդը Սան Ֆրանցիսկոյում գումարվելիք խորհրդաժողովին ուղղված հայտարարություն (ղեկլարացիա) հրապարակեց: Հայտարարությունը հունիսի 13-ին տպագրվեց նաև «Սովետական Հայաստան» թերթում՝ մեծ ոգևորություն առաջ բերելով Խորհրդային Հայաստանում:

Հայտարարությունը, դիմելով ՄԱԿ-ի խորհրդաժողովի պատգամավորներին և մամուլի ներկայացուցիչներին, հիշեցնում էր, որ պահը նպաստավոր է, որպեսզի Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական հողերը վերամիավորվեն Խորհրդային Հայաստանին, որը հնարավորություն կտա թուրքական ջարդերից հայրենազրկված մեկ ու կես միլիոն հայերին վերադառնալու հայրենիք:

Իսկ այդպիսի վճիռ կայացնելու հայ ժողովուրդը համաշխարհային երկու պատերազմների ընթացքում ցուցաբերել է նվիրվածությունը դաշնակիցներին, որոնք «ի նշան շնորհակալություն այն ավանդի, որ հայ ժողովուրդը մտցրել է ազատության ու դեմոկրատիայի մեծ գործի մեջ, նրանց (հայերին – Հ.Զ.) խոստացան ազատություն և անկախ պետության ստեղծում: Համապատասխան այդ խոստման՝ Ազգերի լիգան պրեզիդենտ Վիլսոնին հանձնարարեց ազատ, անկախ Հայաստանի սահմանները: Դա ընդունվեց բոլոր պետությունների, ներառյալ նաև Թուրքիայի կողմից և հաստատվեց Սևրի պայմանագրով: Այնուամենայնիվ այդ պայմանագիրը երբեք չիրականացվեց: Մեկը մյուսի հետևից տրված հանդիսավոր խոստումները մոռացվում էին, կամ զոհ էին բերվում հզոր տերությունների էգոիստական շահերին...»<sup>23</sup>:

Հայտարարության ներկայացված հատվածի շարունակությունը գովք է ռուս մեծ ժողովրդին, ԽՍՀՄ մյուս ժողովուրդներին, որոնց օգնությամբ հայ ժողովրդի մի հատվածը փրկվեց «անխուսափելի լիակատար ոչնչացումից»<sup>24</sup>:

Սփյուռքահայ հասարակական կազմակերպությունների, կոմիտեների, խորհուրդների ԽՍՀՄ հայասիրական գործունեության փառաբանությունը գործելակերպ էր դարձել: Նման եզրակացությունների ենթատեքստը թեև պարզ էր, սակայն այդպես էլ չտարածվեց այն ակնհայտ ճշմարտությունը, որ յուրաքանչյուր նմանատիպ ձևակերպում հակադարձ ազդեցություն էր թողնում,

<sup>23</sup> «Սովետական Հայաստան», 1945, 13 հունիսի, թիվ 118:

<sup>24</sup> Նույն տեղում:

ամրացնում այն գաղափարը, որ լուծել Հայկական հարցը նշանակում էր դյուրացնել ԽՍՀՄ արտաքին քաղաքականության նպատակների իրականացումը:

Հայկական տարածքների պահանջի արտերկրային քննարկումները, հակառակը, հակված էին այն տեսակետին, որ հայ ժողովրդի հողային կորուստներն արդյունք են բոլշևիկյան քաղաքականության, որ տարածքները ոչ թե բռնազավթել են Թուրքիայի կողմից, այլ խորհրդային, բոլշևիկյան ղեկավարությունը հանուն Թուրքիայի նվիրաբերել է հայության հայրենիքը:

Հայտարարությունը այդուհետ պատգամավորներին է ներկայացնում Երկրորդ աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի դիրքորոշումը. «...հայերը կրկին ապացուցեցին իրենց նվիրվածությունը դեմոկրատիային և Միավորված ազգերի գործին: Նրանք նորից պայքարեցին և աչքի ընկան ամերիկյան բանակի շարքերում և մյուս միավորված ազգերի բանակներում»<sup>25</sup>:

Հայտարարության գնահատելի հատվածներից էր պատերազմի տարիներին Հայաստան-Թուրքիա համեմատության անցկացումը: Եթե Թուրքիան ապաստան էր որոնում «կեղծ չեզոքության քողի տակ, միևնույն ժամանակ ցույց տալով նացիստներին ամեն տեսակ օգնություն», ավելին, Թուրքիան «ավելի հեռու գնաց և անամոթաբար հայտարարեց, որ նա ուզում է տեսնել Գերմանիայի հաղթանակը», միաժամանակ «շտապում էր ճնշել և ոչնչացնել մի քանի հազար հայերին, որոնք դեռևս մնում էին Թուրքիայի սահմաններում», ապա թե՛ սփյուռքահայության, թե՛ հայրենիքի հայության ավելի քան 700000 զավակները բոլոր ռազմաճակատներում մարտնչում էին գերմանական բանակների դեմ: Սակայն արդյունքում «...նույնիսկ Արարատ լեռը, մեր ժողովրդի փառքն ու պարծանքը և ամբողջ հազարամյակների ընթացքում նրա հույսերի ու ըղձերի ամենաարտահայտիչ սիմվոլը, մնում է թուրքական տիրապետության տակ»<sup>26</sup>:

Կրկին բարձրաձայնելով հայրենիք վերադառնալու սփյուռքահայության օրինական ցանկությունը, հայտարարությունը ցավով նշում է, որ «Թուրքական տիրապետության տակ այս կամ այն ժամանակ գտնված քրիստոնյա բոլոր ժողովուրդներից միայն հայերն են, որ իրենց հարազատ հողերը դեռևս չեն ազատագրել Թուրքիայից»<sup>27</sup>:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Նույն տեղում:

Ամերիկայի հայ ազգային խորհուրդը, ցուցաբերելով գումարվելիք խորհրդաժողովի քննվելիք հարցերի առթիվ տեղեկացվածություն, գիտենալով հանդերձ, որ խորհրդաժողովը, բացի ՄԱԿ-ին առնչվող կազմակերպական հարցերից, չի քննարկելու հայության տարածքային ու հայրենադարձության խնդիրները, «Այնուամենայնիվ ոգուն լինելով համապատասխան, մենք բարձրացնում ենք այդ հարցը, որը ամոթալի բիծ է միջազգային հարաբերություններում արդեն մոտավորապես երեք քառորդ դարի ընթացքում...»:

– Մենք խոսում ենք, – շարունակում է հայտարարությունը, – բռնապետության և տեռորի մեկ ու կես միլիոն զոհերի անունից, բռնապետություն և տեռոր, որոնք ոչ իրենց թափով, ոչ էլ բնույթով չեն տարբերվում այն դաժանությունից, որ նացիստները այս պատերազմի մեջ գործադրեցին Եվրոպայի անմեղ, անպաշտպան ժողովուրդների նկատմամբ: Մենք խոսում ենք՝ արտահայտելով արդարացի ու ստեղծագործ ըղձերը ժողովրդի, որը լիակատար իրավունք ունի հույս հայտնելու, որ այս անգամ նա խաղալիք չի դարձվի ուժի քաղաքականության միջազգային շախմատային տախտակի վրա: Մենք չենք ուզում ոչ այլ ինչ, եթե ոչ մեր հայկական հողի միացումը ազատ, անկախ Հայաստանի գոյություն ունեցող պետությանը և արտասահմանում ապրող ու Հայաստան մեկնելու ցանկություն ունեցող բոլոր հայերի վերադարձը այնտեղ:

Դա մեր բանական ու անվիճելի իրավունքն է: Այնքան ժամանակ, քանի հայ ժողովրդի ըղձերը կմնան անկատար, Հայաստանի և Թուրքիայի միջև հաշիվը չի փակվի: Այնքան ժամանակ, քանի հայերի նկատմամբ հանդես չի բերվի նոր արդարություն դարավոր անարդարությունից հետո, չի կարող հաստատուն խաղաղություն լինել մեր և Թուրքիայի միջև<sup>28</sup>:

Հայ ժողովուրդը ցանկանում է, հայտարարում է Ազգային խորհուրդը, հաշտ ու խաղաղ ապրել հարևանների, այդ թվում՝ Թուրքիայի հետ, որին հասնելու միակ ճանապարհը «պատվավոր խաղաղության» հաստատումն է, մի խնդիր, որը ժամանակին բարձրացրել ու պաշտպանել են Զ. Բրայսը, Վ. Գլադստոնը, Կլիմանտն, Վ. Վիլսոնը, Լենինը, Ա. Ֆրանսը, Ֆ. Նանսենը, Ժ. Ժորեսը, Ստալինը:

Հայկական հարցի պատմությունից քաջաճանոթ անուններ, որոնց մի մասը, բարոյական ու մարդասիրական սկզբունքներից ելնելով, հայ ժողովրդի համար դժվարագույն ժամանակներում իրենց ձայնը բարձրացրին և համաշխարհային խղճին կոչ էին անում բռնել մարդակեր թուրքի ձեռքը, սատար

<sup>28</sup> Նույն տեղում:

կանգնել Արևելքի քաղաքակրթությունը կրող հայ ժողովրդին: Բայց նշված անունների շարքում կան մարդիկ, ովքեր, իրականացնելով շահամոլ քաղաքականություն, Հայկական հարցը մղելով անիրագործելի տարածք, երեսպաշտ ու ճշմարտությունից խուսափող ձևակերպումներով սփոփում էին հայ ժողովրդին, հաջորդ պահին արդեն Թուրքիայի մեջքին ամրացնող կիսագաղութի խորհրդանիշ փալանը:

«Հայաստանին ծառայելը նշանակում է ծառայել քաղաքակրթությանը» խոսքերի հեղինակը Գլադստոնն էր<sup>29</sup>: Ամերիկայի հայ ազգային խորհուրդը առանց մեկնաբանության, որպես ազդեցիկ վերջաբան օգտագործելով ավանդական հակահայկական քաղաքականություն վարող Անգլիայի վարչապետի միտքը, պետք է կանխատեսեր սպասվելիք այն հուսախաբությունը, որը դանդաղ, բայց վերջնական տեսք էր ստանում հետպատերազմյան աշխարհաբաժան քաղաքականության գործընթացում:

Հայտարարությունը, այնուամենայնիվ, իրականության ճշմարիտ արտահայտությունը լինելով հանդերձ, միաժամանակ, ինչպես հատուկ էր ժամանակի հայկական զգացմունքային ու հույսաշատ փաստաթղթերին, այժմ արդեն լիարժեք հնարավորություն էր տալիս փոքր ժողովուրդների ճակատագիրը լուծողներին օգտագործելու ավանդական այն ձևաչափերը, որոնց ծանրության տակ կքած ժողովուրդները պետք է մոռացության մատնեին իրենց խնդիրների արդար լուծման երազանքներն անգամ:

Ազգային խորհրդի հայտարարությունը միջազգային հետաքրքրության արժանացավ: Տարբեր համոզմունքների տեր գործիչները, գնահատելով հայտարարությունը, իրենց հավելումներն էին անում:

Էջմիածնի եկեղեցական ժողովի մասնակից, Քենտրբերիի տաճարի վանահայր Հյուլետտ Ջոնսոնը, ամերիկահայ «Լրաբեր» թերթի թղթակից Պատրիկ Սելյանի հարցին պատասխանելով, ասում է. «Ես լիովին և ի սրտե համաձայն եմ, որ Թուրքիայի կողմից խլված մարզերը պետք է վերադարձվեն Հայաստանին: Ամերիկահայերի Ազգային խորհրդի դեկլարացիան, իմ կարծիքով, միանգամայն արդարացի է ու հիմնավոր: Թուրքիան դիտավորյալ կերպով ձգձգում է իր խլած մարզերի տնտեսական զարգացումը: Դրանց բնակչությունը մինչև այժմ էլ անհամեմատորեն քիչ է՝ այն ժամանակ, երբ դրանց օրինական բնակիչները ցրված են ամբողջ աշխարհով: Թուրքիան աներևակայելի անգթությամբ բնաջնջում էր հայ բնակչությանը: Հաղթող տե-

<sup>29</sup> Նույն տեղում:

րությունները Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայտարարեցին, որ արդարությունը պահանջում է այդ մարզերը վերադարձնել նրա օրինական տերերին:

Այն, ինչ որ գրված է այն ժամանակ, պետք է այժմ կենսագործվի:

Ես ողջունում եմ դեկլարացիայի հրապարակման փաստը և այն համարում եմ խիստ արդիական»<sup>30</sup>:

Ամերիկայի հայ Ազգային խորհուրդն իր գործունեությամբ վերածվել էր ազգային խնդիրները համակարգողի, իր շուրջը համախմբելով տարբեր երկրներում գործող հայկական կազմակերպություններին: Խորհրդի հեղինակության նշանակալի գնահատականն այն էր, որ այն ճանաչվեց որպես «ամերիկյան ազգային կազմակերպություն» և դիտորդի կարգավիճակով իրավունք ստացավ մասնակցելու Սան Ֆրանցիսկոյի վեհաժողովի աշխատանքներին:

Խորհուրդն այդ հնարավորությունն օգտագործեց պատգամավորների հետ կապերի հաստատման, Հայկական հարցը հանգամանալից ներկայացնելու ուղղությամբ:

1945թ. հունիսի 8-ի ՏԱՍՍ-ի հաղորդումից տեղեկանում ենք, որ խորհուրդը, ի պատիվ Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովի մասնակից ԽՍՀՄ պատգամավորների, կազմակերպել է ճաշկերույթ: Ճաշկերույթին մասնակցում էին նաև Ուկրաինայի, Բելոռուսիայի պատգամավորները, Կանադայում ԽՍՀՄ դեսպան Զարուբինը, շուրջ 300 այլ հրավիրյալներ, Ազգային խորհրդի ղեկավարությունը:

Ճաշկերույթը բացել և ներկաներին ողջունել է Ազգային խորհրդի տեղական բաժանմունքի նախագահ Թաթարյանը: Ելույթ են ունեցել Ֆրեզնոյի «Նոր օր» թերթի խմբագիր Անդրեասյանը, Ազգային խորհրդի դիրեկտոր Ազնախանյանը<sup>31</sup>:

Միջոցառումը փաստորեն անձնական կապերի հաստատման նպատակ չուներ: Այն գործնական բնույթ ուներ և փորձ էր արվում հիմքեր նախապատրաստելու հետագա գործունեության համար: Հատկապես Ազգային խորհրդի ներկայացուցիչները ձգտում էին ընդունելի դարձնել համագործակցության, ԽՍՀՄ-ի և նրա պատգամավորների հետ բարեկամության գաղա-

<sup>30</sup> Նույն տեղում, 1945, 26 հունիսի:

<sup>31</sup> Նույն տեղում, 1945, 15 հունիսի, թիվ 119:

փարը, որի համար հայ ժողովուրդը Երկրորդ համաշխարհային պատերազմին իր ակտիվ մասնակցությամբ կայուն հիմքեր էր ստեղծել:

ԽՍՀՄ, Ուկրաինայի, Բելոռուսիայի պատգամավորները հատկապես անդրադառնում էին խորհրդային իշխանության տարիներին հայ ժողովրդի տնտեսական, մշակութային նվաճումներին, ԽՍՀՄ ժողովուրդների հետ հայ ժողովրդի հետզհետե խորացող ու ամրապնդվող բարեկամությանը<sup>32</sup>:

Ճաշկերույթն ավարտվել է «մեծ գորավար Ստալինի» մեծարման կենացով:

Սփյուռքահայ կազմակերպությունների գործունեությունը, դժբախտաբար, հազեցած չէր ժամանակահունչ մարտավարությամբ ու ռազմավարությամբ: Նորից շարունակվում էր արդեն քանի դար անբաժանելի դարձած դիմումների, համախոսականների, հայտարարությունների գործելակերպը: Ստեղծվում էր այն տպավորությունը, որ բացակայում էին ծրագրային գործունեությունը, ընդհանուր ղեկավարությունը: Աշխարհի տարբեր երկրներում ձևավորված ազգային կառույցները, հաջորդաբար հիշեցնելով հայ ժողովրդի կրած տառապանքները, ցեղասպանությունը, միօրինակ պահանջներ էին ներկայացնում, այն դեպքում, երբ Պոտսդամի խորհրդաժողովից հետո արդեն պարզ էր, որ մերժված Հայկական հարցը նորից չի հայտնվի միջազգային որևէ կառույցի օրակարգում: Անհրաժեշտություն էր դառնում հայրենի իշխանության հետ համագործակցության հաստատումը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Շուրջ երկու հարյուր տարի իր վրա կրելով եվրոպական դիվանագիտության դաժան հարվածները՝ հայրենագրկված հայությունը հավատ ուներ ժողովրդավարություն, արդարություն, իրավունք հասկացությունների նկատմամբ: Այդ հավատն ավելի խորացավ ՄԱԿ-ի բարձրագույն սկզբունքների հանրահռչակումից հետո, և սփյուռքահայությունը, արդեն ավարտվող հաղթական պատերազմը գնահատելով որպես բարենպաստ իրավիճակ, սկսեց նախապատրաստական աշխատանքները Հայկական հարցը միջազգային ատյանների քննությանը ներկայացնելու համար: Ահա այս հարցերն է ներկայացնում «Սփյուռքահայության պայքարը Հայկական հարցի լուծման ուղղությամբ» բաժինը: Գնալով ինքնակազմակերպման ճանապարհով՝ գաղթօջախներում սկսվեց ազգային կազմակերպությունների ձևավորման գործընթացը: Ասպա-

<sup>32</sup> Նույն տեղում:

րեզ եկած Ազգային խորհուրդները մշակում էին գործունեության ծրագրեր, համախմբում էին տարագիր հայությանը, ձևավորում նախաձեռնող խմբեր:

Առաջին խոշոր միավորումը ստեղծվեց 1944թ. մարտի 19-ին: Ամերիկյան Ազգային խորհուրդն ընդգրկում էր Հայ դեմոկրատական լիբերալ կուսակցությունը, Հայկական առաջադիմական լիգան, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը:

**Բանալի բաներ** – Սիյունք, միջազգային հարաբերություններ, Թուրքիա, ԱՄՆ, Անգլիա, ԽՍՀՄ:

## БОРЬБА АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ ЗА РЕШЕНИЕ АРМЯНСКОГО ВОПРОСА

ОВАНЕС ЗАТИКЯН

До 1940 г. Турции удалось осуществить свою позицию “нейтральности”. Однако, когда немецкая опасность стала угрозой для ее существования, определила свою политику, которая резко изменилась после Тегеранской конференции (28 ноября – 1 декабря 1943 г.), когда Англия взяла на себя обязанность “воспитания” Турции. После Сталинградской победы и открытия второго фронта, особенно после 1944 г., когда стало понятно, что Германия идет к неминуемому поражению, 2 августа 1944 г. Турция порвала дипломатические отношения с Германией, а позже, 23 февраля 1945 г., объявила войну Германии и Японии.

Вот таким было международное положение, когда СССР хотел “решить” поставленный еще в 1921 г. самый запутанный Армянский вопрос, поднимая проблему армянских территорий.

Естественно, все это не могло не повлиять на советско-турецкие отношения. Если советская сторона считала требования восстановлением исторической справедливости и способом осуждения проводимой Турцией политики во время войны, то Турция еще раз убедилась, что единственное условие избежать территориальных потерь – урегулирование отношений с Западом, превращая страну в антисоветскую базу. Тем более, чувствуя, что не может противостоять СССР, Турция не пожалела усилий подойти к проблеме в том формате, когда свое решающее слово скажут США и Англия.

Последние не могли себе позволить, чтобы влияние Турции распространилось на Малую Азию, потому что в этом случае утвердилась бы ее позиция в регионе, и арабские страны и Иран попали бы под ее воздействие.



Турция, почувствовав серьезность момента, проявляла терпение, не выражала неспособность в борьбе с СССР, а только имела цель вовлечь в противоборство и Англию, и США, смело осознав, что они никогда не позволят расширению СССР к Средиземному морю. Вот почему в течение всей войны не было проявлено взаимопонимания, доверия, каждая из сторон, имея далеко идущие цели, не пожалела усилий в вопросе выигрыша времени, для обоснования полюсов противоречий, что сделало бы максимально ясными программы противостоящей стороны.

**Ключевые слова** – диаспора, международные отношения, Турция, США, Англия, СССР.

## ARMENIAN DIASPORA'S STRIVE TO SOLVE THE ARMENIAN ISSUE

HOVHANNES ZATIKYAN

This article makes us aware of the strive of the Armenians of diaspora to find a solution to their issue. The Armenians, deprived of their own country, having suffered for about 200 years from European diplomatic blows still believed in such concepts as democracy, justice and rights. Their beliefs got enforced around the year of 1944 by different UN declarations concerning righteous principles. With this faith and considering the victorious end of the II world war as a convenient moment, the Armenians of diaspora commenced preliminary arrangements to present the Armenian issue to the International Law Commission. They began to form Armenian communal organizations in diaspora. The organization councils were initiating and developing various programs, gathering the displaced Armenians, organizing set-up groups and so on.

The Armenian National Committee of America, the first big communal organization was created on the 19th of March of 1944. It incorporated The Armenian Democratic Liberal Party, The Armenian Progressive League and the Social-Democrat Henchagian Party.

**Key words** – diaspora, international relations, Turkey, US, England, SSSR.

**ՀԱՅ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ 15-ՐԴ ԴԱՐԻ  
ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ, 16-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ**

**ԴԱՎԻԹ ԹԻՆՈՅԱՆ**

15-16-րդ դդ. իրավամբ համարվում են հայոց պատմության ամենամռայլ ժամանակաշրջաններից մեկը: Բուն Մեծ Հայքի տարածքում ազգային պետականության երկարատև բացակայությունը բնականաբար առաջնահերթ ազդելու էր պետական իշխանության առաջնային սոցիալական հենարանը համարվող ազնվական խավի կենսագործունեության ապահովման վրա: Ազնվական խավի աստիճանական վարընթացը սկսվեց արդեն 11-րդ դարի 50-թթ. սկսած: Բագրատունյաց թագավորության կործանումից գրեթե անմիջապես հետո քյուզանդական կառավարիչները, հավատարիմ մնալով իրենց արդեն ավանդական քաղաքականությանը, սկսեցին հայ ազնվականության գրեթե բոլոր շերտերի հայրենագրված գործընթացը: Դրա վկայությունն էր Բագրատունիների ավելի քան հիսուն հազար թվակազմ ունեցող բանակի կազմալուծումը: Հայ զորականների մի մասը, շարունակելով իր արիեստավար գործունեությունը, տեղափոխվեց կայսրության արևմտյան նահանգներ: Բանակի մնացած մասը ուղղակիորեն կազմալուծվեց: Փոխարենը կայսրության արևելյան սահմանների, այսինքն՝ բուն հայկական տարածքների պաշտպանությունը վստահվեց փոքրաքանակ վարձկանների ջոկատներին: Վերջիններս իրենց հերթին շատ հաճախ Հայաստանում զբաղվում էին կողոպտչական գործունեությամբ: Հարոյունս սկսվեց նաև ազնվական շերտի ունեզրկման, ապա նաև ապաշերտավորման գործընթացը: Որոշակիորեն այն դանդաղեց մի շատ կարճ ժամանակամիջոց 12-րդ դարի վերջին քառորդին սկսած հայ ավատատիրության վերականգնման արդյունքում: Սակայն այն պատմության տեսանկյունից խիստ կարճատև մի ժամանակամիջոց էր և ընդգրկեց հազիվ մեկ հիսնամյակ: Հատկանշական է, որ 11-13-րդ դդ. հայ ազնվականության հաստատման համար խիստ նպաստավոր պայմաններ էին ձևավորվել Կիլիկիայի հայկական պետությունում: Հարկ է նշել, որ եթե 11-րդ դարում Կիլիկիա ներգաղթածների մեջ մեծ թիվ էին կազմում նաև Հայաստանի արևելյան շրջաններից գաղթած ազնվականները՝ իրենց հպատակներով հանդերձ, ապա հաջորդող երկու դարերի ընթացքում Կիլիկիա հասարակական այս շերտի գաղթը

ապահովվում էր հիմնականում ի հաշիվ Մեծ Հայքի արևմտյան և կենտրոնական շրջանների: Դրանով հանդերձ՝ ժամանակի ընթացքում հայության այս երկու հատվածների, այն է՝ Կիլիկիայում հաստատվածների և բուն Մեծ Հայքում մնացածների միջև ի հայտ եկավ որոշակի անջրպետ, որն ուներ առավելապես քաղաքակրթական երանգավորում: Կիլիկիան, ունենալով գերիշխող հայկական քաղաքակրթական հենք, այնուամենայնիվ հանդիսանալով թե՛ քաղաքական և թե՛ աշխարհագրական առումներով բազմադեմ ու բազմամշակույթ միջավայր, որոշակիորեն հակադրվեց Մեծ Հայքի առավել պահպանողական ընկերային միջավայրին: Դա առավել տեսանելի դարձավ դավանաբանական զիջումների խնդրով պայմանավորված հոգևոր ժողովների և դրանց հաջորդած իրադարձությունների արդյունքում: Ինչևէ, մոնղոլական նվաճումներից և քրջվորների տիրապետության ամրապնդումից հետո հայ աշխարհիկ վերնախավի քայքայման գործընթացն առավել մեծ չափեր ընդունեց: Հայ ավատատերերի իրավունքների սահմանափակումների վրա մեծ դեր խաղացին նաև ժողովրդագրական փոփոխությունները, որոնց ենթարկվում էր երկիրը: Այսպես աստիճանաբար քրջվոր նվաճողներն անցնում էին նստակյաց կյանքի՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Մասնավորապես հայ ավատատերերի ընկերային կարգավիճակի համար աղետալի նշանակություն ունեցավ այսպես կոչված բեյթ ու մալ մուալիմին: Հարդյունս հայ ազնվականների կալվածքները բռնագրավվում էին հոգուտ մահմեդական համայնքի<sup>1</sup>: Ճիշտ է, նման կարգ առկա էր դեռևս արաբական տիրապետության շրջանում, այդուհանդերձ դա առավել զանգվածային բնույթ ընդունեց մոնղոլական, ապա և թուրքմենական նվաճողների կառավարման շրջանում<sup>2</sup>: Վիճակն այդ առումով ավելի սպառնալի դարձավ մոնղոլներին հաջորդած նվաճողների՝ Չոբանյանների, Ջելաիրյանների, թեմուրյանների և հարկավ երկու թուրքմենական՝ ակ-կոյունլու ու կարա-կոյունլու ցեղախմբերի տիրապետությունների շրջանում: Արտագաղթին զուգահեռ այդուհանդերձ հայ ավատատերերի մի սովոր մասը շարունակում էր գոյատևել իր նախկին կալվածքներում: Նոր իրադրությունը, թեկուզև ապադասակարգայնացման գնով, ստիպում էր հարմարվել նոր

---

<sup>1</sup> Փափազյան Հ., «Բեյթ-ու մալի»-ի ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները 15-րդ դարում, ՊԲՀ, 1958, 2, էջ 194: H.Papaazyan, «Bejt-ul mali»-I instituty ev haj feodalneri horeri brnagravumneri 15-rd daum, PBH, 1958, 2eg194.

<sup>2</sup> Բեյթ ու մալի կարգի պատճառած ավերածությունները հատկապես 15-րդ դարում պայմանավորված էին նաև այն հանգամանքով, որ հայ ավատատիրական շերտը, ի տարբերություն նախորդ շրջափուլերի, նկատելիորեն նվազել էր:

պայմաններին: Մասնավորապես աշխարհիկ իշխանության կրողների համար իրենց ազդեցությունը այլ կերպ պահպանելու տարատեսակ էր հոգևոր իշխանության հետ տարրալուծվելու, այդ երկու իշխանական հաստատությունները միավորելու և այդկերպ իրենց ազդեցությունը պահպանելու միջոցը: Այսպես ի հայտ եկավ պարոնտերության ինստիտուտը, որը, ճիշտ է, իր տեսակով նորոյթ չէր, այդուհանդերձ լայն կիրառում գտավ 12-15 –րդ դդ.<sup>3</sup>: Գավառի, իսկ երբեմն նաև ամբողջական նահանգն ընդգրկող թեմի առաջնորդությունը, ինչպես օրինակ Սյունիքի պարագայում Օրբելյանները, կենտրոնանում էր նախկինում այդ վարչական տարածքի աշխարհիկ իշխանության ներկայացուցչի ձեռքում: Պարոնտերության ինստիտուտը տարածում գտավ նաև Արցախում, որտեղ պարոնտեր էին Աղվանից կամ Գանձասարի մի շարք կաթողիկոսներ: Երբեմն դա կարող էր ընդգրկել առավել փոքր վարչատարածքային միավոր: Զորօրինակ Դսեղ գյուղի հոգևոր իշխանությունը կենտրոնացած էր տեղի Մամիկոնյանների, ապա դրանց մի ճյուղի՝ Թումանյանների ձեռքում: Նման երևույթ նկատելի էր նաև Հավուց թառում, Սանահինում, Հաղպատում և այլուր: Ընդ որում տարատեսակ նվիրատվությունների ու գնումների հաշվին նման հողատիրության տեսակարար կշիռը հետզհետե աճում էր: Երբեմն մեկ ընտանիքի ձեռքում կենտրոնանում էր մի ամբողջ կաթողիկոսության ժառանգական տիրապետման իրավունքը: Ասվածի վառ վկայությունն էր Վասպուրականի Խեղենեկյանների գործունեությունը: Վերջիններս իրենց համարում էին Արծրունիների ժառանգները և ելնելով դրանից՝ հանդես էին գալիս այս երկրամասի, իսկ երբեմն էլ նաև համահայկական տիրապետման հավակնություններով: Ընդ որում ասվածը վերաբերում էր ոչ միայն հոգևոր ոլորտին, որտեղ Սեֆեդինյաններն իրենց ձեռքում էին կենտրոնացրել երկրամասի հոգևոր աթոռը՝ Աղթամարի կաթողիկոսությունը, այլ նաև աշխարհիկ իշխանությունը: Մասնավորապես, Աղթամարի Զաքարիա Սեֆեդինյան կաթողիկոսը կարողացավ մի կարճ ժամանակամիջոց իր ձեռքում կենտրոնացնել նաև Ամենայն հայոց կաթողիկոսությունը: Այդ հարցում նրան մեծապես օժանդակեց Զհանշահը: Միավորելով հայոց եկեղեցու երկու հատվածները՝ Զաքարիան

<sup>3</sup> Պարոնտեր էին կոչվում այն ֆեոդալ-կալվաճատերերը, որոնք շարունակում էին իրենց ձեռքում պահել ժառանգական կալվածքները՝ լինելով միաժամանակ «պարոն» (այսինքն աշխարհիկ ֆեոդալ) և «տեր» (այսինքն՝ հոգևոր առաջնորդ): Տե՛ս **Զուլպյան Մ.**, Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, էջ 81: M.Zulalyan, Galalineri shsrugumy ev hay gorovrdi vicaky Osmanjan kajsrutyan meg, Er. 1966, ej 81:

ձեռնամուխ եղավ նաև հայ աշխարհիկ իշխանության վերականգնմանը: Հարկ է նշել, որ ելնելով իր տոհմի բարձրաստիճան ծագումից, բնականաբար, Զաքարիան հայոց թագավորի պաշտոնում տեսնում էր բացառապես Սեֆեդինյանների ներկայացուցչին: Հարկ է նշել նաև, որ այդ ներկայացուցիչը պետք է նաև չզբաղվեր հոգևոր գործունեությամբ, որպիսին այդ պահին մեկն էր՝ Զաքարիայի եղբորորդի պարոն Սմբատը: Այնքան կենսունակ էր այդ գաղափարը, որ նույնիսկ կաթողիկոսի մահից հետո, երբ Աղթամարի նոր հովվապետ դարձավ նախորդի եղբորորդի Ստեփանոսը, որոշում կայացվեց իրականացնել այն: Հարդյունս 1465 թ. Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում հանդիսավորությամբ Ստեփանոս Դ կաթողիկոսը հայոց թագավոր է օծում եղբորը՝ Սմբատին: «Եւ յայնժամ օծեցին զպարոն Սմբատ թագաւոր ըստ նախնեաց իւրոց Գագկայ, զի ի վաղուց անտի ազգս Հայոց չէր տեսեալ թագաւոր: Փրկիչն մեր Քրիստոս զօրացուցէ զնա և բարձրացուցէ զայթոռ իշխանութեան մերոյ»<sup>4</sup>: Այդուհանդերձ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ իրենց այս քայլով Սեֆեդինյաններն առաջին հերթին ձգտում էին առաջնային դիրք ապահովել իրենց հովվապետական նկրտումների համար: Այն դեպքում, երբ նորընծա թագավորը ևս գտնվում և գործում էր Արծրունիների այս ճյուղի ոստանում, դա նրանց առաջնակարգ նշանակություն էր տալիս թե՛ հայ այլ աշխարհիկ իշխանության ներկայացուցիչների և թե՛ Արևելյան Հայաստանի հոգևոր և հատկապես առավել զորեղ Այրարատյան և Սյունյաց թեմերի հետ հարաբերություններում: Ինչևէ, Սմբատի թագավորությունը, որքան էլ հետապնդում էր նաև նեղ տեղային շահեր, այդուհանդերձ հայ ազատագրական պայքարի կարևոր էջերից մեկն է: Բնական է, որ այն նաև երկար չգոյատևեց: 1467 թ. մահացավ Սեֆեդինյանների հովանավոր Ջհանշահը, հարդյունս Հայաստանում տեղի ունեցած քաղաքական վերադասավորումների՝ Սմբատի թագավորությունը երկար չէր կարող գոյատևել: Չնայած դրան՝ վերջինս շարունակում է հիշատակվել թագավոր: Վերջին վկայությունը վերաբերում է 1471 թ., որտեղ նշվում է. «... ի հայրապետութեան սորին տեառն Ստեփանոսի, եւ ի նոր թագաւորիս մեր պարոն Սմբատի»<sup>5</sup>: Քանի որ այլ տեղեկություններ չկան նրա վերաբերյալ, ենթադրելի է, որ նա նույն թվականին կամ

<sup>4</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմեց՝ Լ.Ս.Խաչիկյան, Երևան, 1958, էջ 239: GE dari hajeren dzeragreri hishatakaranner, Masn B, kazmec L.S. Khacikyan, Erevan 1958, eg 239.

<sup>5</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 309: GE dari hajeren dzeragreri hishatakaranner, Masn B, eg 309.

միգուցե փոքր անց արդեն մահացել է: 1467 թ. շրջադարձային էր կարա-կոյունլուների պետության համար: Այդ տարի սպանվեց Ջհանշահը ակ-կոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանի կողմից, որն ընդամենը երկու տարվա ընթացքում հաստատեց իր տիրապետությունը ողջ Հայաստանում: Սրանով սակայն Հայաստանում խաղաղություն չի հաստատվում, ակ-կոյունլուների կառավարման շրջանը նշանավորվեց գրեթե անընդմեջ ընթացող պատերազմներով ոտքի ելնող Օսմանյան կայսրության դեմ, որի հարվածներից թուլացած և մասնատված քրչվոր թուրքմենների այս պետությունը վերջնականապես կործանվեց 1501 թ. Սեֆյանների առաջնորդ շեյխ Իսմայիլի կողմից: Այս թվականով էլ Հայաստանը մուտք գործեց աշխարհաքաղաքական մի նոր իրականություն՝ թուրք-պարսկական դարավոր հակամարտության ժամանակաշրջանը, որը ևս քիչ դժբախտություններ չբերեց հայ ժողովրդին: Արևելյան Հայաստանը, որը կարճ ժամանակ անց զբաղեցվեց Սեֆյանների կողմից, բաժանվեց Չուփուր Սադի (կամ Երևանի), Շիրվանի և Ղարաբաղի բեկլարբեկությունների միջև<sup>6</sup>: Վերոհիշյալ ժամանակաշրջանում հայ իշխանական տների մնացորդները շարունակում էին այս կամ այն կերպ գոյատևել: Սակայն հանուն ճշմարտության պետք է նշել, որ դրանք մեծ մասամբ դադարել էին երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործընթացներին լուրջ մասնակցություն ունենալ: Նոր պայմաններում վերջիններս հարկադրված էին ընդամենը պահպանել նախկին ազդեցության փշրանքները և գոյատևել:

Նախորդ ժամանակաշրջանի առանցքային հայ իշխանական տներից էր Օրբելյանների տոհմը: Հիրավի, հսկայական էր այս ընտանիքի դերակատարումը 13-15-րդ դդ. հայոց պատմության ընթացքում: Ավելին, 15-րդ դարի առաջին կեսին այս իշխանական տունը, մասնավորապես Բեշքեն և Ռուստամ Օրբելյանները, ամենաազդեցիկ հայ ավատատերերն էին: Այդ ժամանակաշրջանի համար Ռուստամը հասավ առավելագույն դիրքի: Նա Իսքանդար կարա-կոյունլուի արքունիքում զբաղեցնում էր մեծ վեզիրի պաշտոնը: Նրա ազդեցության մասին էր վկայում նաև այն հանգամանքը, որ նա կալվածքներ է ստանում Արևելյան Հայաստանի տարբեր վայրերում՝ Արարատյան դաշտում, Արագածոտնում, Կոտայքում և այլուր: Սակայն հայ իշխանագունի նման բարձր դիրքը բնականաբար երկար չէր կարող տևել, և 1437 թ. նա կորցնում է

<sup>6</sup> **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, 1959, հ. Բ, էջ 24: A. Hovhannisyán, Drvagner haj azatagrakan mtqi patmutyunic, Er. 1959, h. B, eg 24.

թե՛ դիրքը և թե՛ կալվածքների մեծ մասը: Ռուստամից հետո Օրբելյանների իշխանական տունն արագորեն կորցնում է իր ազդեցությունը Արևելյան Հայաստանում: Օրբելյանների իշխանության վերջին հայտնի ներկայացուցիչը վերջին անգամ 1496 թ. հիշատակված Եղիշե արքեպիսկոպոսն էր<sup>7</sup>: Վերջինս Սյունյաց հոգևոր թեմի առաջնորդն էր և Տարսայիճ Օրբելյան իշխանի թոռը: «... Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՋԽԴ, ի կաթողիկոսութեանն տեառն Սարգսի՝ յաթոռ սուրբ էջմիածնի. Եւ վերադիտող այսմ նահանգի պարոն-տէր Եղիշա արքեպիսկոպոսի՝ որդոյ իշխանաց իշխանի պարոն Սմպատայ, որդոյ մեծին Տարսաիճի, զոր տէր աստուած տացէ զսա մեզ ընդ երկայն ատուս՝ ուղիղ վերակացութեամբ»<sup>8</sup> հիշատակությունը գրված է 1495 թ.: Դրանից պարզ է դառնում, որ Եղիշե պարոն-տերին հաջողվել էր վերականգնել իր տոհմի աշխարհիկ իշխանությունը Սյունյաց աշխարհի մի զգալի մասի նկատմամբ: Նա որպես պարոն-տեր իր ձեռքում էր կենտրոնացրել նահանգի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունը: Ցավոք նրան վերաբերող վերջին հիշատակությունը վերաբերում է 1496թ.: Հայտնի չեն նրա գործունեության հետագա մանրամասները: Աղբյուրների բացակայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ նշված թվից որոշ ժամանակ անց նա մահացել է: Օրբելյանների իշխանությունը հավանաբար ընդհուպ մինչև 14-րդ դարի ավարտը ուներ նաև իր ռազմական կանոնավոր ուժերը, որի սպարապետությունը հանձնված էր Վայոց ձորի Հերիեր և շրջակա մի քանի գյուղատեղիների իշխան Շահուունցիների տոհմին<sup>9</sup>: Այս տոհմի վերաբերյալ հիշատակությունները պահպանվել են մինչև 14-րդ դարի կեսերը, սակայն կարելի է ենթադրել, որ նրանք այս կամ այն կերպ պահպանել են իրենց ազդեցությունը շրջանում նաև վերոնշյալ ժամանակահատվածում: Հաջորդ ազդեցիկ իշխանական ընտանիքը Պոռոշյան կամ Խաղաբակյան տոհմն էր, որի քաղաքական, մշակութային ու տնտեսական գործունեությունը հայոց միջնադարյան պատմության մեջ ևս զգալի էր: Այս տոհմը Օրբելյանների պես ևս 15-րդ դարում ունեցավ ազդեցության նկատելի անկում: Պոռոշյանները, որոնք ժառանգական կալ-

<sup>7</sup> Օրբելյանների մասին առավել մանրամասն տե՛ս **Գրիգորյան Գ.**, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981թ.: Orbelyanneri masin aravel manramasn tes G.Grigoryan, Syuniqy Orbelyanneri oroq, Er. 1981.

<sup>8</sup> Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, Երևան, 1967, էջ 213: GE dari hajeren dzeragreri hishatakaranner, Masn G, Er. 1967, eg 213.

<sup>9</sup> Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ 3-րդ, Երևան, 1967, կազմեց Ս.Բարխուդարյանը, էջ 47: Tes Divan hay vimagrutyany, prak 3-rd, Er. 1967, kazmec S.Barkhudaryany, eg 47.

վաճքներ ունեին Կոտայքում, Այրարատյան աշխարհում ու Վայոց ձորի հյուսիսային շրջաններում, ստիպված էին 15-րդ դարի վերջին դիմել պարոնտերության ինստիտուտի օգնությանը, այսպես, 1480 թ. Կոտայքի գավառի հոգևոր առաջնորդն էր Հովհաննես եպիսկոպոսը, որը աթոռակալում է մինչև 1493 թ.: Ընդ որում, ինչպես ցույց են տալիս աղբյուրները, նա իր ձեռքում էր կենտրոնացրել նաև գավառի աշխարհիկ իշխանությունը: Նրանից հետո գավառի հոգևոր առաջնորդ է դառնում Բարսեղ եպիսկոպոսը, որը նույնպես Պողոջանների տոհմի ներկայացուցիչ էր: Յավոք Բարսեղի վերաբերյալ ևս աղբյուրները լուր են: 16-րդ դարի Պողոջաններից սերող մեզ հաստատապես հայտնի ներկայացուցիչն էր Ջաքարիան՝ Գունյաց եպիսկոպոսը, որը հայտնի է եղել նաև իր մշակութային գործունեությամբ<sup>10</sup>: Հետագա դարերում Վայոց ձորի և Կոտայքի շրջաններում մեծ մասամբ պարոնտերության ինստիտուտի շնորհիվ իրենց գոյությունն են շարունակում պահպանել այս նշանավոր տոհմի սերունդները: Սակայն այս շրջանում նրանք արդեն կորցրել էին իրենց քաղաքական ազդեցությունը: Մյուս տոհմը, որն իր պատմությունը սկսում է 14-րդ դարի սկզբից, Ազիզբեկյանների իշխանական տունն էր, որի կենտրոնատեղին եղվարդ ավանն էր: Այս ընտանիքն էլ, սակայն, հարկադրված էր իր իշխանության մնացորդները պահպանելու համար դիմել պարոնտերության ինստիտուտի օգնությանը: Այսպես, 15-րդ դարի երկրորդ կեսին արդեն շրջանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունը կենտրոնացած էր Մանվել եպիսկոպոսի ձեռքում<sup>11</sup>, որի մասին վերջին տեղեկությունը վերաբերում է 1491 թ.<sup>12</sup>: Ազիզբեկյան տոհմի հավանական վերջին հայտնի ներկայացուցիչն էր 16-րդ դարի կեսին գործունեություն ծավալած Խոր Վիրապի առաջնորդ Տեր Մանուել եպիսկոպոսը<sup>13</sup>: Ազիզբեկյանների մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում 17-րդ դարի հեղինակ Ջաքարիա Քանաքեռցին, որը նշում է, որ վերոհիշյալ տոհմը, ինչպես նաև մի շարք ազնվական տոհմեր (Թեհենք, Ղապոնք,

<sup>10</sup> Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պողոջանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս 1969, էջ 128: Garegin katorikos Yovsepyan, Khaxbakeanq kam Prosheanq hajoc patmutyan meg, Antilias, 1969, eg 128.

<sup>11</sup> Ալիշան Ղ., Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 198: Alishan X.Ayrrarat, Bnashkharh Hajastaneajyc, Venetik, 1890, ej 198.

<sup>12</sup> Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 170: GE dari hajeren dzeragreri hishatakaranner, Masn G, ej 170.

<sup>13</sup> Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան, Ազիզբեկեք եւ նրանց շինարարական գործը, «Քանքեր Էջմիածնի գիտական ինստիտուտի», էջ 198: Garegin episkopos Hovsepyan, Azizbekenq ev nranc shinararakan gorcey, Banber Edjmiacni institute, ej 198.



Մոծակենք և այլն) ունեն վրացական ծագում<sup>14</sup>: Հայոց Արևելից կողմերում ամենաազդեցիկ իշխանությունը 15-րդ դարի վերջին Ներքին Խաչենի տիրակալ Հասան-Ջալալյաններն էին, ընդ որում հարկ է նշել, որ այս տոհմի իշխանությունը 14-րդ դարում որոշակի անկում ապրելուց հետո 15-րդ դարում կրկին բռնեց վերելքի ուղին: Այս տոհմը իր անվանումը ստացել է 13-րդ դարում մոտ կես դար իշխած Խաչենի տիրակալ Հասան Ջալալից: 15-րդ դարի կեսերին, ի հակադրություն այլ հայ իշխանությունների, Հասան-Ջալալյաններն ամրապնդում են իրենց դիրքերը Արցախում: Այս շրջանում Ներքին Խաչենի իշխանն էր Ջալալը, որի որդիներից Հովհաննեսն էլ մինչև 1470 թ. մի քանի տասնամյակ զբաղեցնում է Գանձասարի կաթողիկոսի աթոռը՝ այսպիսով մեկ ընտանիքի ձեռքում միավորելով երկրամասի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունը: 15-րդ դարի վերջին, 16-րդ դարի սկզբին երկրամասի իշխան է հիշատակվում Ջալալ իշխանի ծոռ Վելիջանը: Վելիջանի մահից հետո էլ, ի տարբերություն այլ հայկական իշխանությունների, Ներքին Խաչենի իշխանությունը հիմնականում պահպանում է իր նախկին հզորությունը: Այս տոհմի ձեռքում է շարունակում մնալ նաև Գանձասարի կաթողիկոսությունը<sup>15</sup>: Հայոց Արևելից կողմերում պահպանված մյուս առանցքային իշխանությունը Ծարի կամ Վերին Խաչենի իշխանությունն էր: Այստեղ 13-րդ դարում ձևավորվում է Դոփյանների իշխանությունը՝ որպես Ջաքարյանների ստորակա իշխանություն, բայց որի քաղաքական ու ռազմական ազդեցությունը Հայոց Արևելից կողմերում զգալի էր: 14-րդ դարի վերջին՝ Հասան իշխանի մահից հետո, այս տոհմը բաժանվում է երեք ճյուղերի՝ ըստ վերջինիս երեք որդիների: Դրանք էին Ուլուբեկենց, Այտինցվոց և Ջհանշեցվոց ընտանիքները: Բայց դա սկզբնական շրջանում չի խաթարում իշխանության միասնականությունը: Այսպես, հայտնի է, որ 1430 թ. ամբողջ երկրամասի տիրակալ է հիշատակվում Ուլուբեկենց տոհմից իշխան Սեյտին<sup>16</sup>: Այդուհանդերձ դարավերջին նախկին Վերին Խաչենի իշխանության բաժանումն այլևս կայացած փաստ էր: Ծարում իշխանությունը պատկանում էր Ջհանշեցվոց տոհմին, իսկ Սողքում՝ Ուլուբե-

---

<sup>14</sup> Պատմութիւն Զաքարեայ սարկաւազի, Վաղարշապատ, 1870, էջ 43: Patmutyun Zaqareaj sarkavagi, Vaxarshapat, 1870, ej 43.

<sup>15</sup> 1540 թ. Գանձասարի կաթողիկոս է դառնում Վելիջանի եղբայր Հատիր Մելիքի որդի Սարգիսը, տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը 10-16 դդ., Երևան, 1975, էջ 355: 1540 tt. Gandzasari katorikos e darnum Veligani exbayr Hatir Meliqi vordi Sargisy. Tes B.Ulubabyan, Khaceni ishkhanutyuny 10-16 dd., Er. 1975, eg 355.

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 334:

կենց: 16-րդ դարի սկզբին արդեն սրանք և սրանց ճյուղավորումները մուտք գործեցին մելիքության շրջան: Մելիքները Ուլուբեկենց տոհմի շարունակությունն էր Գեղամա երկրի մելիքների՝ Մելիք Շահնագարյանների տոհմի<sup>17</sup>: 1549 թ. հիշատակվում են Ծարի տեր իշխան Միրզաջանը, նրա կինը՝ Գեղամա մելիք Ղուկասի դուստր Դավլաթը, և որդիները՝ Տավիտբեկը և Մելիքբեկը: Վերոգրյալ ժամանակահատվածում՝ մինչև 16-րդ դարի երկրորդ կեսը, Գեղարքունիքում հիշատակվում են մի քանի մելիքական տներ՝ Աղբուղայան, Փիրհամզայան և այլն, որոնց ծագման վերաբերյալ հստակ տեղեկություններ չեն պահպանվել: Ըստ ամենայնի, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ գավառը Դոփյանների տոհմի սեփականությունն էր, դրանք ևս պետք է որ սերված լինեին այդ տոհմից: Վերոհիշյալ ժամանակաշրջանում Արագածոտնի նախալեռներում իրենց գոյությունը պետք է որ պահպանած լինեին Վաչուռյանները, որոնց վերաբերյալ, սակայն, որպես իշխան վերջին հիշատակությունը թվագրված է 1440 թ.: 15-րդ դարի առավել ազդեցիկ հայկական իշխանություններից էր Համշենի հայկական իշխանությունը, այն սակայն հայտնվելով օսմանյան թուրքերի առաջխաղացման ճանապարհին՝ գրավվեց 1488-89 թթ.: Այս իշխանության վերջին տիրակալն էր իշխան Դավիթը, որը վտարվեց օսմանցիների կողմից հայրենի կալվածքներից<sup>18</sup>: Այդ ժամանակահատվածում իրենց գոյությունն էր շարունակում պահպանել վաղմիջնադարյան Հայաստանի թերևս ամենաազդեցիկ՝ Մամիկոնյանների տոհմը, որի կենտրոնատեղին էր դարձել Դսեղ գյուղաքաղաքը: Մամիկոնյանները Լոռիում հաստատվել են 11-րդ դարից, որտեղ ընդարձակ կալվածքներ ստացան Կյուրիկյաններից<sup>19</sup>: Լոռիում հաստատված Աշոտ Մամիկոնյանի որդու՝ Համազասպի անվամբ այս տոհմը կոչվեց նաև Համազասպյան: 13-րդ դարում ընդունելով Զաքարյանների գերակայությունը՝ Համազասպյան Մամիկոնյանները, բացի Լոռուց, կալվածքների տիրացան նաև Կոտայքում, Ուրծում, Խրամում: Սակայն 13-րդ դարի վերջից նրանց տիրոջներն աստիճանաբար սկսեցին սահմանափակվել Դսեղով և հարակից Մարց և Ալարեքս գետերի հովիտներով: Հետագայում, ըստ բանավոր ավանդազրույցների, 15-16-րդ դդ. սրանց մի ճյուղը անվանվեց Թումանյան՝ իր ձեռքում կենտրոնացնելով գյուղի

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 337:

<sup>18</sup> Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, Երևան, էջ 470: GE dari hajeren dzeragreri hishataranner, Masn G, eg 470.

<sup>19</sup> Դիվան հայ վիմագրության, հ. 9, Երևան, 2012, էջ 355: Divan haj vimagrutyanyan, h. 9, eg 355.

հոգևոր իշխանությունը, այսինքն՝ այստեղ ևս մենք գործ ունենք պարոնտերության ինստիտուտի հետ: Այս ճյուղի սերունդներից էր նշանավոր բանաստեղծ Հովի. Թումանյանը: Մինչ օրս էլ Մամիկոնյանների և նրանց կրտսեր ճյուղի՝ Թումանյանների սերունդները բնակվում են Դսեղում:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

15-16-րդ դդ. իրավամբ համարվում են հայոց պատմության ամենամռայլ ժամանակաշրջաններից մեկը: Բուն Մեծ Հայքի տարածքում ազգային պետականության երկարատև բացակայությունը բնականաբար առաջնահերթ ազդելու էր պետական իշխանության առաջնային սոցիալական հենարանը համարվող ազնվական խավի վրա: Բայց չնայած դրան՝ խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ ազնվականական տների ներկայացուցիչները շարունակում էին գոյատևել: Հայ իշխանական տներն այս կամ այն կերպ պահպանում էին աշխարհիկ և հոգևոր իշխանության որոշակի հատվածը:

***Բանալի բաներ*** - իշխան, Մեծ Հայք, պարոնտեր, աշխարհիկ իշխանություն, հոգևոր իշխանություն, գավառ, նվաճող:

### АРМЯНСКИЕ КНЯЖЕСКИЕ ДОМА И ИХ ОСТАТКИ В ПОСЛЕДНЕЙ ЧЕТВЕРТИ 15-ГО ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 16-ГО ВЕКОВ

ДАВИД ТИНОЯН

15-16 вв. по праву считаются самыми смутными в истории Армении. Долговременное отсутствие государственной власти на территории Великой Армении весьма негативно отразилось на дворянстве, являвшемся социальной опорой самодержавия. Однако примечательно, что несмотря на это, осколки армянского дворянства продолжали свое существование во время вышеупомянутой смуты. Более того, они сосредоточили в своих руках также и некоторые аспекты духовной власти.

***Ключевые слова*** - князь, Великая Армения, паронтер, светская власть, духовная власть, провинция, завоеватель.

## ARMENIAN DIGNITARIES AND THEIR SURVIVORS IN THE XV AND XVI CENTURIES

DAVID TINOYAN

The 15th and 16th centuries are rightly considered to be one of the darkest periods of Armenian History. The long-term absence of a national statehood within the territories of Armenia Major (Great Haig) would have had an impact, first and foremost, upon the so called the primary social stronghold of any state, the aristocratic society. Nevertheless, the dignitaries of the Armenian aristocratic houses endured through these centuries and furthermore, they held both secular and spiritual power within Armenia Major.

**Key words** - prince, Great Armenia (or Armenia Major), ecclesiastical landlord, secular authority, spiritual authority, province, conqueror.

## ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍԱՍԱՆՅԱՆ ԻՐԱՆԸ VI ԴԱՐԻ 70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՕՄԻԴ ՄՈՆԹԱԶԵՐԻ (ԻՐԱՆ)

Բյուզանդիայի կայսր Հուստինիանոսը քաղկեդոնականությունը հռչակում է պետական կրոն, ինչը խոր անդունդ էր բացում Արևելքի քրիստոնյաների հետ հարաբերություններում: Սակայն այս իրողությունը ձեռնտու էր Սասանյան Իրանին, որը սկսում է սիրաշահել հայոց եկեղեցուն, այսինքն՝ ի դեմս հայ ժողովրդի, պարսից արքունիքն ամուր պատնեշ էր ստեղծում բյուզանդացիների դեմ: Հետևաբար, Հուստինիանոսի պայքարը քաղկեդոնամերժ հայոց եկեղեցու նկատմամբ պետք է վերջինիս կողմնորոշեր դեպի Սասանյան Իրան:

532 թվականին Հայաստանի երկու զորեղ հարևանների՝ Բյուզանդիայի և Սասանյան Իրանի միջև կնքվում է «հավիտենական» հաշտությունը, ըստ որի՝ սահմանային փոփոխություններ չէին լինելու: Յավոք, այդ «հավիտենական» հաշտությունը տևեց ութ տարի, քանի որ Իրանը չէր կարող երկար ժամանակ հանդուրժել Բյուզանդիայի ազդեցության տարածումը Հայաստանի և Լազիկայի վրա, նաև սերտ հարաբերությունները արաբների ու հոնների հետ: Քրիստոնյա Բյուզանդիայի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ առաջ էր բերել մեծ դժգոհություն, և հայերը Վասակի գլխավորությամբ մի պատվիրակություն են ուղարկում Տիգրան՝ օգնություն խնդրելով Խոսրով Անուշիրվանից<sup>1</sup>:

540 թվականի գարնանը Խոսրովը հարձակվում է Բյուզանդիայի վրա և զգալի հաջողությունների հասնում: Պարսկա-բյուզանդական պատերազմից մեծապես տուժում էր Հայաստանը՝ թշնամի բանակների համար դառնալով մարտադաշտ: Փոփոխական հաջողություններով ընթացող պատերազմը շարունակվում է մինչև 561 թվականը, երբ հաշտության պայմանագրով Խոսրովը հրաժարվում էր Լազիկայից՝ պահելով Սվանեթը և Վիրքը: Հայաստանում, Միջագետքում, Ասորիքում սահմանային փոփոխություններ չէին կատարվում: Բյուզանդիան պարտավորվում էր Իրանին վճարել տարե-

---

<sup>1</sup> Procopius, History of the Wars, Vol. I, Books I-II, with an English translation by H. B. Dewing, London, 1914, II, 3, pp. 270-286.

կան 300 հազար դահեկան: Երկու կողմերը պարտավորվում էին սահմանային նոր ամրություններ չկառուցել:

Հուստինիանոս կայսեր քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում առաջ է բերում ժողովրդի թշնամությունը, որը հետագայում վերածվում է անհաշտ ատելության<sup>2</sup>: Կայսեր՝ միաբնակների դեմ ուղղված հալածանքները թուլացրել էին նաև Արևելքի ասորական եկեղեցին, որն աստիճանաբար ընկնում էր հայոց եկեղեցու ազդեցության տակ: Ասորի եպիսկոպոսներին արդեն ձեռնադրում էին հայոց կաթողիկոսները, ինչը Բյուզանդիային դուր չի գալիս, և վերջինս փորձում է այլևայլ միջոցներով ճշշել նաև Իրանի տիրապետության տակ գտնվող հայությանը:

Ի բարեբախտություն հայ ժողովրդի՝ հայոց եկեղեցու հայրերը լավ էին հասկանում, որ Հայաստանին սպառնում է ոչ միայն Բյուզանդիան, այլև Իրանը: Այս իրողությունները նկատի ունենալով՝ Ներսես Բ Բագրևանդցի կաթողիկոսը 554 թվականի մարտի 29-ին Դվինում գումարում է եկեղեցական ժողով<sup>3</sup>, որին մասնակցում են գրեթե բոլոր եպիսկոպոսները, 35 նախարարներ, հասարակության այլ խավերի ներկայացուցիչներ<sup>4</sup>: Ժողովին մասնակցում են նաև միաբնակ ասորիները եպիսկոպոս Աբդիշոյի գլխավորությամբ՝ հուսալով, որ հայոց եկեղեցու հովանավորությամբ կպահպանեն իրենց գոյությունը: Ժողովում նզովվում և բանադրվում են քաղկեդոնականությունն ու նեստորականությունը, որոնք երկուսն էլ սպառնում էին հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանը: Խոսքով Անուշիրվանը, նլնելով քաղաքական նպատակներից, Դվինի ժողովում պաշտպանել է հայերի դիրքորոշումը, որը թշնամի էր բյուզանդական քաղկեդոնականությանը<sup>5</sup>:

Նշենք նաև, որ Դվինում կային առևտրական խուժիկ նեստորականներ ևս, որոնք ակտիվորեն քարոզում էին իրենց դավանանքը հայերի շրջանում<sup>6</sup>:

Դվինի ժողովն ուղղված էր Բյուզանդիայի դեմ, և պարսից արքունիքը, նկատի ունենալով այս հանգամանքը, երկրի հարկահանության ժառանգական իրավունքը վերցնում է հայ նախարարներից և տալիս եկեղեցուն<sup>7</sup>: Այս որո-

<sup>2</sup> **Մանանդյան Հ.**, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 303:

<sup>3</sup> **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 545 և այլն:

<sup>4</sup> «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 74:

<sup>5</sup> **Լեո**, Հայոց պատմություն, երկրորդ հատոր, Երևան, 1947, էջ 163:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 162:

<sup>7</sup> **Մելիքսեթ-Քեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն՝ ծանոթագրություն-

շումն ուներ քաղաքական դրդապատճառ այն առումով, որ Բյուզանդիայի եկեղեցին երբեք ապահարկ չի եղել, հետևաբար այս քայլով պարսիկները հայ եկեղեցուն ևս կապում էին իրենց քաղաքական շահախնդրությունների անիվին: Պարսիկներն ամեն կերպ խրախուսում էին հայերի թշնամությունը Բյուզանդիայի դեմ: Հարկավ, սա չէր նշանակում, թե պարսիկները մեղմել էին իրենց քաղաքականությունը հայերի հետ, ընդհակառակը, նրանք Հայաստանում կառուցում էին ատրուշաններ, ապրում անբարո կյանքով՝ արատավորելով հայ ընտանիքների պատիվը: Պարսիկների համար գլխավոր նպատակն այն էր, որ Հայաստանի և Բյուզանդիայի միջև ստեղծված դավանական անջրպետը ստիպի հայ ժողովրդին փոխել իր քաղաքական կողմնորոշումը հոգուտ Իրանի:

564 թվականին Խոսրով Ա-ի կողմից լայն լիազորություններով Հայաստանի մարզպան է նշանակվում Սուրեն Ճիհովր-Վշնասպը, որ, արհամարհելով 484 թվականի Նվարսակի պայմանագիրը, ծանրացնում է հարկերն ու տուրքերը՝ ձգտելով վերացնել Հայաստանի ինքնավարությունը: Նոր մարզպանը նույնիսկ սպանում է Մանուել Մամիկոնյանին<sup>9</sup> ցույց տալով իր արհամարհանքը նախարարների նկատմամբ և չվախենալով նրանց ռազմական ուժից:

VI դարի 40-ական թվականներից քրիստոնյաների դեմ սկսված հալածանքներն Իրանում նույն դարի 60-ական թվականներից տարածվում են նաև Հայաստանում, Վիրքում և Աղվանքում: Շահնշահ Խոսրով Ա-ի հրամանով Հայաստանում ավերվում են բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ, ատրուշաններ են կառուցվում երկրով մեկ, հատկապես Դվինում<sup>10</sup>: Հայաստանում հասունանում էր նոր ապստամբություն, որը գլխավորում են կաթողիկոս Հովհաննես Բ Գաբեղենացին և սպարապետ Վարդան Մամիկոնյանը, որոնք փորձում են սկզբում խաղաղ ճանապարհով լեզու գտնել պարսիկ մարզպանի հետ: Կաթողիկոսը և սպարապետը հայտնում են իրենց հավատարմությունը պարսկական գահին, սակայն շեշտում են, որ հավատի հարցերում ազատ են և

ներով և հավելվածներով, հ. Ա, Երևան, 1934, էջ 41:

<sup>8</sup> «Վարք և վկայաբանութիւնք սրբոց», հ. Բ, Վենետիկ, 1874, էջ 125, 127: Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, հրատ. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 84:

<sup>9</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 253:

<sup>10</sup> Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, էջ 84: *Пигулевская Н. В.*, Сирийские источники по истории народов СССР, М.-Л., 1941, с. 109-111.

կրոնափոխ չեն լինի: Որպես հիմք՝ ցույց է տրվում Վաղարշ Ա-ի հետ կնքված պայմանագիրը, սակայն մարզպանը շարունակում է ատրուշաններ կառուցել:

Մարզպանը մեկնում է Տիզրոն՝ Հայաստանում ստեղծված վիճակի մասին զեկուցելու և նոր հրամաններ ստանալու համար: Միաժամանակ հայերը օգնություն են խնդրում Վիրքից ու Աղվանքից, որոնցից առաջինում ապստամբության գլուխ էր կանգնած Գուրգենը, իսկ երկրորդում՝ Շերոյեն<sup>11</sup>: Հայերը օգնության խնդրանքով դիմում են քրիստոնյա Բյուզանդիային, որը խոստանում է օգնել «իր կրոնակիցներին»<sup>12</sup>: Ֆինանսական դժվարությունների մեջ գտնվող կայսրությունը որոշում է չվճարել 562 թվականի պայմանագրով նախատեսված ամենամյա 500 լիտր ոսկին<sup>13</sup> և այս առումով հայերի, վրացիների և աղվանների ազատագրական պատերազմը կարող էր ծառայեցնել իր շահերին:

Ապստամբության շեմին, ինչպես միշտ, համերաշխություն չկար հայ նախարարների միջև<sup>14</sup>: Ապստամբները նախապես Դվինի գանձերը, դիվանը և կաթողիկոսարանի թանկարժեք սպասքը տեղափոխում են Թեոդոսուպոլիս և պատվիրակություն ուղարկում կայսր Հուստինոսի մոտ՝ խնդրելով նրա օգնությունը և բարեկամությունը<sup>15</sup>: 570 թվականի աշնանը<sup>16</sup> Կոստանդնուպոլսում կայսրը խոստանում է օգնել հայերին. ապստամբության հաղթանակից հետո մարզպանական Հայաստանը մտնելու էր Բյուզանդիայի գերիշխանության տակ, որը երաշխավորելու էր հայերի ազատ դավանանքը և երեք տարով ազատելու էր բոլոր հարկերից<sup>17</sup>:

Խոսքով Ա-ի դեսպան Սեբուխտը Կոստանդնուպոլսում պահանջում է վճարել 500 լիտր ոսկին և պարզել Հուստինոս Բ-ի վերաբերմունքը մարզպա-

<sup>11</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, էջ 254:

<sup>12</sup> Müller C., *Fragmenta Historicorum Graecorum*, v. IV, Paris, 1868, Menandri Protectoris, fr. 36, pp. 238-239.

<sup>13</sup> Пигулевская Н. В. Византия и Иран на рубеже VI-VII веков, М.-Л., 1946, с. 58; Müller C., *Fragmenta Historicorum Graecorum*, v. IV, Joannis Epiphaniensis, pp. 273-276.

<sup>14</sup> Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 297:

<sup>15</sup> «The Ecclesiastical History of Evagrius Scholasticus», Translated with an introduction by M. Whitby, Liverpool University Press, 2000, pp. 263-264.

<sup>16</sup> Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 284 և հաջ.:

<sup>17</sup> «The Ecclesiastical History of Evagrius Scholasticus», pp. 263-265; «The Third Part of the Ecclesiastical History of John Bishop of Ephesus», Translated by R. Payne Smith, Oxford University Press, 1860, p. 125.



նական Հայաստանի նկատմամբ<sup>18</sup>: Կայսրը ոչ միայն հրաժարվում է տարեկան ոսկին վճարելուց՝ համարելով կայսրության համար ամոթաբեր, այլև հայտարարում է, որ կօգնի պարսկահայերին՝ որպես իր հավատակիցների<sup>19</sup>: Սա նշանակում էր պատերազմ, իսկ հայերը բյուզանդացիների խոստումներից ոգևորվում են<sup>20</sup>:

Ապստամբության շեմին հայ նախարարների միջև տարածայնություններն էլ ավելի են խորանում, և Սյունյաց հզոր իշխանը 571 թվականին դուրս է գալիս մարզպանական Հայաստանի կազմից և որպես առանձին շահր՝ ուղղակիորեն ենթարկվում Ատրպատականի փոխարքային: Սյունիքն առանձնանում է պարսիկ մարզպանի իշխանությունից՝ պահելով սերտ կապը Հայաստանի հետ<sup>21</sup>: Դատելով աղբյուրներից՝ մինչև 571 թվականը Սյունիքը ձեռք էր բերել լայն ինքնավարական իրավունքներ հայկական մարզպանության կազմում<sup>22</sup>: Զաքարիա Հռետորը Սիսական-Սյունիքը հիշատակում է Վիրքին և Առան-Աղվանքին հավասարազոր երկիր<sup>23</sup>:

Պարսից արքունիքը հրճվանքով է ընդունում այս փոփոխությունը և Սյունիքին է միացնում Արցախ նահանգը, որի Հաբանդ գավառն էլ որպես կենտրոն ընտրում է Վահան Սյունին: Սյունիքի նշանակությունը կրկին մեծանում է պարսիկների համար, որոնք սյունեցիների պաշտպանությանն են հանձնում Ճորա պահակը<sup>24</sup>:

Սյունյաց եպիսկոպոսական աթոռն էլ ենթարկվում է Աղվանքի կաթողիկոսությանը: Սակայն, Սյունյաց հոգևորականների քաղաքական հեռատեսության շնորհիվ վերջիններս նահանգի վարչաքաղաքական փոփոխությունը չեն զուգակցում նաև կրոնական անջատողականության հետ: Սյունյաց հզոր եկեղեցին պահպանում է իր նախնյաց հավատքը, իսկ Սյունյաց Քրիստափոր եպիսկոպոսը 607 թվականին Հայաստանի մյուս հոգևորականների հետ

<sup>18</sup> Chronique de Michel le Syrien, ed. J.-B. Chabot, T. II, Paris, 1901, p. 282.

<sup>19</sup> Menandri Protectoris, fr. 36, pp. 238-239.

<sup>20</sup> **Իսկանյան Վ. Կ.**, Հայ-բյուզանդական դաշինքը Պարսկաստանի դեմ (VI դար), «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1963, թիվ 4, էջ 51-62:

<sup>21</sup> **Դանիելյան Է.**, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, էջ 27:

<sup>22</sup> **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի, «ՊԲՀ», 2003, թիվ 1, էջ 144:

<sup>23</sup> **Пигулевская Н. В.** Сирийские источники по истории народов СССР, с. 165.

<sup>24</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, էջ 257:

միասին դատապարտում է նեստորականությունը և Քաղկեդոնի ժողովը<sup>25</sup>:

Հայերի համարձակությունից զայրացած՝ Խոսրով Ա-ն Սուրենին հրամայում է Դվինում ատրուջան կառուցել և խռովարարներին կոտորել: Ապստամբությունն ընդունում է համաժողովրդական բնույթ<sup>26</sup>: Կարմիր կոչված Վարդան Մամիկոնյանի հրամանատարությամբ Հայոց 20000-անոց բանակը բյուզանդական օժանդակ զորամասի հետ հարձակվում է Դվինում ամրացած պարսկական զորքի վրա, ջախջախում, գլխատված մարզպանի գլուխն էլ ուղարկում Թեոդոսուպոլիսում գտնվող բյուզանդական զորահրամանատարին<sup>27</sup>: Ապստամբ հայերին միանում են նաև վրացիներն ու աղվանները<sup>28</sup>: Սակայն Բյուզանդիան բավարար չափով նախապատրաստված չէր սպասվող պարսկա-բյուզանդական պատերազմին, և Հայաստանը միայնակ էր մնալու պարսկական ներխուժման դեմ: Բազմաթիվ նախարարներ և հոգևորականներ իրենց ընտանիքներով կաթողիկոսի և սպարապետի հետ ուղևորվում են Կոստանդնուպոլիս՝ պարսիկների վրեժխնդրությունից խուսափելու և օգնական զորք ստանալու ակնկալիքով: Կայսրը նրանց ընդունում է ընդգծված հարգանքով և արժանացնում մեծ պատիվների, բայց փոխանակ օգնելու, առաջարկում է քաղկեդոնականություն ընդունել: Կաթողիկոսը հոգևորականների և նախարարների հետ հարկադրված հաղորդվում է պատրիարքի հետ<sup>29</sup>, որպեսզի երկիրը չզրկվի կայսրության ռազմական օգնությունից<sup>30</sup>: Շուտով գումարվում է նաև եկեղեցական ժողով, և հայերը պաշտոնապես ընդունում են քաղկեդոնականություն<sup>31</sup>:

Մարզպանական Հայաստանում ապրող հայերը դատապարտում են կաթողիկոսի գործողությունները՝ մեղադրելով նրան դավաճանության մեջ<sup>32</sup>:

Ըստ Մենանդրոսի՝ կայսրը հայերին և վրացիներին խոստանում էր ազատագրել պարսկական լծից կամ գոնե պաշտպանել բոլոր նրանց, ովքեր

<sup>25</sup> «Գիրք թղթոց», էջ 151-152:

<sup>26</sup> Պատմություն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 68:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 67:

<sup>28</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, էջ 258:

<sup>29</sup> «The Third Part of the Ecclesiastical History of John Bishop of Ephesus», p. 125.

<sup>30</sup> **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. Ա, էջ 563-565:

<sup>31</sup> **Բարթիկյան Հ.**, «Narratio de rebus Armeniae» հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», 1962, թիվ 6, էջ 467:

<sup>32</sup> «The Third Part of the Ecclesiastical History of John Bishop of Ephesus», p. 126.

կանցնեին Հռոմեական կայսրության տարածք<sup>33</sup>: Կայսեր այս նոր խոստումները կարևոր էին այնքանով, որ պարսիկներն այլևս մահապատժի չէին ենթարկի ապստամբներին, որոնց պահանջում էին վերադարձնել բանակցությունների ժամանակ: Կայսրությունն իր խոստումը կատարում է. հայ նախարարներին պահում է զինվորական ծառայության մեջ և նետում պարսիկների դեմ:

Հովհան Եփեսացին հաղորդում է, որ ապստամբությունը սկսվել է կաթողիկոսի նախաձեռնությամբ, այսինքն՝ միաբնակ պատմիչի կարծիքով հայերն ընդվզել են պարսիկների կրոնական քաղաքականության պատճառով: Սիրիացի հեղինակը նման եզրակացության հանգել էր ոչ միայն իր քրիստոնյա լինելու պատճառով, այլև իր տեղեկություններն ուղղակիորեն Կոստանդնուպոլսում ստացել է կաթողիկոսից և նրա եպիսկոպոսներից<sup>34</sup>: Իրականում նախարարական վերնախավը դժգոհ էր Իրանի տիրապետությունից, և եկեղեցին՝ որպես խոշորագույն հողատեր, նույնպես ձգտում էր պահպանել իր տնտեսական հզորությունը և առանձնաշնորհները:

Մարզպանական Հայաստանում ծագած ապստամբությունը պատճառ է դառնում պարսկա-բյուզանդական քսանամյա պատերազմի համար, ինչից տուժում է Հայաստանը՝ ոտնակոխ լինելով թշնամի բանակների ոտքերի տակ<sup>35</sup>:

Պարսկական բանակները դաժանաբար են վերաբերվում հայերի հետ՝ սրի քաշելով տղամարդկանց և ավերելով երկիրը<sup>36</sup>: Հայկական գործին ղեկավարում էր Վարդան Մամիկոնյանը՝ աջակցություն ստանալով վրացիներից ու աղվաններից: Բյուզանդական զորավարները նույնպես ենթարկվում էին Վարդան Մամիկոնյանին: Համաձայն Սեբեոսի՝ Միհրան Միհրևանդակը և Խոսրով Ա-ն արշավանքներ են կազմակերպում հենց Վարդան Մամիկոնյանի դեմ<sup>37</sup>: Այն ժամանակ, երբ կայսրությունը չէր կարողանում լիարժեք կազմակերպել ռազմական գործողություններ պարսիկների դեմ, որոնք ձեռք էին բերել զգալի հաջողություններ, Տիբերիոս կայսրը Կոստանդնուպոլսում կրկին

<sup>33</sup> Menandri Protectoris, fr. 47, pp. 249-250.

<sup>34</sup> «The Third Part of the Ecclesiastical History of John Bishop of Ephesus», pp. 118-119.

<sup>35</sup> Հայաստանում ռազմական գործողությունների մասին տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, էջ 260-263:

<sup>36</sup> Պատմութիւն Սեբեոսի, էջ 70:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 68: Հմմտ. Le Livre des Rois, par Abou'lkasim Firdousi, T. VI, Paris, 1878, p. 172.

գումարում է եկեղեցական ժողով, որտեղ դատապարտվում է հայոց եկեղեցու դավանանքը<sup>38</sup>:

Համախմբելով իր ռազմական ուժերը՝ Բյուզանդիային հաջողվում է հայերի օգնությամբ ազատագրել ամբողջ Հայաստանը՝ մարզպանական Հայաստանում դիմելով բռնությունների ու դաժանությունների<sup>39</sup>: Կայսրությունը միաժամանակ սիրաշահում էր իրեն կողմնակից նախարարներին՝ տալով պարգևներ և զորք:

Հայերի դժգոհությունից կարողանում են օգտվել պարսիկները և ջախջախում են բյուզանդացիներին<sup>40</sup>: Պարսից զորավար Տամ-Խոսրովը խոստանում է Հայաստանում ատրուշան չկառուցել, ինչի պատճառով հայերն անցնում են պարսիկների կողմը<sup>41</sup>. հայ-բյուզանդական դաշինքը քայքայվում է:

Այսպիսով, հայոց ազատագրական շարժումը կարևոր դեր կատարեց հայ ժողովրդի ազգային ինքնուրույնությունն ամրապնդելու ուղղությամբ և կասեցրեց պարսկական սպառնալիքը: Ըստ էության, 570-ական թվականների պայքարը ևս այն պատճառներից մեկը դարձավ, որը ստիպեց Սասանյան Իրանին փոխել իր վերաբերմունքը հայոց եկեղեցու նկատմամբ, և Խոսրով Փարվեզի ժամանակ հայոց դավանանքը ճանաչվեց միակ ճշմարիտը ամբողջ Իրանում:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

VI դարում և ընդհանրապես մինչև Սասանյան Իրանի կործանումը Հայաստանում տեղի է ունենում մի արմատական հեղաշրջում, երբ Բյուզանդիայի և Իրանի կողմից կիրառվող հայատյաց քաղաքականության հետևանքով առաջին պլան է մղվում հայ եկեղեցու ազգային, քաղաքական նշանակությունը, որը դառնում է հայոց ինքնության և ինքնուրույնության պահպանը: VI դարում Բյուզանդիան և Սասանյաններն ամեն կերպ ձգտում են իրենց ենթակա հայկական տարածքում երկիրը զրկել նախարարական ռազմուժից՝ այն ուղղելով իրենց տիրապետությունների հեռավոր ծայրամասերի պաշտպանությանը: Նման պայմաններում քաղաքական և գաղափարական առումով հայ եկեղեցին դառնում էր հայ ժողովրդի և հասարակության բոլոր շերտերի իրավունքների պաշտպանը և երաշխավորը:

<sup>38</sup> Աբրահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 397: Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, էջ 579-581:

<sup>39</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, էջ 261:

<sup>40</sup> Պատմություն Սեբեոսի, էջ 71:

<sup>41</sup> Пигулевская Н. В. Сирийские источники по истории народов СССР, сс. 113, 130.

**Բանալի բաներ** - Սասանյան Իրան, մարզպանական Հայաստան:

## **МАРЗПАНСКАЯ АРМЕНИЯ И САСАНИДСКИЙ ИРАН В 70-Х ГОДАХ VI ВЕКА**

ОМИД МОНТАЗЕРИ

В VI веке и вообще до уничтожения Сасанидского Ирана в Армении происходит радикальный переворот, когда в результате политики Византии и Ирана на первый план выходит национальное, политическое значение армянской церкви, которая становится хранительницей армянской самобытности и самостоятельности. В VI веке Византия и Сасаниды на подчиненной им армянской территории всячески стремятся лишить страну нахарарской военной силы, направив ее на защиту отдаленных окраин их владений. В таких условиях с политической и идеологической точек зрения армянская церковь становится защитницей и гарантом прав армянского народа и всех слоев общества.

**Ключевые слова** - Сасанидский Иран, марзпанская Армения.

## **ARMENIAN MARZPANATE AND SASANID PERSIA IN THE SEVENTIES OF THE VI CENTURY**

OMID MONTAZERI

A radical revolution started in Armenia in the VI century and continued until the fall of Iran. As a direct consequence of the anti-Armenian policy applied by Byzantium and Sassanid Persia, the importance of the Armenian Church significantly grew both nationally and politically. The Armenian Church thus became the sole guardian of Armenian individuality and identity. In the VI century both the Byzantines and Sassanians tried to deprive the occupied territories of Armenia from their ministerial military forces, directing them to defend the far borderlines of their provinces. These were the circumstances when the Armenian Church became the protector and guarantor of the Armenian societies' rights and of the whole Armenian people in general concerning both political and ideological issues.

**Key words** - Sasanian Iran, Marzpanate Armenia

## ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ

### ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայ ազգային մատենագրությունը սկզբնավորվել է V դարի առաջին կեսին՝ հայ ժողովրդի պատմության ամենադժվարին ժամանակաշրջանում, երբ դրված էր հայ ազգի գոյության խնդիրը, և հայությունը կանգնել էր ճակատագրական երկրնտրանքի առջև. կամ ձուլվել պարսիկների և հույների հետ, ասել է թե վերանալ որպես ազգություն, կամ բոլոր հնարավոր միջոցներով դիմադարձ կանգնել՝ պահպանելով ազգային դիմագիծն ու ինքնուրույն գոյությունը: Հայերն ընտրեցին այս վերջինը:

Ստեղծված պայմաններում ազգի հոգևոր և աշխարհիկ առաջնորդները գիտակցեցին, որ ազգային-քաղաքական առկա խնդիրների լուծումը հնարավոր է միայն ժողովրդի հոգեմտավոր ողջ ներուժի կենտրոնացման, ազգի սոցիալական բոլոր խավերի համախմբման, համազգային պայքարի ընդհանուր ճակատի կազմակերպման պարագայում: Այդպիսի ուժ էր Հայ եկեղեցին, որն էլ շուտով ստանձնեց ազգի փրկության առաքելությունը՝ գլխավոր դերակատարություն ունենալով երկրի գաղափարաքաղաքական և հոգևոր-մշակութային կյանքում, ազգային ամբողջականության, հատկապես **պետականության, քաղաքական անկախության կորստից հետո**<sup>1</sup>:

Ահա այդպիսի մթնոլորտ էր տիրում Հայաստանում մինչև V դարը: Թեև մեկ դար էր, ինչ քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոնն էր, սակայն այն դեռևս լիովին չէր բացահայտել իր ներունակությունները և չէր վերածվել համազգային կրոնի, չէր դարձել ազգի հոգևոր գաղափարական միասնության խորհրդանիշ, ազգային շահերի կրող ու պաշտպան: Նշված գործառույթների իրականացումը խոչընդոտում էին ոչ միայն ժողովրդի պատմական հիշողությունը, հեթանոսական հարուստ անցյալը, աշխարհընկալման ավանդական, կայունացած ձևերի կենսունակությունը, այլև այն հանգամանքը, որ Հայաստանում քրիստոնեության տարածումը, հոգևոր կրթությունը և եկեղեցական ժամերգությունը կատարվում էին օտար՝ ազգին խորթ լեզուներով (հունարեն և ասորերեն): Այլ կերպ ասած՝ լինելով Հայաստանի պետական կրոն,

---

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. 2, Երևան, 1984, էջ 12-13:

հետևաբար՝ նաև պետական գաղափարախոսություն, քրիստոնեությունը չէր դարձել **ազգային գաղափարախոսություն**<sup>2</sup>: Որովհետև ազգի սուկ չնչին՝ հունարենին և ասորերենին տիրապետող մասն էր ի վիճակի ըմբռնելու քրիստոնեական կրոնի էությունն ու նշանակությունը: Ավելին, ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, շատերը քրիստոնեությունն ընդունել էին «ստիպված՝ իբրև մի մարդկային սովորություն, իբրև մի մոլորություն, առանց ջերմեռանդ հավատի... Ոչ թե գիտությամբ, հոյսով ու հավատով, ինչպես որ հարկն էր, այլ միայն քչերը, որոնք փոքր ի շատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտության՝ մասամբ հասկանում էին այդ [կրոնը]»<sup>3</sup>:

Բացի այդ, թեպետ Հայաստանի առաջին (387 թվական) բաժանումից հետո երկրի երկու մասերն էլ որոշակի ներքին ինքնավարություն ունեին, սակայն շուտով հարևան տերությունները վերսկսեցին կրոնագաղափարական ձուլման քաղաքականությունը, ինչն արտահայտվեց լեզվի քաղաքականության մեջ: Հայաստանի պարսկական մասում արգելվեց հունարենը, որը Հայ եկեղեցու, ուսումնակրթական համակարգի, մշակույթի, ներքին և արտաքին հարաբերությունների պաշտոնական լեզուն էր, իսկ հռոմեական մասում՝ ասորերենի ու պարսկերենի գործածումը, որոնք համանման գործառույթներ էին կատարում: Փաստորեն հարևան պետությունները ձգտում էին լեզվական գործոնի միջոցով լուծել կրոնական, գաղափարախոսական և պետական-քաղաքական խնդիրներ, որը սպառնում էր նաև վտանգել հայ ժողովրդի հոգևոր-մշակութային միասնությունը:

Ազգի հոգևոր և աշխարհիկ առաջնորդները, ճիշտ կողմնորոշվելով պատմական և քաղաքական այդ բարդ շրջադարձերում, հանգեցին հանճարեղ եզրակացության. ազգային ինքնապաշտպանության հիմնահարցի լուծման համար անհրաժեշտ է առաջին հերթին խոսակցական հայերենը դարձնել Հայ եկեղեցու պաշտոնական լեզուն: Դա նշանակում էր նաև հայերենին հաղորդել կառավարման, քաղաքական ու մշակութային գործունեության կարգավիճակ: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ազգային գրեր ունենալ: Հայ կյանքի նոր վերածնունդը կապված էր հայ գրերի ստեղծման ազգափրկիչ իրողության հետ:

<sup>2</sup> Միրումյան Ա.Կ., Հայոց գրերի գյուտի քաղաքական համատեքստը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2005, № 3-4, էջ 21:

<sup>3</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն /բնագիրը՝ Բ. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ.՝ Ստ. Մալխասյանի/, Երևան, 1987, էջ 55:

Ազգային գրերի ստեղծումը կոչված էր նաև ամրապնդելու Հայ եկեղեցու և քրիստոնեական վարդապետության դիրքերը երկրում: Երկրորդ՝ յուրատեսակ պատմեչ ստեղծելու Պարսկաստանի և նրա կողմից հովանավորվող Սասանյանների կամակատար ասորալեզու եկեղեցու դեմ: Երրորդ՝ խորացնելու Հայ եկեղեցու ազգային բնույթը, լեզվի հիմքի վրա հունական եկեղեցուց անկախ քաղաքականություն վարելու հնարավորություն ընձեռելով: Հայկական գրերի ստեղծման գաղափարը ոչ թե հասարակական զարգացման «անխուսափելի» ծնունդ էր<sup>4</sup> կամ «IV-V դարերի սոցիալ-տնտեսական, քաղաքական և քաղաքակրթական մեծ տեղաշարժերի» բնական հետևանք, այլ ազգի քաղաքական մտքի փայլուն արտահայտություն:

Այսպիսի խորությամբ էր դրված հարցը, որի բարեհաջող լուծման համար առաջնահերթ արժեք էր ստանում սեփական գրի ու ազգային գրականության ստեղծումը: Համազգային նշանակություն ունեցող այդ մեծ գործի իրականացմանն են նվիրվում ժամանակի հայ նշանավոր այրերը, որոնց շարքում առաջնության դափնին մեծ գիտնական, լուսավորիչ, հանճարեղ մտածող Մեսրոպ Մաշտոցին (361-440թթ.) է պատկանում, ով ստեղծեց հայոց գրերը, թեև միաժամանակ արժանին պետք է մատուցել նաև Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևին (387-439թթ.), իր գործուն մասնակցության և Վռամ-շապուհ արքային (388-414թթ.), իր անմիջական աջակցության համար, քանի որ նրանք զորավիգ եղան Մաշտոցին և ամեն կերպ աջակցեցին հայոց գրերի ստեղծմանն ու լուսավորության տարածմանը:

Հայ գրերի գյուտի մասին հնագույն ու հիմնական աղբյուրը Մաշտոցի աշակերտ Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունն է: Կորյուն վարդապետը ոչ միայն արժանահավատ տեղեկություններ է հաղորդում իր ուսուցչի կյանքի ու մշակութային գործունեության մասին, այլև քաջատեղյակ է հայ գրերի ստեղծման հանգամանքներին:

Մեսրոպ Մաշտոցը փայլուն կրթություն էր ստացել հունալեզու դպրոցում և արդեն երիտասարդ տարիքում դարձել հայոց արքայի քարտուղարը, ապա անցել գինվորական ծառայության: Ընդունելով հոգևոր կոչում՝ մի խումբ աշակերտների ուղեկցությամբ Մաշտոցը կատարել է քարոզական շրջագայություններ: Գողթն գավառում և Հայաստանի տարբեր գավառներում Ավետա-

<sup>4</sup>Հմմտ. **Аревшатян С.С.** Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973, стр. 32.



րանը ուսուցանելու ընթացքում նա լուրջ դժվարությունների առջև է կանգնում, երբ տեսնում է, որ դեռևս պահպանվել են հեթանոսական սովորույթները: Ահա հենց Գորղնում էլ, ինչպես հաղորդում է Կորյուն վարդապետը, միտք է հղանում հայոց այբուբեն ստեղծելու մասին<sup>5</sup>:

Գրերի ստեղծման իր ծրագրի մասին նա հայտնում է Սահակ Պարթևին և Վռամշապուհ արքային: Նրանք պատրաստակամություն են հայտնում աջակցել այս համազգային ծրագրի իրագործմանը: Սկզբում գործածում են Ասորիքից բերված և Դանիել եպիսկոպոսի մոտ պահվող հայերեն տառերը: Բայց որոշ ժամանակ հետո պարզվում է, որ «Դանիելյան նշանագրերը» չեն համապատասխանում հայերենի հնչյունային համակարգին և բավարար չեն հայերենն արտահայտելու, դասավանդելու ու թարգմանություններ կատարելու համար: Մաշտոցը մի խումբ աշակերտների հետ մեկնում է Միջագետք, այցելում ժամանակի քաղաքակիրթ աշխարհի մշակութային և գիտական կենտրոններ (Ամիդ, Եդեսիա, Սամոսատ), խորհրդակցում գիտուն մարդկանց հետ, համառ որոնումներ կատարում, կամ ինչպես նրա կենսագիրն է ասում. «Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ»<sup>6</sup>:

Բազմաթիվ այբուբենների ուսումնասիրության և գրի ու գրչության լավագույն սկզբունքների հաշվառման հիման վրա Մաշտոցը ստեղծագործական դժվարին որոնումների արդյունքում վերջապես հասնում է բաղձալի նպատակին, նրան հաջողվում է մեծ հմտությամբ, ինչպես նաև Աստծուն ապավինելով՝ գլուխ բերել հայոց լեզվի այբուբենի ստեղծման գործը: 405 թվականին Եդեսիայում Մաշտոցը ստեղծեց հարուստ և ինքնատիպ այբուբեն: Այնուհետև ուղևորվեց Սամոսատ, որտեղ գեղագրի՝ Հռովանոսի օգնությամբ հղկեց ու ձևավորեց նոր տառերը: Նորագյուտ այբուբենի կատարելությունն ստուգելու նպատակով Մաշտոցն իր երկու աշակերտների՝ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ միասին սկսեց Աստվածաշնչից թարգմանություններ կատարել: Հայերեն թարգմանված առաջին նախադասությունը Սողոմոնի առակների գրքից էր. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» առաջին խորհրդանշական բառերն են՝ գրված մայրենի լեզվով, հայերեն տառերով<sup>7</sup>:

406 թվականին Մեսրոպ Մաշտոցը նորաստեղծ գրերով վերադառնում է

<sup>5</sup> «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 720:

<sup>6</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1980, էջ 50:

<sup>7</sup> «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 721:

հայրենիք, որտեղ նրան դիմավորում են մեծ շուքով ու հանդիսավորությամբ: Համընդհանուր էր ցնծությունը, հայերն արդեն ունեին իրենց սեփական գիրը:

Գրերի ստեղծումից անմիջապես հետո գլխավորապես ուշադրություն է դարձվում նախ և առաջ գրագիտության տարածմանն ու Հայաստանի բոլոր շրջաններում ազգային դպրոցների բացմանը<sup>8</sup>: Այս գործը կազմակերպվում է վաղորոք կշռադատված ծրագրով, որի էությունը թելադրվում էր ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքի առավել կարևոր հանգամանքներով: Այս առումով խիստ ուշագրավ է, որ կրթական գործի հեռատես և շրջահայաց կազմակերպիչները՝ Ս. Սահակն ու Մաշտոցը, ինչպես հետևում է Կորյունի մի վկայությունից, ուսուցիչներ պատրաստելու, հոգևոր դասին լուսավորելու հետ միասին հենց սկզբից իրենց ուշադրության կենտրոնում են պահել արքունիքի մարդկանց, երկրի ավագանու և կանոնավոր գործի կրթության, լուսավորության և բարոյական դաստիարակության խնդիրը, ըստ երևույթին քաջ գիտակցելով այն կարևոր դերը, որ առաջիկա ազատագրական պայքարում վերապահված էր հասարակության հենց այդ խմբերին:

Դյուրին չէր կրթամշակութային գործի ղեկավարների առջև ծառայած խնդիրը: Անհրաժեշտ էր, ինչպես գրում է Կորյունը, միանգամից երեք գործ անել՝ **թարգմանել, գրել և ուսուցանել**, որոնց իրականացմանը մեծ եռանդով ձեռնամուխ են լինում Սահակն ու Մաշտոցը՝ իրենց մերձավորագույն աշակերտների հետ միասին. «Որոց կանոն և օրինակ գիրեանց անձանց արգասիս եղեալ, և պատուիրեալ կալ ի նմին կանոնի»<sup>9</sup>:

Փաստորեն հայոց այբուբենի ստեղծումն անանց դեր ունեցավ ազգի հոգեմտավոր զարգացման գործում, ամուր հիմք ստեղծեց հոգևոր և մշակութային ինքնության, իսկ դրա միջոցով նաև՝ «ազգային» ու պետական անկախության «պահպանման կամ վերականգնման» նպատակով ծավալած պայքարի համար<sup>10</sup>: Բացի այդ ազգային գրերի գյուտը հուսալի հիմք ստեղծեց՝ ազատվելու հունարենի և ասորերենի «ճնշումից», այդ լեզուների միջոցով համապատասխանաբար նաև տվյալ եկեղեցիների հոգևոր, քաղաքական ու գաղափարախոսական ազդեցությունից:

Հիշյալ ծրագրի կարևորագույն կետերից էր մայրենի լեզվով եկեղեցու ժամասացական գրականության ստեղծումը: Բնականաբար առաջին շրջանում

<sup>8</sup> **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 136:

<sup>9</sup> **Կորյուն**, Վարք Մաշտոցի, էջ 61:

<sup>10</sup> **Аревшатын С.С.** Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), стр. 33-34.

կարող էր խոսք լինել թարգմանական գրականության մասին: Ուստի Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը հունական ու ասորական գիտամշակութային կենտրոններում կրթություն ստացած իրենց աշակերտների հետ ձեռնամուխ եղան քրիստոնեական գրականության հիմնական հուշարձանների, եկեղեցու հայրերի երկերի և առաջին հերթին Աստվածաշնչի թարգմանությանը, որպեսզի «իրենց ազգի դպրությունն ավելի զարգացնեն և հեշտացնեն»<sup>11</sup>: Աստվածաշնչի թարգմանությունը նպաստեց հայոց լեզուն վերածելու «համազգային գրական լեզվի, պաշտոնական ճանաչում հաղորդեց կենդանի խոսակցական լեզվին»<sup>12</sup>:

Վ դարի առաջին կեսին ստեղծված թարգմանական, իսկ հետո նաև ինքնուրույն գրականությունը կոչված էր լուծելու հոգևոր-մշակութային և գաղափարաքաղաքական որոշակի խնդիրներ և հիմնականում ուղղված էր Սասանյան Պարսկաստանի կրոնական և քաղաքական զավթողականության դեմ:

Միաժամանակ Մ. Մաշտոցն ու Ս. Պարթևը գիտակցում էին, որ արտաքին ոսնձգությունների դեմ արդյունավետ պայքարելու համար անհրաժեշտ էր ընդարձակել ազգային-քաղաքական պայքարի ճակատը ու ստեղծել հուսալի թիկունք: Ուստի Մաշտոցը այբուբեն է ստեղծում նաև երկու հարևան ժողովուրդների՝ վրացիների և աղվանների համար: Այս ծրագրի իրագործմանը նպաստում էր այն հանգամանքը, որ այդ երկրների եկեղեցիները սերտորեն կապված էին հայ եկեղեցու հետ և փաստորեն «նույն սպառնալիքի տակ էին»<sup>13</sup>:

Մեսրոպ Մաշտոցին հաջողվում է բանակցել բյուզանդական կայսեր հետ և դպրոցներ բացել նաև Հայաստանի արևմտյան մասում (421-422թթ.): Այս իրողությունը շատ կարևոր դեր ունեցավ, քանզի նախադրյալներ ստեղծվեցին ազգի լեզվական և հոգևոր-մշակութային միասնության ապահովման, լեզվական ինքնավարության, հունական լեզվի ու գրականության ազդեցության, ինչպես նաև հունական եկեղեցու գաղափարաքաղաքական ճնշման թուլացման համար:

Հայոց գրերի ստեղծումով, իսկապես, նոր հորիզոններ բացվեցին ազգային ինքնուրույն մշակույթի հիմքերի ամրապնդման, նրա հետագա վերելքի

<sup>11</sup> **Կորյուն**, Վարք Մաշտոցի, էջ 123:

<sup>12</sup> **Аревшатын С.С.** Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), стр. 35.

<sup>13</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.**, Մեսրոպ Մաշտոցը և Հայ այբուբենի և գրերի գյուտը /**Կորյուն**, Վարք Մաշտոցի, էջ 48/:

համար: Գրագիտության տարածմանը զուգընթաց Հայաստանում ծավալվեց իր ժամանակի համար, իրոք, եզակի չափերի հասնող գրական, մշակութային հզոր շարժում: Հանուն գաղափարի և հոգևոր ինքնության դարի հրամայականը դարձավ հայալեզու գրականության ստեղծումը, որին վիճակված էր դառնալու զորավոր պատվար՝ ընդդեմ օտարի տիրապետության ու միաձուլման քաղաքականության:

Հայոց հին դպրության սկզբնավորումը տեղի ունեցավ ոչ թե աստիճանական վերընթացի, այլ զորեղ թռիչքի ճևուղ: Այն դեպքում, երբ հաշվի ենք առնում երկու հանգամանք: Նախ՝ ինքնուրույն պետականությունից զրկված Հայաստանի քաղաքական ծանր կացությունը, և երկրորդ՝ երբ հիշում ենք, որ տվյալ պայմաններում ազգային դպրության սկզբնավորման փուլը միաժամանակ եղավ այդ դպրության ամենաբարձր աստիճանը՝ հաջորդ մի քանի դարերի համեմատությամբ:

Հայ մատենագրությունը սկզբնավորվեց թարգմանական գրականությանը զուգընթաց: Կարելի է ասել՝ V դարի թարգմանական գրականությունը պատճառ դարձավ հայ ինքնուրույն գրականության առաջացման: Թարգմանական գրականության միջոցով հայ միտքը կապվեց արևմուտքի հետ, ծանոթացավ նրա հարուստ գանձերին, սովորեց գրական տեսակներին բնորոշ գաղտնիքները և այս բոլորով զինված՝ զարկ տվեց ինքնուրույն ստեղծագործությանը:

Հայ գրերի գյուտից հետո սկսվել էր հայ ժողովրդի պատմության նոր շրջանը՝ քրիստոնեականը, իր մշակույթով և գրականությամբ: Ինչպես տեսանք, V դարի հայ գրականությունը զարգացավ երկու ուղղությամբ՝ սկզբում թարգմանական, ապա՝ ազգային: Մաշտոցն անձամբ մասնակցեց թարգմանական թոհուբոհին, և որպես հայոց լեզվով առաջին թարգմանության հեղինակ՝ իրականում նա հանդիսացավ V դարի հայ մատենագրության սկզբնավորողը: Թարգմանություններին զուգընթաց՝ ընդամենը մի քանի տասնամյակի տարբերությամբ միանգամից հրապարակ իջան հայ ինքնուրույն գրականության առաջին նշանավոր հուշարձանները, մասնավորապես պատմագրության դասական ստեղծագործությունները, Կորյունի և Ագաթանգեղոսի, Եղիշեի և Խորենացու, Փավստոսի և Փարպեցու պատմական երկերը, ինչպես նաև Եզնիկ Կողբացու փիլիսոփայական-աստվածաբանական երկը, որոնց միջոցով ազդարարվեց ազգային մեծ գրականության ծնունդը: Սա հայ մատենագրության սկզբնավորման և ձևավորման գործընթացի մի կարևոր առանձնահատկությունն է, քանի որ այս երկերն ունեն նաև գրական-գեղարվեստ

տական արժանիքներ և նպաստել են հայ գեղարվեստական արձակի սկզբնավորմանը<sup>14</sup>:

Հայ գրականության սկզբնավորման շրջանի դասական ստեղծագործությունների գաղափարական բովանդակության հիմնական միտումները, նրանց պատմափիլիսոփայական ու գեղագիտական սկզբունքները թելադրվեցին ժամանակի ազգային հասարակական-քաղաքական ու կրոնական կյանքի յուրատեսակ բարդ հանգամանքներով: Ինքնուրույն ստեղծագործության առաջին գործերը շատ քիչ էին տարբերվում թարգմանական գրականությունից, քանի որ նրանցում իշխող գաղափարները բնույթով կրոնական էին: Այդ պատճառով էլ ինքնուրույն ստեղծագործությունները ոճով նման էին թարգմանական երկերին:

Դեռևս հայ քրիստոնեական եկեղեցին ու նրա միջոցով ստեղծված նոր ըմբռնումներն ամբողջովին չէին հայացել և ազգայնացվել: Ժամանակ ու նաև մեծ աշխատանք էր հարկավոր, որպեսզի V դարի մեր ազգային ինքնուրույն գրականությունը ամենից առաջ դառնար հայ ժողովրդի պահանջների ու ձգտումների հարազատ արտահայտիչ<sup>15</sup>:

Միանգամայն ակնհայտ է V դարի մատենագրության վիթխարի նշանակությունն իր ժամանակի հայ իրականության համար: Բայց նույնչափ անվիճելի է նրա հսկայական ազդեցությունը հետագա դարերի ազգային հոգևոր մշակույթի գրեթե բոլոր բնագավառների վրա՝ ընդհուպ մինչև ուշ միջնադար, քանի որ ըստ էության կանխորոշվեց վաղ և միջին դարերի ազգային պատմագրության, գեղարվեստական զարգացման աստվածաբանական, փիլիսոփայական ու գեղագիտական մտքի հիմնական ընթացքը:

Այս է ահա մաշտոցյան դարի հայ գիր ու գրականության մեծ խորհուրդը: Սակայն, փորձենք դիտարկել հայ մատենագրության սկզբնավորման հետ կապված մի քանի կարևոր հանգամանք ևս:

1. Հայ գրականության բուռն սկզբնավորումը, անշուշտ, հանկարծահաս չէր, այն նախապատրաստվել էր արդեն նախորդ դարերում: Ամենից առաջ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Հայաստանը մինչ այդ մշտական շփումների մեջ է եղել Հին Արևելքի և հատկապես անտիկ ու հելլենիստական մշակութային աշխարհի հետ: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով Հայաստանը ևս ներգրավվեց հելլենիստական ընդ-

<sup>14</sup> Դյուլխանյան Ա., Հայ գրականության պատմություն, Երևան, 2006, էջ 5:

<sup>15</sup> Աճառյան Հ., Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 117-118:

հանուր մշակութային աշխարհի ոլորտը: Ն.Ք. III դարի վերջերին Հայաստանում առկա է եղել մշակութային որոշակի մթնոլորտ: Հելլենիստական մշակույթը, միախառնվելով հայ ազգային ավանդներին, փայլուն արդյունք է տվել հոգևոր մշակույթի տարբեր ոլորտներում: Այս առումով առանձնապես ուշագրավ են թատերական արվեստն ու ճարտարապետությունը: Արտաշատում գործել է թատրոն, որտեղ Պլուտարքոսի վկայությամբ (Ն.Ք. 53թ.) ներկայացվել է Եվրիպիդեսի «Բաքոսուհիները» հույն ողբերգակ Յասոնի մասնակցությամբ: V-VI դարերում հայ գիտության և մշակույթի գործիչները շարունակում էին կրթվել հելլենական մշակույթի հոշակավոր կենտրոններում (Պ. Հայկազն, Դ. Անհաղթ): Փաստորեն հելլենիստական շրջանի ավանդները Հայաստանում իրենց կենսունակությունը պահպանեցին քրիստոնեության տարածման շրջանում ևս ու որոշ առումով նպաստեցին հայ մատենագրության սկզբնավորմանն ու խթանեցին նրա հետագա վերելքը:

2. Հայ գրականության սկզբնավորման գործում կարևոր դեր են կատարել նաև տեղական գրական ավանդները, հայ բանավոր և գրավոր բանահյուսությունը: Հայ ժողովուրդը, մինչև մերոպատառ գրականության հանդես գալը, ունեցել է հարուստ ու գեղեցիկ ժողովրդական բանահյուսություն, հնագույն բանաստեղծություն, թատրոն:

Հայագիտության մեջ բանասերներից շատերն են անդրադարձել նախամաշտոցյան հայ գրերի գոյության փաստին, կարծիքներ են հնչել օտար տառերով (հունարեն կամ ասորերեն), բայց հայոց լեզվով գրավոր գրականություն ունենալու մասին: Դժբախտաբար այդ կարծիքն ապացուցող որևէ գրավոր հատված մեզ չի հասել<sup>16</sup>: Սակայն փաստերը հնարավորություն են տալիս խոսելու Հայաստանում հեթանոսական շրջանի տեղական գրականության մասին՝ անկախ այն բանից, թե այն ինչ գրերով կամ լեզվով է ստեղծվել: Այս առթիվ պահպանվել են ճիշտ է ոչ շատ, բայց հետաքրքիր փաստեր:

Առանձնապես ուշադրության է արժանի Պլուտարքոսի վկայությունն այն մասին, որ հայոց Արտավազդ թագավորը (Ն.Ք. 55-34թթ.) հունական լեզվով հորինել է «ողբերգություններ և գրել ճառեր ու պատմական գործեր, որոնց մի մասը պահպանվել է մինչև II դար»<sup>17</sup>: Խորենացին ևս հաղորդում է հեթանոսական տաճարներում գտնվող մեհենական պատմությունների մասին,

<sup>16</sup> **Հայրապետյան Եր.**, Պատմութիւն հայ մատենագրութեան նախաքրիստոնէական շրջանից մինչեւ Ժ դար, Ա մաս, Թեհրան, 1963, էջ 11:

<sup>17</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1963, էջ 254-255:

որոնցից օգտվել է «Հայոց պատմությունը» գրելիս<sup>18</sup>:

Վերը նշեցինք ժողովրդական բանահյուսության կարևոր դերը հայ հին գրականության սկզբնավորման գործում, ինչպես նաև շեշտեցինք, որ այն առաջին հայ հեղինակների հիմնական սկզբնաղբյուրն էր, իսկ վերջում փաստենք, որ այն միաժամանակ առանձնացել է ժանրային կազմի հարստությամբ (առասպել, վեպ, վիպասանք, ավանդություն, երգ և այլն), քերթողական բարձր արվեստով, պատկերի կառուցման վարպետությամբ, ոճի հղկվածությամբ, գեղարվեստական արտահայտչամիջոցների բազմազանությամբ և ինքնատիպությամբ: Դրանց մասին գաղափար կազմելու համար կարելի է հիշել Խորենացու Հայոց պատմության մեջ գողթան երգերից բառացի պահպանված հատվածը՝ վիշապաքաղ Վահագնի առասպելից, ալանաց թագավորի գեղանի դստեր՝ Սաթենիկի առևանգման պատմությունը՝ նույն պատմիչի գրքում պահպանված Արտաշեսի վեպից<sup>19</sup>:

Քրիստոնեության ընդունման հետևանքով ավելի շատ բանավոր գիտելիքներ ավանդվեցին, քան նյութական, իրեղեն արժեքներ, բայց և այնպես մեր օրերին են հասել վաղեմի հայ հեթանոսական մշակույթի գեղեցկությունն ու վսեմությունը ներկայացնող որոշ պերճախոս վկաներ: Դրանցից են համաշխարհային ճարտարապետության հրաշալի կղզողներից Գառնիի հեթանոսական տաճարը և Անահիտ աստվածուհու բրոնզաձույլ արձանի գլուխը, որը պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում:

Դժվար չէ կռահել այն վիթխարի նշանակությունը, որ բանահյուսական քերթվածներն ունեցել են հայ հին գրականության սկզբնավորման շրջանում ազգային գեղարվեստական ոճի մշակման գործում: Ժամանակի պահանջների թելադրանքով Ս. Սահակն ու Մաշտոցը առաջին հերթին ձեռնարկեցին Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունը «Յոթանասնից» կոչված հունարեն բնագրից: Այդ թարգմանությունը շատ կողմերով անգերազանցելի է համարվել և օտարազգի գիտնականների կողմից արժանացել է «Թարգմանությունների թագուհի» անվանմանը<sup>20</sup>: Բացի այդ այն ամբողջությամբ վկայում է V դարի հայոց լեզվի հարուստ ու ճոխ, ինչպես նաև պարզ ու հստակ լինելու մասին: Մի քանի տասնամյակի ընթացքում հաջորդաբար հունարենից ու սուրբերենից թարգմանվեցին սուրբգրային մեկնություններ, եկեղեցական արարողակար-

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 255:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 257-258:

<sup>20</sup> **Տեր-Մինասյան Ե. Գ.**, Հայ գրականության սկզբնավորությունն ու զարգացումը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1970, № 2, էջ 59:

գին նվիրված գրքեր, վաղ քրիստոնեական նշանավոր հեղինակների և «եկեղեցու հայրերի» (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Նյուսացի, Եփրեմ Ասորի, Հովհան Ոսկեբերան, Կյուրեղ Ալեքսանդրացի, Աթանաս Ալեքսանդրացի, Կյուրեղ Երուսաղեմացի և ուրիշներ) բազմաթիվ գրվածքներ: Եկեղեցական գրքերի այս հրատապ թարգմանությունն անհրաժեշտ էր՝ կրոնական, ծիսական արարողությունները հայոց լեզվով կատարելու համար: Բայց Թարգմանչաց շարժման ներկայացուցիչների հետաքրքրությունները չեն սահմանափակվել միայն կրոնաստվածաբանական գրքերի թարգմանությամբ, այլ ընդգրկել են նաև աշխարհիկ գիտությունների բնագավառը՝ փիլիսոփայություն, քերականություն, գեղագիտություն, պատմություն և այլն: V դարում և VI դարի սկզբում հայ հունական դպրոցի ներկայացուցիչների ջանքերով թարգմանվեցին անտիկ աշխարհի մեծ մտածողների՝ Արիստոտելի, Պորփյուրի ու վաղքրիստոնեական շրջանի հայտնի հեղինակների կարևորագույն գործերը, ինչպես նաև բարձրագույն դպրոցի համար նախատեսված «Գիրք պիտոյիցը» և Ալեքսանդր Մակեդոնացու կենսագրությունը<sup>21</sup>:

Կրոնական և գիտական բնույթի թարգմանությունները, որպես կանոն, մեզ են հասել սահմանափակ ընդօրինակություններով, իսկ գեղարվեստական երկերը պահպանվել են տասնյակ և նույնիսկ հարյուրավոր բնագրերով: Գեղարվեստական երկերի հայերեն թարգմանությունների շարքում իր հնությամբ առանձնանում են հայտնի Խիկար Իմաստունի «Պատմութիւն և խրատքը», ինչպես նաև հույն և ասորի սրբերի վարքերն ու վկայաբանությունները և զանազան այլ երկեր: Մի շարք հայերեն թարգմանությունների կցվեցին նաև հայ հեղինակների ինքնուրույն մեկնություններ:

Հայերեն հնագույն թարգմանությունների համաշխարհային նշանակությունն ընդգծվում է նրանով, որ դրանց մի մասի բնագրերը չեն պահպանվել կամ պահպանվել են ոչ ամբողջական, և հայերեն տեքստերն ունեն բնագրի արժեք: Փաստորեն հունարեն և ասորերեն գրականության մի շարք հուշարձաններ ժամանակակից քաղաքակրթության սեփականությունն են դարձել բացառապես այդ թարգմանությունների շնորհիվ: Հնագույն հայերեն թարգմանություններին բնորոշ են բնագրի բացառիկ **հարազատությունը, անաղարտությունն ու ճշգրտությունը**:

Անզվիացի արևելագետ Ֆրեդերիկ Կոնիբերը, օրինակ՝ բաղդատման

<sup>21</sup> Նալբանդյան Վ.Ս., Ներսիսյան Վ.Ս., Բախչինյան Հ.Գ., Հայ միջնադարյան պատմություն, Երևան, 1986, էջ 16-17:



ճանապարհով հանգել է այն հետևության, որ Արիստոտելի երկերի հայերեն թարգմանություններն ավելի ճիշտ են վերարտադրում հունարեն բնագրերը, քան ուշ շրջանի բյուզանդական ձեռագրերը<sup>22</sup>:

Հայ առաջին թարգմանություններն ընդլայնեցին զարգացման ավելի բարձր աստիճանի հասած ժողովուրդների հոգևոր արժեքներին հաղորդակցվելու հնարավորությունները, նպաստեցին թարգմանական արվեստի կայուն նորմերի մշակմանը, գիտական մտքի ու գեղագիտական ճաշակի զարգացմանը, նոր տերմինների ստեղծմանը, ազգային գրական լեզվի հարստացմանը: Այդ թարգմանական հարուստ գրականությունը կրթեց, դաստիարակեց հայ մտավորականության միտքն ու հոգին, նրբացրեց նրա ըմբռնումներն ու ճաշակը և դարձավ այն մղիչ ուժը, որ դրեց ու զարգացրեց ազգային ինքնուրույն բազմաժանր գրականության հիմքերը: Այդ պատճառով էլ այս արտակարգ հարուստ թարգմանական ու ինքնուրույն գրականությունը կոչվեց V դարի «Ոսկեդարյան գրականություն» ի նշանավորումն հոգևոր աննախադեպ վերելքի: Ամփոփելով կարող ենք փաստել, որ հայ գրերի գյուտի և ազգային մատենագրության ստեղծումն ու նրա թռիչքաձև զարգացումը V դարում որոշակիորեն խարսխվել է մի կողմից՝ անտիկ հելլենիստական մշակութային ավանդների ստեղծագործական յուրացման, թարգմանական գրականության վրա, մյուս կողմից՝ նրա հաստատուն հիմքն է կազմել ազգային տարրը՝ տեղական գրական ավանդներն ու նախորդ դարերի հայ ժողովրդական հարուստ բանահյուսությունը:

Հիրավի, մեսրոպատառ հայ գիր ու գրականությունը դարձան այն լայն ու լուսավոր դարպասը, որով հայ ժողովուրդը հաղորդակցվեց համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին, ճանաչեց իր անցյալը, դարերի միջով առաջ տարավ իր ավանդույթներն ու մշակույթը և ի վերջո հարատևեց՝ սերունդներին թողնելով երկու լուսավոր անուն՝ Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

IV դարի վերջին և V դարի սկզբին Հայաստանը բաժանված էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որի արդյունքում հայ ժողովրդի վիճակը կտրուկ վատացավ: Սասանյանների կողմից փակվեցին հունական դպրոցները: Հայերն իրավունք ունեին գործածելու միայն ասորական լեզուն: Հայ

<sup>22</sup> F. Conybeare, Apology and Acts of Apollonios and other monuments of early Christianity, London, 1894, p. 27.

եկեղեցուն մեկուսացման վտանգ էր սպառնում: Ընդհանուր առմամբ հայկական մշակույթը անկում էր ապրում: Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ գրերի ստեղծումը նպաստեց ազգային ինքնության և մշակույթի պահպանմանը: Մեսրոպ Մաշտոցը Սահակ Պարթևի հետ միասին հսկայական գործունեություն ծավալեց՝ հայերեն թարգմանելով Աստվածաշունչը, եկեղեցական գրականությունը, ինչպես նաև նշանավոր «եկեղեցու հայրերի», հույն փիլիսոփաների բազմաթիվ աշխատանքներ և այլ գրվածքներ: Այսպիսով, ստեղծվեց սկզբում լայնածավալ թարգմանական, իսկ հետո ինքնուրույն հայ ազգային գրականությունը, որը նպաստեց մեր ժողովրդի ազգային և մշակութային ինքնության պահպանմանը:

**Բանալի բաներ** – հայ ազգային մատենագրություն, հայ եկեղեցի, քրիստոնեություն, ազգային գաղափարախոսություն, հայոց այբուբեն, Մեսրոպ Մաշտոց, «Վարք Մաշտոցի», «եկեղեցու հայրեր», թարգմանական գրականություն:

## СОЗДАНИЕ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЫ

НЕЛЛИ ПЕТРОСЯН

В конце IV – начале V вв. Армения была разделена между Персией и Византией, в результате чего положение армянского народа резко ухудшилось. Сасанидами были закрыты греческие школы. Армяне имели право пользоваться лишь сирийским языком. Армянской церкви грозила опасность изоляции. В целом армянская культура переживала кризис. Создание Месропом Маштоцем армянской письменности способствовало сохранению национальной идентичности и культуры. Месроп Маштоц вместе с Сааком Партевом развернули деятельность по переводу на родной язык Библии, церковной литературы, трудов многих известных "отцов церкви", греческих философов и т.д. Таким образом была создана обширная, вначале переводная, а впоследствии и оригинальная армянская национальная литература, содействовавшая сохранению национальной и культурной идентичности нашего народа.

**Ключевые слова** – армянская национальная литература, армянская церковь, христианство, национальное идеология, армянский алфавит, Месроп Маштоц, "Житие Маштоца", "отцы церкви", переводная литература.

---

## THE CREATION OF ARMENIAN NATIONAL LITERATURE

NELLI PETROSYAN

At the end of the IV and beginning of V centuries Armenia was divided between Persia and Byzantium, whereby the condition of the Armenian people had sharply deteriorated. The Sassanids had closed Greek schools. The Armenians had the right to use only the Assyrian language. The Armenian Church was at the verge of isolation. Arminian culture, on the whole was in a serious decline. Mesrop Mashtots invented the Armenian alphabet in 405 AD, which was a great contribution to the maintenance of national and cultural identity and was the start for the Armenian literature. Mesrop Mashtots together with Sahak Partev did a monumental work: translated the Bible, revised and translated the national liturgy. Many works of eminent “Greek Fathers”, Greek philosophers and other scripts also passed into Armenian with their help. A huge literature comprising translated, ecclesiastical and national works was created. This proved to be a powerful factor in preserving the national and cultural sovereignty of Armenia.

**Key words** - Armenian national manuscripts, the Armenian church, christianity, national ideology, the Armenian alphabet, Mesrop Mashtots, The life of Mashtots (Vark Mashtotsi), fathers of the church (yegeghetsou hairer), translated literature.

# ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՀՈՐԻ ԳՐՔԻ ԼՈՒԾՄՈՒՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՈՒՄՅԱՆԻ ՆՈՒՅՆԱՆՈՒՆ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

## ԷԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Միջնադարյան մեծանուն մանկավարժ, աստվածաբան, փիլիսոփա Գրիգոր Տաթևացին իր բազում մեկնությունների հետ մեզ որպես ժառանգություն թողել է նաև Աստվածաշնչի Հոբի գրքի լուծմունքը: Անգնահատելի են նրա դերը և թողած վաստակը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետության ճշմարիտ դավանության ջատագովման, պահպանման և փոխանցման գործում: Եթե անգամ նա մեզ որպես ժառանգություն թողած լիներ հանրագիտարանային «Գիրք Հարցմանց»-ը<sup>1</sup>, ապա կրկին մեծ պիտի լինեին նրա դիրքն ու դերը մեր եկեղեցու և ընդհանրապես հայագիտության մեջ: Գրիգոր Տաթևացու մտքի, մանկավարժական փորձի ազդեցությունների կրողն են եղել առաջին հերթին նրա աշակերտներից Առաքել Սյունեցին, Մատթեոս Ջուղայեցին, որոնք հետևող եղան իրենց ուսուցչի մտքի ընթացքին, ինչն իրենց արտահայտությունը գտավ նրանց երկերում:

ԺԴ-ԺԵ դարերում Հայաստանը ծանր կացության մեջ էր թե՛ քաղաքական, թե՛ մշակութային առումներով: Այն վայրերում, որտեղ աշխարհագրական դիրքն ու տեղական մանր նախարարական իշխանությունները կարողանում էին պահպանել երկիրը թշնամու տևական հարձակումներից, այդ վայրերում մշակութային օջախներն ու դպրոցներն առավել երկար կյանք էին ունենում: Նմանատիպ կրթական օջախներ էին նաև Տաթևի և Մեծոփա վանքերի դպրոցները: Գրիգոր Տաթևացին, լինելով Հովհան Որոտնեցու արժանի հետևորդն ու տաթևյան դպրոցի ավանդների կրողը, իր մեծ վաստակն ունի նաև Մեծոփա վանքի դպրոցի պատմության մեջ, որտեղ էլ գրել է Հոբի գրքի լուծմունքը<sup>2</sup>: Մեզ է հասել լուծմունքի ինքնագիր օրինակը (ՄՄ, ձեռ. 1115): Լուծմունքում երբեմն-երբեմն հանդիպում ենք որոշակի հարցերի լուրջ քննարկման և վերլուծության, իսկ որոշ հարցերի էլ նա անդրադառնում է բավական հակիրճ, երբեմն էլ բավարարվում է՝ նշելով. «Եւ գտցես զայս ի

<sup>1</sup> Գրիգոր Տաթևացու Գիրք Հարցմանցի ինքնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, ձեռ. 3616:

<sup>2</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 1115, թ. 123բ (այսուհետ՝ ՄՄ):

Հարցմանց յերրորդ հատորն, ԺԹ համարին»<sup>3</sup>, կամ «Ի Քարոզն տե՛ս»<sup>4</sup> և այլն: Մեծ փափագով է կազմել իր լուծմունքը, որն ի վերջո Մեծփա վանքում իրագործել է և դասավանդել դպրոցի աշակերտությանը, որոնք մեծ ուշադրությամբ ունկնդրել են իրենց ուսուցչին<sup>5</sup>. «...որ ի վաղուց հետև է փափագեի բոլոր Մեկնութեանս Յոբայ»<sup>6</sup>: Այստեղ հարկ չենք համարում համակողմանի քննարկել Հորի լուծմունքը, այլ նպատակ ունենք միայն անդրադառնալու Տաթևացու լուծմունքի թողած ազդեցությանը Պետրոս արք. Աղամայան-Բերդումյան Նախիջևանցու նույնանուն երկի վրա:

Պետրոս արք. Աղամայան-Բերդումյանի կյանքի և գործունեության, մատենագրական վաստակի մասին բավական սուղ տեղեկություններ են հասել մեզ, որոնք մեր մատենագրության մեջ փորձել են ամբողջացնել տարբեր հեղինակներ: ԺԸ դարի մեծավաստակ այս հայ եկեղեցականի գրչին պատկանող երկերի զգալի մասը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում<sup>7</sup>: Նրա ապրած պատմական ժամանակաշրջանի մասին է նշում Լեոն. «Յաուրս Սիմէօնի, Աթոռն Էջմիածնի թէւ ընդ իշխանութեամբ բարբարոսացն Պարսից՝ այլ կայր ըստ մարթելոյ ժամանակին ի բարեկարգութեան, եւ ոչ սակաւ ծաղկէին ի նմա արք իմաստունք եւ արդիմաւորք, յորս անուանիք են՝ Սահակ եպիսկոպոս Ահագին, Մինաս եպիսկոպոս Կոյր, Պետրոս եպիսկոպոս Աղամայեան կամ Փերթումեան՝ մատենագիր բազմահմուտ եւ այլք»<sup>8</sup>:

Պետրոս արք. Բերդումյան նշանավոր եկեղեցական գործչի՝ մեզ ի ժառանգություն թողած հսկայածավալ մատենագրական վաստակի մաս է կազմում Հորի մեկնությունը, որի ինքնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (ծեռ. 1174), և, ինչպես հայտնի է դառնում հիշատա-

<sup>3</sup> ՄՄ, ձեռ. 1115, թ. 10բ:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 12ա:

<sup>5</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 1203, թ. 14բ-ի մանրանկարը, որը գրվել և ծաղկվել է 1449թ.: Դատելով մանրանկարից՝ կարող ենք ասել, որ միջնադարում ևս կիրառվել են դասն անցկացնելու այլընտրանքային մեթոդներ, որոնք կիրառվել են և՛ անտիկ շրջանում, և՛, ինչպես գիտենք, կիրառելի են նաև այսօր: Ձեռագիրը ժողովածու է, որտեղ մեծ մասամբ տեղ են գտել Գրիգոր Տաթևացու լուծմունք-մեկնությունները: Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, Մաշտոցի անվան Մատենադարան, հտ. Դ, կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, Երեւան, 2008, էջ 623-628:

<sup>6</sup> ՄՄ, ձեռ. 1115, թ. 123բ:

<sup>7</sup> Մատենադարանում ավելի քան 160, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանում՝ 47, Վիեննայում՝ 9 ձեռագրեր:

<sup>8</sup> Լեոն, Հայոց պատմություն, հտ. Գ, Երևան, 1973, էջ 463:

կարանից, հեղինակն այն ավարտին է հասցրել 1776 թ.º: Գրվածքն ընթերցելիս կարող ես նկատել, թե որքան մանրագնին քննարկմամբ է լուծել իր առջև դրված խնդիրը, և, անշուշտ, նաև եզրակացնել, թե որքան խորությամբ է նա մոտեցել հարցերին, համակողմանի և ամբողջական ներկայացրել մեկնությունը: Ամենայն մանրամասնությամբ է մեկնել աստվածաշնչյան այս գիրքը: Ձեռագիրը բաժանումներ չունի, սակայն ընթերցելով մեկնությունը՝ նկատելի է, որ գրվածքը Աստվածաշնչի Հոբի գրքի գլխաբաժանումներն ունի, քանզի բոլոր գլուխներն ընդգրկված են: Բերդումյանն անդադարձ է կատարել գրեթե բոլոր համարներին՝ բաց թողնելով միայն իրար նման տողերը՝ կրկնաբանություններից խուսափելու համար: Հսկայածավալ այս երկը համեմված է աստվածաշնչյան մեջբերումներով և նորկտակարանյան տեքստի հետ զուգահեռներով՝ համեմատական գծեր անցկացնելով Հոբի և Հիսուս Քրիստոսի միջև, օրինակ. «Դարձեալ՝ սրբութեամբ և կատարելութեամբ, զի որպէս ի խորհուրդս Քրիստոսի ոչ գտաւ թիրութիւն և ոչ բերանն՝ նենգութիւն, այսպէս և ոչ ի սմա, ուստի բերանով մարգարէին Քրիստոս ինքեան նմանեցուցանէ զՅօբ, յասելն. «Ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ» (Սաղմ. ԼԹ 8)»<sup>10</sup>:

Պետրոս Բերդումյանը Տաթևացու նման Հոբին համարում է Եսայի սերնդից, և նրա երկիրը՝ Օսիդը, որը Եդոմ երկրի գավառներից է. «Օսիտ, որ թարգմանի խորհուրդ, է գաւառ յերկրին Եդօմայ, յանապատին Փառանու, ուստի էր մեծ նահապետն Յօբ»<sup>11</sup>: Այս հարցում կարծես տարակարծություն չկա Տաթևացու և Բերդումյանի միջև. «Այլ աշխարհն Օսիդ՝ գաւառ է Եսաւայ, զի Օսիդն մի է յորդոցն Եսաւայ, յորոյ անուն կոչեցաւ երկիրն Օսիդ: Եւ է ի մէջ Արաբիոյ և Եդոմայ»<sup>12</sup>: Սակայն տարբեր են Հոբ անվան բացատրությունները.

|  |   |
|--|---|
| Տաթևացի<br>Կոչեցաւ Յօբ, որ է հայր, զի հայր եղև<br>համբերութեան <sup>13</sup> : | Բերդումյան<br>Յօբ թարգմանի ցաւող և նշանակ<br>էր զապագայ ցաւան: (6ա) <sup>14</sup> |
|--|---|

<sup>9</sup> ՄՄ, ձեռ. 1174, թ. 89բ:

<sup>10</sup> ՄՄ, ձեռ. 1174, թ. 6ա:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Գիրք Հարցմանց երիցս երանեալ սրբոյ իօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն (այսուհետ՝ Գիրք Հարցմանց), Երուսաղէմ, 1993, էջ 327:

<sup>13</sup> Գիրք Հարցմանց, էջ 320:

Հետաքրքիր է այն փաստը, որ թե՛ Տաթևացին և թե՛ Բերդումյանը «Հոբ» անունը կապում են «Հոբաբ» անվան հետ: Բերդումյանը Հոբ ԽԲ գլխի 17 համարի մեկնության մեջ մեջբերում է Ծննդոց գրքի հետևյալ գրվածքը. «և մեռաւ Բաղակ և թագաւորեաց Յօբաբ՝ որդի Ջարեհի» (ԼՁ 33)<sup>15</sup>: Իսկ Տաթևացին հղում չի անում Ծննդոց գրքին, այլ ուղղակի կազմում է «ծննդաբանությունը». «Այսպէս. Աբրահամ, Իսահակ, Եսաւ, Ռազուէլ, Ջարեհ, Յոբ»<sup>16</sup>: Կարելի է եզրակացնել, որ խոսքը նույն մարդու մասին է, քանզի երկուսի բերած վկայություններն էլ ծննդաբանությամբ հանգում են միևնույն մարդու ապրած ժամանակաշրջանին: Եվ այս ծննդաբանությունից ուղղակիորեն կարելի է եզրակացնել, որ Հոբն ապրել է նահապետական շրջանում: Այս կարծիքի հաստատման համար փաստարկները բավականին լուրջ են, այստեղ կնշենք մի քանիսը: Նախ այն, որ Հոբի գրքում որևէ հիշատակություն չկա Մովսիսական Օրենքի մասին, երկրորդ՝ Հոբը զոհ մատուցեց իր զավակների մեղքերի համար, ինչն անում էին նահապետական շրջանում, դրանից հետո մաքրագործման զոհ կարող էին մատուցել միայն ղևտացի քահանաները, երրորդ՝ Հոբն ապրեց մոտավորապես 240 տարի, որը մոտ էր նահապետական շրջանում ապրողների տարիքին և այլն:

|  |   |
|--|---|
| <p>Տաթևացի<br/>Եւ նախ կոչիւր Յոբաբ, որ է «սիրելի Աստուծոյ» և կոչեցաւ Յոբ...<sup>17</sup></p> | <p>Բերդումյան<br/>...և թագաւորեաց Յօբաբ՝ որդի Ջարեհի (Ծննդ. ԼՁ 33), խօսի զՅօբայ, որ Յոբաբ ևս կոչիւր: (6ա)</p> |
|--|---|

Միևնույն մտքի մեկնության մեջ կան և՛ նմանություններ, և՛ տարբերություններ. Բերդումյանն առավել պարզ և հստակ բացատրություն ունի, իր գրեթե բոլոր խոսքերը հիմնավորելու համար նա բերում է աստվածաշնչյան համարներ, իսկ Տաթևացին առավել երկարաշունչ բացատրություններ է տալիս, նա անդրադառնում է նաև գրքի նախորդող համարներին, որոնք նախորդ համարների մեկնության մեջ բացակայում էին, դա անում է տվյալ համարի

<sup>14</sup> Համեմատական տախտակների՝ Պետրոս Բերդումյանի՝ Հոբի մեկնության երկից մեջբերումները կատարվում են ՄՄ, 1174 ինքնագրից, որի թվահամարն այսուհետ չի նշվելու:

<sup>15</sup> ՄՄ, ձեռ. 1174, թ. 89բ:

<sup>16</sup> Գիրք Հարցմանց, էջ 320:

<sup>17</sup> Նույն տեղում:

հետ կապ ստեղծելու նպատակով (օրինակ՝ Հոբ Ե 19 համարի մեկնությունը): Հետաքրքիր են նաև նրանց երկուսի՝ միևնույն հարցերի մասին տարբեր մոտեցումները.

|   |  |
|---|--|
| <p><b>Տաթևացի</b><br/>         Վեցից վշտաց փրկեսցէ գքեզ և եօթներորդումն ոչ մերծեսցի առ քեզ չար: ...Նախ՝ զի եօթն հասակ (ընդգծումը մերն է -Ս. Է.) է ամենայն մարդոյ, որ է՝ տղա, մանուկ, պատանեակ, երիտասարդ, հասակ, ակոր, ծեր...Եւ յիրաքանչիւր հասակի վիշտ և մեղանչում գոյ մեզ, յորժամ ի վեց հասակէն փրկէ զմեզ, ի <i>յեօթներորդումն ոչ հասանի առ մեզ չար</i> (ընդգծումը մերն է -Ս.Է.): (22ա)</p> | <p><b>Բերդումյան</b><br/>         Նախ՝ վեցն կատարեալ թիւ գոլով նշանակէ զբովանդակ կեանք մարդոյն, որ նպատակ գոլով փորձութեան..., երկրորդ՝ <i>վեց են հասակ</i> (տարբերություն, ընդգծումը մերն է -Ս. Է.) մարդոյ, նախ՝ յղութենէն մինչև ցծնունդ, ...երկրորդ՝ մանկութիւնն, ...երրորդ՝ պատանեկութիւնն, ...չորրորդ՝ երիտասարդութիւնն, ...հինգերորդ՝ ծերութիւնն, ...վեցերորդ՝ զանամութիւն, ...իսկ <i>եօթներորդն է ապահովութիւն արքայութեան, յորում ոչ մերծենայ ումք չար</i> (նմանություն, ընդգծումը մերն է -Ս.Է.): (14բ)</p> |
|---|--|

Տաթևացին իրեն բնորոշ ոճով, նաև գործածած ժանրի՝ լուծմունքի բնույթից ելնելով, բացատրություններում հնարավորինս հակիրճ է մեկնում բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը, որոնք կարելի է որակել նաև որպես ուղղակի նշումներ, որ բանավոր խոսքում առավել հարստացրել և բացատրել է իր ունկնդրին: Եվ թվում է, թե նրա ժամանակաշրջանի ունկնդիրը ծանոթ է եղել մեկնություններին, որի համար էլ նա ուղղակի իր խոսքը կարճել է, այսինքն՝ ենթադրվում է, որ անգամ իր սեղմ գրածը կարդացողը պիտի հասկանար, մինչդեռ նման օրինակներում Բերդումյանն արդեն ԺԸ դարում շատ պարզ և հասկանալի է բացատրում.

|   |  |
|---|--|
| <p><b>Տաթևացի</b><br/>         Բն. Հոտ առիծոյ: Լծ. Ամենայն շաղկակեր գազանի բերան հոտեալ է: Այլեւ ասեն, թէ ի գրութն առիծու հոտ կայ և իջանէ ի բերան նորա:</p> | <p><b>Բերդումյան</b><br/>         Քանզի շարաւ խոցուածոյ բերանոյս, որք իբրև զկերակուր և զըմպելի հոսեն գնան դէպ ի ստամոքսս, նա ի ներքուստ ոչ ընդունելով, դարձու-</p> |
|---|--|



|   |   |
|---|---|
| (32բ)   | ցանէ ան//դրէն, որով ստիպիմ բանալ զբերանս և արտաքսել՝ չժուժկալելով չար հ/ո/տոյն:... Առիժն և այլ գագանք ունելով զատամունս իւրեանց բաց և տարակաց ի միմեանց և ոչ խիտ իբրև զմարդոյ, զշաղկացն, զոր ուտեն, մնան կտորք ի միջոցս ատամանց և նեխին, և այնու զչար հոտս արձակեն: (15բ-16ա) |
| Տաթևացի<br>Տեսէք, զի անցաւորք են գանձք, և ոյք հուսան ի մեծութիւն: (32բ) | Բերդումյան<br>Միտք բանին է, թէ զայս ասելով ոչ յուսահատիմ և ոչ զարմանամ ընդ տնանկութիւնս իմ, զի այս է թէութիւն անցաւորաց, զի ոչ միայն արք թագաւորք և մասնաւոր անձինք անկան և տնանկացան, այլև գաւառք գլխովին և քաղաքք: (16բ)  |

Դատելով բերված օրինակներից և ոչ մեջբերվող բազում ուղղակի և անուղղակի նմանություններից՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ Բերդումյանն իր մեկնությունը գրել է առավել լայն հասարակության համար, քան Գրիգոր Տաթևացին: Անգամ կարելի է ենթադրել, որ Տաթևացու երկի շատ պարբերությունների համար մի տեսակ «բանալի» է Բերդումյանի երկը՝ Տաթևացուն հասկանալու համար: Բերդումյանի ոճն առավել պարզ է, հստակ, չի թաքցնում բառի իմաստը, այլ ընթերցողին հասկանալի լինելու համար համակողմանի բացատրում է, խոսքը հիմնավորում հինկտակարանյան և նորկտակարանյան մեջբերումներով: Վերջինս առավել ընդգծված է, քանզի փորձել է խորհրդաբանորեն Հռթի հետ կատարվածը կապել Քրիստոսի երկրային կյանքի դրվագների հետ:

Ե՛վ Տաթևացին, և՛ Բերդումյանն իրենց երկերում օգտագործել են մեկնողական՝ բառացի և այլաբանական մեթոդները: Բերդումյանն իր երկում նաև նշում է *նկարագրական* եզրը, որը համարժեք է *բառացի* եզրին, ինչպես օրինակ՝ *Ըստ նկարագրին խոնաութիւն անուղղակի պատճառի յարեգա-*

կանէ... Այլաբանօրէն արեգակն կոչէ զԱստուած<sup>18</sup>: Երբեմն էլ որպէս մեկնողական եղանակ օգտագործում է բարոյականապէս<sup>19</sup> բառը, որն անհատին ու հասարակությանը վերաբերող բարոյախրատական հորդոր է՝ միտված քրիստոնեական վարքուբարք, ճիշտ կենցաղավարություն սովորեցնելուն:

Ի տարբերություն Տաթևացու, որն իր լուծմունքում հերթականությամբ չի անդրադարձել Աստվածաշնչի Հոբի գրքի բոլոր համարներին, Բերդումյանը ճշգրիտ և համակարգված մոտեցում է ցուցաբերում իր մեկնության մեջ՝ հետևելով Աստվածաշնչի Հոբի գրքի համարների հերթականությանը: Շատ հաճախ Տաթևացին ընդհատում է աստվածաշնչյան համարների մեկնությունը և երկարաշունչ ճառերով պատմում դավանաբանական որևէ հարցի մասին՝ վերնագրելով այն (օրինակ՝ Վասն դատաստանի Աստուծոյ<sup>20</sup> կամ Խորհուրդ տնօրինութեան<sup>21</sup>): Բերդումյանը, ընդհակառակը, իր մեկնողական խոսքերը չի ընդհատում՝ հերթականությունը չխախտելու համար, ուղղակի կարողանում է հընթացս խոսել այդ հարցերի շուրջ:

Ինչպէս Տաթևացին, Բերդումյանը ևս սիրում է մեկնվող համարներում բերել փիլիսոփայական բացատրություններ, շատ հաճախ նա շեշտում է, թե որ փիլիսոփայից է անում մեջբերումը: Երկում մեջբերվում են Պլատոնի<sup>22</sup>, Արիստոտելի<sup>23</sup>, Դավիթ Անհաղթի<sup>24</sup>, Թալեսի<sup>25</sup>, Պլուտարքոսի<sup>26</sup> խոսքերից:

Այսպիսով, անկարելի է չնկատել այն մեծ ազդեցությունը, որ Տաթևացին թողել է իրեն հաջորդող սերունդների վրա, ինչը փորձեցինք ցույց տալ Պետրոս Բերդումյան-Աղամալյան պատրիարքի՝ Հոբի գրքի մեկնության օրինակով: Նրա մեջբերումներն անուղղակի կրկնում են նույն միտքը, ավելի պարզ ու մատչելի դարձնում բացատրությունները՝ իր ժամանակաշրջանի ունկնդրին հասու լինելու համար: Երկուսն էլ մեկնության մեջ օգտագործում են նույն մեթոդները:

<sup>18</sup> ՄՄ, ձեռ. 1174, թ. 20ա:

<sup>19</sup> Նույն տեղում, թ. 21ա:

<sup>20</sup> ՄՄ, ձեռ. 1115, թ. 100բ:

<sup>21</sup> Նույն տեղում, թ. 116բ:

<sup>22</sup> ՄՄ, ձեռ. 1174, թ. 54բ, 55ա:

<sup>23</sup> Նույն տեղում, թ. 25բ, 27բ, 54բ, 80բ:

<sup>24</sup> Նույն տեղում, թ. 67աբ, 76ա:

<sup>25</sup> Նույն տեղում, թ. 89ա:

<sup>26</sup> Նույն տեղում, թ. 57ա:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձել ենք ԺԴ-ԺԵ դարերի մեծավաստակ եկեղեցական, մատենագիր, աստվածաբան, փիլիսոփա Գրիգոր Տաթևացու Հորի գրքի լուծմունքին, նրա թողած ազդեցությանը հետագա դարերի վրա, հատկապես քննության է առնվել ԺԸ դարի եկեղեցական Պետրոս արք. Բերդումյան-Աղամայան Նախիջևանցու նույնանուն երկի վրա, որի ինքնագիրը հասել է մեզ (ՄՄ, ձեռ. 1174): Օրինակներով ցույց է տրվել Բերդումյանի՝ Տաթևացուց կրած ազդեցություններին, որոնք նա մեջբերել է անուղղակի կամ երբեմն նաև մտքի այլ շարադրման ձևով, վեր են հանվել Բերդումյանի երկի առանձնահատկությունները, ընդգծվել է նրա մտքի ինքնուրույնությունը:

**Բանալի բաներ** – լուծմունք, մեկնություն, Հորի գիրք, Գրիգոր Տաթևացի, Պետրոս Բերդումյան, մեկնողական մեթոդ, Օսիդ (Հուսա, Ուզ), ձեռագիր:

## ВЛИЯНИЕ ТОЛКОВАНИЯ КНИГИ ИОВА ГРИГОРА ТАТЕВАЦИ НА ИДЕНТИЧНУЮ ТРАКТОВКУ ПЕТРОСА БЕРДУМЯНА

ЭЛЯ САРИБЕКЯН

В данной статье мы обратились к анализу книги Иова великого церковника, летописца, богослова, философа, писателя, педагога XIV-XV вв. Григора Татеваци, который оставил большой отпечаток на последующие века, особенно сосредоточились на обсуждении идентичного произведения церковника XVIII в. Петроса арх. Бердумяна-Агамаляна Нахиджеванци, автограф которого дошел до нас (ММ, рук. 1174). По примерам мы рассматривали то влияние Татеваци, которое цитирует Бердумян, по иным изложениям мысли выявляли особенности произведения Бердумяна и подчеркнули индивидуальность его мысли.

**Ключевые слова** – толкование, книга Иова, Григор Татеваци, Петрос Бердумян, метод толкования, Уц, рукопись.

**THE INFLUENCE OF 'INTERPRETATION OF THE BOOK OF JOB' BY GRIGOR TATEVATSI ON PETROS BERDUMYAN'S 'COMMENTARY ON THE BOOK OF JOB'**

ELYA SARIBEKYAN

This article is devoted to the study of 'Interpretation of the Book of Job' by Grigor Tatevatsi, a 14th-15th century Armenian theologian, philosopher and scribe. The influence of this work on Armenian literature in subsequent centuries is considerable, and to show this Saribekyan compares and draws parallels between 'Interpretation of the Book of Job' by Grigor Tatevatsi and a work bearing the similar title, 'Commentary on the Book of Job' (the 1174th manuscript in Matenadaran), by bishop Petros Berdumyan, an 18th century Armenian author.

Saribekyan demonstrates Tatevatsi's influence on Berdumyan's work via examples. However, the author of the article, referring to the analysis and thesis presented in Berdumyan's 'Commentary on the Book of Job', and comparing them with those of Tatevatsi's, thinks that they are simpler, more comprehensible and that they underline the uniqueness of Berdumyan's thoughts.

**Key words** - solution, commentary, book of Job, Grigor Tatevatsi, Petros Berdumyan, method the commentary, manuscript.

## «ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԸ»<sup>1</sup>

### ՈԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Սկսենք Անանիա Շիրակացու տոմարական-տոնացույցային ժողովածուի կառուցվածքի ու բովանդակության քննությունը, ինչպես և նրա արժևորումը: Անանիա Շիրակացու Շ-եակ-Քննիկոնի վերականգնումը հիմնված է իր տեղեկությունների, ինչպես և հետագայում իրենից օգտված հեղինակների ու ընդօրինակված ձեռագրերի, հատկապես տոմարական ժողովածուների վկայությունների վրա:

Անանիա Շիրակացին տոմարական ժողովածուն սկսել է «Ժամանակական կանոնով», այսինքն՝ Ժամանակագրությունով<sup>2</sup>, որի մասին հայտնում է իր Զատկի մեկնության մեջ, այն է՝ «որպես եւ ի ժամանակա[կա]ն կանոնին նախապատում հանդիսին մերոյ ճառեցաք»<sup>3</sup>:

«Ժամանակական կանոն» սկսել է «Այսպէս ի սկզբանէ արարածոց...» նախադասությամբ և ավարտել «Կայսերք հոռովմոց» ենթավերնագիրը կրող հատվածով, որոնք գտնվել են Դավիթ քահանայի ընդօրինակության հետևյալ հատվածներում՝

1. «Ի սկզբանէ արարածոց.... » սկսվածքով (էջ 3 ա),
2. «Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր եւ արն այն միաշաբաթ էր» նախադասությամբ (էջ 3 բ - 4 ա),
3. «Արդ սհա է պարունակք հարկատր շրջագայք...» սկսվածքով (էջ 4 բ - 5 բ),
4. «Անանիա համարողի վասն ընթացից արեգական ըստ ԺԲ կենդանատեսակացն եւ է զաւտեացն, զոր կատարէ ի տու(ը)նջե(ա)ն յաւուրս ՅԿԵ եւ ի ժամս Գ» ենթավերնագրով (էջ 5 բ - 7 ա),

---

<sup>1</sup> Սույն հոդվածը հրատարակվում է 13-6D381 ծածկագրով՝ «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակում:

<sup>2</sup> Տե՛ս **Վարդանյան Ռ., Սարգսյան Լ., Սիմոնյան Գ.**, «Ժամանակական կանոնի»՝ Արարչության թվականության համակարգերի և Ա. Շիրակացու հաշվման սկզբունքների փոխառնչությունները, աստվածաբանության ֆակուլտետ, «Տարեգիրք», հ. 2, Երևան, 2011, էջ 21-47:

<sup>3</sup> Ձեռ. թիվ 2679, էջ 3 ա-71 բ, տե՛ս նաև **Աբրահամյան Ա.**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1979, էջ 294, **Մաթևոսյան Ա.**, Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահայի, Նմանատպություն, Երևան, 1995, էջ 76 և այլն:

5. «Նորին Անանիայի» ենթավերնագրով (էջ 29 ա)<sup>4</sup>,
6. «Մովսէս Խորենացոյ եւ Անդրէասի» ենթավերնագրով (էջ 29 ա – 30 բ),
7. «Անդրէասի» ենթավերնագրով (էջ 30 բ – 41 ա),
8. «Պարսից թագաւորք» ենթավերնագրով (էջ 41 ա-42 ա),
9. «Իշխանք եբրայեցոց» ենթավերնագրով (էջ 42 ա-44 բ),
10. «Առաջին մենիշխանութեանն Հռովմայեցոց» ենթավերնագրով (44 բ – 47 ա),
11. «Թագաւորք Պարսից Սասանականք» ենթավերնագրով (էջ 47 ա),
12. «Եւսեբ ժամանակագրի» ենթավերնագրով (էջ 47 բ),
13. «Եպիփանոս» ենթավերնագրով (էջ 47 բ - 49 ա),
14. «Պարսից թագաւորք» ենթավերնագրով (էջ 49 ա-49 բ),
15. «Կայսերք հռոմովոց թե որչափ ամք կալան կամ ամիսք եւ զինչ գործք[ք] գործեցան» ենթավերնագրով (էջ 49 բ - 71 բ):

«Ժամանակական կանոնի» սկզբնամասերում են եղել 1-5 հատվածները, որոնք հիմնավորվում են բնագրի տվյալներով: Բերենք Արարչության մասին առկա վկայությունը. այսպես, «Ի սկզբանէ արարածոց զլուսաւորոյ յաւոր չորրորդի, ունելով ամանն լուսոյ ԺԳ արեայ զաճամնն լրութիւն եւ ի հինգ-շաբթոջն լցաւ ԺԴ-ն, եւ այս յայտնի է յամենայն յեղանակս շրջա(գ)այութեանց ՇԼԲ ամաց եւ ի Քրիստոսի իսկ չարչարանաց: Վասն զի շրջա(գ)այութիւն եւ արեգական եւ լուսնի եւ ի նոյն դարձումն ամաց եւ ամսոց եւ աւորց շաբթոսի հետ ՇԼԲ ամաց լինի: Վասն զի լուսին ԺԹ ամաւք վարի, իսկ արեգակն՝ ԻԸ ամաւք, եւ սոքա երկոքին ընդ միմեանս բազմաւորելով զՇԼԲ ամս բաւանդակեն եւ ապա դառնան անդրէն ի նոյն գնացս ընթացից միաբանութեան: Արդ լուսին յաւորն չորրորդի յորժամ եղեւ ԺԳ աւորս ունելով, ոչ գոլով յառաջ քան լինել աշխարհի աւորց, բայց միայն չորքն, որ յառաջ քան զլինել լուսաւորացն էին: Արդ համարելով զչորսն յերեք [ի]արիւր Խ են Թ եւ պիտի, որ է առաջին ամին արարածոց աշխարհի աւորս ՅԽԵ ըստ լուսնի, որ պիտի ԺԲ ամսոցն լրումն ՅԾԴ-ն աւորս այդ Թ եւս ար: Իսկ արեգակն կատարեաց զՅԿԵ արն եւ յերկիս ժամսն, որ ունի աւել քան զլուսին աւորս առաջնոյ ամին,

<sup>4</sup> 5-րդ հատվածը ենթավերնագրված է «Նորին Անանիայի»: Այն Փիլոն Եբրայեցու «Այլաբանության»՝ մտքի արթնության մասին հատվածն է, որ Բ. Սարգսյանը համարում է Անանիա Շիրակացու թարգմանությունը:

քան զԿԻՍԵ-ն Թ ար ատիլ, որ լինի յարակա երկրորդ ամի ի բոլորակա եւ ապա կարգաւ մինչեւ ցվախճան ինն ու տասներեկ(ին).....»<sup>5</sup>:

Վերականգնենք Արարչության 1-ին 19-ամյակի լրման և վերադիրների պատկերը:

| Թիվ | Լուսնի լրման օրը հռոմեական և եբրայական տոմարներով | Վերադիր |
|-----|---|---------|
| 1   | Ապրիլի 4 (նիսան 14)                               | 9       |
| 2   | Մարտի 24 (նիսան 3)                                | 20      |
| 3   | Ապրիլի 12 (նիսան 22)                              | 1       |
| 4   | Ապրիլի 1 (նիսան 11)                               | 12      |
| 5   | Մարտի 21 (ատելեաց 5)                              | 23      |
| 6   | Ապրիլի 9 (նիսան 19)                               | 4       |
| 7   | Մարտի 29 (նիսան 8)                                | 15      |
| 8   | Ապրիլի 17 (նիսան 27)                              | 26      |
| 9   | Ապրիլի 6 (նիսան 16)                               | 7       |
| 10  | Մարտի 25 (նիսան 4)                                | 19      |
| 11  | Ապրիլի 13 (նիսան 23)                              | 30      |
| 12  | Ապրիլի 2 (նիսան 12)                               | 11      |
| 13  | Մարտի 22 (նիսան 1)                                | 22      |
| 14  | Ապրիլի 10 (նիսան 20)                              | 3       |
| 15  | Մարտի 30 (նիսան 9)                                | 14      |
| 16  | Ապրիլի 18 (նիսան 28)                              | 25      |
| 17  | Ապրիլի 7 (նիսան 17)                               | 6       |
| 18  | Մարտի 27 (նիսան 6)                                | 17      |
| 19  | Ապրիլի 15 (նիսան 25)                              | 28      |

Այսպիսի շարք ունի Ա. Շիրակացու կազմած 19-ամյակը՝ հայոց լրման օրերը գտնելու կանոններով և Շ-եակի հռոմեացոց շարքը՝ ապրիլի 4-ից և վերադիրն 9-ով սկսվող 19-ամյակով:

Ինչպես կտեսնենք, Արարչության թվականության համակարգերը հաշվել են նաև ապրիլի 2-ի և ապրիլի 13-ի լրման՝ 1-ին տարիներով, ու դրանցով տրվել են կոնկրետ թվեր և կատարվել հաշվարկներ:

Այսպիսով, Ա. Շիրակացու օգտագործած՝ Արարչության թվականության

<sup>5</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 310-311:

համակարգերի առաջին տարին համարժեք է նրա կիրառած 19-ամյակի 1-ին տարուն, որը ապրիլի 4-ի լրման տարին էր՝ վերադիրը 9: Հետևապես, Ելքի, Հետոլի՝ Հորդանանն անցնելու, Եզրասի՝ Չատկի և Քրիստոսի Խաչելության տարիներն արտահայտված են թվականության համակարգերում տրված թվականները բաժանելով 19-ի, որոնց մնացորդներում պետք է ունենանք 1: Դրանով իսկ, ինչպես տվյալ դեպքում՝ Արարչության կամ Ադամի 1-ին տարվա կտրվածքով կհիմնավորվի, որ «Ժամանակական կանոնը» Ա. Շիրակացունն է<sup>6</sup>:

Ալեհայտ է, որ Անանիա Շիրակացին Արարչության թվականության համակարգերի հաշվարկն սկսել է արարչության (Ադամի) 1-ին տարուց՝ օգտագործելով Շ-եակն ու նրա բաղադրամասերը (Լուսնի լրման 19-ամյակը և անշարժ տոմարների շարքի թվական 28-ամյա (4x7) պարբերաշրջանը կամ Արևի փոքր շրջանը):

Ներկայացնենք հաջորդ փաստարկը, այն է. «Եւ եթէ կամիցիս զաւորս լուսնի գիտել: Կա՛լ [զ]լաւորս ամսոյն եւ զվերադիր տարոյն եւ զկէսսն (ուղղել՝ զկէսակսն, զկրկնակսն) ի նաւասարդէ»<sup>7</sup>:

Վերոբերյալ կանոնը պահպանվել է Սամվել Անեցու ժողովածուում, իսկ Նավասարդի կրկնակի մասին՝ Ստեփանոս Մեծրկա որդու ժողովածուում: Վկայենք դրանք. 1. «Աւոր լուսնի այս[պէ՛ս արա]. կա՛լ զաւորս ամսոյն, զվերադիրն տարոյն եւ զկէսսն (ուղղել՝ կիսակն = կրկնակն) ի նաւասարդէ եւ երթ Լ (30), Լ (30), որ մնայ՝ աւուրք լուսնի է»<sup>8</sup>:

2. «Արդ, վասն զի նախ ասէ նաւասարդի չկայ, եթէ զինչ է, որ չկայ. վասն զի արարչութեան աւուրքն յառաջ քան զլինելութիւն մարդոյն էին, որ են Ե (5) ար եւ կողին աւել աւուրք: Այն նաւասարդի ամսոյ կրկին է»<sup>9</sup>: Սա Արարչության տարում վերաբերում է կիսակի կանոնին ևս: Ուղղելով «կէսսն» կիսակով և կրկնակով՝ կատարենք արարչության ժամանակ Լուսնի հասակն ստանալու կանոնը՝ Անանիա Շիրակացու 10 թվականի՝ իբրև արարչության առաջին տարվա, կտրվածքով.

1. Ապրիլի 4-ի լրման տարին, ըստ Շ-եակի հոռմեացոց շարքի, 10 թվականն է, այդ տարվա վերադիրն 9 է, ապրիլի կիսակը՝ 1.5: Լուսնի հասակը լի-

<sup>6</sup> Վարդանյան Ռ., Սարգսյան Լ., Սիմոնյան Գ., նշվ. աշխ., անդ, էջ 36-37:

<sup>7</sup> Ձեռ. թիվ 2679, էջ 5 ա-բ:

<sup>8</sup> Ձեռ. 1999, էջ 93 բ, տե՛ս նաև «Պատճէն տումարի» (Է- Ժե դդ.), աշխ.՝ Ջ. Էյնթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2002, էջ 173:

<sup>9</sup> Ձեռ. 1999, էջ 1-բ, տե՛ս նաև «Պատճէն տումարի», էջ 140:



նում է 14.5 (4 + 9 + 1.5), այսինքն՝ Լուանի լրման՝ չորեքտասաներորդի օրը, այն եղել է 14.5 օրական:

2. Ահեկանի 30-ի լրման տարում, ըստ Շ-եակի, հայոց շարքի 10 թվականի վերադիրը 10 է, ահեկանի կիսակը և կրկնակը արարչության տարում՝ 5: Լուանի հասակը = 30 + 10 + 5 = 45 - 30 = 15 օրական: Ի դեպ, 10 թվականի կիսակի արժեքը 4 է: Իսկապես, Լուանի ծննդից մինչև լրում 14.5-ից 15 օր է, որը կստանանք 19-ամյակի յուրաքանչյուր տարվա կտրվածքով: Այլ խոսքով, ըստ Անանիա Շիրակացու 19-ամյակի և կանոնի հաշվարկների՝ հիշյալ հատվածները եղել են «Ժամանակական կանոնի» սկզբում:

Ի դեպ, 1888 թվահամարի Տոնապատճառում չորեքշաբթի օրվա կանոնի տակ պահպանվել է «Այսպես ի սկզբանէ արարածոց...» հատվածը, որով վերականգնվում են «զարադորութիւն տոմարացի» անընթեռնելի բառերն ու բառակապակցությունները:

Ասողիկի տեղեկությունները հիմնավորում են, որ «Ժամանակական կանոնը» Անանիա Շիրակացուն է և սկսում է արարչագործությունից: Բերենք նրա վկայությունները. 1. «Արժանի հաւատարմութեան առն զժամանակագրութիւնս շրջագային յոյժ գեղեցկախաղալ<sup>10</sup> քանզի ՎՊԹ (3809) ամդ ստուգապես դիպեցուցանէ տասներեք (ուղղել՝ տասնչորս) Նիսանայ ելիցն յեգիպտոսէ: Իսկ յելիցն յեգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին, ըստ Որոգինեայ և Անանիայի Շիրակացոյ, ժողովին ամք ՆՂ (490), հանեալ ի բաց գեբրայեցոց ծառայութեան ժամանակն»<sup>11</sup>:

2. «Իսկ Հրէից վարդապետք և Եւեբի ժամանակագիր ՆՂ (490) ամ ասեն յելից յեգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին, համարելով և զԺ (10) ամն Եղիոն դատաւորի»<sup>12</sup>:

Առաջին վկայության մեջ Ասողիկը հղում է Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոնի» հաշվարկներից մեկը, որտեղ Ադամից մինչև «Ելիցն Յեգիպտոսէ» 3809 տարի է, որը հանդիպել է Նիսանի 14-ի (= ապրիլի 4-ին) լրման տարուն: Կատարենք հաշվարկը: 3809-ը բաժանենք 19-ի, մնացորդում կունենանք 9, որը նշանակում է, որ Նիսանի 14-ի (= ապրիլի 4-ին) տարուց պետք է հետ գնալ 9 տարի, որպեսզի գտնվի հաշվարկի առաջին տարին. այն

<sup>10</sup> Ձեռագիրը վերականգնել ենք, իսկ Ստ. Մալխասյանը փոխել է «շրջագայցն յոյժ գեղեցկապես»:

<sup>11</sup> **Ստեփանոս Տարոնացի Ասողկան** Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 8-9:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 11-12:

ապրիլի 2-ի լրման տարին է, վերադրի (11), հնգյակի (5) ու վեցյակի (6) առաջին տարին է, այսինքն՝ Անանիա Շիրակացու հաշվարկներից մեկի առաջին տարին, որի վրա է հիմնվել Արարչության Կ. Պոլսի թվականությունը: Այն գտնում ենք Անանիայի խմբագրած «Իշխանք եբրայեցուց...» հատվածի վերջում: Այստեղ Ադամից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին տրված է 5810 տարի՝ Արարչության Կ. Պոլսի թվականով: Ի դեպ, Ասողկն իր հաշվարկում պահպանել է Անանիա Շիրակացու հաշվարկի 3809 տարին, մինչդեռ պետք է լիներ 3810 տարի, ինչպես ցույց ենք տվել, որովհետև նրա առաջին տարին ապրիլի 13-ի լրման տարին է (Հայոց Մեծ թվականի 1-ին տարին է), իսկ 10-րդ տարին ապրիլի 4-ի լրման տարի էր (3810 : 19 = 10 մն.):

Այստեղ բավարարվենք այս վերլուծությամբ, իսկ վկայությունն ամբողջությամբ կներկայացնենք և կվերականգնենք «Իշխանք եբրայեցուց» հատվածը քննարկելիս: Միայն նշենք, որ Ասողկի վերը բերված 490 թվի օգնությամբ վերականգնվում է Անանիա Շիրակացու բերած դարագրություններից մեկը:

«Ժամանակական կանոնի» շարունակությունն են կազմում 6-ից 15-րդ հատվածները (էջ 29 ա-71 բ), որոնք «շարադրութիւն տոմարագրաց»-ում ունեն նեթավերնագրեր:

6-րդ և 7-րդ հատվածները՝ «Մովսէս Խորենացոյ և Անդրեասի» և «Անդրեասի» (էջ 29 ա-41 ա) ենթավերնագրերով, Հիպոլիտոս Հռոմեացու ժամանակագրության՝ «Գիրք ծննդոց»-ի խմբագրությունն են՝ կատարված Անդրեասի ու Անանիայի կողմից: «Եւ յԱղեքսանդրէ Մամեայ մինչեւ յԱրկադէս եւ յՈնորէս՝ որդիս Թէոդոսի՝ ամք հարեւր եպանասուն եպօն (ուղղել՝ ԾԿԲ (162)) և ամիս մի»: Դարագրութն Անդրեասի խմբագրությունն է, իսկ Մովսէս «Խորենացոյ և Անդրեասի» ու «Անդրեասի» ենթավերնագրերը, ինչպես և «յԱդամայ Յոբելեան ԾԺԲ (ուղղել՝ ԾԺԸ)» հաշվարկը Անանիա Շիրակացու խմբագրություններն են: Վերջինիս հիմնավորումը կտանք հետագա շարադրանքում:

Այժմ տեսնենք, թե Անդրեասի 200-ամյակը, որը թարգմանվել է ասորերենից, և ժամանակագրության խմբագրությունը, որը թարգմանվել է հունարենից հայերեն, երբ է կատարվել, և ովքեր են թարգմանիչները՝ հիմնվելով ժամանակակից սկզբնաղբյուրների և ասորերենից ու հունարենից կատարված թարգմանությունների ժամանակը որոշելու մեր առաջարկած տոմարական ու տոնացույցային մեթոդների վրա<sup>13</sup>:

<sup>13</sup> Վարդանյան Ռ., Հայոց տոմարական եղանակը. Թարգմանական բնագրերի ժամանակը, Երևան, 1993 Նն:

Ժամանակակցի՝ Կորյունի վկայությունների համաձայն<sup>14</sup>, Սահակ կաթողիկոսն ու Մաշտոց վարդապետը իրենց երկու կրոնավորներին՝ Հովսեփ Պաղնացուն և Եզնիկ Կողբացուն ուղարկեցին Ասորոց կողմերը, Եղեսիա քաղաքը, որպեսզի նրանց սուրբ հայրերի ավանդությունները ասորերենից հայերեն դարձնեն ու գրեն: Կորյունը այնուհետև շարունակում է, թե թարգմանիչները հասան Եղեսիա, Սահակ կաթողիկոսի ու Մաշտոց վարդապետի պատվերները կատարեցին ու սուրբ հայրերի ավանդությունները թարգմանած ուղարկեցին Հայաստան, իսկ իրենք գնացին հունաց կողմերը և ուսումնասիրելով ու հմտանալով կարգվեցին հունարենի թարգմանիչներ:

Ըստ Կորյունի՝ Հովսեփ Պաղնացու ու Եզնիկ Կողբացու՝ հունաց կողմերը գնալուց մի ժամանակ անցնելուց հետո պատահեց, որ Հայաստանից գնացին կրոնավորներ Ղևոնդ Երեցը և ինքը՝ «Վարք Մաշտոցի» հեղինակ Կորյունը, և Կոստանդնուպոլսում հարեցին Եզնիկ Կողբացուն՝ իբրև Կորյունի ընտանեգույն սննդակցի: Հետո նրանք աստվածատուր գրքերը, այն է՝ Աստվածաշնչի (70-իցի) հաստատուն օրինակներով և շատ շնորհագիր հայրերի հետագա ավանդություններով, նիկիական ու եփեսական կանոնների հունարեն օրինակներով վերադարձան ու այդ գրքերը դրեցին Սահակ կաթողիկոսի ու Մաշտոց վարդապետի առջև: Իսկ կաթողիկոսը Եզնիկի հետ համատեղ համեմատեց Աստվածաշնչի ասորերեն ու հունարեն բնագրերը հայերեն թարգմանությունների հետ: Պարզ է, որ նրանք կատարել են Աստվածաշնչի 2-րդ խմբագրությունը, այդ թվում՝ Մակաբայեցոց գրքերն են թարգմանել մոտ 435-440 թթ. սահմաններում:

Թարգմանիչների վերադարձը տեղի է ունեցել Եփեսոսի ժողովից (431 թ.) և Սահակ Պարթևի՝ Պարսկաստանի աքսորից վերադառնալուց (432/433 թթ.) հետո, այն է՝ մոտ 433-436 թթ. սահմաններում, միջին հաշվով՝ 434 թ.:

Հիմնվելով թարգմանությունների ժամանակի որոշման վրա՝ Եզնիկ Կողբացին ու Հովսեփ Պաղնացին 416 թվից Եղեսիայում էին, իսկ Եփեսոսի ժողովից առաջ, հավանաբար, 430 թվից՝ արդեն հունաց կողմերում և զբաղվում էին հունարենից հայերեն թարգմանություններով:

Ասորերենից թարգմանված բնագրերի ժամանակի որոշումը թույլ է տալիս պնդել, որ Հովսեփ Պաղնացին ու Եզնիկ Կողբացին ասորերենից են

<sup>14</sup> Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1962, էջ 118-119, տե՛ս նաև Վարդանյան Ռ., Հայոց տոմարական եղանակը. Թարգմանական բնագրերի ժամանակը, էջ 22-23:

թարգմանել Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցու պատմությունը» (416-419 թթ.), Եփրեմ Ասորու Հին ու Նոր Կտակարանների մեկնությունները (416-419 թթ.), «Թուրթ Աբգարու թագաւորի եւ վարդապետութիւն Աղէի առաքելոյ» (416-419 թթ.), «Վկայք Արեւելից»-ը (422 թ.), Գորիայ եւ Շմաւոնի վկայաբանությունը (422 թ.), ինչպես և Անդրեասի 200-ամյա տոմար-տոնացույցը (429 թ.):

Բերված ցանկով չեն սպառվում Եզնիկ Կողբացու և Հովսեփ Պաղնացու ասորերենից հայերեն կատարած թարգմանությունները: Ելնելով այն իրողությունից, որ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ արարչութեան մեկնությունը», ինչպես և Եվսեբիոս Եմեսացու «Ութամատյանի մեկնություն»-ը թարգմանվել են ասորերենից մինչև Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ը, քանի որ վերջինս օգտվել է դրանցից, կարելի է ամենայն վստահությամբ պնդել, որ այդ երկերը ևս թարգմանվել են 416-429 թթ. ընթացքում Եզնիկ Կողբացու և Հովսեփ Պաղնացու կողմից:

Պարզեցինք, որ Հովսեփ Պաղնացին ու Եզնիկ Կողբացին գնացել են հունական կողմերը, որտեղ ուսումնասիրելով հունարենը և հմտանալով կարգվել են հունարենի թարգմանիչներ, հավանաբար 430-434 թթ., իսկ հայրենիք են վերադարձել մոտ 434 թ., ու Սահակ կաթողիկոսն ու Եզնիկ Կողբացին կատարեցին Աստվածաշունչ մատյանի 2-րդ խմբագրությունը Յոթանասնիցի կանոնական օրինակի հիման վրա՝ 434 - 440 թվականների սահմաններում: Յույց ենք տվել, որ Մակաբայեցոց գրքերը ևս այդ ժամանակ են թարգմանվել հունարենից: Իսկ Հովսեփ Պաղնացին ու Եզնիկ Կողբացին 430-434 թթ. սահմաններում թե ինչ են թարգմանել հունարենից, հիմնավորվում է Եզնիկի «Եղծ աղանդոց»-ի մի վկայությամբ: Պարզվում է, որ նա օգտվել է Անդրեասի ժամանակագրությունից, որը Հիպոլիտոս Հռոմեացու ժամանակագրության խմբագրությունն էր: Այն հիմնավորվում է Անդրեասի ժամանակագրության ու Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի համադրությամբ: Բերենք այդ հատվածները՝

| Անդրեաս   | Եզնիկ Կողբացի  |
|---|--|
| Յաւան՝ Եւ ի նմանէ Յոյնք եւ Հեղղէնք<br>(Անանիա Շիրակացի,<br>մատենագրություն, էջ 359) | Բայց Յոյնք ի յաւանայ եւ Հելլէնք<br>(կողքին Յոյնք)<br>(Եզնիկ Կողբացի, «Եղծ<br>աղանդոց», Թ., 1914, էջ 144) |

Պարզ է, որ հիշյալ թարգմանությունը կատարել է կա՛մ Հովսեփ Պաղնացին, կա՛մ Եզնիկ Կողբացին 440 թ.-ից, այն է՝ Եզնիկի «Եղծ աղան-րոց»-ից առաջ՝ 430-434 թթ. ընթացքում:

Մովսես Խորենացին նույնպես օգտվել է Անդրեասի Ժամանակագրու-թյան հայերեն թարգմանությունից՝ 470-ական թթ. վերջերին – 480-ականների սկզբներին:

Մովսես Խորենացին գրում է. «Արդ զԿայնան չորրորդ ի Նոյէ ամե-նայնք ի Ժամանակագրացն գրեն և ի Սեմայ երրորդ: նոյնպէս և զԹիրաս, չոր-րորդ ի Նոյէ, իսկ ի Յաբեթայ երրորդ, թէպետ և ըստ մերում թարգմանու-թեանս (Աստվածաշնչի – Ռ. Վ.) ոչ ուրեք ի բնագրի գտանի: Իսկ զՄեստրայիմ չորրորդ ի Նոյէ և երրորդ ի Քամայ՝ ոչ ի մերում թարգմանութեանս և ոչ ի Ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանեմք: Այլ այսպէս զսա կարգեալ գտաք ի յուշմագունէ և յընթերցասիրէ ումեմն Ասորոյ, և հաատարիմ թուեցաւ մեզ ասացեալն»<sup>15</sup>:

Հիշյալ ուշիմագույն ու ընթերցասեր ասորին Անդրեասն է, որն իր Ժամա-նակագրության մեջ Մեստրայիմին դնում է Նոյից հետո 4-րդ, իսկ Քամից հե-տո՝ 3-րդ տեղերում<sup>16</sup>:

Մովսես Խորենացին «Պատմութիւն Հայոց»-ի 4-րդ գլուխն ամբողջու-թյամբ և 5-րդ գլխի մի մասը ու այլ հատվածներ քաղել է Անդրեասից: Դրանում համոզվելու համար կարող ենք համադրել Անանիա Շիրակացու «Ժամանա-կական կանոնի» միջնորդությամբ մեզ հասած Անդրեասի Ժամանակագրու-թյան համապատասխան հատվածները Խորենացու պատմության համարժեք հատվածների հետ<sup>17</sup>:

Այդ բնագրերի համեմատությունից երևում է, որ դրանք բառացիորեն կրկնված են: Խորենացին փոքր-ինչ համառոտել է Անդրեասին, իսկ որոշ հատվածներում փոխ է առել միայն անվանումները: Էլ չենք ասում, որ կարելի է մեկը մյուսով սրբագրել:

Միաժամանակ պարզ է դառնում, որ Անդրեասի Ժամանակագրությունն է Խորենացու սկզբնաղբյուրը և ոչ թե հակառակը, ինչպես փորձել է ցույց տալ Բ. Սարգսյանը: Դեռ ավելին, Հիպոլիտոս Հռոմեացու «Գիրք ծննդոց»-ը հունա-րենից հայերեն է թարգմանել Եզնիկ Կողբացին կամ Հովսեփ Պաղնացին ոչ

<sup>15</sup> **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, գիրք Ա, գլ. Ե, էջ 19-20:

<sup>16</sup> Տե՛ս **Անանիա Շիրակացու մատենագրությունը**, էջ 360:


<sup>17</sup> Տե՛ս **Անանիա Շիրակացու մատենագրությունը**, էջ 357-359, 365 ևն ու **Մովսէս Խո-րենացի**, Պատմութիւն Հայոց, էջ 14-15 ևն:

անմիջականորեն, այլ Անդրեասի ժամանակագրության խմբագրության միջնորդությամբ, որին մի դարագլուխ ավելացնելով՝ Անդրեասը հասցրել է Արկադիոս ու Ոնորիոս:

Այլ խոսքով՝ Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոնի» միջնորդությամբ մեզ հասած Անդրեասի բնագրերը, այն է՝ «Մովսես Խորենացու եւ Անդրեասի» և «Անդրեասի» ենթավերնագրերով, թարգմանվել են 430-434 թթ. Եզնիկ Կողբացու կամ Հովսեփ Պաղնացու կողմից:

Հարկ է նշել, որ Հիպոլիտ Հոմեացին լատիներենով գրել է Ծննդոց գրքի ժամանակագրությունը և հասցրել 234/35 թթ.: Դրանից առաջացել է լատիներենի 2-րդ տարբերակը: Դրանց նախնական բնագրերը վերականգնվում են հունարենով, ասորերենով ու արաբերենով հասած հետագա խմբագրությունների շնորհիվ:

«Գիրք ծննդոց»-ի ժամանակագրության հետագա խմբագրություններից կազմել են 1-ին և 2-րդ տարբերակների stamma-ն՝ հետևյալ տեսքով՝



Ալեքսանդրյան երկու անկախ հունարեն տարբերակներից, ինչպես երևում է կազմած ծառից, առաջացել է երկու ճյուղ, որտեղ անհրաժեշտ է ճշտում կատարել՝ ելնելով ժամանակագրության հայկական տարբերակի թարգմանության (430-434 թթ.), դեռ ավելին, Անդրեասի ժամանակագրության խմբագրման (395-401 թթ. և 401 թ.), որի մասին կգրենք քիչ հետո, թվագրումներից: Ասենք նաև, որ Անդրեասի խմբագրությունը հարում է Հիպոլիտոս Հռոմեացու «Գիրք ծննդոց»-ի ժամանակագրության 1-ին տարբերակին: Այդ ճյուղում քրոնիկոնի 474-518 թթ. խմբագրություն-ընդօրինակությունը դրված է Անդրեասի խմբագրությունից առաջ, մինչդեռ Անդրեասի խմբագրությունը պետք է դնել 395-401 թթ., ավելի ստույգ՝ 401 թ. հայերեն թարգմանությունը՝ 430-434 թթ., նոր միայն քրոնիկոնի հաջորդ խմբագրությունը՝ 474-518 թթ., որից հետո Անանիա Շիրակացու խմբագրությունը՝ 686 թ., իսկ վերջինիս նախագաղափարը՝ ժողովածուի մեջ 730-ական թվականներին, որի ընդօրինակությունը կատարվել է 981/82 թթ.:

Պարզվում է, որ Հիպոլիտ Հռոմեացու «Գիրք ծննդոց»-ի ժամանակագրության ալեքսանդրյան խմբի հնագույն տարբերակը Անդրեասի խմբագրությունն է, որն առաջնակարգ նշանակություն պետք է ունենար ուսումնասիրողների համար Հիպոլիտոսի նախնական բնագրի վերականգնման ժամանակ և պետք է ունենա ապագայում:

Այսպիսով, Անանիա Շիրակացու խմբագրությունը ոչ միայն հնարավորություն է տալիս թվագրելու Անդրեասի խմբագրությունը (401 թ.), այլև պահպանել է այն և առայժմ դարձրել է Հիպոլիտ Հռոմեացու 1-ին տարբերակի մի ճյուղի հնագույնը, որն առաջնակարգ նշանակություն ունի վերջինիս «Գիրք ծննդոց»-ի ժամանակագրության հետագա ուսումնասիրության համար:

Հիպոլիտոս-Անդրեասի ժամանակագրության վերջում ավելացվել է մի դարագլուխ ևս, այն է՝ «ԵԻ ՅԱղեքսանդրէ Մամեայ մինչեւ յԱրկաղէս եւ յՈւորէս՝ որդիս Թէոդոսի՝ ամբ հարեար եթանասուն եթ (ուղղել՝ ՃԿԲ) )) և ամիս մի: (Եւ) յԱղամայ Յորբեղեան ՃԺԲ (ուղղել՝ ՃԺԸ)» (էջ 41 ա):

Այս կապակցությամբ Բ. Սարգսյանը ծանոթագրում է. «...վերջինս ուրիշ դարագլուխ մը եւս կը յաւելու, նոյն կայսրէն մինչեւ Արկաղեոս և Ուորեոս. այս առանց նշանակութեան չէ. Այսինքն թէ Հիպոլիտեայ ժամանակագրութեան հայերէն թարգմանութեան առթիւ և Ե դարուն յաւելուած է: Վասն զի եթէ Անանիի Շիրակացիին ըլլար զանի թարգմանողն, ուրիշ դարագլուխներ ևս պիտի դներ ըստ ինքեան, ինչպես տեսանք 2 ոսկեփորիկէն և է ճառընտրէն:

Սակայն այս կետիս վրայ պնդել չեմ ուզեր, որովհետև ուրիշ անյայտ պատճառն ևս կարող է յառաջագայիլ այդ երեւոյթը»<sup>18</sup>:

Ասենք, որ Հիպոլիտոսի՝անդրեասյան խմբագրւթյունն ավարտվում էր, ուստի կամ հեղինակը, կամ դրա խմբագիրը պետք է ամփոփեր Արարչութայնից մինչև այդ պահը, որն ամբողջացրել է հորեյանի տարիների քանակով:

Բայց այժմ տանք ձեռագրում տեղ գտած հավելումներն ու գրչական սխալները: Հիպոլիտոսը Քրիստոսի Ծննդից մինչև Խաչելւթյուն տվել է 30 տարի, իսկ Անդրեասը՝ 32: Ալեքսանդր Մամեայից մինչև Թեոդոսի որդիներ Արկադիոս ու Ոնորիոս՝ 177 տարի և մեկ ամիս, որին գումարենք Ալեքսանդր Մամեայի 12 կամ 13-րդ տարվա արարչութայն թիվը՝ 5738-ը, կստանանք 5915, որը 118 հորեյանից ավելի է 15 տարով: Ուստի 177-ը դարձնելով 157 կամ 167 նոր միայն կստանանք 5895 կամ 5905, որը պետք է լինի 5900, որովհետև հորեյանով արտահայտված արարչութայն թիվը կլոր է, ուստի հորեյանի թիվը պետք է սրբագրել 118 և նկատել, որ ՃԺԲ-ն նախնական բնագրում եղել է ՃԺԸ: Ուստի 177 տարի և մեկ ամիսը պետք է սրբագրել 162 տարի (5738 + 162 = 5900): Հարց է առաջանում, թե ով կարող էր դնել ամփոփիչ թիվը՝ 118 հորեյանը, Անդրեասը, հայ թարգմանիչը, ինչպես մտածել է Բ. Սարգսյանը, թե՞ հետագա խմբագրողը: Պատասխանը մեկն է՝ վերջինը՝ Անանիա Շիրակացին: Հիմնավորենք բնագրային փաստով ու Անանիա Շիրակացու հաշվողական սկզբունքներով: 118 հորեյանի թիվը բազմապատկենք 50-ով՝ կստանանք 5900, որն Ադամից մինչև Թեոդոսի որդիներ Արկադետի ու Ոնորիոսի տարիներն են, թեև Անդրեասը նրա՝ Արկադետի տարին չի նշում, սակայն կարող ենք գտնել, եթե սկզբունքորեն լուծենք խնդիրը: Ստացած 5900-ը բաժանենք 19-ի՝ մնացորդում կստանանք 10, որը ապրիլի 4-ի լրման՝ Շիրակացու ընդունած 19-ամյակի առաջին տարին է, և հետ գնանք հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարին. այն նաև Հայոց մեծ թվականի 1-ին տարին է, ինչպես և Անանիա Շիրակացու Շ-եակի առաջին տարին՝ հաշվման իմաստով: Այդ երկու լրումների միջև կա 9 տարվա տարբերութայն: Ինչպես տեսանք, Անանիա Շիրակացին Արարչութայն առաջին տարին համարում է Նիսանի 14 = ապրիլի 4-ի լրման տարին, որն իր 19-ամյակի առաջին տարին էր:

<sup>18</sup> **Սարգիսեան Բ.**, Անանուն ժամանակագրութայն խմբագիր յօրինեալ յէ դարու ի հնագոյն ժամանակագրաց, Վիեննա, 1904, էջ 19:



Ուրեմն այստեղ խոսքը 401 ներկա թվականի մասին է: Կատարենք թվաբանական գործողությունը՝ նույնպես 19-ամյակի մնացորդների հաշվարկով: 5900 (արարչ. թվ.) բաժանենք 19-ի, մնացորդում կունենանք 10, այսինքն՝ առաջին՝ ապրիլի 13-ի լրման տարուց գնանք 10 տարի, կստանանք ապրիլի 4-ի լրման տարին, կամ ապրիլի 4-ի լրման տարուց հետո գնանք ապրիլի 13-ի լրման տարի, կունենանք 10 տարի: Իսկ ներկա թվականի մնացորդով 10 տարի ( $401 : 19 = 11$  մն., ինչպես ընդունված է՝ մինուս մեկ տարի):

Արդյունքները ներկայացնենք աղյուսակով:

| Թվականներ         | Մնացորդ | Լրման օրը | 19-ամյակի 1-ին տարին |
|-------------------|---------|-----------|----------------------|
| 5900 (Արարչ. թվ.) | 10      | Ապրիլի 4  | Ապրիլի 13            |
| 401 (ներկա թվ.)   | 11 (-1) | Ապրիլի 4  | Ապրիլի 13            |

Կարելի է մտածել, որ Անանիա Շիրակացին հաշվել է Անդրեասի ժամանակագրության ավարտի թվականով: Այլ խոսքով՝ 118 հորեյանը Ադամից մինչև Արկադիոսի 6-րդ տարվա՝ Անանիա Շիրակացու հաշվարկն է, որն իրականացրել է Անդրեասի ժամանակագրության խմբագրության ժամանակ:

Ինչ վերաբերում է Հիպոլիտոսի ամբողջ ժամանակագրության տեղեկություններին, ապա բերենք դրանք հերթականությամբ՝ համառոտելով:

1. «Եւ առնին յԱդամայ մինչեւ Ջրհեղեղ .... ամք Ս[Մ]ԽԲ»<sup>19</sup>:
2. «Եւ առնին ի Ջրհեղեղէն մինչեւ ցՓաղեկ .... Ամք՝ ՇԻԵ եւ յԱդամայ .... ամք ՍԶԿԷ»<sup>20</sup>:
3. «Արդ՝ առնին ի բաժանացն երկրի մինչեւ ի գալ Աբրահամու յերկիրն Քանանացոց .... ամք ՈժՁ: Եւ յԱդամայ.... ամք՝ ՎՅՁ [Գ] (քն. Դ)»<sup>21</sup>:
4. «Արդ՝ առնին, յորմէ հետէ եկն Աբրահամ յերկիրն Քանանու մինչեւ ի մեռանելն Յետուայ, որդոյ Նաւեայ .... ամք՝ ՇԱ: Եւ յԱդամայ .... ամք՝ ՎՊՁԴ»<sup>22</sup>:
5. «Եւ առնին ի Յետուայ, որդոյ Նաւեայ մինչեւ յառնուլն Դաւթի զթագաւորութիւն .... ամք՝ ՆՁ (քն. ՆՁԷ) եւ յԱդամայ .... ամք ՏՅԿԴ»<sup>23</sup>:

<sup>19</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 359:

<sup>20</sup> Նույն տեղում

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 356:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 367:

6. «Եւ ի Դաւթայ մինչեւ ի Սեղեկիա եւ գերութիւն Յեքոնիա]] .... ամք ՆՀ [Ը] եւ ամիսք ինն (ըն. ՆՀԳ)»:
7. «Եւ յԱդամայ մինչեւ ի գերութիւնն Բաբելացոց, որ եղև յաւուրս Յեքոնիա ամք ՏՊԽԲ ամիսք ինն»:
8. «Եւ ի գերութենէն Բաբելացոց մինչեւ ի ծնունդն Քրիստոսի .... ամք ՈԿ»:
9. «Եւ ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի չարչարանս նորին ամք՝ ԼԲ»:
10. «Եւ ի չարչարանացն Քրիստոսի մինչեւ յամն երկուտասաներորդ քսաներորդ առաջնորդի թագաւորին Հոռոմոց Ալեքսանդր առնին ամք երկերիւր հինգ եւ ամիսք վեց»:
11. «Եւ յԱղեքսանդրէ Մամեայ մինչեւ Արկադէս եւ յՈրոնէս՝ որդիս Թեոդոսայ ամք՝ հարեւր եւթանասուն եւթն (ուղղել՝ 162) . եւ ամիս մի. եւ յԱդամայ՝ Յոբելեան ՃԺԲ (ուղղել՝ ՃԺԸ)»<sup>24</sup>:

Հիպոլիտոս-Անդրեաս-Անանիա Շիրակացու Արարչության թվականության համակարգերը դարագլուխներով ուսումնասիրողները և մենք վերականգնում ենք հետևյալ տեսքով՝ 11. Ալեքսանդրի 12-րդ տարուց մինչև Թեոդոս Մեծի որդիներ Արկադիոսի (6-րդ) ու Ոնորիոսի տարին կազմում է 162 դարագլուխ–տարի, իսկ Ադամից հաշված մինչև Արկադիոսի 6-րդ տարին՝ 118 հոբելյան = 5900 (118 x 50) հանրագումարային տարի:

Անանիա Շիրակացին օգտագործել է 532-ամյա պարբերաշրջանը, որի 1-ին տարին հաշվման իմաստով ապրիլի 13-ի լրման տարին էր, իսկ 19-ամյակի 1-ին տարին՝ ապրիլի 4 = Նիսանի 14-ի լրման տարին, որը հիմնավորեցինք արարչության (Ադամի) 1 թվականի կտրվածքով, հետևապես առկա թվականության համակարգերի՝ դարագլուխներով տրված թվականները (առանձնապես Ելքի, Քրիստոսի խաչելության) բաժանելով 19-ի մնացորդում պետք է ունենանք 1 կամ ապրիլի 13-ի (Ե-եակի հաշվման իմաստով 1-ին), կամ ապրիլի 2-ի (Կ. Պոլսի արարչության թվականի 1-ին) տարին, որովհետև համարյա բոլոր ժամանակագիրների մոտ Արարչությունից մինչև Ջրհեղեղ 2242 տարի է, Ջրհեղեղից մինչև Փաղեկ՝ 525 տարի, իսկ Փաղեկից մինչև Աբրահամ՝ 616 տարի, որոնց գումարը ևս 3883 տարի է: Ուստի ընդօրինակության մեջ կատարվել է Գ>Դ գրչական սխալը: Ժամանակագրության մեջ իտրայելացիների՝ Եգիպտոսում և անապատում գտնվելու տարիները համարվել են 440 տարի, ըստ Թագավորությունների Գ գրքի, իսկ վերոբերյալ

<sup>24</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 369:

հատվածում Աբրահամից՝ Ահարոնի 83-րդ տարին հավասար է 431 տարվա: Եթե Ղևիի 46 տարին սրբագրենք 42, ապա կստանանք 427 տարի: Հիպոլիտին հետևած ժամանակագրությունների խմբագրությունների մեջ Աբրահամից Ելք համարել են 423 –ից 432 տարի, որի միջին թիվը 427 տարի է: Ուստի, արդարանում է Ղևիի ԽԶ-ի սրբագրումը ԽԲ-ով, որն առկա է նաև ժամանակագրության խմբագրությունների մեջ: Նկատի ունենալով, որ, ըստ Անանիա Շիրակացու, Ելքի Զատիկը եղել է Նիսանի 14-ին, ստանում ենք հետևյալ արդյունքները՝ Արարչությունից մինչև Աբրահամ ընկնող 3383-ին գումարենք 427 տարի (միջին թիվը), կստանանք 3810 տարի, որը բաժանելով 19-ի մնացորդում կունենանք 10 տարի, որից հետ գնանք 9 տարի, կունենանք 1, այն է՝ նիսանի 14-ի=ապրիլի 4-ի լրման տարին: Պարզ է, որ հաշվարկը կատարվել է հաշվման իմաստով ապրիլի 13-ի լրման տարուց, որից սկսած՝ 10-րդ տարին է ապրիլի 4-ի լրման տարին:

Այսպիսով, ստացանք Անանիա Շիրակացու հաշվման համակարգը, և պարզվեց, որ նա Արարչագործության (Ադամի) առաջին տարի համարել է ապրիլի 4-ի լրման տարին, իսկ Ելքի (3810) և Արկադիոսի 6-րդ տարին, որը ժամանակագրության ամփոփիչ թիվն է (Ադամից Արկադիոսի 6-րդ տարին =5900 տարի), հաշվարկել է Շ-եակի՝ հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց: Ապրիլի 4-ի և ապրիլի 13-ի լրման տարիների միջև առկա 9 տարին հետ գնալով՝ ստացել է 1, այսինքն՝ ապրիլի 4-ի լրման տարին, որը համարել է Արարչության և իր 19-ամյակի 1-ին տարին: Այստեղ գործում են Անանիա Շիրակացու երկու սկզբունքները, այն է՝ հաշվարկներ կատարել է Շ-եակի հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց և իր ընդունած 19-ամյակի 1-ին՝ ապրիլի 4-ի լրման տարուց: Սակայն ասենք, որ Անանիա Շիրակացին կիրառել է նաև ապրիլի 2-ի լրման տարուց սկսվող հաշվարկը, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում:

Վերականգնենք Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոնի» (ինչպես և Հիպոլիտոսի ու Անդրեասի) Արարչության (Ադամի) թվականության համակարգի հաշվման սկզբունքները:

| Արարչության թվական   | Ներկա թվական | 19-ամ-<br>յակի<br>մնացորդ | 19-ամ-<br>յակի<br>լրման<br>տարին | 19-ամ-<br>յակի<br>1-ին<br>տարին |
|--|--------------|---------------------------|----------------------------------|---------------------------------|
| 1  |              | 1                         | A 4                              | A 4                             |
| 3810 (Արարչ. Ելք)  |              | 10                        | A 4                              | A 13                            |
| 5500 (Արարչ.-ից Քրիստոս)                                   |              | 9 (+1)                    | A 13                             | A 13                            |
| 5502 (Արարչ.-ից Քրիստոս՝<br>ըստ Հիպոլիտոսի և<br>Անդրեասի)  |              | 11 (- 1)                  | A 4                              | A 13                            |
| 5530 (Արարչ.-ից Քրիստ.<br>խաչելություն)                    |              | 1                         | A 4                              | A 4                             |
| Քրիստոսի խաչելություն                                      | 30           | 11 (- 1)                  | A 4                              | A 13                            |
| 5532 (Արարչ.-ից Քրիստ.<br>խաչելություն՝ ըստ<br>Հիպոլիտոսի) |              | 3 (-2)                    | A 4                              | A 4                             |
| 5534 (Արարչ.-ից Քրիստ. խա-<br>չելություն՝ ըստ Անդրեասի )   |              | 5 (-4)                    | A 4                              | A 4                             |
| 5900 (Արարչ.-ից Արկադ. 6-րդ<br>տարին)                      |              | 10                        | A 4                              | A 13                            |
|  | 401          | 2 (-1)                    | A 13                             | A 13                            |

Ակնհայտ է, որ Հիպոլիտոսն ու Անդրեասը չեն ունեցել հաշվման համակարգ: Անանիա Շիրակացու՝ Շ-եակի վրա հիմնված հաշվման սկզբունքները Հիպոլիտոսի հետ տալիս են 2 տարվա տարբերություն, իսկ Անդրեասի հետ՝ չորս:

Lib. Gen. 1-ին և 2-րդ բնագրերում, ինչպես և մասամբ V C. I. G. 8613 արձանագրության մեջ մեզ են հասել Ադամից մինչև Քրիստոսի խաչելություն ընկած ժամանակահատվածների՝ դարազույգներով տրված թվականներ: Դրանց մեջ արտացոլված են Ադամից մինչև Քրիստոսի խաչելություն կատարված Ջատիկները (Ելքի, Հեսուի, Եգեկիայի, Օվսիայի, Եզրասի և Քրիստոսի խաչելության), որը, ըստ էության, Ջատկացուցակ է՝ նշված Ջատիկների դարազույգներով: Ժամանակագրության հայերեն թարգմանության և խմբագրության մեջ չկա այդ Ջատկացուցակը: Վերոհիշյալ Ջատիկների մասին գրված է Ժամանակագրության՝ Ա. Շիրակացու հայերեն տարբերակի մեջ, ինչպես և դրանք մեկնված են նրա Ջատկի ճառի մեջ, որոնք կքննենք հետագա շա-

րադրանքում: Այդ բնագրերը հրատարակել է Ռ. Բաուերը, վերականգնել է այն և ներկայացրել աղյուսակի տեսքով, այն է՝

h) Ալեքսանդր Սևերոսի 13-րդ տարվա 2-րդ հաշվարկը՝ գատկական հեռավորությունների միջոցով<sup>25</sup>:

| Lib. Gen. I                                 |                  | Lib. Gen. II                         |               | C.I G<br>8613 |
|---|------------------|--------------------------------------|---------------|---------------|
| Ադամից բաժանում                             | 2242             | Ադամից բաժանում                      | 2242          |               |
| Բաժանումից<br>Աբրահամի Քանան<br>գալը        | 1141             | Բաժանումից<br>Աբրահամի Քանան<br>գալը | [245]<br>1145 |               |
| Աբրահամից<br>Անապատի Ջատիկ                  | 430              | Աբրահամից Ելք                        | 430           |               |
| Անապատի Ջատկից<br>Հետոի Ջատիկ               | 41               | Ելքից Հետոի<br>Ջատիկ                 | [531]<br>31   | 2]41 39       |
| Հետոի Ջատկից<br>Եզեկիայի Ջատիկ              | [464]<br>864     | Հետոի Ջատկից<br>Եզեկիայի Ջատիկ       | 864           | 864           |
| Եզեկիայի Ջատկից<br>Օվսիայի Ջատիկ            | (114]uhr)<br>114 | Եզեկիայի Ջատկից<br>Օվսիայի Ջատիկ     | 115           | 113           |
| Օվսիայի Ջատկից<br>Եզրասի Ջատիկ              | (108)<br>107     | Օվսիայի Ջատկից<br>Եզրասի Ջատիկ       | 111           | 107           |
| Եզրասի Ջատկից<br>Քրիստոսի ծնունդ            | 563              | Եզրասի Ջատկից<br>Քրիստոսի ծնունդ     | 562           | 563           |
| Քրիստոսի ծննդից<br>չարչր. (Խաչելություն)    | 30               |                                      |               | 30            |
| Խաչելությունից Ա.<br>Սևերոսի 13-րդ<br>տարին | 206              |                                      |               |               |
| Ադամից Ալ. Սևերոսի<br>13-րդ տարին           | 5738             | Ադամից<br>Քրիստոսի ծն.               | 5500          |               |

Մենք նույնպես բնագրերի հիման վրա վերականգնում ենք այդ Ջատկա-  
ցուցակը և տալիս մեր տարբերակը՝ աղյուսակի տեսքով, այն է՝

<sup>25</sup> **Hipolytus Verke, Vierter Band, Die Chronik**, 1-ին հրատ., Leipzig, 1929, էջ 361, 591, **Hipolytus Verke, Vierter Band, Die Chronik**, 2-րդ հրատ., Berlin, 1955, էջ 177, La Cronologie par V. Grumel, Paris, 1958, էջ 11-13:

| Lib. Gen. I                                 |                 | Lib. Gen. II                                  |         | C.I.G 8613   |
|---|-----------------|---|---------|--------------|
| Աղամից բաժանում                             | 2242            | Աղամից Նոյ                                    | 2242    | [2242]       |
| Բաժանումից Աբրահամի Քանան գալը              | 1141<br>(1143)  | Նոյից Աբրահամ                                 | [1] 145 | [1141]       |
| Աբրահամից Ելք                               | 430             | Աբրահամից Ելք                                 | 430     | [430]        |
| Անապատի Չատկից Հետոի Չատիկ                  | 41<br>(Տիր. 42) | Ելքի Չատկից Հետոի Չատիկ                       | [31]    | 2 41 39      |
| Հետոի Չատկից Եգեկիայի Չատիկ                 | [8]64           | Հետոի Չատկից Եգեկիայի Չատիկ                   | 864     | 864          |
| Եգեկիայի Չատկից Օվսիայի Չատիկ               | 114             | Եգեկիայի Չատկից Օվսիայի Չատիկ                 | 115     | 113<br>[114] |
| Օվսիայի Չատկից Եգրասի Չատիկ                 | 108             | Օվսիայի Չատկից Եգրասի Չատիկ                   | 111     | 107          |
| Եգրասի Չատկից Քրիստոսի ծնունդ               | [ 562]          | Եգրասի Չատկից Քրիստոսի ծնունդ                 | 562     | 563          |
|   |                 | Աղամից Քրիստոսի ծնունդ                        | 5500    |              |
| Քրիստոսի ծննդից չարչարանքներ (Խաչելություն) | 30              | [Քրիստոսի ծննդից չարչարանքներ (Խաչելություն)] | [30]    | 30           |
| Աղամից Քրիստոսի Խաչելություն                | 5532            | Աղամից Քրիստոսի Խաչելություն                  | [5530 ] | [5532]       |

Ա. Բաուերի և մեր կողմից վերականգնված աղյուսակներից երևում է, որ Աղամի Ելքի Չատիկը Lib. Gen. I և II-ում հաշվել են, համապատասխանաբար, 3813 (2242+1141+430) և 3817 (2242+1115+430) տարիներ, մինչդեռ Անանիա Շիրակացու հաշվարկով 3810 տարի է, որոնք ունեն 3 և 7 տարվա տարբերություն: Իսկ Lib. Gen. II-ի մեր հաշվարկում Աղամից մինչև Քրիստոսի խաչելություն ստացել ենք 5530 տարի, որը համընկնում է Անանիա Շիրակացու հաշվարկին՝  $5530 : 19 = 1$  մն. = ապրիլի 4 = նիսանի 14:

Պարզ է դառնում, որ Lib. Gen. I –ի և II-ի դարագլուխներով կատարած հաշվարկները, հատկապես Ելքի, Քրիստոսի խաչելության, կատարված 3-7-րդ դարերում, մոտավոր են և հիմնված չեն հաշվման հստակ համակարգի վրա, ինչպիսին բացահայտում ենք Անանիա Շիրակացու մոտ:

«Ժամանակական կանոնի» 8-15 հատվածները<sup>26</sup> Անանիա Շիրակացու՝ այլ աղբյուրներից քաղագրած ու խմբագրած աշխատանքն է:

«Իշխանք երբայեցուց...» հատվածի նյութերը, ինչպես ցույց է տվել Բ. Սարգսյանը, քաղված են Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից, իսկ վերջում դարագլուխներով տրված են Ադամից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին՝ ամփոփված Արարչության (Ադամի) 5810 թվականով, որն, ինչպես կտեսնենք, Անանիա Շիրակացու հաշվարկի արդյունքներն են:

Նախքան այդ հարցին անդրադառնալը տեսնենք՝ Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի հունարենից հայերեն կատարած թարգմանությունը, ըստ մեր առաջադրած տոմարական եղանակի, երբ է իրականացվել:

Նախ նշենք, որ Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնը, ինչպես հայտնի է, հայերեն է թարգմանվել հունարենից, սակայն հունարեն բնագիրը չի պահպանվել: Ասենք նաև, որ առանց բավարար հիմքի համարվում է 5-րդ դարի թարգմանություն:

Բարեբախտաբար, հայերեն թարգմանության մեջ վկայված են հունական ամիս-ամսաթիվն ու դրա համարժեք՝ հայոց շարժական տոմարի ամսանունը, որը հնարավորություն է տալիս թվագրելու Քրոնիկոնի թարգմանության ժամանակը և վերագրելու Անանիա Շիրակացուն:

Բերենք բնագրի վկայությունները. «Աղեքսանդրի բազմավեպի» «Վասն ջրհեղեղին, ի նմին գրոց՝ զորմէ ասացաւ» ենթավերնագրով հատվածում գրված է. «Կրովն ասէ նմա ի քուն յայտնել, զոր հայրն անվանեն Արամազդայ, եւ այլք ժամանակ, ի հնգետասաներորդում Դէսիոս (բնագրում՝ Դէնիոս, ուղղումը՝ Մ. Ավգերյանի) ամսեան, որ է մարերի, մարդկան ի ջրհեղեղէն սատակել հրաման տալ՝ զամենայն զառաջինս եւ զմիջինս եւ զվերջինս մատենից փորել եւ դնել յԱրեգ քաղաքին սիպարացուց»<sup>27</sup>:

«Աբիդենայ վասն ջրհեղեղին» ենթավերնագրով հատվածում ասված է. «Յետ որոյ այլ տիրեցին, եւ Քսիսուօրոս, որում Կոռնոս յառաջագոյն գուշա-

<sup>26</sup> Ձեռ. 2679, էջ 41 ա-71 բ:

<sup>27</sup> **Եւսեբի Պամփիլեայ Կեսարացույ** ժամանակականք երկմասնեայ, մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 31-32:

կեաց լինել յաճախութիւն անձրեաց ի հինգերորդում (ըստ Մ. Ավգերյանի՝ սրբագրել՝ հնգետասաներորդ) Դէսիոս ամսոյ, որ է մարտի: Հրաման տայ՝ զմատենան ամենայն յԱրեգ քաղաք սիպարացոց թաքուցանելը»<sup>28</sup>:

1993 թվականին գրած մեր աշխատության մեջ<sup>29</sup> հաշվարկը կատարել ենք երկու ամսաթվերի համար, այն է՝ Դէսիոս 15 = ապրիլի 15 = մարտի 1-30 = 520/23-636/39 թթ.: 2-րդ տարբերակի դեպքում՝ Դէսիոս 5 = ապրիլի 5 = Մարտի 1-30 = 560/63-676/79 թթ.: Նախորդ աշխատության մեջ, համաձայնելով Մ. Ավգերյանի կարծիքի հետ, Դէսեոս ԺԵ-ով, միաժամանակ գտել ենք, որ լրացուցիչ տվյալներ են պետք այդ ամսաթվերի նույնությունն ապացուցելու համար: Բայց այժմ կարծում ենք, որ Դէսեոս ԺԵ-ն պետք է սրբագրել Դէսեոս Ե-ով և թարգմանությունը թվագրել 560/63-676/79 թթ., այն վերագրելով Անանիա Շիրակացուն, միաժամանակ թվագրումն ավելի հստակեցնել՝ 658-679 թթ.: Բանն այն է, որ մեր մատենագրության մեջ 1-ին անգամ Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնը լայնածավալ օգտագործված ենք գտնում «Ժամանակական կանոնում», իսկ նախորդ շրջանում այն բացակայում է: Դժվար չէ մտածել, որ Անանիա Շիրակացին, Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնը թարգմանելով հունարենից հայերեն, խմբագրել և օգտագործել է իր «Ժամանակական կանոնում», որը հասցրել է մինչև 686 թվականը:

Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի հայերեն թարգմանությունն ունի բնագրային արժեք, քանի որ հունարեն բնագիրը չի պահպանվել: Պակաս կարևոր չէ թարգմանչի հարցը: Մեր խորին համոզմամբ այն իրականացրել է Անանիա Շիրակացին իր վարդապետի՝ Տյուքիկոսի մոտ ուսումնառության վերջին թվագրված տարիների (658/660-679 թթ.) սահմաններում, քանի որ համաքրիստոնեական նշանակություն ունեցող Քրոնիկոնի պահպանումը և դրա թարգմանությունը կապվում է Անանիա Շիրակացու անվան հետ: Ըստ էության առաջին անգամ է հիմնավորվում Անանիա Շիրակացու կողմից Եվսեբիոսի Քրոնիկոնի հունարենից հայերեն կատարած թարգմանությունը, որը պահպանվել է միայն հայերենով, և այն ձեռք է բերում համաքրիստոնեական նշանակություն:

Անանիա Շիրակացու հունարենից հայերեն կատարած թարգմանություններից համառոտումներին կձանդթանանք հետագա շարադրանքի ըն-

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 48-49:

<sup>29</sup> **Վարդանյան Ռ.**, Հայոց տոմարական եղանակը. Թարգմանական բնագրերի ժամանակը, էջ 45-46:



թացքում: Այստեղ միայն նշենք, որ Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի հայերեն թարգմանություններից համառոտումները բազմաթիվ են «Ժամանակական կանոնում» և սրբագրվում են մեկը մյուսով, ինչպես ցույց է տվել Բ. Սարգըսյանը<sup>30</sup>:

Ուշագրավ է նաև, որ «Ժամանակական կանոնում» գտնում ենք Քր(ոն)իկոնի բազմավեպ պատմության Արարչության թվականը մինչև Քրիստոսի ծնունդը, այն է՝ 5198 տարի, որը հետագայում ապրած մեր հեղինակները պսակել են իբրև Եվսեբիոսի թվական: Բերենք «Կայսերք Հռոմոց»-ի համապատասխան տեղեկությունները. 1. «Ի սորա (Աագոստոսի- Ռ. Վ.) քառասներորդ երկրորդ ամի ծնանի Յիսուս Քրիստոս ի Բեթղեհէմ Հրեաստանի: Լինի յԱդամայ մինչեւ ի ծնունդն Քրիստոսի ամք ՐՄԿԴ (ուղղել՝ ՐՃԴԸ): Այս (հատվածը) ի ստոյգ ժամանակագրական պատմութիւնէն»<sup>31</sup>: Այդ ուղղումը բացատրվում է Քրոնիկոնից օգտվելու իրողությամբ:

2. «Իսկ ըստ այրոց՝ այսպէս ունի պատմութիւնք. Ըստ Հրէից մինչեւ ի ծնունդն՝ ամք չորս հազար, ըստ Շամրտացոց՝ չորս հազար, ըստ Յունակ Եպիփան Կիպրացոյ պատմութեանն՝ հինգ հազար հինգ հարեր, ըստ Քր(ոն)իկոնի բազմավեպ պատմութեանն՝ հինգ հազար հարեր իննսուն եւ ութ»<sup>32</sup>:

Մեր կարծիքով, հեղինակը Եվսեբիոս Կեսարացուն կրկնում է՝ ցույց տալու համար, որ ինքը չի առաջնորդվել նրա հաշվարկով:

«Իշխանք Եբրայեցոց...» հատվածի վերջում դարագլուխներով տրված է Ադամից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին՝ ամփոփիչ 5810-ը՝ Արարչության թվականով: Բերենք այն. «Ժողովին ամենայն ժամանակն ի ԵԺ երորդէ ամեայ Տիբերայ կայսեր ի յիսկզբան քարոզութեան Փրկչին մերոյ] եւ յԱղեքսանդրէ Մակեդոնացոյ ամք՝ ՅԾԸ եւ ի Կիբղոսէ պարսից թագաւորէն մինչեւ] ցԱղեքսանդրոս ամք ՄԼ[Զ]: Եւ ի Սողովմոնէ եւ ի տաճարին շինուածոյ մինչեւ ցԿիբղոս ամք ՆՂԵ (ուղղել՝ ՈԾԵ): Եւ յելիցն յերգիպտոսէ որ ի ձեռն Մովսիսի մինչեւ ի շինուած տաճարին ամք Ն[Ղ]: Եւ ի ջրհեղեղէն մինչեւ ցելսն Իդի (Իսրաեղի) ամք Ռ [ՇԿԷ]: Եւ յԱդամամ (ուղղել՝ յԱդամայ) մինչեւ ի ջրհեղեղն ամք ՍՄԽԲ: Միանգամայն յԱդամայ մինչեւ ի չարչարանսն Քրիստոսի [ա]մք ՏՇ (ուղղել՝ ՐՇԼԸ): Եւ ի ԵԺ (ուղղել՝ ԸԺ) ամէն Տիբերայ կայսեր մինչեւ ի հալածումն եկեղեցեաց որ եղեւ յԹ եւ Ժ երորդ ամի Դիոկղետիանոսի

<sup>30</sup> Սարգիսեան Բ., նշվ. աշխ., էջ 13-50:

<sup>31</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 378:

<sup>32</sup> Նույն տեղում:

ամբ ՄՀՁ (ուղղել՝ ՄՀԲ): Ժողովին ամենայն աուրքն եւ լինին ամբ ՐՊԺ»<sup>33</sup>:

Վերը բերված ժամանակագրական համակարգի քննությունը մասամբ իրականացրել է Յ. Մարկվարտը և տվել աղյուսակի տեսքով՝ բնագրում վկայված դարազույմներով, որոնցից մեկը վերականգնված է: Այսպես.

|    |   |                      |
|----|---|----------------------|
| 1. | Ադամից մինչև Ջրհեղեղ  | 2242                 |
| 2. | Ջրհեղեղից մինչև Ելք   | 1447 ????            |
| 3. | Ելքից մինչև Տաճարի շինություն   | 4XX (400+X)          |
| 4. | Սողոմոնից՝ Տաճարի շինությունից մինչև Կիրողոս  | 495                  |
| 5. | Կիրողոսից մինչև Ալեքսանդր   | [230]                |
| 6. | Ալեքսանդրից մինչև Քրիստոսի քարոզության սկիզբ (Տիբերի 15-րդ տարին)                                   | 358                  |
| 7. | Ադամից մինչև Քրիստոսի չարչարանքների տարին   | 4534                 |
| 8. | (Քրիստոսի չարչարանքներից) Տիբերի 15-րդ տարուց մինչև եկեղեցու հալածանքներ՝ Դիոկղետիանոսի 19-րդ տարին | 276                  |
| 9. | Ադամից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին  | 5810<br>(5048+400+X) |

Ադամից մինչև Ջրհեղեղ՝ 2242 տարի տալիս են համարյա բոլոր ժամանակագիրները: Ադամից մինչև Ելք՝ 3809 տարի վկայել է Ասողիկը: Ուշագրավ է, որ Ասողիկը հղում է Անանիա Շիրակացու ժամանակագրությունը՝ պահելով և նրա հաշվարկը (3829:19=9 մն.), որն իր հաշվումներով 3810 տարի է, ինչպես և պահել է Ելքի ամիս-ամսաթիվը՝ Նիսանի 14-ը, որը չհասկանալով ընդօրինակության մեջ փոխել են և Նիսանի ԺԴ-ն դարձրել Նիսանի ԺԳ:

3809 բաժանելով 19-ի ստացվում է 9 մնացորդ, իսկ Նիսանի 14-ն էլ ցույց է տալիս, որ Անանիա Շիրակացին Ելքի Ջատիկն ընդունել է 19-ամյակի 1-ին տարի, ուստի A 2-ից առաջ գնալով 9 տարի ստացվում է Նիսանի 14-ի (=A 4-ի) լրման տարին, այն է՝ Անանիա Շիրակացու հաշվարկի 1-ին տարին: Պարզ է, որ այս հաշվարկները կատարել է բյուզանդական 19-ամյակի 1-ին տարով, հետևապես՝ Կոստանդնուպոլսի կամ բյուզանդական Արարչագործության (Ադամի) թվականության համակարգով, որի մասին կխոսենք քիչ հետո: Հետևապես՝ Ջրհեղեղից մինչև Ելք 1567 տարի պետք է վերականգնենք, և բնագրի ջնջված տարիները կլինեն Ռ (ՇԿԷ): Ի դեպ, Ելքից մինչև Տաճարի շինության տարիները՝ 490, նույնպես վերականգնվում է Ասողիկի վկայության հիման վրա, և բնագրի պակասող մասին ավելացնենք Ղ (90) = ՆՂ (490):

<sup>33</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 44:

Սողոմոնի՝ Տաճարի շինությունից մինչև Կիւրղոս դարագլխի բնագրային ՆՂԵ-ն պետք է վերականգնել ՈԾԵ:

Կիւրղոսից մինչև Ալեքսանդրը բնագրում պակասող և Յ. Մարկվարտի վերականգնած ՄԼ թիվը պետք է սրբագրել ՄԼԶ, որովհետև, ըստ բնագրի, Աքեմենյան տերության ամփոփիչ թիվը 236 է:

Ալեքսանդրից մինչև Քրիստոսի խաչելության՝ ՅԾԸ թիվը բնագրային է:

Ադամից մինչև Քրիստոսի խաչելություն և Դիոկղետիանոսի 19-րդ տարին Տիբերիոսի բնագրի ՏՇ-ն պետք է վերականգնել ՐՇԼԸ: Ադամից մինչև Քրիստոսի խաչելություն, ըստ Կոստանդնուպոլսի թվահամարի, 5538 տարի է և համարժեք է ապրիլի 4 = նիսանի 14-ին ( $5538 : 19 = 9$  մն.): <Ետևապես, Քրիստոսի խաչելությունից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին բնագրի ՄՀԶ-ն պետք է խմբագրել ՄՀԲ-ով, որպեսզի ( $5538 + 272 = 5810$ ) հասնենք Ադամից մինչև Դիոկղետիանոսի ամփոփիչ՝ 5810 թվին, իսկ վերջինս էլ համադրենք ներկա 302 թվականի հետ՝ ստանալու համար Արարչությունից մինչև Քրիստոսի ծնունդն ընկած թիվը ( $5810 - 302 = 5508$ ), որը Արարչությունից մինչև Քրիստոսի ծնունդն ընկած տարեհաշիվն է՝ ըստ բյուզանդական թվականության համակարգի:

Վերականգնված համակարգը տանք աղյուսակով:

|     |   |      |
|-----|---|------|
| 1.  | Ադամից մինչև Ջրհեղեղ  | 2242 |
| 2.  | Ջրհեղեղից մինչև Ելք   | 1567 |
| 3.  | Ադամից մինչև Ելք  | 3809 |
| 4.  | Ելքից մինչև Տաճարի շինություն                               | 490  |
| 5.  | Ադամից մինչև Տաճարի շինություն                              | 4299 |
| 6.  | Սողոմոնից՝ Տաճարի շինությունից մինչև Կիւրղոս                | 655  |
| 7.  | Ադամից մինչև Կիւրղոս  | 4954 |
| 8.  | Կիւրղոսից մինչև Ալեքսանդր                                   | 236  |
| 9.  | Ադամից մինչև Ալեքսանդր                                      | 5190 |
| 10. | Ալեքսանդրից մինչև Քրիստոսի խաչելություն, Տիբերի 18-րդ տարին | 358  |
| 11. | Ադամից մինչև Քրիստոսի խաչելության տարին                     | 5538 |
| 12. | Քրիստոսի խաչելությունից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին     | 272  |
| 13. | Ադամից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին                      | 5810 |

Այսպիսով, Անանիա Շիրակացին համաքրիստոնեական մատենագրության մեջ առաջին անգամ հաշվարկել է Արարչության թվականության համակարգերը՝ հիմնվելով Շ-եակի իր ընտրած սկզբունքների՝ հաշվման

իմաստով 1-ին տարվա (A 13), 19-ամյակի 1-ին տարվա (A 4), վերադրի առաջին տարվա, որը համարժեք է հունական 19-ամյակի 1-ին տարվան (A 2) և թվերից ստացված մնացորդների վրա՝ որոշելով Արարչության 1-ին, Ելքի, Քրիստոսի խաչելության տարիները՝ համաձայն քրիստոնեական ավանդության: Դրանց համարժեք Արարչության տարիները համընկել են Նիսանի 14 = ապրիլի 4-ին, և Արարչության թվականության համակարգերն ստացել են Դիոնիսյան քրիստոնեական թվականի, այն է՝ ներկա թվականի համարժեքները, որոնց կարևորությունը ժամանակակից ժամանակագրության համար էական նշանակություն ունի, քանի որ բացահայտվում են ներկա թվականները կամ բացարձակ թվերով, կամ ± տարվա ճշտությամբ:

«Կայսերք հռոմվոց...» ենթավերնագրով հատվածն սկսել է Հուլիոս Կեսարից և ավարտվել Հուստինիանոս 2-րդի 2-րդ տարով, բայց թվագրել է նրա 1-ին տարին, որը, ինչպես կոեսենք, ժամանակակցի վկայություն է, որովհետև ստացել է բացարձակ ճշգրիտ տարեթիվ՝ հայոց թվականի հաշվարկով և համահունչ է ներկա թվագրմանը: Ընտրում ենք Հուլիոս Կեսարից մինչև Քրիստոսի ծնունդ և Հուստինիանոս 1-ինից մինչև Հուստինիանոս 2-րդ ընկնող ժամանակահատվածները, որովհետև այնտեղ առկա են տարբեր թվականության համակարգեր, որոնց միջոցով հեղինակը թվագրել է հռոմեական կայսրերի տարիները:

Բերենք այդ վկայությունները. «Գայիոս՝ որ կոչեցան Յուդիոս՝ ամս երիս և ամիսս երիս: Սա առաջին եկաց ի Հռովմ ինքնակալ կայսր, յերրորդ ամին Կղեոպատրայ Եգիպտոսի եւ Աղեքսանդրի թագավորի, յետ դադարելոյն Անտիոքայ Ասորոց թագաւորութեանն, ի ՃՁԴ Ողիմպիադին, ի ՁԸ (ուղղել՝ ՉԸ) ամի Հռովմ քաղաքի շինութեան: .... Որ և ինքն իսկ Յուդիոս եգիտ զլուսնացոյցն Հռոմվոց, եւ զԲեսեքիստոնն կարգեաց, եւ են ամք յառաջ, քան զլնուլ ն[ա] հանջին. եւ զԿիւնիտղոս ամիս՝ Յուդիս վասն յայն ամսեան ծնանելոյն:

Աւգոստոս՝ ամս յիսուն եւ վեց, եւ ամիսս վեց. Սեբաստոս Հոքտաւիոս յորջորջեցաւ եւ զՍեքոստոս ամիս՝ Աւգոստոս անուանեաց, վասն ի նոյն ամսեան իւրոյ ծննդեանն լինելոյ: Նա համարէն տիրեաց ամենայն Հռոմվայեցոց եւ Յունաց: Ի սորա քսաներորդի եպօներորդի ամի սպանաւ Կղեոպատր Ալեքսանդրի եւ Եգիպտոսի թագաւոր. եւ եղեն նուաճեալք ընդ Հռովմայեցոց: Ի սորա քառասներորդ երկրորդ ամի ծնանի Յիսուս Քրիստոս ի Բեթղեհէմ Հրեաստանի: Լինի յԱդամայ մինչեւ ի ծնունդն Քրիստոսի ամք ՐՄԿԴ (ուղղել՝ ՐՃԴԸ): Եւ էր Հրէից թագաւոր Հերովդէս այղազգի, Անտիպատրեայ Ասկաղո-

նացոյ եւ մար Եպրեայ Արաբացոյ: Ի սորա երեսուն եւ մի ամի եղէ ծնունդն Քրիստոսի....»<sup>34</sup>:

Կատարենք Օլիպիադայի թվականի համար նախատեսված գործողությունը՝

$184 - 4$  տարի (=1 օլ.) =  $183 \times 4 = 732$ ,  $776 - 732 = 44$  մ.թ.ա.:  $44 + 708 = 752$  մ.թ.ա.՝ Հռոմ քաղաքի շինության տարին՝ ընդունված 753-ի փոխարեն, որովհետև Անանիա Շիրակացին Հռոմ քաղաքի շինության 1000-ամյակի թվականի ավարտից (248 թ.) հետո դրել է հռոմեական թվականի Շ-եակի 1-ին տարին (= 249 թ.) և կապել Հայոց մեծ թվականի 1-ին տարվա հետ՝ 304 հաստատունով ( $304 + 1 = 553$  թ. = ապրիլի 13-ի լրման տարի), իսկ  $44 - 42 = 2$  (Եվսեբիոսը 2 տարվա սխալ է թույլ տվել) -  $2 = 0$  (զրո թվականը հաշվին գումարելով) = 1 մ. թ. = Քրիստոսի ծննդյան թվականին:

Ուշագրավ է նաև, որ «ի հալածումն եկեղեցեաց, որ եղէ յին ու տասաներորդի ամի Դիոկղետիանոսի» դարագլուխ հատվածը կրկնված է «Ժամանակական կանոնի» մի այլ հաշվարկի մեջ, որին համադրել է այլ իրողություն, այն է՝ «Առ որով հալածումն եկեղեցեաց. Եւ կենարար վարդապետութիւնն Քրիստոսի պատմեցաւ հայոց [ի] ձեռն սուրբ Գրիգոր Պարթեւի»<sup>35</sup>, իսկ «Կայսերք Հռոմոց» ենթավերնագրի հատվածում առկա են այլ համադրումներ: Այսպես, «Ի սոյն իսկ Դիոկղետիանոսէ եւ սուրբքն Հռիփսիմեանք փախստական եղեալք ի Հայս՝ մարտիրոսացան. եւ եւ ի նոյն ժամանակ ելեալ ի Վիրապէն խոստովանողն Քրիստոսի սուրբն Գրիգոր, եղէ քարոզ Հայոց, եւ լուսատրեաց մկրտութեամբ, եւ եկաց յետ այնորիկ ամս երեսուն»<sup>36</sup>:

Այս բոլոր իրողությունները փաստորեն կապել է Դիոկղետիանոսի 19-րդ տարվա հետ, որը համարժեք է ներկա 302/303 թթ. ( $283/284 + 19$ ), իսկ ինչ վերաբերում է Գրիգոր Լուսավորչին 30 տարի տալուն, ապա նա հետևել է ավանդությանը և նախորդ պատմիչներին, առանձնապես Մովսես Խորենացուն, ում հիշատակել է «Մովսէս Խորենացոյ եւ Անդրեասի» ենթավերնագրում:

Բերենք Հուստինիանոս 1-ին և Հուստինիանոս 2-րդի հատվածի ժամանակագրական տեղեկությունները. 1. «Յուստիանոս ամս ԼԹ (ուղղել՝ Ը) .... Իսկ նորա հրամայեալ լինել ժողով ի Կոստանդնուպաղիս, որ ասի Ե-երորդ

<sup>34</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 378:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 374:

<sup>36</sup> Անդ, էջ 385:

ժողով (553 թ.): .... [որք կարգ]եցին զիրեանց հայիոյութիւնն գլովսս ԺԴ..... եւ որք ոչ հնագանդեցան հրամանի թագաւորին ընդունել զաղմկեալ ժողովոյն սահմանադրութիւնս եւ հաւանեալ նորոգածելութեանս տաւնից եկեղեցական կարգաց զոր հաստատ]եաց անարէնն Յուստիան[ոս ժողովեցելով]քն ի Կոստանդնուպաւոյիս ի Ե-երորդ ժողովին զար առաքեալ հեղմունս արեանց արար ի տեղիս տեղիս: Եւ առաքեաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ [զի փոխեսցեն զարն] (Փետրվարի 14-ը փետրվարի 2-ով - Ռ. Վարդանյան) Խ-երորդ նուիրաւոր տաւնին ընդ ժամայն փրկչին մերոյ ի տաճարն եւ արասցեն [ըստ] հրամանի թագաւորին, զոր եւ յերուսաղէմացոցն պատմութեան հաստատեալ կայ այսպէս. մեք որ յերուսաղէմ բնակեալ ենք զոր տեսաք սքանչելիս պատմեմք ձեզ որ ի Հայքդ էք. Ի յԼԳ ամին Յուստինիանոսի (= 560 թ.) սկսաւ սատանայ մարտնչել ընդ ճշմարտութեանն եւ փոփոխեցին զսուրբ հաւատս եւ այղայղեցին զկարգս արինաց, եւ տաւնից զոր եղ Յակովբոս եղբայրն Տեառն (նկատի ունի «Ընթերցուածոց»-ի Երուսաղէմյան տարբերակը - Ռ. Վ. ), քանզի մտեալ առաջի թագաւորին հրեայ ոմն հերետիկոս գրգռեաց զթագաւորն վասն Տեառնընդառաջաց, թէ չէ պարտ թոյլ տալ Երուսաղէմացոց արտաքոյ եկեղեցական կարգաց առնել զար ծննդեանն (հունվարի 6-ին) եւ զԵ-երորդացն (փետրվարի 14-ին), այլ որպէս ամենայն երկիրս հոռոմոց տաւնէ (դեկտեմբերի 25-ին և փետրվարի 2-ին) [պարտ է եւ] նոցա տաւնել եւ թագաւորն ունգն[դիր] եղեւ եւ վաղվաղկի գրէ թագաւորասաստ հրամանաւ առ Ոստոքոս հայրապետ քաղաքին եւ առ ամենայն կղերս եկեղեցոյ թէ Տեառնընդառաջն ըստ ծննդեան արարէք փեբրուարի ամսոյ Բ.....: Իսկ յ[ետ մա]իոս երանելոյն Մակարա Երուսաղէմացիք ընգ[լան զժողով] Քաղկեդովնի ի նոյն թագաւորին հրամանէ»:

« [...]ի նոյրին ԼԴ ամի կարգեցին աղեքսանդրացիք զԺԹ ԴԺ-երորդն զատկաց ԻԸ-եակ շրջագայութեամբ ՇԼԲ ամաց բոլորակն, եւ ի նոյն թագաւորի ի [Ե] -երորդ ամի հայ թուականն կարգեցաւ»<sup>37</sup>:

2. «Յուստիանոս՝ [ամս ԺԳ եւ ամիսս] Թ»:

3. «Տիբեր ամս Է (ուղղել՝ Դ)»:

4. «Մարիկ ամս քսան եւ [ամիսս] երիս: Ի սորա ատուրս սպանին զՈրմիզդ Պարսից արքայ, եւ Խոսրով՝ որդի Որմզդի փախստական եղեալ՝ անգաւ առ մարիկ, եւ զկնքեցաւ որդի նորա: Եւ յետ ժամանակի թագաւորեցոյց զԽոսրով Պարսից աշխարհին: Եւ ի նորին ատուրս եղեւ դարձեալ միսանգամ ժողով Հայոց եւ Հռոմվոց՝ վասն նորին աղանդոյն Քաղկեդովնի,

<sup>37</sup> Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 395-396:

ժողովին ի Կոստանդնուպաւոյիս, եւ եղեն պատմեալ Հայք: Ի սորա յաւուրս բաժանեցին զերկիրս Հայոց Հռովմոց եւ Պարսից թագաւորքն. եւ երկու կաթողիկոսք նստան ի Հայս. Մովսէս ի Դուին պարսից կողմանն՝ ուղիղ հաւատով, եւ Յովնան ի Հռովմոց կողմանէ Քաղկեդովնի աղանդովն»<sup>38</sup>:

5. «Փոկաս ամս Է (ուղղել՝ Ը): Ի սորա աւուրս սկսաւ Խոսրով վրէժ խնդրել ապանմանն Մարիկայ. Յաղագս ուխտին՝ որ ի մէջ երկոցունց. Եւ որով եւ գերութեամբ ամս քսան եւ հինգ»<sup>39</sup>:

6. «Հերակղ ամս երեսուն եւ մի: Առ սովաւ աստուածաշէն քաղաքն Երուսաղէմ ի զաւրացն պարսից, յորում Եկեղեցիք աներեցան եւ սուրբ խաչն գերեցաւ, եւ կտակարանք այրեցան: Սա յեւթն եւ ի տասն ամին իւրոց սպան զԽոսրով եւ դարձոյց զսուրբ խաչն: Եւ ինն եւ տասն ամին արար ժողով ի Թեոդոսուպաւոյիս, որ այժմ ասի Կարնոյ քաղաք. Բազում եպիսկոպոսաց, առ Եզրի կաթողիկոսի Հայոց եւ Հռոմոց, եւ Ասորոց, յորում Հայք Քաղկեդոնիկք եղեն, եւ զժողովն ընգալան»<sup>40</sup>:

7. «Կոստանդին ամ[ի]ս[ս] երիս: Ի սորա աւուրս տիրեցին տաճիկք Ասորոց, եւ արկին ընդ հարկաւք զԵկեղեցիս սուրբ քաղաքին Երուսաղէմի»<sup>41</sup>:

8. «Կոստանդին որդի Կոստանդիանի թռնն Հերակղի ամս ԻԹ (ուղղել՝ ԻԷ): Ի սորա Բ ամին առաւ Դուին ի տաճկաց...<sup>42</sup>: Ի սորին աւուրս եղեւ շփոյթումն տաճկաց սաստիկ պատերազմաւ՝ եւ դադարեցին ի հարկատրութենէ նոցա Հայք, Վիրք եւ Աղուանք՝ ծառայեալ նոցա ամս Լ»:

9. «Կոստանդին երրորդ [ամս ԺԶ (քն. Դ) ամիսս Ե]»<sup>43</sup>:

10. «Յուստինէս որդի երրորդ Կոստանդինի ամս Բ: Ի սորայ առաջին ամին տիրեցին հիսպաւային ազգն, որ ասին Հագիրք՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից եւ սպանին ի պատերազմի զիշխանս Հայոց, Վրաց եւ Աղուանից՝ յամսեանն Սահմի, որ ար Ժ էր ամսոյն՝ ի ՃԼԴ թուականին հայոց»<sup>44</sup>:

Առաջին վկայութեան մեջ կատարվել է Ը>Թ-ի փոխվելու գրչական սխալ:

2-րդ հաղորդման մեջ պակասում է ամս ԺԳ և ամիսս:

3-րդ տեղեկության մեջ կատարվել է Է>Դ-ի գրչական սխալը:

<sup>38</sup> Անդ, էջ 397:

<sup>39</sup> Անդ:

<sup>40</sup> Անդ:

<sup>41</sup> Անդ:

<sup>42</sup> Անդ, էջ 398:

<sup>43</sup> Անդ:

<sup>44</sup> Անդ, էջ 399:

4-րդում պարզապես բաց է թողնվել ամիսս բառը:

5-րդում է-ի ուղղումը Ը-ի հիմնավորվում է, որովհետև Խոսրովի պատերազմը Փոկասի ու Հերակլի դեմ տևել է 25 տարի, և նա սպանվել է Հերակլի 17-րդ տարում, ուստի  $25 - 17 = 8$  (Ը):

7-րդում ամիսս արտագրել են ամի:

8-րդում Կոստանդին 4-րդի ԻԹ տարին պետք է սրբագրել ԻԷ:

Հուստինիանոս 2-րդի 1-ին տարում Հագիրք (Խազարները) հարձակվել են Անդրկովկասի վրա Հայոց մեծ թվականի 134-րդ տարվա Սահմի 10-ին, որը համարժեք է ներկա 685 թվականի օգոստոսի 16-ին: Ակնհայտ է, որ Հուստինիանոս 2-րդի 1-ին տարին, որը համահունչ է ներկա թվագրությանը և բացարձակ թվական է, կարող է տալ ժամանակագրական պատկեր՝ նկատի ունենալով գրչական սխալները և բացթողումները և հաշվելով հունվարից հունվար և ոչ սեպտեմբերից սեպտեմբեր: Վերջին դեպքում թիվը կընկնի ներկա երկու տարվա վրա:

Առկա է նաև 2-րդ հաշվարկը: Անանիա Շիրակացին Հուստինիանոս 1-ինի 25-րդ տարին կապում է Հայոց 1 թվականի՝ Էսայան 532-ամյակի սկզբնավորման և գործադրման հետ, որի մասին խոսում է նաև Զատկի ճառի մեջ՝ լրման օրերով: Անդրեասի 200-ամյակի ավարտը 552 թ. (M 25): Էսայանների հաշվման իմաստով առաջին տարին A 13-ի լրման տարին է (= 553 թ.), որը համարժեք է Հայոց մեկ թվականին՝ մարտի 7-ի լրման տարին (= 553 թ.), իսկ Շ-եակի ստեղծման և 19-ամյակի 1-ին տարին՝ 562 թ. (= ապրիլի 4-ի լրման տարի = Հայոց 10 թ.):

Այս հաշվարկով Հուստինիանոսի 25-րդ և 34-րդ տարիները տալիս են մեկ տարվա սխալ՝ մեկ տարով ավելի ( $562 - 34 = 528$  և  $553 - 25 = 528$ ):

Տանք ամփոփիչ աղյուսակ երկու հաշվարկների արդյունքներով:

|  |
|--|
| Հուստինիանոս 1-ին (38 տարի) = 527-565 թթ. (528-566 թթ.)  |
| Յուստին 2-րդ (13 տարի) = 565-578 թթ. (566-579 թթ.)       |
| Տիրեր (4 տարի) = 578-602 թթ. (579—603 թթ.)               |
| Մորիկ (20 տարի) = 582 - 602 թթ. (583 - 603 թթ.)          |
| Փոկաս (8 տարի) = 602- 610 թթ. (603 - 611 թթ.)            |
| Հերակլ (31 տարի) = 610 -641 թթ. (611-642 թթ.)            |
| Կոստանդին 2-րդ (3 ամիս) = 641 թ. (642 թ.)                |
| Կոստանդին 3-րդ (27 տարի) = 641 - 668 թթ. (642 - 649 թթ.) |
| Կոստանդին 4-րդ (17 տարի) =668 - 685 թթ. (669 - 686 թթ.)  |
| Հուստինիանոս 2-րդ (2 տարվա համարժեքները) = (685-686 թթ.) |



Այլ խոսքով, ստացված բացարձակ թվականները՝ տարբեր համակարգերով, էական նշանակություն ունեն ընդհանուր և հայ ժամանակագրության համար:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Ցույց ենք տալիս, որ Ա. Շիրակացու ժամանակական-տոնացույցային մատյանի՝ «ՇԼԲ կարգ»-ի (հետագայում անվանվում է «Շ-եակ» կամ «Քննիկոն») առաջին մասը «Ժամանակական կանոն» է, որը սկսել է արարողության մեկ թվականից և հաստատվել մինչև ներկա 686 թ.:

Պարզել ենք, որ Ա. Շիրակացին օգտվել է Հիպոլիտոս Հռոմեացու «Ծննդոց գրքի» ժամանակագրության՝ Անդրեասի խմբագրությունից, որը հունարենից հայերեն են թարգմանել Եզնիկ Կողբացին և Հովսեփ Պաղնացին 430-434 թթ., ինչպես և Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից, որի թարգմանիչը և առաջին անգամ օգտագործողը Ա. Շիրակացին է (658/660-679 թթ.):

Հիմնավորել ենք, որ Ա. Շիրակացին խմբագրել է վերոհիշյալ հեղինակների ժամանակական գրությունների մեջ հանդիպող թվականներ և համաքրիստոնեական մատենագրության մեջ առաջին անգամ համակարգված հաշվարկել է արարչության (ևն) թվականության համակարգերը՝ հիմնվելով Շ-եակի իր ընտրած սկզբունքների վրա:

**Բանալի բառեր** – Ա. Շիրակացի, ժամանակական կանոն, Հիպոլիտոս Հռոմեացի, Անդրեասի խմբագրություն, Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոն, Շ-եակ:

#### «ХРОНОЛОГИЧЕСКИЙ КАНОН»

РАФИК ВАРДАНЯН, ЛЕВОН САРГСЯН

В данной статье показано, что первой частью хронологического-календарного сборника – «532-летнего пасхального цикла» (в дальнейшем – «500-летний цикл» или «Книжон» (Каноникон)) – Аналии Ширакаци является «Хронологический канон», который начинается первым годом от сотворения мира и завершается 686 годом нашей эры.

В статье установлено, что Аналиа Ширакаци пользовался произведением «Толкование на Бытие» Ипполита Римского в редакции Андреаса Византийского, переведенным в 430-434 гг. с греческого на армянский язык Езником Кохбаци и Овсепом Пагнаци и «Хроникой» Евсевия Кесарийского, переводчиком (658/660-679 гг.) и первым пользователем которой являлся сам Аналиа Ширакаци (658/660-679).

В конце исследования обосновано, что Аниана Ширакаци отредактировал даты, встречающиеся в хронологических списках вышеназванных авторов и впервые в истории христианской литературы систематизированно вычислил системы летосчислений «От сотворения мира» (и т. д.), опираясь на разработанные им же принципы 500-летнего цикла.

**Ключевые слова:** Аниана Ширакаци, Хронологический канон, Ипполит Римский, редакция Андреаса Византийского, Хроника Евсевия Кесарийского, 500-летний цикл.

## “CHRONOLOGICAL CANON” BY ANANIA SHIRAKATSI

RAFIK VARDANYAN & LEVON SARGSYAN

This article shows that the 532-year table (later referred to as 500-year table or “Knnikon” or “Kanonikon” i.e. the “Chronicle”) is the “Chronological Canon”, which represents the first part of the chronological-calendar of religious fêtes. Anania Shirakatsi started collecting them from the 1st year of ritual celebrations, which were approved only in 686 AD.

The article also establishes that Anania Shirakatsi has used two sources for his “Chronological Canon”. The first source is from the works on chronography in the “Commentary on Genesis” by Hippolytus of Rome, translated from Greek into Armenian by Eznik Koghbatsi and Hovsep Pagnatsi in 430-434 AD via the redaction of Andreas. The second is the “Chronicle” by Eusebius of Caesarea, which Shirakatsi himself had translated in 658/660-679 AD and he was the first to use it.

At the end of the article, it is evidenced that Anania Shirakatsi has edited some dates in the chronicles of Hippolytus of Rome and Eusebius of Caesarea that he had referred to as sources. Shirakatsi, applying the principles of 532-year cycle that he had worked out, has for the first time systematically calculated and specified the dates of all the scriptures of Christianity embracing the whole period starting with the creation of the world.

**Key words** – A. Shirakatsi, Chronological Canon, Hippolytus of Rome, the redaction of Andreas of Byzantium, Chronicle by Eusebius of Caesarea, 532-year cycle.

---

---

# ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԻՐԱՆԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ԳԼՈՔԱԼԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

### ՄՈՐԹԵԶԱ ՌԱՄԵԶԱՆԻ (ԻՐԱՆ)

Հետազոտության գլխավոր հարցադրումն է՝ «Իրանի շրջափակումների դերը գլոբալացման գործընթացին միանալու հարցում»: Իսկ հետազոտության խնդիրն է պարզել տնտեսական շրջափակումների ազդեցությունը գլոբալացման գործընթացին Իրանի միանալու հարցում: Այդ շրջանակներում առաջարկվել է հետևյալ վարկածը. «Շրջափակումների ազդեցությունն ուղղված է կանխելուն Իրանի ջանքերը՝ համաշխարհային տնտեսությանն ու գլոբալացմանը միանալու հարցում»: Որը և փորձում ենք հիմնավորել: Հետազոտության անկախ փոփոխականն է՝ գլոբալացումը, իսկ կախյալ փոփոխականը՝ շրջափակումները:

Ներկա դարաշրջանում, որտեղ ոչ միայն առևտուրը, այլև արտադրական, տեխնոլոգիական և կառավարման գործընթացները դարձել են համաշխարհային և անցնում են սահմաններից այն կողմ, գլոբալացումը և համաշխարհային համագործակցությունն ու աշխատանքի բաժանումն անհրաժեշտություն են համարվում, իսկ մեկուսանալու պահանջն արտաքին աշխարհի հետ փոխգործակցության փոխարեն առաջընթացի նկատմամբ հետամնացության ընտրությունն է: Հնդկաստանի և Չինաստանի նման երկրների փորձը ցույց է տալիս, որ համաշխարհային տնտեսության մեջ ակտիվ մասնակցությունը ոչ միայն վնասակար չէ երկրի անկախության համար, այլև հանգեցնում է նաև ավելի մեծ հզորության և ազգային փառքի: Ընդունակությունների զարգացումն արդյունքն է փոխգործակցության և ոչ մեկուսացվածության (Isolationism)<sup>1</sup>:

Նախ ներկայացնենք գլոբալացման սահմանումը, որն այս հետազոտության անկախ փոփոխականն է: Ապա կանդրադառնանք գլոբալացմանը միանալու հարցում Իրանի շրջափակումների ազդեցությանը:

---

<sup>1</sup> **Ջաֆարի Ահմադ Սամիմի և Քարամ Սինա**, Գլոբալիզացիան: Տուցանիշներն ու Իրանի տնտեսական դիրքը, Բազարգանի հրատ., 2005, Ա տպագրություն, էջ 198:

**Ի՞նչ է գլոբալացումը:** Գլոբալացումը, պարզ ձևակերպումով նշանակում է տվյալ աշխարհամասից դուրս սոցիալական փոխգործակցության գործընթացների ու ձևաչափերի չափերի մեծացման մասշտաբային ընդլայնում, ազդեցության արագացում և խորացում:

Գլոբալացումը վկայում է մարդկային կազմակերպման մասշտաբով տեղափոխության ու փոփոխությունների մասին, որը միմյանց է կապում հեռավոր հասարակությունները և ընդլայնում ուժային կապերի հասանելիությունը տարածաշրջաններում և աշխարհամասում: Գլոբալացման մասին ճշգրիտ սահմանում առաջարկած մտավորականներից Ռոնալդ Ռոբերթսոնը նշում է, որ գլոբալացումը «ժամանակի ու տարածության խտացման գործընթաց է, որտեղ աշխարհի մարդիկ ինչ-որ կերպ համեմատաբար գիտակցաբար միաձուլվում են համաշխարհային մեկ հասարակության մեջ: Եվ գլոբալացման արդյունքում վերանում կամ կրճատվում են աշխարհագրական, քաղաքական, մշակութային և տնտեսական բազում սահմանափակումներ»<sup>2</sup>:

Գլոբալացումը գիտական և մտավոր թեմա է և մշակութային, քաղաքական ու տնտեսական բոլոր կառուցվածքներում ընթացող հիմնարար ու արմատական փոփոխություն ու զարգացում: Գլոբալացման շրջանակում Իրանի սահմանափակող գործոնները պարզաբանելու նպատակով նշենք Իրանի տնտեսական պայմանները:

### **Գլոբալացումը և Իրանի տնտեսությունը**

Իրանի տնտեսությունն Իսլամական հեղափոխության առաջին տասնամյակում ծանր պայմաններում էր: Թեև մի կողմից կառավարության վարած քաղաքականությունը, մյուս կողմից պարտադրված պատերազմից բխող իդեալիստական մթնոլորտը բացահայտ կերպով չէին վկայում ազգային տնտեսության քայքայման մասին, սակայն ութ տարի անց, երբ ավարտվեց պատերազմը, տնտեսությունն առավել քան երբևէ մեծ վնասներ կրեց: Այնպես որ երկրի տնտեսական և բարեկեցության հետ կապված կառուցվածքային վերակառուցումը համարվեց կառավարության տնտեսական քաղաքականության գլխավոր նպատակը, և հենց այդ պատճառով էլ տնտեսական զարգացման առաջին ու երկրորդ ծրագրերը նախատեսվեցին ու իրականացվեցին 1979-1997թթ.: Սակայն թվում է, թե Իսլամական Հանրապետությունը շատ դանդաղ է իրականացնում համաշխարհային տնտեսության հետ իր համաձայնեցման գործընթացը:

<sup>2</sup> Ռոնալդ Ռոբերթսոն, Գլոբալիզացիա, թարգմ.՝ Քամալ Փուլադիի, «Սալես» հրատ., Գ տպագրություն, 2006, էջ 12:

Մեկ արտադրանքի հիման վրա աշխատող տնտեսություն, պահանջարկից բխող լարվածություն ու սպառողական ապրանքների օգտագործում, միջին խավի չգարգանալ, ոչ տնտեսական խնդիրների ազդեցություն արտադրության գործընթացի վրա և ամենակարևորը՝ տնտեսության մեջ ինքնասպասարկման (ինքն իրեն ծառայելու) մտածողություն. սրանք այն պատճառներն էին, որոնք հանգեցրին նրան, որ Իրանը չկարողանա մուտք գործել համաշխարհային առևտրային շուկաներ<sup>3</sup>:

Երկրորդ հանգամանքը վերաբերում է այն խնդրին, որ համաշխարհային տնտեսության ասպարեզ մուտք գործելը զուտ տնտեսական խնդիր լինելուց բացի, միաժամանակ նաև քաղաքական խնդիր է: Անկասկած գլոբալացման ասպարեզ Իրանի մուտք գործելու ուշացման գործոններից են քաղաքական խնդիրները, որոնք դրսևորվել են միջազգային շրջափակումների տեսքով: Այս հարցում կասկած չկա, որ Իրանի շրջափակումները քաղաքական հիմք ունեն: Քանի որ Համաշխարհային առևտրի կազմակերպությանն Իրանի անդամակցության հետ ԱՄՆ-ի հակադրումը այդ նույն հողի վրա է, կարելի է այսպես գնահատել, որ այդ պատճառով էլ ԻԻՀ արտաքին քաղաքականությունը կարող է հիմնական դեր խաղալ Իրանի՝ համաշխարհային ասպարեզ մուտք գործելու հարցում: Իրանի տնտեսության վրա շրջափակումների ազդեցությունը պարզելու համար ներկայացնենք շրջափակում եզրույթի սահմանումը:

### **Ի՞նչ է տնտեսական շրջափակումը: Որո՞նք են նրա նախադրյալները**

Տնտեսական, ֆինանսական և տեխնոլոգիական միջոցների օգտագործումն արտաքին քաղաքականության իրականացման, նպատակների իրագործման և շահերի ապահովման հարցում ազդեցիկ եղանակներից մեկն է: Սովորաբար տնտեսական հարվածները զանազան ձևերով են կիրառվում, այդ թվում՝ վարկեր տրամադրելու կամ չտրամադրելու, տեխնոլոգիայի արտահանման կամ դրանցից հրաժարվելու, առևտրային շրջափակումների, տնտեսական շրջափակման, ֆինանսների սառեցման և մաքսավճարների բարձրացման կամ կրճատման, ներդրումներում մասնակցելու կամ չմասնակցելու տեսքով:

Ըստ «ԱՄՆ արտաքին քաղաքականություն» գրքի հեղինակներ Քեզլի Չալզ Ուո. և Ուջեն Արա Ուիթթեֆի, շրջափակում են «իշխանության միտում-

---

<sup>3</sup> **Morteza Afghan.**, The effect of non economi factors in process production in Iran, in Ali Zaeh., Opcit, p. 25.

նավոր նախաձեռնությունները՝ թիրախային կառավարությունը կամ հասարակությունը տնտեսական զրկվածության ենթարկելու նպատակով: Ընթացիկ տնտեսական հարաբերությունների սահմանափակումը կամ կասեցումը հաճախ համարվում է ռազմական ուժի կիրառման փոխարինող, որը շրջափակող պետությանը թույլ է տալիս սեփական զայրույթը դրսևորել որոշակի հատուկ գործողությունների նկատմամբ և փոփոխել թիրախային կառավարության վարքագիծը»<sup>4</sup>:

Ինչպես նաև «Տնտեսական գործընթաց» ամսագրում տնտեսական շրջափակում է կոչվել մեկ կամ մի քանի պետության կողմից ծրագրված քայլը՝ տնտեսական հարաբերությունների սահմանափակման միջոցով թիրախային երկիրը քաղաքական տարբեր նպատակներով ճնշելու շրջանակներում<sup>5</sup>:

Իսկ փոխըմբռնումը և փոխհամաձայնությունը պարտադրելու նպատակով շրջափակման ենթարկելու նախաձեռնությունը փորձ է՝ համոզելու, իրազեկելու և պետական թշնամանքի կամ փոխադարձ հարգանքի ստեղծման համար<sup>6</sup>:

Շրջափակման գործիքը, որն օգտագործվում է քաղաքական ու տնտեսական տարբեր նկատառումներով, զանազան նպատակներ է հետապնդում, այդ թվում՝ տնտեսական գործընթացները խոչընդոտելը, որը քաղաքական հետևանք և կիրառություն ունի: Իրանի տնտեսական շրջափակման առաջին նախադրյալն ստեղծվեց Թեհրանում ԱՄՆ դեսպանությունն Իմամ Հոմեյնիի հետևորդ մուսուլման ուսանողների կողմից գրավվելուց հետո, երբ տասնյակ ամերիկացիների 444 օր պատանդ վերցրին, ապա Իմամի կողմից հաստատվեց այդ գործողությունը, որը՝ որպես երկրորդ հեղափոխություն, հանգեցրեց ԻԻՀ և ԱՄՆ քաղաքական ու առևտրային կապերի դադարեցմանը՝ 1980 թ. ԱՄՆ նախագահ Ջիմի Քարթերի հրամանով<sup>7</sup>:

Թեև Իսլամական հեղափոխության հաղթանակը բացի նրանից, որ տարածաշրջանի ամենակարևոր երկիրը և ԱՄՆ կայունության կղզին դուրս էր

<sup>4</sup> **Քեզլի Չալզ Ուո. և Ուջեն Արա ՈւիթթեՖ**, ԱՄՆ արտաքին քաղաքականությունը: Ձևաչափ և գործընթաց, թարգմ.՝ Ասդար Դասթամալչիի, 2005, էջ 146:

<sup>5</sup> «Ի՞նչ է տնտեսական շրջափակումը: Ինչն՞ու և ինչպե՞ս», 2006թ. մարտ-ապրիլ, երրորդ տարվա տնտեսական գործընթացի ամսականը, հ. 19, էջ 19:

<sup>6</sup> **Ձեհվանի Մոսթաֆա**, Տնտեսական շրջափակման տեսությունները, Քաղաքական և միջազգային ուսումնասիրությունների հրատարակությունների գրասենյակ, ԱԳԻ հրատ., էջ 144:

<sup>7</sup> «Իրանի արտաքին քաղաքականության օրացույց», Իսլամական հեղափոխության փաստաթղթերի կենտրոն, հ. 1, էջ 223:

հանել Արևմուտքի ծիրից, ըստ Հենրի Քիսինջըրի (ԱՄՆ այդ ժամանակաշրջանի ԱԳՆ) մեկնաբանության, ԱՄՆ-ի ամենամեծ պարտությունն էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, իսկ ԱՄՆ արտաքին քաղաքականության համար՝ ռազմավարական կարևոր պարտություն<sup>8</sup>:

Այս ամենը հաշվի առնելով՝ Քարթերը նախքան այդ՝ 1979 թ. նոյեմբերի 13-ին, հրամայեց արգելանքի տակ դնել ԱՄՆ բանկերում և արտասահմանյան մասնաճյուղերում նրա բոլոր ֆինանսները և կասեցնել Իրանի նավթի գնումները<sup>9</sup>:

1980 թ. ապրիլի 7-ին սկսվեցին նաև Թեհրանի նկատմամբ տնտեսական շրջափակումները, որոնք ընդգրկում էին ամերիկյան ընկերությունների միջոցով Իրանից նավթի ներմուծման արգելքը, ԻԻՀ ռազմական պահեստամասերի և գործիքների առաքման արգելքը և ԱՄՆ բանկերում Իրանի ողջ ֆինանսների սառեցումը<sup>10</sup>:

### **Շրջափակում**

ԱՄՆ այդ տարիների նախագահ Ռոնալդ Ռեյգանը 1987 թ. հոկտեմբերի 29-ին գործնական մի հրամանով արգելեց գրեթե բոլոր իրանական ներմուծումները: Այդ ժամանակ դեռևս որևէ նոր սահմանափակում չէր նախատեսվել Իրան ապրանք արտահանելու համար: 1992 թ. Իրանի և Իրաքի համար միջուկային զենքի արտադրությունն ու տարածումն արգելող օրենքի սահմանման պահից ի վեր դեպի Իրան արտահանումների սահմանափակումներն զգալիորեն ավելացան: Այս օրենքն ԱՄՆ կառավարությանը պարտադրում էր այլ ազգերի համաձայնությունն ապահովելու շտապ նախաձեռնությամբ Իրանին ապրանքի և տեխնիկայի հարցով նեղ դրության մեջ դնել, հատկապես այն ապրանքներն ու տեխնիկան, որոնք երկակի կիրառման նշանակություն ունեին և կարող էին օգտակար լինել ոչ ավանդական զենքեր կամ ավանդական զենքերի նորագույն տեսակներ ձեռք բերելու համար: Իրականում ԱՄՆ-ի կողմից Իրանի հետ տնտեսական հարաբերությունները շրջափակելու

---

<sup>8</sup> **Մոհսենի Ալի**, Իրանի իսլամական հեղափոխության ինքնատիպ առանձնահատկությունները, Թեհրան, Քաղաքականության ուսումնասիրման և քննարկման գրասենյակ, Իսլամական քարոզչության գործակալություն, 1997, էջ 90:

<sup>9</sup> «Իրանի և ԱՄՆ-ի մարտահրավերները Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո», Իսլամական հեղափոխության շտաբի կենտրոն, 2002 թ. աշուն, էջ 93:

<sup>10</sup> **Shireen Hunter**, *Iran and the world : continuity in a revolutionary decade*, Bloomington Indiana 15 university press, 1990, p. 64.

քաղաքականությունը շատ նման է այն քաղաքականությանը, որը կիրառվեց սառը պատերազմի տարիներին նախկին Խորհրդային Միության դեմ:

Բիլ Քլինթոնը 1995 թ. մարտ ամսին արգելեց ԱՄՆ բոլոր ընկերություններին Իրանում նավթային ռեսուրսների զարգացման հարցում ներդրումներ կատարել<sup>11</sup>:

Այս քայլը առանձնահատուկ կերպով թիրախ դարձրեց Քանուքի ընկերության մի քանի միլիարդ դոլարանոց պայմանագիրը, որը կնքվել էր Իրանի ջրերում Սիբիրյան կղզու նավթային ավազանի զարգացման նպատակով և գտնվում էր Արաբական Էմիրությունների ջրերում գտնվող Կանուլո նավթամատուցից ընդամենը մի քանի մղոն հեռավորության վրա: 1995 թ. Քլինթոնն արգելեց Իրանի հետ ԱՄՆ տնտեսական գործարքները<sup>12</sup>:

### **Շրջափակում**

1981 թ. Իրանում ամերիկացի պատանդներին ազատ արձակելուց հետո կրճատվեցին ԱՄՆ-ից Իրան արտահանումների սահմանափակումները, սակայն սահմանափակումների այս կրճատումն այնքան երկար չտևեց: 1983 թ. Իրան-Իրաք պատերազմի գագաթնակետին ծրագրվեց Սթայջ օպերացիան, որի նպատակն էր կանխարգելել երկակի նշանակության զենքերի և նախաձեռնությունների հասանելիությունն Իրանի համար: 1984 թ. հունվարի 13-ին ԱՄՆ ԱԳՆ Ջորջ Շուլցն Իրանին մեղադրեց 1983 թ. հոկտեմբերին Լիբանանում ԱՄՆ ծովուժի կայանում ռումբ տեղադրելու հարցում: Արդյունքում Իրանի անունն ավելացավ միջազգային ահաբեկչությանն աջակցելու մեջ մեղադրվող երկրների ցանկում (այդ երկրների շարքում էին՝ Լիբիան, Սիրիան, Կուբան, Հարավային Եմենը)<sup>13</sup>:

Սառը պատերազմի ավարտից հետո, երբ Խորհրդային Միությունը փլուզվեց, Բիլ Քլինթոնն ընտրվեց ԱՄՆ նախագահի պաշտոնում և հանրապետականների 12 տարվա իշխանությունից հետո Սպիտակ տան ղեկը հայտնվեց ժողովրդավարների ձեռքում, անհրաժեշտ էր, որ ԱՄՆ արտաքին քաղաքականությունն ընդհանուր փոփոխությունների ենթարկվեր: Իրանի նկատմամբ վերաբերմունքի ձևը նոր կառավարության արտաքին քաղաքականության մի

<sup>11</sup> **Քլավսոն Պատրիկ**, Փորձ: ԱՄՆ փորձն Իրանի դեմ, էջ 19:

<sup>12</sup> **Փուռահմադի Հոսեյն**, Իսլամական հեղափոխությունն ու համաշխարհային համակարգը գլոբալիզացիայի արտացոլման շրջանակներում, էջ 34:

<sup>13</sup> **Ալիխանի Հոսեյն**, Իրանի շրջափակումը՝ մի քաղաքականության ձախողում, թարգմ.՝ Մոհամմադ Մոթաղինեժադի, Քաղաքական և միջազգային ուսումնասիրությունների գրասենյակ, 2005, էջ 127:



կարևոր մասն էր կազմում: 1993թ. այդ հատվածի արդյունքն էր «Երկակի արգելք» (Dual Containment) կոչվող նոր քաղաքականության մշակումը: Երկակի արգելք նշանակում էր Իրանի ու Իրաքի լրջորեն զսպումը Խորհրդային Միության հետ սառը պատերազմի տարիներին ԱՄՆ պահվածքի հարցում: Այս առումով Իրանն ու Իրաքը պետք է համարվեին երկակի չարքեր, իսկ իսլամն էլ ներկայացվեց որպես Խորհրդային Միության գաղափարախոսությանը, նույն կոմունիզմին նմանող տարբերակ: Այս քաղաքականության ճարտարապետը Մարթինի Ինդայքն էր, ով խստագույն թշնամանք էր տածում Իրանի նկատմամբ: Նա Լիկուդ կուսակցությունից էր և Իսրայելի այն տարիների վարչապետ Իցհակ Շամիրի խորհրդակալներ:

Երկակի արգելքի քաղաքականության առաջնդման գլխավոր գործիքը տնտեսական շրջափակումների և Իրանի նկատմամբ մեկուսացման քաղաքականության կիրառումն էր: Ապա 1995 թ. Դամաթոյի օրենքը սահմանվեց, ըստ որի՝ ցանկացած արտասահմանցի կամ արտասահմանյան միավորում, որը կզբաղվի Իրանի հետ ապրանքի կամ տեխնիկայի առևտրով, պատժվելու է: Իրականում ԱՄՆ կառավարությունն այս նախագծի հիման վրա չի կարող գործարք կատարել ցանկացած անհատի կամ միավորման հետ, որն անտեսում է Իրանի շրջափակումը, կամ արտահանման արտոնագիր տրամադրի շրջափակման ենթարկված որևէ անհատի կամ միավորմանը<sup>14</sup>:

Մահմուդ Ահմադինեժադի՝ նախագահության պաշտոնում ընտրվելուց հետո, երբ սրվեցին Իրանի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ-երկրների միջև տարածայնությունները, սահմանվեցին Իրանի դեմ շրջափակման երկու բանաձևերը<sup>15</sup>: Իրանի դեմ ԱԽ-ի այս շրջափակումները մշակվել են ՄԱԿ-ի կանոնադրության յոթերորդ գլխի հիման վրա, որտեղ խոսվում է սպառնալիքի և աշխարհում խաղաղությունը խախտելու մասին<sup>16</sup>:

Յոթերորդ գլխի 42-րդ հոդվածը թույլ է տալիս խաղաղությունը երաշխավորելու հատուկ որոշումներ կայացնել, նույնիսկ եթե անհրաժեշտ լինի ռազմական ուժ կիրառել<sup>17</sup>:

---

<sup>14</sup> **Ափսվան-Ջանջանի Դարյուշ**, Շրջափակման դերն ու տեղը ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ, «Արտաքին քաղաքականություն» ամսագիր, 11-րդ տարի, 1997 թ. գարուն, էջ 72:

<sup>15</sup> Un sanctions against iran.

<sup>16</sup> Isbno-520-25663-8pp.120-2008, Ahmadinejad the secret history of iran radical leader.

<sup>17</sup> Irans nucleor programmenot harmed by sanctions daily telegraph.

Իրանի դեմ ԱԽ-ի շրջափակումների չորրորդ շրջանի կիրառումից հետո ԱՄՆ և ԵՄ անդամ-երկրները նաև ընդունված բանաձևի շրջանակներից դուրս միակողմանի շրջափակումներ կիրառեցին Իրանի դեմ<sup>18</sup>:

Իրանի դեմ այլ շրջափակումներից նշենք մի քանիսը.

2002 թ. IEEE կազմակերպությունը գիտական շրջափակումներ կիրառեց Իրանի դեմ, ըստ որի՝ 2006 թ. ԱՄՆ մի դաշնային դատարան հրամայեց վերադարձնել Պերսեպոլիսի՝ Իրանին պատկանող հնէաբանական ամենամեծ հավաքածուներից մեկը՝ ի շահ Իսրայելում ոչնչացման օպերացիայի արդյունքում տուժածների:

Շարիֆի անվան պոլիտեխնիկ համալսարանի նվազագույնը 10 շրջանավարտների ձերբակալումը, կալանավորումն ու արտաքսումը ԱՄՆ՝ 2006 թ. շրջանավարտների հավաքին մասնակցելու նպատակով:

2007 թ. Մայքրոսոֆտ և Յահու ընկերություններն Իրանին հանեցին վեր ծառայություններ ստացող երկրների ցուցակից:

Երբ ԱՄՆ-ը մեղադրական ներկայացրեց առ այն, որ Իրանի Մելլաթ, Մելլի և Սադերաթ բանկերը ֆինանսական աջակցություն են ցուցաբերում ահաբեկչական ինստիտուտներին, Համաշխարհային բանկը հրաժարվեց այդ բանկերին ծառայություններ տրամադրելուց:

2008 թ. շրջափակման աջակից երկրներից Կանադան, Բրիտանիան, Ռուսաստանը, ԵՄ-ն, Նիդեռլանդները, Բելգիան, Գերմանիան, Շվեյցարիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Եգիպտոսը, Բահրեյնը, Չինաստանը, Մալազիան և Հնդկաստանը շրջափակման ենթարկեցին իրանական առևտրային և անձնական 180 ընկերություններ:

### **Շրջափակում**

ԱՄՆ տնտեսական շրջափակման հետևանքներից է արտաքին ներդրումների ներգրավման գործընթացը խոչընդոտելը: Շրջափակումները ոչ միայն Իրանին, այլ նաև ԱՄՆ-ին վնասներ պատճառեցին:

Այսպիսով, ԱՄՆ թշնամանքի խոչընդոտներից մեկը սկզբից մինչև այսօր նույնությամբ հարատևում է, և նույնիսկ Իրանի դեմ պարտադրված պատերազմի և կառուցապատման ու շենացման շրջանում այն դիմել է Իրանի դեմ տնտեսական ու քաղաքական վարքագծի դրսևորմանը: Ազգային կարողության սահմանափակումն ու թուլացումը, և հնարավորության դեպքում Իրանի

<sup>18</sup> **Փուռահմադի Հոսեյն**, Իսլամական հեղափոխությունն ու համաշխարհային համա-կարգը գլոբալիզացիայի արտացոլման շրջանակներում, էջ 343:

վարչակարգի կործանումը, մասնավորապես 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո, ուղեկցվել են լարվածությունը թուլացնելու և քաղաքակրթությունների երկխոսության արտասահմանյան նախաձեռնություններով, որոնք որևէ փոփոխություն չեն առաջացրել ռազմավարության, ինչպես նաև երկու երկրների միջև հակամարտության շեմի հարցում:

Տնտեսական շրջափակումն ու Իրանի ֆինանսների ստեցումը և ԱՄՆ-ի կողմից Եվրոպային ուղղված խնդրանքը՝ Իրանի հետ հարաբերությունները չընդլայնելու կապակցությամբ, և ի վերջո, խաղաղ նպատակներով միջուկային հզորություններ ունենալու հարցում ԻԻՀ-ի իրավունքի դեմ բացահայտ ու ոչ տրամաբանական հակադրությունը Իրանի նկատմամբ ԱՄՆ թշնամական ռազմավարության և լիարժեք հակադրության բացահայտ վկայություններն են:

### **Եզրակացություն**

Այսօր միայն շահավետ ազգային տնտեսության հիման վրա հնարավոր չէ ապահովել ազգային շահերը, այլ համաշխարհային տնտեսության համակարգում համապատասխան հնարավորության և դիրքի ստեղծման ուղղությամբ ներդրված ջանքերն են ապահովում տնտեսական զարգացման գործընթացում առաջընթացի և տնտեսական աճի հիմնական դրոպապատճառները: Միանշանակ ապրանքի որակի աստիճանն ու արտադրման ծավալը, ծառայությունն ու կապիտալն աշխարհում ուղղակիորեն կապված են վերոնշյալ ռազմավարության իրականացման, այսինքն՝ ներքին տնտեսական բարեփոխումների և էքստրավերտ ռազմավարության կիրառման հետ, և Իրանը պետք է առաջ շարժվի գլոբալացման չափորոշիչների, ծրագրերի ու հիմնական սկզբունքների հետ համապատասխանեցման ուղղությամբ:

Հաշվի առնելով գլոբալիզացիայի խնդիրը, ազգերի ու կառավարությունների սերտացումն ու երկրների միջև կապի ու համագործակցության ստեղծումը, թե՛ համաշխարհային առևտրի կազմակերպության (որը գլոբալացման ստեղծման լծակներից է) թե՛ տարածաշրջանային ասոցիացիաների միջոցով, ինչպես նաև մարդկային հասարակությունների հիման վրա տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի ստեղծման ուղղությամբ՝ ակնատեսն ենք այն հանգամանքի, որ երկրի նկատմամբ կիրառվող տնտեսական շրջափակումները, որոնք երկիրը մեկուսացման ճանապարհով են ուղղորդում, մեծ ու ծանր խոչընդոտ են տարածաշրջանային ու համաշխարհային համագործակցության և միավորման հարցերում: Սա վկայում է այն մասին, որ համաշխարհային զարգացումն ստեղծվում է համագործակցության շրջանակներում,

իսկ շրջափակումները և միավորման ու համագործակցության ճանապարհին բացասական հետևանքները հսկայական խոչընդոտներ են ստեղծում շրջափակման ենթարկված երկրների համար, և նման ծրագրի նպատակն ու արդյունքը ոչ այլ ինչ է, քան շրջափակման ենթարկելու ձգտումներով առանձին երկրների ցանկությունը, նպատակներն ու ընչաքաղցությունը, որոնք այդ եղանակով փորձում են իրականացնել իրենց նպատակները: ԻԻՀ-ի նկատմամբ կիրառված շրջափակման կարևոր հետևանքներից անդրադառնանք մի քանիսին:

Շրջափակումները կրճատեցին Իրանի տնտեսական ու արդյունաբերական զարգացումը, սահմանափակեցին ներդրումները, թուլացրին դիալի դիրքը, քանիցս բազմապատկվեց սղաճը, և կրճատվեցին նավթի ու գազի արտադրությունն ու արտահանումը: Որևէ երկրի տնտեսության զարգացումը հնարավոր է ապահովել ֆինանսական միջազգային կազմակերպությունների հետ ընդլայնված ներմուծումների միջոցով, իսկ տվյալ կազմակերպությունների շրջափակումը կրճատում է հասանելիությունը:

Ներկայումս աշխարհում որևէ երկիր չի հիմնվում միմիայն իր ներքին ռեսուրսների վրա՝ որպես արտադրության գործոնների, այլ սեփական արտադրողականությունը բարձրացնելու համար հենվում է միջազգային ռեսուրսների վրա, ընդ որում շրջափակման դեպքում արտասահմանյան արտադրության գործոնները մուտք չեն գործում երկրի ներքին տնտեսություն, և տնտեսությունը չի կարող հասնել զարգացման փուլ:

Առողջ ու արտադրող տնտեսության շնորհիվ անդամակցելով միջազգային շուկաներին և բարձրացնելով մրցունակությունը՝ կարելի է հասնել զարգացման, սակայն համաշխարհային շուկայում մասնաբաժին չունենալու դեպքում աստիճանաբար վրա է հասնելու լճացումը, և, հեռանալով մրցակցային դաշտից, այն կորցնելու է նաև իր արդյունավետությունը:

Արդյունքում կարելի է եզրակացնել, որ երկիրը շրջափակման պայմաններում հայտնվելու դեպքում չի կարող միջազգային շուկաներից համապատասխան մասնաբաժին յուրացնել, այն կորցնելու է իր մրցունակությունը, և տնտեսական աճի կրճատումը համարվում է շրջափակման գլխավոր գլոբալ ազդեցությունն Իրանի տնտեսության վրա:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հաշվի առնելով գլոբալացման գործընթացը և նրա տնտեսական, քաղաքական և մշակութային գործոնները՝ պետությունների միջև համագործակցության սահմանափակման նպատակով տնտեսական շրջափակումների ազդեցությունը մեծապես ներգործում է երկրների ու ազգերի վրա, և անհրաժեշտ է ջանքեր գործադրել՝ պարզելու դրանց բացասական արդյունքներն ու հետևանքները:

**Բանալի բառեր** - շրջափակում, գլոբալացում, Իրան, Արևմուտք, սոցիալական, քաղաքական, արտահանում, ներմուծում:

## РОЛЬ БЛОКАДЫ ИРАНА В ВОПРОСЕ ПРИСОЕДИНЕНИЯ К ПРОЦЕССУ ГЛОБАЛИЗАЦИИ

МОРТЕЗА РАМЕЗАНИ

Всемирное развитие создается в рамках сотрудничества, а блокады создают огромные препятствия для данной страны. В отношении ИРИ из последствий блокады являются: сокращение экономически-промышленного развития, рост инфляции, сокращение добычи нефти и газа и др. Ни одна страна не опирается только на внутренние ресурсы в качестве промышленных факторов, а опирается на международные ресурсы. В случае, если страна подвержена блокаде, она не может на международных рынках поглотить соответствующую долю и теряет свою конкурентоспособность. Сокращение экономического роста считается основным влиянием блокады на экономику Ирана.

**Ключевые слова** - блокада, глобализация, Иран, Запад, социальный, политический, экспорт, импорт.

## THE IMPACT OF SANCTIONS ON IRAN'S INTEGRATION INTO GLOBALIZATION PROCESS

MORTEZA RAMEZANI

Economic sanctions on different countries and peoples have grave consequences especially in the context of worldwide globalization processes. It is important to carry out investigations on many levels and exert efforts to disclose

the grave consequences and negative outcomes of such sanctions, especially when we consider that globization in itself is the emergence of an international network of economic systems which can arise only from the interchange of world views, products, different infrastructures and other aspects of culture.

**Key words** – blockade, sanctions, globalization, Iran, The west, social, political, exports, imports.

---

## ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

### СУЩНОСТЬ, СОДЕРЖАНИЕ И ФУНКЦИИ БИЛИНГВИЗМА: СОЦИАЛЬНО-ФИЛОСОФСКИЙ АСПЕКТ

СТАНИСЛАВ БОЙКО, АННА ФОМИЧЕВА (РОССИЯ)

В настоящее время, в условиях активных интеграционных процессов, происходящих в мировом сообществе, возникает особая необходимость межкультурного взаимодействия народов. С открытием границ между государствами усиливается мобильность людей, их мотивация к изучению иностранных языков, к установлению и поддержанию контактов внутри своей страны и за рубежом. В условиях современной жизни владение хотя бы одним из общепризнанных языков международного общения по праву считается необходимым фактором культурного развития личности. В связи с этим в научной сфере растет интерес к столь сложному явлению, как билингвизм, или двуязычие.

Термин «билингвизм» (лат. *bi* – «двойной», «двоякий»; *lingua* – «язык»), или «двуязычие», не имеет однозначного толкования и в общем смысле обозначает способность владения двумя языками.

Лингвистический энциклопедический словарь дает определение понятию «многоязычие»: «Многоязычие (мультилингвизм, полилингвизм) – употребление нескольких языков в пределах определенной социальной общности (прежде всего государства); употребление индивидуумом (группой людей) нескольких языков, каждый из которых выбирается в соответствии с конкретной коммуникативной ситуацией»<sup>1</sup>. Наряду с понятиями «мультилингвизм» существует термин «монолингвизм» (от греч. *monos* – один, единственный +

---

<sup>1</sup> Зюграф Г.А. Лингвистический энциклопедический словарь. – М.: Советская энциклопедия, 1990. – С. 330

лат. *lingua* – язык), обозначающий владение одним языком<sup>2</sup>.

Билингвизм является одной из форм проявления многоязычия. Более того, многоязычие чаще всего реализуется в форме билингвизма, так как случаи массового владения тремя и более языками относительно редки.

Говоря о значении термина «билингвизм», важно обратить внимание на основные подходы к толкованию данного понятия, все множество которых можно свести к двум основным концепциям: концепции узкого понимания билингвизма и концепции его широкого понимания. Первая *концепция узкого понимания билингвизма* предполагает абсолютно свободное владение обоими языками во всех ситуациях общения. Это идеальный вариант двуязычия, встречающийся крайне редко. Опыт, который человек приобрел, пользуясь одним языком, всегда будет отличаться от опыта, приобретенного с использованием другого языка. Обычным требованием для билингва является регулярное использование каждого из языков и элементов культуры в различных видах деятельности: чтение, письмо, говорение, восприятие на слух собеседника. Но и подобная, достаточно хорошая, языковая и социокультурная компетентность личности не гарантирует усвоение языка для использования его во всех сферах человеческой деятельности. Чаще всего человек предпочитает использовать разные языки в разных ситуациях. Например, в ситуациях, связанных с обучением, с техническими аспектами знаний, предпочтению будет отдаваться одному языку, а в ситуациях эмоциональных, бытовых – другому. На одном языке человек понимает юмор, диалектные различия, знает фольклор; на другом – сленг, жаргоны, осваивает современную литературу; на одном языке легче читать и писать, на другом – понимать и говорить. Поскольку существование двух совершенно одинаковых социальных сфер действия языков и представленных ими культур невозможно, вторая *концепция широкого понимания билингвизма* наиболее объективно отражает реальное положение дел вокруг изучаемого явления. В основе данной концепции лежит представление о билингвизме как об индивидуальной характеристике говорящего, которая может проявляться у него в различной степени в различные временные отрезки в зависимости от целого ряда факторов как лингвистического, так и экстралингвистического характера. Билингв уже

---

<sup>2</sup> **Ефремова Т. Ф.** Современный толковый словарь русского языка. В 3 т./ АСТ, Астрель, Харвест. – 2006. Т. 2. – С. 64.



представляет собой не просто двух монолингвов в одном человеке, владеющем двумя языками и этнокультурами, а является уникальным носителем двух взаимосвязанных языковых систем, каждую из которых он может использовать в той или иной степени в зависимости от требований обстановки.

Социально-философский анализ феномена билингвизма невозможно осуществить без его историко-лингвистического осмысления. Развитие дву- и полиязычия напрямую связано с общественным развитием. Одной из наиболее значимых работ, посвященных социологическому аспекту билингвизма, является очерк советского языковеда Ф.П. Филина «История общества и развитие двуязычия»<sup>3</sup>.

Ф.П. Филин проанализировал наиболее общие особенности появления двуязычия и выделил следующие этапы в истории двуязычия: 1) первичное двуязычие первобытного общества, 2) двуязычие эпохи рабовладельческой формации; 3) двуязычие феодального периода, 4) двуязычие эпохи капитализма и 5) двуязычие социалистического общества. Знакомство с историческими этапами становления билингвизма поможет установить динамику развития этого явления и определить общие тенденции развития в будущем.

Для *первобытной эпохи* было характерно быстрое изменение языков вследствие постоянных и глубоких языковых контактов, существование одного языка могло быть очень непродолжительным. В первобытных обществах племя и диалект совпадали, основная масса племен была однопольна, т.е. сохраняла свои языки и говорила только на них. Языковые контакты возникали только в случае столкновения первобытных коллективов. Данные конфликты могли приводить к тому, что племя победителей усыновляло членов побежденного племени. Усыновленные посторонние вынуждены были усваивать язык нового племени, но не забывали родной язык в течение короткого времени. Так возникало двуязычие, которое имело временный характер или двуязычие одного поколения.

Возникновение письменности совпадает с переходом к *рабовладельческому строю* и появлением древних народностей и древних государств (Египет, Вавилон, Хеттское государство, государства древней Индии и Ирана, Средней Азии, Греция, Римская империя и т. д.), многие из которых в этни-

---

<sup>3</sup> **Филин Ф. П.** История общества и развитие двуязычия // Известия Академии наук СССР. Отделение литературы и языка. – М.: Изд-во АН СССР, 1970. – С. 168.

ческом отношении были довольно пестрыми и, следовательно, многоязычными. Государственному аппарату рабовладельческих государств пришлось искать выход, чтобы преодолеть разноязычность в сфере административных нужд: появились первые профессиональные переводчики. Но самым массовым источником двуязычия в эту эпоху было рабство. Рабы усваивали язык победителей и сохраняли свои родные языки. Характерной чертой двуязычия в данную эпоху было превосходство языка господ над языком рабов и побежденных и бесперспективность языка рабов в условиях рабовладельческого государства.

Двуязычие *феодальной эпохи* становится более разнообразным в связи с распространением новых надэтнических религий (ведизм, буддизм, зороастризм, христианство, ислам), а вместе с религиями – распространением письма и письменных языков. Именно в этот период, один из самых интересных периодов прошлого в истории двуязычия, впервые в истории человечества начинается сознательное изучение иностранных языков. Это связано в первую очередь с появлением книгопечатания, распространением книжно-письменной культуры, открытием первых школ и университетов.

Արդիականացման ազգային մոդելի մոտեցման հիմքում ընկած է ազգային պետության կարիքներին և շահերին համապատասխանող զարգացման գաղափարը: Փաստորեն արդիականացման դասական տեսություններում ընկած է այն գաղափարը, որը վերաբերում է արևմտյան արժեհամակարգին և դիրքորոշումներին, որը համահունչ է մարդկանց ինքնության փոփոխմանը: Այսինքն՝ առօրյայում ոչ արևմտյան հասարակության ներկայացուցիչը իր սովորական կյանքի պայմաններում պետք է գործի այնպես, ինչպես ամերիկացին կամ եվրոպացին: Սակայն արևմտյան ինքնության պայմաններում գոյություն ունեն առանձնահատուկ բարոյական և իրավական նորմեր, որոնք կարող են բացակայել մեկ այլ հասարակությունում: Ասիական մի շարք երկրների փորձը ցույց է տվել, որ զարգացման փոփոխություններն աշխարհում կարող են իրականացվել ոչ այնքան ռադիկալ հակաավանդույթային ուղղվածությամբ: Որպես օրինակ կարող է հանդես գալ Ճապոնիայի, Չինաստանի, Թուրքիայի և այլ ասիական երկրների զարգացման փորձը: Ստացվում է, որ նոր պայմաններում, որտեղ մեծ դեր են խաղում գլոբալացման գործընթացները, Արևմուտքը, որն իր հերթին լուրջ փոփոխություններ է կրում, չի կարող մնալ միակ համընդհանուր զարգացման նմուշ: Փաստորեն յուրաքանչյուր հասարակություն ինքը պետք է որոշի, թե արդիականացման որ տեսակն է առավել նպատակահարմար իր արդյունավետ զարգացման համար: Այսպիսով, առաջանում է «մոդեռնիստների» բազմությունը, որոնք ստեղծվում են տեղային մակարդակներում<sup>7</sup>: Բազմաթիվ «մոդեռնիստական» և ազգային արդիականացման

---

<sup>7</sup> Inglehart, R., *Modernization and Postmodernization: Cultural, Economic, and Political Change in 43 Societies*, Princeton University Press, 1997, p. 58.

մոդելների նոր հայեցակարգերը ժխտում են համընդհանուր նմուշի առկայությունը՝ օրինաչափական դիտարկելով տարբեր երկրների արդիականացման մոդելների տարբերությունները<sup>7</sup>:

Այս համատեքստում ժամանակակից իրանական աշխարհին առաջարկվող ըմբռնումն այն ճանապարհներից մեկն է, որը մեզ տանում է դեպի տարբեր և հակասական կարծիքների խորքերը: Այսպիսով, նշելու համար, թե արդյոք իրանական հասարակությունը նույնպես արդիականություն ունի և ժամանակակից աշխարհի մաս է կազմում, անհրաժեշտ է դիտարկել հասարակության և՛ ներքին, և՛ արտաքին շերտերը, պայմանները, իրավիճակներն ու գործոնները: Այսպիսով, ուսումնասիրելով, թե իրականում ինչ է իրանական հասարակությունը, և թե որ ուղիով է նպատակահարմար տանել նրա զարգացումը, գոյություն ունեն բազմաթիվ մոտեցումներ, որոնց թվում են ներքոնշյալ հայեցակարգերը.

1) Առաջին հայացքն ավանդական ձախակողմյանների դատողությունն է Իրանի վերաբերյալ: Ավանդական ձախակողմյանները նշում են, որ Իրանում բացակայում են քաղաքացիական հասարակությունը և դրա բաղադրիչները, և որ Իրանն ավանդական երկիր է: Ըստ այս տեսանկյան կողմնակիցների՝ ճիշտ չի համարվում խոսել Իրանի մոդեռն հասարակության մասին: Նրանք առաջադրում են այնպիսի ուղենիշներ և մեխանիզմներ՝ իրանական հասարակությունը ներկայացնելով որպես ավանդական: Իրանի վերաբերյալ հիշյալ հայացքի ամենահիմնական տեսակետը մշակութային-հասարակական հետամնացությունն է համարվում, որի արմատները և հիմքերը բռնատիրության գերակայման հանգամանքն են իրանական քաղաքական և հասարակական կառույցի վրա: Ուրեմն ավելի լավ է Իրանի քաղաքական համակարգի մասին խոսել՝ պետության առանցքային դերը շեշտելով<sup>8</sup>:

2) Երկրորդ հայացքը այսպես կոչված «լուսամիտ և երազկոտ» հայացքն է, որի հետևորդներն իրենց շրջապատող իրականության վրա ավելի քիչ ուշադրություն են սևեռում, այդ թվում և Իրանի պատմության: Հիմնականում ուշադրությունը կենտրոնացված է արևմտյան մտքի հոսքի հողվույթին, այն, ինչ հիմնականում տեղի է ունեցել Եվրոպայում: Երազկոտ լուսամիտները խոսում են Իրանում առկա արևմտյան աշխարհին վերաբերող գաղափարների, կերպարների, դեպքերի և իրադարձությունների մասին: Իրանական հասարակությանը բնութագրելու համար վերջիններս խոսում են ժամանակակից,

<sup>8</sup> Eisenstadt S. N. Multiple Modernities // Daedalus. Winter 2000. Vol. 29, № 1. p. 3-29.

իմաստուն և բարոյական մարդու մասին: Նրանց կարծիքով իրանական հասարակությունը մեկնաբանվում է իրանցի ժամանակակից մարդու միջոցով, ով բավականին գաղափարապաշտ է:

3) Երրորդ հայացքը արդիականության նկատմամբ գերատեսչական և վարչական հայացքն է, որը կարելի է անվանել «աջակողմյան վերակառուցում»: Իրանի հասարակությունում առանցքային են համարվում արդի հասարակական ինստիտուտները: Հետևաբար, այս հայացքի շրջանակներում ցանկալի արդիականացումը մարդկանց ճշգրիտ զետեղումն է նոր հասարակական ինստիտուտներում:

4) Չորրորդ հայացքը հասարակագիտական հայացքն է, որտեղ շեշտը դրվում է իրանական հասարակություն այն հասկացության վրա, որը հիմնվել է մարդկանց, ինստիտուտների, կառույցների և դրանց միջև առկա փոխառնչությունների հիման վրա: Պայմանները լիարժեք և համընդհանուր չեն, այլ մի տեսակ անցնող, կախյալ, թերի, կիսաժամանակակից, կիսաավանդական և վերջապես բաղադրական են: Իրանական ժամանակակից հասարակության մեկնաբանությունը հիմնված է հասարակությունում ժամանակակից մարդու և հասարակական ինստիտուտների ու կառույցների վերլուծությունների վրա:

Այսպիսով, առաջ է գալիս այն հարցադրումը, թե որն է իրանական արդիականացումը: Արդյոք այն արևմտյան արդիականացման ձևերից մե՞կն է, թե՞ իրանական և արևմտյան արդիականացման պայմանների զուգորդված և փոխառնչվող գործառույթների արդյունքը: Արդյոք այդ արդիականացումը ձեռքբերվա՞ծ խնդիր է և ինչպիսի՞ առանձնահատկություններ է ստացել:

Անդրադառնալով արդիականացման տեսական կառուցվածքին՝ հարկ է նշել, որ արդիականացվող հասարակություններն օժտված են մի շարք փոխկապակցված բնութագրերով, որոնք հաճախ դիտարկվում են որպես տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային արդիականացման առանձին գործընթացներ: Եթե տնտեսության համար հիմնական ցուցանիշն աճն է, ապա քաղաքականության համար, ըստ որոշ գիտնականների, կայունությունը: Օրինակ՝ Ս.Հանթինգտոնը շեշտադրում է հասարակական կազմակերպվածությունը, կարգուկանոնը, «ուժեղ» քաղաքական ռեժիմը լեգիտիմ իշխող կուսակցության հետ, որոնք կարող են սաստել և զսպել ապակայունացման միտումները հասարակության մեջ<sup>9</sup>:

---

<sup>9</sup> **Huntington S. P.**, *The Clash of Civilizations and the Remaking of World Order*. N. Y., 1996, p. 75.

Անդրադառնալով իրանական հասարակության առանձնահատկություններին՝ նշենք, որ, ըստ հասարակության հինգ հիմնական ինստիտուտների (տնտեսություն, քաղաքականություն, կրոն, կրթություն և ընտանիք) գործողությունների, առաջին չորս ինստիտուտները կառավարվում և ծրագրվում են պետության կողմից: Նկատի ունենալով պետության գաղափարական և դավանական բնույթը և այն, որ արդիականացման ուսուցումները որոշ առումներով հակասում են իրանական դավանանքի հիմքերին, պետք է նկատել, որ տասնամյակների ընթացքում պետությունն աշխատել է կրոնից բխած գաղափարները փոխարինել վերոհիշյալ ինստիտուտներից բխած արդիականացման գաղափարներով: Ընտանիքի ինստիտուտը միակն է, որի համար պետությունն անզոր է եղել անմիջականորեն իրագործելու վերոհիշյալ մոտեցումը և նպատակը:

Այսպիսով, անդրադառնալով արդիականացման տիպաբանությանը, ըստ աղբյուրների, կարող ենք եզրակացնել, որ իրանական արդիականացումն ի վերջո ուղղված է դեպի, այսպես կոչված, *օրգանական* արդիականացումը: Այսինքն՝ *օրգանական* արդիականացումն իրականացվում է էնդոգեն (ներքին) գործոնների շնորհիվ, այն սկսվում է միկրո մակարդակից, այնուհետև անցնում մեզո (ինստիտուցիոնալ) մակարդակի: Ի տարբերություն օրգանականի, *ոչ օրգանական* արդիականացումը սկսվում է արտաքին գործոնների ազդեցությունից և ազդում է առաջին հերթին քաղաքական և տնտեսական փոփոխությունների վրա, իսկ հետո միայն մշակութային: Պետք է նշել, որ իրանական իշխանությունը լուրջ ջանքեր է գործադրում տնտեսական և տեխնոլոգիական աճը խթանելու համար: Այդ առումով հավանաբար կարելի է խոսել տնտեսական արդիականացման իրանական մոդելի մասին, որպես շուկայական մոդելի՝ կողմնորոշված դեպի սոցիալական արդարությունը: Սակայն խոսել նոր՝ եվրոպական մոդելից որակապես տարբերվող իրանական արդիականացման մոդելի մասին տնտեսության և սոցիալական քաղաքականության մեջ գրեթե ոչ մի լուրջ հիմք չկա: Ինչ վերաբերում է քաղաքական արդիականացմանը, ապա իշխանության ստեղծած կառուցվածքը թույլ է տալիս հոգևորականությանը պահպանել իրենց առաջատար դիրքերն իշխանության մեջ և այդ ոլորտում չի նպաստում առաջընթացին, չնայած ապահովվում է երկրի կայունությունը:

Այսօր արդիականացման ներթափանցման հիմնական ճանապարհը, ելակետը և դրա մտքի տարածման սկիզբը Իրանում ընտանիքի ինստիտուտն է: Միջին խավին պատկանող և քաղաքում բնակվող ընտանիքների մեծ մասը,

անկախ բոլոր իրավական խնդիրներից, իրենց ընտանիքի ներքին և արտաքին հարաբերությունները սկսում են հիմնել մոդեռն մտածելակերպի առանձնահատկությունների վրա: Վերջին տասնամյակների ընթացքում հասարակական, տնտեսական և մշակութային տարբեր պատճառներով ակնհայտ աճել է իգական սեռի ուսանողների և աշակերտների թիվը արական սեռի համեմատությամբ: Վերջին տասը տարիների ընթացքում Իրանի համալսարանների ուսանողների 67%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են: Բարձրագույն կրթությամբ կանանց 67.7%-ը ունի արդիականության բարձր մակարդակ, և ուսումնառության տարիների աճի հետ մեկտեղ մեծանում է նաև արդիականության ընկալման և փոխանցման աստիճանը: Միաժամանակ անձի սոցիալական կարգավիճակը և արդիականության փոխանցումը զգալիորեն կապված են միմյանց հետ: Արդյունքում այսօր Իրանում նոր սերնդի մեջ առնչվում ենք նոր ընտանիքների հետ, որտեղ տղամարդկանց և կանանց միջև առկա է կրթության մակարդակի, արդիականության և արդիականացման մասին իրազեկման անհավասարություն՝ հոգուտ կանանց՝ որպես արդիականության արժեքների փոխանցողների և կուտակողների<sup>10</sup>:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ իրանական արդիականությունը համալիր բարդ խնդիր է: Այն իրականացված, իրական, տեսանելի և մտային խնդիր է՝ իր որոշակի տեսքով և կաղապարով, սակայն տձև: Այդ տձևությունը սկիզբ է առնում նրա պայմաններից և չափսերից: Սա ավելի շուտ նշանակում է ընդունել իրանական արդիականությունը, քան դրա ոչնչացումը: Իրանական արդիականությունը չնայած իրական է, սակայն տատանումների, տագնապների, քաոսի և իր թուլությունների պատճառով ամեն պահ փլուզման եզրին է գտնվում: Սակայն հիմք ունենալով դրա օրգանական բնույթը և հասարակական միկրո մակարդակում առկա հստակեցված այն սոցիալական խմբերը, որոնք հանդես են գալիս որպես արդիականացման կուտակողներ և փոխանցողներ, արդիականացումն Իրանում, այնուամենայնիվ, երբեք ամբողջովին չի փլուզվի, այլ կպահպանի զարգացման միտումները: Դրա հետ մեկտեղ իրանական արդիականացումն աշխատում է տարբեր ձևեր ձեռք բերել, այն փոփոխվում և հղովվում է: Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ ի վերջո իրանական արդիականությունը երեք ինստիտուտների համագործակցության արդյունք է, որի գլխավոր առանցքը կազմում են

<sup>10</sup> **Azimi H.**, Strategy and development: modernity and women, Tehran: Hamshahri, 2011, p. 79.

կրոնը, պետությունը և ընտանիքը: Ավելին, Իրանում արդիականության և արդիականացման առանձնահատկությունները հասկանալու համար առանցքային դերակատարություն ունի ընտանիքի ինստիտուտը, իսկ արդիականացման կուտակման և փոխանցման հիմնական խումբը բարձրագույն կրթություն ստացող և ստացած իգական սեռի ներկայացուցիչներ են:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Իրանական արդիականությունը երեք ինստիտուտների համագործակցության արդյունք է, դրանք են՝ կրոնը, պետությունը և ընտանիքը: Իրանում արդիականության և արդիականացման առանձնահատկությունները հասկանալու համար հարկավոր է դիտարկել ընտանիքի ինստիտուտը: Արդիականացման հիմնական խումբը բարձրագույն կրթություն ստացող և ստացած իգական սեռի ներկայացուցիչներն են, որոնք հասարակության մեջ մեծ կշիռ ունեն:

**Բանալի բառեր** - արդիականացում, իրանական հասարակություն, արդիականացման տեսություն, մոդել, իրանցի կանայք, զարգացում, կրթություն, ընտանիքի ինստիտուտ:

### СПЕЦИФИКА МОДЕРНИЗАЦИИ МОДЕЛИ ИРАНСКОГО ОБЩЕСТВА В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ПОДХОДОВ МОДЕРНИЗАЦИИ

АЛИРЕЗА ШАРАФИ ЯЗДИ, МАРИЯ ЗАСЛАВСКАЯ

Модернизация иранского общества основана на взаимодействии трех сфер, которыми являются религия, государство и семья. Для того, чтобы понять особенности современности и модернизации в Иране, необходимо рассмотреть институт семьи. Основной группой модернизации рассматриваются женщины, которые получили и получают высшее образование и имеют значительное влияние в обществе.

**Ключевые слова** - модернизация, иранское общество, теория модернизации, модель, иранские женщины, развитие, образование, институт семьи.

## THE SPECIFICS OF THE IRANIAN SOCIETY'S MODEL OF MODERNIZATION

ALIREZA SHARIFI YAZDI, MARIA ZASLAVSKAYA

Iranian modernization is based on the cooperation of three main institutions: religion, state and family. The institution of the Iranian family must be substantially considered in order to understand the features of modernity and modernization in Iran. Females enrolled in higher education and university graduates have active roles in the modernizing processes and they also exert great influence over Iranian society.

**Key words** - modernization, Iranian society, the theory of modernization, model, Iranian women, development, education, the institution of family.

## НЕКОТОРЫЕ ПОНЯТИЙНЫЕ УТОЧНЕНИЯ В СОЦИОЛОГИЧЕСКОМ АНАЛИЗЕ ТРУДОВОГО ПОВЕДЕНИЯ

АРЕГ САФАРЯН

Теоретический социологический анализ неизбежно начинается с уточнения содержания понятий, которые характеризуют исследуемое явление. Такое уточнение позволит затем перейти к операционализации понятий в качестве инструментария эмпирического социологического исследования для верификации выдвинутых теоретических положений.

В связи с этим, социология труда ориентирована на предмет, который, при кажущейся его очевидности, в действительности содержит целый комплекс вопросов, которые необходимо прояснить. Эти вопросы затрагивают как содержание самого понятия «труд» и «трудовое поведение», так и необходимость развести эти понятия со смежными, например, уточнить соотношение понятия «труд» с понятиями «фри-ланс» или «предпринимательство». Необходимо также идентифицировать четкую область применения понятия «трудовое поведение» и обозначить границы этого понятия, выделяя его среди других видов социального и экономического поведения.

Если в марксистской концепции труд интерпретируется как физическое усилие, позволяющее преобразовать элементы материального мира в продукты, соответствующие принятым в обществе представлениям о потреблении, то в неоклассическом микроэкономическом анализе труд изучается, прежде всего, как ресурс, который выступает товаром на рынке и становится одновременно предметом производственного потребления, поскольку рабочая сила расходуется в производственном процессе, и источником прибавочной стоимости, поскольку именно человек свободен создавать новую стоимость, в то время как оборудование (овеществленный труд) лишь переносит ее.

Эта двойственность оценки труда с точки зрения современной экономической науки и социологического анализа, в которых труд составляет один из центральных предметов изучения, приводит к тому, что отдельные его составляющие переоцениваются или недооцениваются.

Можно предложить следующее дихотомическое разделение интерпретации понятия «труд» в современных социально-экономических исследованиях:





С социологических позиций можно обнаружить, что в рыночной экономике, основанной на обладании и обмене правами собственности, отношение найма является специфическим способом установления иерархии между экономическими агентами. Для Г. Саймона отношение найма означает передачу полномочий в принятии решений одних агентов другим в силу разницы их положения в институциональной среде. Наемные работники отказываются целиком или частично от права принимать решения и передают его нанимателям, более склонным к принятию риска, в обмен на гарантию (пусть относительную) стабильного дохода, то есть зарплаты.

В отличие от Г. Саймона, А. Алчян и Г. Демсец отрицали влияние власти и иерархии на отношения найма. Наем для них является контрактным отношением, ничем не отличающимся от других контрактов, заключаемых на рынке. Наемные работники предпочитают подчиняться лицу, наделенному распорядительной ролью и составляющему часть администрации компании, в чьи обязанности входит получение информации, ее переработка и совершенствование процесса согласования действий и использования потенциала работников. Прибыль в этой концепции выступает как право на остаточный доход и представляет собой вознаграждение за риск, который принимают на себя предприниматель и администрация предприятия.

Содержательный анализ труда, ориентирующий на процесс творчества, созидания и личностной самореализации индивида в производительной трудовой деятельности, в ходе советского периода приобрел дополнительное социально-управленческое звучание и окрас: как показали исследования В.А. Ядова Г.А. Цветковой Н.Н. Покровской, А.К. Саакяна и др., доктрина трудовой сущности человека отвечала требованиям идеологии и одновременно выступала инструментом компенсационного менеджмента, отражая мотивирование сотрудников предприятий на основе личностных потребностей и интересов, выражавшихся в содержании труда.

Как показали Н.Н. Дорошенко и другие авторы в своем исследовании, сегодня в системах государственного регулирования и социальной регуляции распространяется сервисная модель, т.е. человеческие отношения сводятся к эквивалентному обмену взаимными услугами, а экономическая подсистема общества может быть описана в социологическом анализе на основе интеракционизма, а с экономико-управленческой точки зрения – как транзакционная система, ключевыми ресурсами которой выступают знания и коммуникации.

Таким образом, сегодня социологическое и социально-экономическое исследование понятий «труд» и «трудовое поведение» может опираться на некоторое сочетание признаков этих понятий, которые могут быть в краткой форме сведены в следующую таблицу:

Таблица 1

Дихотомия содержательной и интеракционистской интерпретации понятия «труд»

|                                | Содержание труда  | Интеракции в труде  |
|--------------------------------|---|---|
| Базовое представление о труде  | Преобразовательная созидательная деятельность человека            | Эффективная система комбинирования ресурсов и обмена услугами (усилиями)  |
| Оплата труда отражает          | Вклад в создание продукта, потребляемого результата               | Договоренности и результат распределения функций, соответствует ситуативному определению ценности каждой функции и роли |
| Содержание понятия «экономика» | Субстантивное содержание понятия, «народное хозяйство»            | Формальное содержание понятия, «экономическое пространство», рынок или транзакционная система                           |
| Ориентация на                  | Создание результата   | Распределение результата  |
| Учет других функций            | На основе классовой теории оцениваются как ненужные и посторонние | Учитываются коммуникации, регуляция, обработка информации и др. функции в процессе производства благ                    |
| Базовые социальные элементы    | Социальные группы, отношения собственности                        | Распределение функций в процессе труда  |
| Социо-культурные основания     | Справедливость  | Доступ к ресурсу как источник доминирования и инструмент давления   |
| Технические основания          | Технология производства блага, оказания услуги                    | Коммуникационные и информационные технологии  |
| Основной элемент               | Материал (ресурс), данный природой                                | Правила игры и соглашения, вырабатываемые в ходе переговоров  |

Первая интерпретация понятия «труд» ориентирована на преобразование ресурсов и получение конкретного, воспринимаемого и подлежащего использованию результата труда. В этом случае принято говорить о хозяйственном поведении. Экономика в данном случае понимается как одна из главных подсистем общества, преимущественно адаптивного, по Т. Парсонсу и Н. Смелзеру, назначения, как некий механизм производства обобщенно понимаемых ресурсов.

Вторая интерпретация данного понятия направлена на взаимодействие, процедуры и поведенческие модели, социальные нормы и практики отношений, которые возникают по поводу хозяйственного поведения, т.е. по поводу доступа, распределения и преобразования ресурсов. В этом случае обычно говорят об экономике. А.Л. Слободской выделяет две стороны развития хозяйственной деятельности: техническую и социокультурную, при этом социокультурная компонента социологического анализа хозяйственной деятельности играет определяющую роль в выборе способа создания ценности (продукта, товара, услуги, результата проекта) на основе отношений, возникающих в области хозяйствования.

В.В. Радаев выделяет два значения экономического:

- ⇒ формальное значение, вытекающее из логического взаимоотношения результатов и затрат и образующееся вокруг понятий выбора и ограниченности ресурсов, поиска оптимальных способов использования средств для достижения максимального результата;
- ⇒ субстантивное значение, указывающее на зависимость человека от природы и ее продуктов, на необходимость материального обеспечения воспроизводства человеческого рода, сконцентрированное на целях экономики как сферы, обеспечивающей выживание и составляющей специфическую область жизнедеятельности человека.

К. Поланьи утверждает, что эти два значения имеют мало общего между собой, только реальное значение термина «экономический» может быть применено для эмпирического исследования экономической деятельности и трудового поведения.

Институционализация социальных практик закрепляет способы взаимодействия хозяйствующих субъектов с конкретной материально-технологической средой, которые позволяют получать оптимальный социально-экономический результат в долгосрочной перспективе, сохраняя целостность и не-

прерывность хозяйственной деятельности в обществе. В экономических институтах фиксируются, существуют и развиваются основные формы экономической интеграции каждого конкретного общества.

В связи с этим вопросы социально-экономического исследования труда опираются на выявление собственно содержания понятия «труд» и «трудолюбивые отношения», при этом социологический анализ сосредоточен на социокультурном обосновании содержательных трактовок труда и на изучении отношений, интеракций между социальными субъектами по поводу создания благ и удовлетворения потребностей.

С этой точки зрения труд является глубоко интегрированным в социальную ткань элементом деятельности человека в современном обществе.

### Литература

1. Polanyi K. La Grande Transformation. Aux origines politiques et économiques des notre temps. – Paris: Gallimard, 1983.
2. Поланьи К. Саморегулирующийся рынок и фиктивные товары: труд, земля и деньги // THESIS. – 1933. Т.1. – Вып. 2. – с. 10–17.
3. Simon H. A. Formal Theory of the Employment Relationship // *Econometrica*. – 1951. 19(3). – p. 293–305.
4. Alchian A. Economic forces at work. – Indianapolis, 1977; Demsetz H. Efficiency, competition, and policy. Vol. I-II. – Oxford, 1988.
5. Ядов В. А. Отношение к труду: концептуальная модель и реальные тенденции // Социологические исследования – 1983. – №3. – с. 16–25.
6. Цветкова Г. А. Состояние и трансформация мотивации трудовой деятельности в условиях перехода к рынку. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата социологических наук. – М.: РАУ. – 1994. – 16 с.
7. Покровская Н.Н. Труд: макроанализ // *Личность и Культура*, 2012. – №4. – с. 27–29.
8. Саакян А.К., Оганян К.М., Покровская Н.Н., Бахшян А.Ж. Ценностные ориентации в трудовом поведении и кросс-культурное исследование трудовой миграции. – Ереван: «Эдит Принт», 2012. – 372 с.
9. Parsons T., Smelser N. *Economy and society*. – New York: Free press, 1956.
10. Слободской А.Л. Экономическая психология постсоветского пространства // *Личность и Культура*. - 2001. - №5/6. - с. 33–42.
11. Радаев В.В. Экономическая социология: курс лекций. – М: Аспект Пресс, 1997.
12. Поланьи К. Два значения термина «экономический» // *Неформальная экономика: Россия и мир*. – М.: Логос, 1999. – с. 498.

## РЕЗЮМЕ

Автор рассматривает очень актуальный вопрос трудового поведения. Важным является то, что автор в своей статье показывает двойственность труда. В частности, он представляет труд как ресурс, который выступает товаром на рынке. В обобщении автор показывает, что труд является глубоко интегрированным в социальную ткань элементом деятельности человека.

**Ключевые слова** - труд, поведение, социология труда, концепция, капитал, модель.

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ  
ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՇԳՐՏՈՒՄՆԵՐ**

ԱՐԵԳ ՍԱՖԱՐՅԱՆ

Հեղինակը քննարկում է աշխատանքային վարքի հետ կապված շատ հրատապ հարց, ցույց տալիս աշխատանքի երկակիությունը: Մասնավորապես Ա.Սաֆարյանն աշխատանքը դիտարկում է որպես ռեսուրս, որպես շուկայական ապրանք: Ընդհանուր առմամբ հեղինակը ցույց է տալիս, որ աշխատանքը խորապես ինտեգրված է մարդկային սոցիալական գործունեությանը:

**Բանալի բառեր** - աշխատանք, վարքագիծ, աշխատանքի սոցիոլոգիա, հայեցակարգ, կապիտալ, մոդել:

**REFINEMENT OF SOCIAL ASSESSMENT OF LABOR BEHAVIOR**

AREG SAFARIAN

The author investigates a very topical issue of labor behavior, the duality of labor. In particular, Safarian envisages labor as a merchandise. The writer predominantly shows that working is a phenomena deeply integrated into the human social activities.

**Key words** - work, behavior, sociology of work, concept, capital model.

---

# ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ИНТЕГРАЦИЯ ГОСУДАРСТВ-ЧЛЕНОВ ЕВРАЗЭС И ФОРМИРОВАНИЕ ТАМОЖЕННОГО СОЮЗА

АРМАН МАДАТЯН

Новое столетие характеризуется расширением существующих и формированием новых интеграционных экономических объединений на всех уровнях. Вне рамок интеграции ни Россия, ни, тем более, страны СНГ, Таможенного союза, государства-члены ЕврАзЭС не могут осуществить реформы, преодолеть затяжной кризис, восстановить экономику, обеспечить своим народам достойные условия жизни. Однако, как отмечает Ю.Г. Кисловский, на современном этапе промышленно развитые страны стремятся обеспечить свои сферы влияния и не допустить экономической интеграции бывших советских республик<sup>1</sup>.

Как уже говорилось в предыдущих разделах, интеграция включает несколько основных этапов: зону свободной торговли, таможенный союз, общий рынок и, как высший этап, - экономический и валютный союз. Страны, подписавшие Устав СНГ, и Украина создали ассоциацию свободной торговли с льготным режимом для всех ее участников. Россия, Беларусь, Казахстан, Киргизия и Таджикистан создали Таможенный союз<sup>2</sup>. Россия и Беларусь пошли по пути наивысшей интеграции - создания Экономического союза.

Анализ деятельности интеграционных объединений на базе государств постсоветского пространства показывает, что в начале нового столетия в экономической и таможенной интеграции сделан шаг вперед. Это был сложный процесс. Речь шла о создании органа экономической интеграции государств Таможенного союза Республики Беларусь, Республики Казахстан, Киргизской

---

<sup>1</sup> **Кисловский Ю.Г.** История таможенного дела и таможенной политики России, М., 2004, с. 532.

<sup>2</sup> В январе 2006 г. список государств, входящих в Таможенный союз, пополнился новым участником - Узбекистан, бывший ранее наблюдателем при данной международной организации, получил статус полноправного члена Сообщества.

Республики, Российской Федерации и Республики Таджикистан, который бы обеспечил не формальную, а реальную экономическую интеграцию.

Желание сохранить единое экономическое пространство после распада СССР со стороны Беларуси, Казахстана, Киргизии, России и Таджикистана привело к подписанию Соглашения о принципах таможенной политики от 13 марта 1992 г., предусматривающего создание Таможенного союза, который должен был стать в пределах своих функций самостоятельным субъектом международного права. Предусматривалось создание Сторонами общей таможенной территории, представляющей собой совокупность таможенных территорий Сторон.

Соглашение о принципах таможенной политики от 13 марта 1992 г., фактически утверждавшее Таможенный союз, не было ратифицировано и не вступило в силу<sup>3</sup>.

Проект нового соглашения о Таможенном союзе был подготовлен Советом руководителей таможенных служб государств СНГ и рекомендован главам государств в октябре 1994 г. Международно-правовая основа функционирования Таможенного союза была заложена в 1995-1996 гг. При этом Таможенный союз не является международной организацией, он представляет собой систему двусторонних договоров.

6-го января 1995 г. правительства Российской Федерации и Республики Беларусь подписали в Минске Соглашение о Таможенном союзе между Российской Федерацией и Республикой Беларусь<sup>4</sup>. Договаривающиеся стороны определили Таможенный союз как экономическое объединение государств, основывающееся на единой таможенной территории и однотипном механизме регулирования экономики, базирующемся на рыночных принципах хозяйствования и унифицированном законодательстве (п. 2 ст. 1 Соглашения).

Целями Таможенного союза являются:

- обеспечение совместными действиями социально-экономического

---

<sup>3</sup> Соглашение о принципах таможенной политики от 13 марта 1992 г. // Информационный вестник Совета глав государств и Совета глав правительств СНГ «Содружество», 1992, № 3. Согласно Постановлению Правительства РФ от 24 июня 2003 г. № 264 депозитарию направлено уведомление о намерении РФ не становиться участником настоящего Соглашения.

<sup>4</sup> Соглашение о Таможенном союзе между Российской Федерацией и Республикой Беларусь от 6 января 1995 г. // Бюллетень международных договоров, 1995, № 10.



прогресса своих стран путем устранения между ними препятствий для свободного экономического взаимодействия между хозяйствующими субъектами;

- гарантирование устойчивого развития экономики, свободного товарообмена и добросовестной конкуренции;

- укрепление координации экономической политики своих стран и обеспечение всестороннего развития национального народного хозяйства;

- создание условий для формирования общего экономического пространства;

- создание условий для активного выхода государств-членов Таможенного союза на мировой рынок.

Таможенный союз как экономическое объединение государств основывается на следующих принципах.

I. Наличие единой таможенной территории государств-участников Таможенного союза. Формирование такой территории осуществляется путем:

- отмены в торговле между сторонами товарами, происходящими с их территории, таможенных пошлин, налогов и сборов, имеющих эквивалентное действие, а также количественных ограничений;

- установления и применения в отношениях с третьими странами одинакового торгового режима, общих таможенных тарифов и мер нетарифного регулирования внешней торговли;

- формирования механизма взаимоотношений Таможенного союза с третьими государствами и международными организациями на основе положений Соглашения между Правительством России и Правительством Беларуси о едином порядке регулирования внешнеэкономической деятельности от 12 апреля 1994 г.

II. Наличие однотипного механизма регулирования экономики, базирующегося на рыночных принципах хозяйствования и унифицированном законодательстве.

Соглашением предусмотрены следующие этапы создания Таможенного союза:

1. Практическое применение механизма функционирования Соглашения о создании зоны свободной торговли от 15 апреля 1994 г.<sup>5</sup>. Унификация в те-

---

<sup>5</sup> Соглашение о создании зоны свободной торговли от 15 апреля 1994 г. // Бюллетень международных договоров, 1994, № 9.

чение четырех месяцев с даты подписания данного Соглашения внешнеторгового, таможенного, валютно-финансового, налогового и другого законодательства, затрагивающего внешнеэкономическую деятельность. Формирование механизма взаимоотношений Таможенного союза с третьими странами и международными организациями на основе делегирования соответствующих полномочий одной из сторон.

2. После выполнения всех мероприятий, предусмотренных первым этапом, объединение таможенных территорий государств-сторон в единую таможенную территорию, решение вопроса о международной правосубъектности Таможенного союза и судьбе действующих международных договоров.

Создание Таможенного союза было нацелено на активизацию торгово-экономического сотрудничества и углубление интеграции, отмену ограничений во взаимной торговле и оздоровление экономики государств, входящих в Таможенный союз.

В соответствии с международной практикой, Таможенный союз создается путем заключения государствами многостороннего договора<sup>6</sup>. Генеральное соглашение о тарифах и торговле определяет Таможенный союз как замену «нескольких таможенных территорий одной при полной отмене пошлин внутри данного союза и создание единого внешнего таможенного барьера»<sup>7</sup>. Таможенный союз образуется в том случае, если соглашение о свободной торговле дополняется единой внешнеторговой политикой его участников в отношении третьих стран. В то же время полностью сохраняется экономический суверенитет государств в вопросах экономической и валютной политики. С учетом изложенного, по нашему мнению, Таможенный союз может иметь место тогда, когда два или более государства на основе заключенного ими договора создают единую таможенную территорию, в целях чего устанавливается единый внешний таможенный тариф, организовывается единая таможенная администрация. Договор может содержать условия о порядке и критериях распределения между государствами полученных таможенных доходов.

При этом необходимо различать термины «общий» и «единый». Общий – функционирующий параллельно национальному, наряду с ним. Это может

---

<sup>6</sup> См.: **Ершов А.Д.** Международные таможенные отношения, СПб., 2000, 195 с.

<sup>7</sup> См.: Генеральное соглашение о тарифах и торговле от 30 октября 1947 г., п. 8 ст. XXIV // Сборник «Всемирная торговая организация документы и комментарии» / Под ред. С.А. Смирнова, М., 2001, с. 56.

относиться и к понятию таможенного тарифа, и к понятию таможенной территории. Единый - заменяет национальный.

Общая таможенная территория - таможенные территории, находящиеся в стадии формирования единой таможенной территории, в условиях формирования общих принципов экономического взаимодействия с третьими странами, снятия таможенного оформления товаров национального происхождения между ними.

Единая таможенная территория - таможенная территория, на которой действует принцип единства управления таможенным делом. В торговле между странами, образующими единую таможенную территорию, действует режим внутренней торговли.

Согласно международной практике, территория государств, входящих в Таможенный союз, представляет собой единую таможенную территорию с единым таможенным тарифом и таможенными правилами. Действие единого таможенного тарифа исключает возможность применения тем или иным государством-участником данного союза каких-либо ограничительных правил международной торговли на своей таможенной территории. При этом достигнутое между государствами-участниками Таможенного союза соглашение должно закрепить положение о том, что целью создания Таможенного союза или зоны свободной торговли является облегчение торговли между их территориями. Не должно допускаться создание барьеров в торговле между странами-участниками и другими территориями.

Государства-члены Таможенного союза организовали контроль за правоприменительной практикой и обеспечением единообразия методов:

- установления надежных механизмов контроля за недопущением не-санкционированного реэкспорта товаров в третьи страны;
- осуществления платежно-расчетных отношений по торговым и неторговым операциям на двусторонней и многосторонней основе;
- применения единого регулирования внешних экономических связей в отношении третьих стран;
- сближения экономических условий хозяйствования;
- ведения таможенной статистики внешней торговли;
- осуществления надежного таможенного контроля на внешних таможенных границах государств договаривающихся сторон.

В своей деятельности в рамках Таможенного союза государства-участники не игнорировали опыт таможенного и торгового регулирования, накопленный странами в рамках СНГ за пять лет его существования, и договорились применять: Основы таможенных законодательств государств-участников СНГ, одобренные Советом глав правительств государств Содружества 10 декабря 1994 г.<sup>8</sup>; Единую методологию таможенной статистики внешней торговли государств-участников СНГ, утвержденную Советом глав правительств государств Содружества 10 декабря 1994 г.; Правила определения страны происхождения товаров, утвержденные Советом глав правительств государств Содружества 24 сентября 1993 г., с последующими изменениями и дополнениями; Соглашение о реэкспорте товаров и порядке выдачи разрешения на реэкспорт, подписанное в Москве 15 апреля 1994 г. Однако вопрос о распределении таможенных пошлин, налогов и сборов при ввозе и вывозе товаров по примеру Европейского Союза как в СНГ, так и в рамках Таможенного союза не был решен.

Государства-члены Таможенного союза договорились обеспечить единство управления своими таможенными службами, организовать совместный контроль за перемещением товаров и транспортных средств, отменить таможенный контроль на общей границе при безусловном обеспечении надежного таможенного контроля на своих внешних границах.

В настоящее время во взаимной торговле государств-участников Таможенного союза режим свободной торговли товарами действует фактически в полном объеме, то есть Стороны во взаимных связях не применяют таможенные пошлины, налоги и сборы, имеющие эквивалентное действие, а также количественные ограничения. Однако вероятность введения сторонами изъятий и ограничений из режима свободной торговли не исключена по следующим причинам.

Во-первых, оформление режима свободной торговли на взаимной основе к настоящему моменту не завершено.

Во-вторых, в соответствии с положениями Договора о Таможенном союзе и Едином экономическом пространстве, необходимым условием установле-

---

<sup>8</sup> Основы таможенных законодательств государств-участников Содружества Независимых Государств от 10 февраля 1995 г. // Бюллетень международных договоров, 1995, №9.

ния режима свободной торговли является применение единого порядка регулирования внешнеторговой деятельности, который находится в стадии разработки. Межгосударственный совет поручил правительствам государств-участников Таможенного союза продолжить работу по обеспечению режима свободной торговли в полном объеме, без изъятий и ограничений, и его правовому оформлению.

Интеграция стран Таможенного союза предполагает более четкое согласование действий суверенных государств после подписания договора о создании Евразийского экономического союза (ЕАЭС) от 29 мая 2014 года.

## РЕЗЮМЕ

В данной статье автор, основываясь на исследовании современных политико-правовых изменений, представил историю формирования Таможенного союза. В частности, были раскрыты особенности принципов, целей, задач и методов функционирования Таможенного союза. Автор также представил обязанности стран-участниц Таможенного союза по урегулированию особенностей режима свободной торговли.

**Ключевые слова** - Таможенный союз, страны-участницы, интеграция, единая таможенная территория, режим свободной торговли.

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ-ԵՐԿՐՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

### ԱՐՄԱՆ ՄԱԴԱԹՅԱՆ

Տվյալ գիտական հոդվածում հեղինակը, հիմնվելով ժամանակակից քաղաքական-իրավական փոփոխությունների ուսումնասիրության վրա, ներկայացնում է Մաքսային միության ձևավորման պատմությունը: Մասնավորապես բացահայտվում են Մաքսային միության սկզբունքների, նպատակների, խնդիրների, գործունեության մեթոդների առանձնահատկությունները: Հեղինակը նաև ներկայացրել է Մաքսային միության անդամ-երկրների պարտականություններն ազատ առևտրի ռեժիմի առանձնահատկությունների կարգավորման գործընթացում:

**Բանալի բառեր** - Մաքսային միություն, մասնակից երկրներ, ինտեգրում, միասնական մաքսային տարածք, ազատ առևտրի ռեժիմ:

## INTEGRATION OF EURASEC MEMBER STATES & THE FORMATION OF CUSTOMS UNION

ARMAN MADATYAN

The author of this article, based on the study of modern politico-legal changes, introduces the history of the Customs Union. Specifically, the article tries to reveal the characteristic features of the activities, principles, goals and objectives of the Customs Union. The author also presents the obligations of the participant-countries of Customs Union to adjust the free trade specific regime features.

**Key words** - Customs Union, member countries, integration, unified customs territory of the free trade regime.

## ՄՈՐ ԿՈՂՄԻՑ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵՆԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԷԴԳԱՐ ՎԱՀՐԱԴՅԱՆ

ՀՀ նախկին քրեական օրենսգրքում սպանության տվյալ տեսակն առանձին հանցակազմով նախատեսված չէր: Ուստի նախկինում նման հանցագործությունները որակվում էին նույն օրենսգրքի հոդված 100-ով՝ որպես հասարակ (առանց ծանրացուցիչ հանգամանքների) սպանություն: ՀՀ քրեական նոր օրենսգրքը, առանձին հանցակազմ նախատեսելով մոր կողմից ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո, ինչպես նաև հոգեճնշող կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում նորածին երեխայի սպանության համար, այն դասում է մեղմացուցիչ հանգամանքներում կատարվածների շարքում<sup>1</sup>:

Որպես արտոնյալ հանցակազմ՝ այս տեսակը նորոյթ է, թեկուզ և դրա առանձնացման հարցը բազմիցս շոշափվել է իրավաբանական գրականության մեջ: Երբեմն մոր կողմից նորածին երեխայի սպանությունն անվանում են մանկասպանություն, սակայն դա ճիշտ չէ, քանզի մանկասպանությունն առավել լայն հասկացություն է (և՛ ըստ սուբյեկտի, և՛ տուժողի տարիքային բնութագրի, և՛ սուբյեկտիվ կողմի)<sup>2</sup>:

ՀՀ քր. օրենսգրքի 106-րդ հոդվածում օրենսդիրը չի սովել նորածին երեխա հասկացությունը, որը սակայն կարևոր նշանակություն ունի այն հարցի լուծման հետ կապված, թե մինչև որ պահն է երեխան համարվում առկա, որն էլ թույլ կտա արարքը որակել ՀՀ քր. օրենսգրքի 106-րդ հոդվածով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված մյուս հանգամանքները:

Առավել ընդունելի է նորածնության վերաբերյալ մանկաբուժության մեջ նշված ժամանակահատվածը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեկ ամսվա ընթացքում երեխան հասցնում է ամբողջությամբ հարմարվել սովորական կյանքի պայմաններին: Ավելին, օրենքում նման դրույթի ամրագրումը

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, Ե-2007, էջ 108: HH qreakaniravunq. HatukmasE-2007 Ej 108:

<sup>2</sup> Տե՛ս **Соловьева Н.** Психотравмирующая ситуация: значения для квалификации детоубийства II Законность, 2006, N 8. Psixotravmiruyushaya situaciya. Znacheniya dlya kvalifikacii detoubiystva II Zakonnost 2006 N 8.

իրական երաշխիք կարող է հանդիսանալ արարքի ճիշտ որակման և հնարավոր սխալներից խուսափելու համար:

Հանցագործության օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել երեք եղանակով, որոնք կարող են արտահայտվել ինչպես գործողության, այնպես և անգործության տեսքով՝ 1. նորածին երեխայի սպանությունը ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո, 2. նորածին երեխայի սպանությունը հոգեճնշող վիճակի պայմաններում, 3. նորածին երեխայի սպանությունը մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում: Ս. Բորոդինը գրում է. «Մանկասպանությունը կարող է կատարվել ինչպես անմիջապես ծննդաբերությունից հետո, այնպես և ծննդաբերության ժամանակ»: Այս կապակցությամբ հարց է առաջանում, թե կարելի՞ է արդյոք մանկասպանություն համարել նորածին կյանքից զրկելը մինչև նրա շնչելը կամ էլ անգամ մինչև նրա լույս աշխարհ գալը<sup>3</sup>: Քրեական օրենսգրքի 106-րդ դիսպոզիցիայում նշվում է «մոր կողմից նորածին երեխայի սպանությունը ծննդաբերության ժամանակ կամ ծննդաբերությունից անմիջապես հետո»: Բայց քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ սպանություն ասելով հասկացվում է ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը, հետևաբար քրեորեն պատժելի արարք կհամարվի երեխային մահ պատճառելը ոչ թե մինչև կենդանաձևությունը, այլ նրա մոտ կյանքի առաջին հատկանիշներ առաջանալու պահը: Ծննդաբերության առաջին փուլում մոր կողմից երեխային դիտավորյալ մահ պատճառելը, այսինքն՝ երբ նա գտնվում է ներարգանդային վիճակում, հանցակազմ չի պարունակում: Այսպիսով՝ անգամ քրեական օրենսգրքի 106-րդ հոդվածը, չնայած դիսպոզիցիայում դրա ձևակերպմանը, չի պաշտպանում երեխայի կյանքը ծննդաբերության առաջին փուլում: Ինչպես նշեցինք, մոր կողմից նորածին երեխայի սպանությունը կարող է կատարվել ինչպես ակտիվ գործողություններով (օրինակ՝ երեխային խեղդելը), այնպես էլ անգործությամբ (օրինակ՝ կերակրելուց հրաժարվելը և այլն):

Մոր կողմից նորածին երեխայի սպանությունն ակտիվ գործողությունների պարագայում մայրն իրականացնում է այս կամ այն ակտիվ գործողությունը, որոնց արդյունքում վրա է հասնում նորածնի մահը: Անգործության դեպքում մայրը նորածնին դիտավորյալ թողնում է առանց օգնության և խնամ-

<sup>3</sup> Տե՛ս **Бородин С.В.** Ответственность за убийство: Квалификация наказания по российскому праву, стр. 47. Borodin S.V. Otvetstvennostzaubiistvo: Kvalifikaciya nakazanii porossiiskomu pravu str. 47.



քի: Նա ոչինչ չի ձեռնարկում նորածնին սպանելու համար, բայց և չի խոչընդոտում վերջինիս մահվան վրա հասնելը:

Սույն հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից է հանրորեն վտանգավոր հետևանքը: Այսինքն, այստեղ շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ նորածին երեխայի սպանության ժամանակ կարևոր է մահվան՝ որպես հանրորեն վտանգավոր հետևանքի վրա հասնելը: Ընդ որում, նորածին երեխայի մահը պետք է մոր կողմից կատարված գործողության (անգործության) արդյունք լինի: Սա նշանակում է, որ նորածնի մահվան պատճառն ուղիղ կապի մեջ պետք է լինի միմիայն մոր արարքի հետ, այլ ոչ թե օրինակ հիվանդության կամ դժբախտ պատահարի հետևանք լինի: Այլ կերպ ասած, պետք է ապացուցել երեխայի մահվան և մոր գործողության (անգործության) միջև եղած պատճառական կապը: Գործողությունը վրա հասած հետևանքների պատճառ ճանաչելու համար անհրաժեշտ է, որ այն ոչ միայն ժամանակի մեջ նախորդի հետևանքին, այլև վրա հասած հետևանքների պատճառ դիտարկվող գործողությունը կամ անգործությունն իր մեջ այդպիսի հետևանք առաջացնելու ներքին իրական հնարավորություն բովանդակի<sup>4</sup>:

Մոր կողմից նորածին երեխայի սպանության ժամանակ մոր գործողության կամ անգործության և հանրորեն վտանգավոր հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը, ըստ Կուրգակինայի, պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝ 1. արարքը ժամանակի մեջ պետք է նախորդի մահվան վրա հասնելուն, իսկ եթե տեղի է ունեցել հանցավորձ, ապա այլ վտանգավոր հետևանքներին, 2. արարքը ներքին օրինաչափությամբ, մահը հիմնավորող անհրաժեշտ հանգամանք պետք է լինի, 3. արարքը կատարելու պահին պետք է մահ առաջացնելու իրական հնարավորություն ստեղծի<sup>5</sup>:

Օբյեկտիվ կողմի ֆակտատիվ հատկանիշների բացահայտումը ևս կարևոր նշանակություն ունի մոր կողմից նորածին երեխայի սպանության հանցակազմը վերլուծելիս: Երբեմն լինում են դեպքեր, երբ այս հատկանիշները ֆակտատիվից դառնում են պարտադիր, եթե նկարագրված են օրենքում: Այս դեպքում վերջիններս սովորաբար ձևակերպվում են որպես հան-

<sup>4</sup> Տե՛ս **Գրիգորյան Մ.**, Քրեական իրավունք, Երևան, 2002, էջ 205: Grigoryan M.V. Qreakan iravunq, Erevan 2002 Eg 205.

<sup>5</sup> Տե՛ս **Кургузкина Е. Б.** Убийство матерью новорожденного: природа, причины, предупреждение. Воронеж, 1999, стр. 18. Kurguzkina E. B. Ubiihstvo materyu novorogdenno; priroda, prichini, predupregdenie. Voroneg 1999 str 18.

ցակազմը որակյալ դարձնող հանգամանքներ: Այսպես, ֆակուլտատիվ հատկանիշներից ժամանակը դառնում է հանցակազմի պարտադիր հատկանիշ և կարևորվում է այնքանով, որքանով մոր կողմից նորածին երեխայի սպանության հանցակազմով արարքը որակելու համար ընդունված է նորածնության քանութթորյա ժամկետը, որի անցման դեպքում արարքը ՀՀ քր. օրենսգրքի 106-րդ հոդվածով որակման ենթակա չէ; Բացի այդ, քննարկվող հոդվածի դիսպոզիցիայում նշված է. «...ծննդաբերության ժամանակ, կամ դրանից անմիջապես հետո՝ ժամանակահատվածը, ինչը փաստում է այն մասին, որ ժամանակն ուղղակիորեն կապված է սույն հանցակազմի հետ և այս պարագայում հանդես է գալիս որպես օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ»<sup>6</sup>:

Սպանությունը հոգեկան խանգարման վիճակում, չբացառելով մեղսունակությունը, իր տեղն ունի այն դեպքերում, երբ հանցագործության կատարման պահին հոգեկան խանգարման հետևանքով մայրը չի կարողացել ամբողջությամբ գիտակցել իր գործողությունների փաստացի բնույթը և հանրային վտանգավորությունը կամ ղեկավարել դրանք:

Որոշել, թե արդյո՞ք կինը ծննդաբերությունից հետո գտնվել է հոգեկան խանգարման վիճակում, որը չի բացառում նրա մեղսունակությունը, հնարավոր է միայն համալիր հոգեբանահոգեբուժական փորձաքննություն անցկացնելուց հետո: Որոշ հեղինակներ առաջարկում են նման ժամկետի չափանիշ համարել մեկամսյա ժամկետը: Այդ ժամկետից դուրս երեխայի սպանությունը նրանց կարծիքով պետք է որակավորվի քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով<sup>7</sup>:

Առաջին հայացքից մոր կողմից նորածին երեխայի սպանության հանցակազմի նման հատկանիշները, ինչպիսին կնոջ հոգեկան խանգարման մեջ գտնվելն է, որը չի բացառում ծննդի հետ կապված մեղսունակությունը, ինչպես նաև ծննդաբերողի վրա ժամանակի ազդեցությունը, ծննդաբերությունից հետո հոգեվարքի մեջ պետք է գնահատական տան կապված յուրաքանչյուր դեպքում գործի հանգամանքների հետ:

<sup>6</sup>Տե՛ս Աբրահամյան Կ., Մոր կողմից նորածին երեխայի սպանություն, Երևան, 2011, էջ 30: Abrahamyan K. Mor koxmic noracin erexayi spanutyun; Erevan-2011, Eջ 30.

<sup>7</sup> Տե՛ս Соловьева Н. Психотравмирующая ситуация. Значение для квалификации детоубийства II Законность, 2006, N 8, стр. 31. SolovyovaN. Psixotravmiruyushaya situaciya. Znachenie dlya kvalifikacii detoubiistva II Zakonnost 2006 N 8.str. 31.

Մենք ենթադրում ենք, որ անհրաժեշտ է ժամանակի երկարատևության ընթացքի միասնական չափանիշի որոշում, որի շրջանակներում տվյալ հանցագործությունը համարվում է մոր կողմից նորածին երեխայի սպանություն, որպեսզի բացառվեն միատիպ հասկացությունների սուբյեկտիվիզմը և տարբեր գնահատականները: Անհրաժեշտ է հստակ սահմանել հետծննդյան շրջանի ժամանակահատվածը, երբ մայրը սպանում է երեխային՝ գտնվելով հոգեվարքի մեջ կամ հոգեկան խանգարման ազդեցության տակ, չբացատրելով մեղսունակությունը: Շարադրենք հիմնական պահանջները, որոնք մեր կարծիքով պետք է համապատասխանեն նման չափանիշի 1. դա ժամանակահատվածն է, որի ընթացքում կինը համարվում է ծննդաբերած, այսինքն՝ գտնվելով ծննդով պայմանավորված հոգեֆիզիկական վիճակում, 2. ժամանակահատված, որի ընթացքում կինը համարվում է ծննդաբերած, այսինքն՝ գտնվելով ծննդով պայմանավորված հոգեկան խանգարման վիճակում, 3. այդ ժամանակահատվածը պետք է լինի ոչ երկարատև:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է: Այդպիսին կարող է լինել միայն նորածնի մայրը:

Սակայն տվյալ հանցակազմի սուբյեկտի մասին հստակ պատկերացում ունենալու համար հարցը պետք է քննարկել ժամանակակից գիտության և բժշկության զարգացման համատեքստում: Խոսքը վերաբերում է իմպլանտացիայի միջոցով կնոջ արգանդում բեղմնավորված սեռական բջիջներ տեղադրելուն և այն խնդրի առաջացմանը, թե նման դեպքում կինը (սուրոգատ կամ փոխնակ մայրը) կարո՞ղ է արդյոք համարվել ՀՀ քր. օրենսգրքի 106-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտ: Այլ կերպ ասած՝ սուրոգատ մայրը նորածին երեխայի սպանության համար քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի արտոնյալ հանցակազմով (ՀՀ քր. օրենսգրքի 106-րդ հոդվ.), թե՞ ՀՀ քր. օրենսգրքի 104-րդ հոդվածի մասով: Այստեղ հարց է առաջանում, թե երեխայի մայր ով պետք է համարվի, իրավաբանական մայրը, թե՞ փաստացի մայրը:

Խնդիրն այն է, որ ներկայումս սուրոգատ մայրության ինստիտուտն արդեն տարածված բնույթ է կրում, և օրենսդրական կարգավորման քայլեր են կատարվում: Օրինակ, ՌԴ ընտանեկան օրենսգրքի 4-րդ բաժնի 51-րդ հոդվածը և 3-րդ բաժնի 52-րդ հոդվածը, ինչպես նաև ՌԴ քաղաքացիության կացության ակտերի մասին դաշնային օրենքի 5-րդ բաժնի 16-րդ հոդվածը սահմանում են սուրոգատ մայրության ինստիտուտի իրավական ասպեկտները և թույլատրում վերջինիս կիրառումը:

«ՀՀ օրենսդրության մեջ այս ինստիտուտը ևս իր ամրագրումն է ստացել: «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է փոխնակ մոր ինստիտուտը և դրա հետ կապված մյուս հարցերը: Սույն օրենքի համաձայն՝ փոխնակ մայր է համարվում դոնորական սաղմն իր արգանդում կրած կինը, որից ծնված երեխան չի կրում նրա գենոտիպը: Իսկ համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Ամուսինները, որոնք համաձայնություն են տվել կատարելու սաղմի պատվաստում և պտղի հասունացում այլ կնոջ միջոցով, ինչպես նաև կինը, որի միջոցով կատարվել է պտղի հասունացումը, երեխայի ծնունդը գրանցելուց հետո իրավունք չունեն հենվելու այդ հանգամանքի վրա»:

Պետք է նշել, որ սուրոգատ մոր ինստիտուտի ամրագրումն ունի իր դրական և բացասական կողմերը: Կարծում ենք՝ դրական կողմն այն է, որ հնարավորություն է տրվում այն ամուսիններին, որոնք չեն կարողանում բնական ճանապարհով երեխաներ ունենալ, ծնողներ դառնալ: Բացասական առումով կինը երբեմն հեշտությամբ հրաժարվում է այն երեխայից, որին հասունացրել է իր օրգանիզմում՝ վերջինիս դիտելով որպես նյութական միջոցի աղբյուրի: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ սուրոգատ մայր դառնալու համաձայնությունը տրվում է առևտրային նպատակով: Դա նշանակում է, որ նման գործարքը կարող է կնքվել առևտրային և ոչ առևտրային նպատակով: Այսինքն՝ կինը կոնկրետ գումար կամ նյութական շահ ստանալու դիմաց համաձայնում է իր օրգանիզմում հասունացնել «ուրիշի» երեխային:

Ի մի բերելով ասվածը՝ անհրաժեշտ է հստակ պատկերացնել, որ տվյալ հանցագործության կանխարգելման կամ արդեն իսկ կատարվածի նկատմամբ ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար հարկավոր է իմանալ դրա ընդհանուր բնութագիրը և տարբերակել դրա տեսակները:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Այս աշխատանքում լուսաբանվում են հարցեր, որոնք կապված են մոր կողմից նորածին երեխայի սպանության առանձնահատկությունների հետ: Աշխատանքում տրված է տվյալ սպանության բնութագիրը՝ որպես հանցագործության առանձնահատուկ տեսակ, ինչպես նաև այնպիսի որակական հատկանիշներ, որոնք թույլ են տալիս օրենսդրին տարբերել այն հասարակ սպանությունից և ներառել ինքնուրույն հանցակազմի մեջ: Ինչպես նաև սահմանվում է, թե որ պահից է նորածին երեխան համարվում նորածին, ինչը թույլ է

տալիս ճիշտ որակել արարքը: Այս աշխատանքում տրված է տվյալ հանցագործության մանրակրկիտ բնութագիրը:

Աշխատանքում առաջարկվում է հստակ ձևակերպել հետծննդյան ժամանակահատվածը, երբ մայրը սպանում է երեխային՝ գտնվելով հոգեճնշող կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում: Տրված է նաև «սուրոգատ մոր» ինստիտուտի մանրակրկիտ բնութագիրը:

**Բանալի բառեր** – սպանության տեսակ, նորածին երեխա, արարքի որակում, հոգեճնշող, հոգեկան խանգարում, սուրոգատ մոր ինստիտուտ, մեղսունակությունը չբացառող:

## ОСОБЕННОСТИ УБИЙСТВА МАТЕРЬЮ НОВОРОЖДЕННОГО РЕБЕНКА

ЭДГАР ВАГРАДЯН

В работе освещаются вопросы, связанные с особенностями убийства матерью новорожденного ребенка. В данной работе дана характеристика состава данного убийства как привилегированного вида, а также такие качественные особенности, которые позволяют законодателю отличить его от простого убийства и включить самостоятельный состав преступления. Также определяется с какого момента ребенок считается новорожденным, что позволяет правильно квалифицировать деяния. В статье дан подробный анализ состава данного преступления. В работе предлагается четко сформулировать послеодовой промежуток времени, когда мать убивает ребенка, находясь в психотравматическом или психическом состоянии, не отрицая невменяемость. Также дан подробный анализ института суррогатного материнства.

**Ключевые слова** - тип убийства, новорожденный ребенок, квалифицировать деяния, психотравматический, психическое состояние, институт суррогатного материнства, не отрицая невменяемость.

## FEATURES OF HOMICIDE OF A NEW BORN CHILD BY ITS MOTHER

EDGAR VAHRADYAN

This paper highlights the special features of filicide (especially a homicide of a new born child committed by its mother). The attributes of a particular murder as a special type are presented as well as the distinctive features that allow a legislator to distinguish it from other common murders and include it in the special murder cases. The article also tries to determine the moment when a newborn baby is maintained to be a newborn, which enables to qualify the act of murder in precision. A detailed description of the features of this homicide is as well given.

The article suggests to define clearly the period following childbirth, when a mother being in postpartum psychosis, psycho-traumatic or mental condition, without excluding even insanity comits infanticide. It also presents a thorough analysis of the institution of ‘surrogate motherhood’.

**Key words** - type of murder, newborn child, guarantee of action, psycho-traumatic, mental condition, institution of surrogate motherhood, without excluding insanity.

### ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Քրեական օրենսգիրք
2. ՀՀ քրեական իրավունք, հատուկ մաս, Ե., 2007
3. **Գրիգորյան Մ. Վ.**, Քրեական իրավունք, Երևան, 2002
4. **Աբրահամյան Վ.**, Մոր կողմից նորածին երեխայի սպանություն, Երևան, 2011
5. **Бородин С. В.** Ответственность за убийство: квалификация наказания по российскому праву, М., 1986
6. **Кургузкина Е. Б.** Убийство матерью новорожденного: природа, причины, предупреждение. Воронеж, 1999
7. **Снегирев А. А.** Об уголовно-правовой защите человеческого плода в процессе внутриутробного развития и родов, Медицинское право, 2009, N4
8. **Соловьева Н.** Психотравмирующая ситуация: значение для квалификации детоубийства II Законность, 2006, N 8

---

---

# ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ԷՄՄԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

*«Կոմիտասին մարտելու համար կյանքս չի հերի-  
քի: Որոշ մարդիկ կարծում են, որ Կոմիտասին կարելի  
է մշակել: Միայն ծիծաղել կարելի է: Կոմիտասը իմ մե-  
ծագույն սերն է»:*

*Հովհաննես ՉեքիՋյան*

2014թ. հունվարի 23-ին լրացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, պրոֆեսոր Հովհաննես ՉեքիՋյանի ծննդյան 85-ամյա հոբելյանը: Հ.ՉեքիՋյանի ծննդյան 85-ամյակի կապակցությամբ ստեղծված կառավարական հոբելյանական հանձնաժողովի կողմից հաստատված հոբելյանական միջոցառումների շարքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը 2014թ. սեպտեմբերի 26-27-ին գումարեց Հ.ՉեքիՋյանին նվիրված անդրանիկ գիտական նստաշրջանը, որի լիազումար նիստը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, իսկ մյուս երկու նիստերը՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը (Արզական)<sup>1</sup>: Պատահական չէր ընտրված գիտական այդ երկօրյա նստաշրջանի օրը: Տարին հոբելյանական է, կարելի էր նստաշրջանը գումարել ցանկացած օր, սակայն գումարվեց սեպտեմբերի 26-ին՝ Կոմիտասի ծննդյան օրը: Նստաշրջանից առաջ մասնակիցները ծաղիկներ խոնարհեցին Կոմիտասի շիրմին: Սեպտեմբերի 26-ը մեծ խորհուրդ

---

<sup>1</sup> Գիտական նստաշրջանի մասին տե՛ս **Սանթրոյան Վ.**, Աշխարհին լսելի դարձնելով մեծն Կոմիտասին. Հովհաննես ՉեքիՋյանի ծննդյան 85-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, «Հայաստանի Հանրապետություն», 27 սեպտեմբերի, 2014թ.: **Արտեմյան Լ.**, Հովհաննես ՉեքիՋյան – 85, «Գիտություն», 25 հոկտեմբերի, N 10 (275), 2014, էջ 2: **Արտեմյան Լ.**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես ՉեքիՋյանի ծննդյան 85-ամյա հոբելյանին, «Պատմաբանասիրական հանդես», 2014, N 3:

ունի ոչ միայն հայ երաժշտության, այլև հենց Հովհաննես Չեքիջյանի համար: Չէ՞որ Մաեստրոյի կատարողական ողջ գործունեությունն ընթացել և ընթանում է Կոմիտասի նշանի տակ: Իր ողջ կյանքում նա ծառայել է կոմիտասյան երաժշտության տարածմանը՝ նրա խմբերգերը հնչեցնելով աշխարհի տարբեր բեմահարթակներից...

1910թ. նոյեմբերի 21-ին Կ.Պոլսի Պոի Շանի ձմեռային թատրոնում տեղի ունեցավ Կոմիտասի կազմակերպած «Գուսան» երգչախմբի համերգը: Երգչախմբում երգում էր Հ.Չեքիջյանի հայրը՝ Հարություն Չեքիջյանը: Չեքիջյանների տան պատին փակցված էր Կոմիտասի երգչախմբի նկարը. հաճախ նրանց հարկի տակ էին հավաքվում Կոմիտասի երգչախմբի մյուս անդամները ևս: Խոսակցության թեման Կոմիտաս վարդապետն էր, հետո երգում էին բազմաձայն, ինչպես սովորեցրել էր իրենց Ուսուցիչը: Փոքրիկ Հովհաննեսն էլ զգուշությամբ սողում էր սեղանի տակ, որի վրա երկար ծոպերով սփռոց էր զցված, և որտեղ, իրեն ապահով ու պաշտպանված զգալով, ժամեր շարունակ լսում էր հայկական երգերի այդ «ընտանեկան կատարումները»: Այդ ժամանակ Չեքիջյանը հինգ տարեկան էր, նրա ականջներում Կոմիտասի երգն էր, տան նվիրական գրույցները հյուսվում էին այդ անվան շուրջ և երգի հետ ներթափանցում փոքրիկի ներաշխարհը: Չեքիջյանների ընտանիքը 15 օր հյուրընկալել էր Կոմիտասին և տարիներ շարունակ փայփայում էր այդ հուշերը: «Հիմա էլ որպես սրբազան մասունք մի գուրգուրոտ սիրով պահում եմ իմ հոգում և ինձ համար դժվարին պահերի կրկին արձարծում եմ հուշի այդ պայծառ պատահիկները:

-Սակավապետ մարդ էր,- պատմում էր հայրս,- առաջին իսկ գիշերը խնդրեց անկողին զցել կոշտ թախտի վրա, վրան զցում էր սավան և այդ տարվա խստաշունչ ձմռանը (դրսում հունվարն էր) քնում էր լուսամուտի բաց փեղկերի տակ, առավոտյան սավանի վրայից թափ էր տալիս ձյան փաթիլները: Շատ էինք խնդրում, աղաչում, որ երգի, չէր երգում: Միայն վերջին երեկոյան, անսալով ընտանիքի թախանձանքին, համաձայնեց. կիտրոն խնդրեց, քամելով հյուրը բաժակի մեջ և խմելով այն՝ երգեց: Կարծես իր ձայնը սառնիճի միջից լսվեր,- սովորաբար այս խոսքով էր ամփոփվում հուշերի շղթան»<sup>2</sup>:

Անցան տարիներ, և Չեքիջյանն իր ողջ կյանքում հավատարիմ մնաց իրենց տան մթնոլորտին ու Կոմիտասին. «Մանկուց լսած երգերը իմ հիշողու-

<sup>2</sup> Հովհաննիսյան Ա., Հովհաննես Չեքիջյան, Երևան, 1984, էջ 16-17:



թյան մեջ լավ են մնացել: Այո, այդ հիշողությունները շատ են օգնում ինձ: Ես աշխատում եմ միշտ հարազատ մնալ Կոմիտասին»<sup>3</sup>:

«Պիտի ասեմ,- հետագայում կխոստովանի Մաեստրոն,- որ այդ երգերը աշխարհի առաջին ձայներն էին, որ արթնացրին իմ լսողությունը, որը դեռ երկար քնած մնաց խոսքի հանդեպ: Նաև պիտի ասեմ այսօրվա ծնողներին ի լուր, որ Ստամբուլի հայկական մեր տան պատերի ներսում այդպես անլռելի ապրում էր հայկական երգը, Կոմիտասը՝ մանկության օրերս թաթախելով իր հոգու լույսերի մեջ: Այո, այն, ինչ ընդունում և ընկալում ես մանուկ հասակում, երբեք չի ջնջվում հետագա տարիքում: Գուցե դա էր պատճառը, որ հետագայում որտեղ էլ որ հաղորդվեցի երաժշտությանը, կրթական ինչ օջախում էլ սովորեցի, միևնույն է, Կոմիտասը եղավ և մնաց այն հենքը, որի վրա հյուսվեցին հետագա ձայներն ու գույները»: Տարիներ անց այն հարցին, թե «ո՞ր կոմպոզիտորի ստեղծագործություններն եք հաճույքով կատարում», Մաեստրոն անվարան պիտի պատասխանի՝ «Կոմիտասի»<sup>4</sup>:

Եվ միանգամայն տրամաբանական է, որ 1961թ. նոյեմբերի 27-ին Հայաստանում տեղի ունեցած Հ.Չեքիջյանի առաջին համերգի ծրագրում Կոմիտասի ստեղծագործություններն էին՝ «Գութանի երգը», «Ինչու Բինգյուլը մտար», «Երկրագործի երգը», «Կալի երգը» և հարսանեկան երգեր՝ «Փեսին արդուզարդը», «Մաղթանք», «Փեսին գովքը», «Կատակերգ», «Շուրջպար»<sup>5</sup>:

Համերգի վերաբերյալ երգչախմբի նախկին խմբավար Զեյնա Գյոզալյանը գրեց. «Բեմահարթակի վրա սպիտակ ու սև գոտիներ է ձգել Հայաստանի պետական երգչախումբը, որի համերգն այսօր վարում է նրա նոր գեղարվեստական ղեկավարը՝ Հովհաննես Չեքիջյանը: Դահլիճում տարածվում են Կոմիտասի և Կարա-Մուրզայի երգերի հոյակապ հնչյունները, հետո թնդում են ծափահարությունները, իսկ ծափերի հետ թունդ է առնում հայրենադարձ երաժշտի սիրտը, նրա հուզումներն այսօր ուրիշ են, անսովոր: Սովետական Հայաստանի մայրաքաղաքի երաժշտական հասարակայնությունը առաջին անգամ իր գոհունակության արտահայտությունն է հղում հայրենադարձ դիրի-

<sup>3</sup> **Չեքիջյան Հ.**, Իմ Կոմիտասը, «Գարուն», 11, 1969, էջ 8: Կոմիտասի մասին Հ.Չեքիջյանի հարցազրույցներից ու հոդվածներից տե՛ս Նույնի՝ Մեծ ներդաշնակություն, «Գրական թերթ», 21 նոյեմբերի, 1969, էջ 3: **Օրմանճյան Հ.**, Երաժշտություն, որն ունի անհասանելի գագաթներ, «Սովետական Հայաստան», 2 նոյեմբերի, 1969 և այլն:

<sup>4</sup> **Ասատրյան Ա.**, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 22-23:

<sup>5</sup> Համերգի ծրագիրը, Հ. Չեքիջյանի անձնական արխիվ:

ժոր-խմբավարին: Առաջին իսկ համարներից զգացվում են դիրիժորի նուրբ ճաշակը և կատարողական լուրջ վարպետությունը, մեծ խնամքով և յուրահատուկ մեկնաբանությամբ կատարվում են հայ երգի մեծ վարպետ Կոմիտասի «Գուֆանի երգը», «Ինչու Բինգյոլը մտար», «Երկրագործի երգը» և այլ գործեր: Խմբավարը կարողացել է երգչախմբի կատարողականության և հնչողության մեջ հասնել ձայների միաձուլության, մաքուր ինտոնացիայի, դրսևորել բազմազան երանգավորում»<sup>6</sup>:

Մատենոդոսի գերագույն նպատակներից մեկը Կոմիտասի խմբերգերի կատարման միջոցով հայ երգի տարածումն է, ինչը նա իրականացնում է տարիների ու տասնամյակների ընթացքում, աշխարհի տարբեր քաղաքներում: Կոմիտասյան խմբերգերը նրա համերգների անբաժան ուղեկիցն են:

Կրեմլում Ֆորեի «Requiem»-ի կատարումից հետո ունկնդիրը պահանջում է շարունակել համերգը: Առանց խոսքի երգչախումբը Մատենոդոսի հայացքում կարդում է՝ Կոմիտաս. «Գուֆաներգ»: Վերջին հնչյունները մարում են, և ունկնդիրներին են միանում նվագախմբի երաժիշտները: Բեմն ու հանդիսատեսը հոտնկայս ծափահարում են՝ բացառությամբ նվագախմբի արտիստներից մեկի, որը դեռ շարունակում է մնալ կոմիտասյան երաժշտության ազդեցության տակ:

«-Ի՞նչ էր դա,- հարցնում է նա երգչախմբի երգիչներին:

-Կոմիտասի «Գուֆաներգը»:

-Արժե հայ լինել թեկուզ միայն նրա համար, որ այդ ժողովուրդը Կոմիտաս ունի,- եզրափակում է ԽՍՀՄ մեծ սիմֆոնիկ նվագախմբի արտիստը՝ ինքն էլ ունկնդրի չափ հուզված ու երջանիկ»<sup>7</sup>:

Տարիներ անց անդրադառնալով իր լենինգրադյան հյուրախաղերին՝ Մատենոդոսն նկատել է. «Լենինգրադն, անշուշտ, մեր պրեմիերաների հայրենիքն է: Այդ իրողությունը պայմանավորված է երկու կարևոր գործոններով, նախ՝ այստեղ են գտնվում Եվրոպայի լավագույն սիմֆոնիկ նվագախմբերից մեկը և զարմանալի երաժշտական, բարեկիրթ ու բարեսիրտ ունկնդիրը, որին այնքան հավատում եմ: Այստեղից են կյանքի ուղեգիր ստացել երաժշտական մեծագույն կոթողներ, որոնք այսօր կազմում են երգչախմբի «հիմնական կապիտալը»: Սակայն, եթե կուզեք, ես պակաս չեմ կարևորում և այն հանգամանքը, որ տարիներ շարունակ այստեղ անլուելի հնչել է կոմիտասյան ստեղ-

<sup>6</sup> Գրոգայան Զ., Չեքիջյանն է խմբավարը, «Սովետական արվեստ», 1961, N 12, էջ 63-64:

<sup>7</sup> Հովհաննիսյան Ա., Հովհաննես Չեքիջյան, էջ 79:

ծագործությունը: Երբ վոկալ-սիմֆոնիկ մեծածավալ կտավի կատարումից հետո սրահն առանձնապես պահանջկոտ է ծափահարում, ես արդեն գիտեմ, որ առանց Կոմիտասի մեզ այստեղից բաց չեն թողնի: Եվ ամենաձանր համերգից հետո էլ ինձ լիովի վարձատրված եմ զգում, երբ հնչում է ռիթմիկ վանկարկումը. «Կա-մի-տաս, Կա-մի-տաս»<sup>8</sup>:

1969-ին նշվում է Կոմիտասի ծննդյան հարյուրամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ Հ.Չեքիջյանը պատրաստում է կոմիտասյան 38 ստեղծագործություններ, որոնց մի մասն իրենց կենսագրությունն սկսեցին այդ տարվանից՝ դառնալով Կապելլայի երկացանկի լավագույն համարները: Կոմիտասի 100-ամյա հոբելյանի հանդիսությունների ալիքը, որը սկիզբ էր առել Երևանում, հասավ Մոսկվա. դեկտեմբերի 3-ին Կրեմլի Միությունների տան սյունազարդ դահլիճում տեղի ունեցավ հոբելյանական երեկոն: Երեկոն բացում է համամիութենական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության նախագահ Տիխոն Խրեննիկովը. «Սովետական հասարակայնությունը լայնորեն նշում է հայ ժողովրդի մեծ զավակ, հանճարեղ կոմպոզիտոր, մտածող Կոմիտասի ծննդյան 100-ամյակը: Բոլորովին վերջերս Երևանում՝ Հայաստանի մայրաքաղաքում, հավաքվել էին բոլոր միութենական հանրապետությունների ներկայացուցիչները, որպեսզի պատշաճը մատուցեն մեծ տաղանդին, այդ հոբելյանը վերածեն լավ համաժողովրդական տոնահանդեսի»<sup>9</sup>: Այնուհետև զեկուցումով հանդես է գալիս ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Լենինյան մրցանակի դափնեկիր, կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը: Այնուհետև «հանդես է գալիս Հայկական ՍՍՀ պետական երգչախումբը՝ հանրապետության ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Թվում է, թե երգում է ինքը՝ հայ ժողովուրդը, որը աշխարհին տվեց Կոմիտաս: Համերգն անցավ մեծ հաջողությամբ»<sup>10</sup>:

1969-ին Երևանում տեղի ունեցած խմբերգային երաժշտության համամիութենական փառատոնին, ի թիվս ԽՍՀՄ լավագույն երգչախմբերի, հաջողությամբ մասնակցում է նաև Հայաստանի պետական երգչախումբը՝ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ: «Հոբելյանական համերգի ծրագրի մեծ բաժինը Կոմիտասինն էր. «Գուֆաներգ» («...Ձիգ տու, քաշի»), «Քելեր-ցոլեր», «Երկրագործի երգը», «Ուր ես գալիս, այ գարուն», հատվածներ «Պատարագից», «Կալի եր-

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>9</sup> **Միկոյան Ն., Մելիքսեթյան Ռ.**, Մոսկվան նշում է Կոմիտասի հոբելյանը. երեկո Միությունների տան սյունազարդ դահլիճում, «Երեկոյան Երևան», 4 դեկտեմբերի, 1969:

<sup>10</sup> Նույն տեղում:

զը», «Հարսանյաց երգեր»... Դրանք կատարվեցին բարձր վարպետությամբ, առանձնահատուկ ջերմությամբ: Յուրաքանչյուր երգ մի ավարտուն կերպար էր, մեկը՝ հյութեղ, առատ հնչողությամբ, մեծ, լայն շտրիխներով, մյուսը՝ թեթև, սահուն երանգներով: Մեկը՝ իբրև ներդաշնակ հնչողություն, մյուսը՝ բազմատեսակ երանգավորման և նուրբ երաժշտականության նմուշ»<sup>11</sup>:

Կոմիտասի 100-ամյա հոբելյանի կապակցությամբ իր հարցազրույցներից մեկում Հ. Չեքիջյանը նկատում է. «Կոմիտասն աննյութեղեն ու հազարագույն մի էություն-տաճար է. նրա դասնը մոտենալու համարձակություն և իրավունք կարող են ունենալ նրանք, ովքեր ժողովրդի մեծ արվեստի նկատմամբ ունեն երկյուղածություն և սրբազան դող»<sup>12</sup>:

1970-ի հունիսի 15-ին «Պրավդան» հրապարակում է ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը. Կոմիտասի «Գութաներգը», «Կալի երգը», «Հարսանյաց երգերը», Մ. Եկմայանի «Պլալուն Ավարայրի», «Մեր հողն հնավանդ» և այլ խմբերգեր պարունակող «Հայաստանի երգերը» ծայնասկավառակն արժանացել է ֆրանսիական Charles Gros ակադեմիայի «Գրան պրի» մրցանակին:

1981-ի փետրվարի 28-ին Հայիամերգի մեծ դահլիճում Կոմիտասի երգաշարի պրեմիերան է. ընտրված գործերը՝ «Լուսնակը սարի տակին», «Անձրևն էկավ», «Եղնիկ», «Վարդ ա յարս», «Տուն արի», «Առնեմ էրթամ իմ յարը», «Արևը կայնե կեսօր», կատարվում են առաջին անգամ: Հավարտ առաջին բաժնի հնչում են «Գութաներգը», «Կալի երգը», «Երկրագործի երգը»<sup>13</sup>:

Կոմիտասի հանճարի հանդեպ իր հարգանքի ամենամեծ տուրքը մատուցեց Մաեստրոն՝ սրանից ուղիղ հինգ տարի առաջ՝ 2009-ին ծայնագրելով կոմիտասյան Պատարագը:

«Մաեստրոն տասնամյակներ շարունակ ծառայում է կոմիտասյան խմբերգերի տարածմանն ու քարոզմանը, և ահավասիկ, կոմիտասյան աշխարհիկ խմբերգերի բարձրարժեք կատարումների կողքին սերունդներին է թողնում նաև Կոմիտասի հոգևոր խմբերգային գլուխգործոցի՝ «Պատարագի» կատարումը և: Ողջ կյանքում ծառայելով կոմիտասյան երաժշտության տարածմանը, աշխարհի տարբեր բեմահարթակներից հանդես գալով կոմի-

<sup>11</sup> **Մարկոսյան Կ.**, Երգչախմբային փառատունն ավարտվեց, «Սովետական Հայաստան», 20 նոյեմբերի, 1969, էջ 4:

<sup>12</sup> **Չեքիջյան Հ.**, Սրբազան դողով, «Հայրենիքի ձայն», 19 նոյեմբերի, 1969:

<sup>13</sup> Համերգի մասին տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Այդ երեկո՝ երգի հետ (Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը հանդես եկավ նոր ծրագրով), «Սովետական Հայաստան», 10 մարտի, 1981:

տապան խմբերգերի անզուգական կատարումներով՝ նրա հոգևոր կարևորագույն ու մեծածավալ ստեղծագործության՝ «Պատարագի» ծայնագրությամբ Մասետրոն ամբողջացնում է կոմիտասյան աշխարհիկ և հոգևոր խմբերգերի չեքիջյանական մեկնաբանությունների գանձարանը»<sup>14</sup>:

Եվ այսպես, տարիներ ու տասնամյակներ շարունակ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ հայկական Կապելլան Կոմիտասի երաժշտության լավագույն մեկնաբանն ու պրոպագանդիստն է: «Հայաստանի պետական երգչախումբը բազմաթիվ անգամներ տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների առաջ համաշխարհային դասականների՝ Ռոսինիի, Մոցարտի, Բեովոլդի կողքին ապացուցել է Կոմիտասի երաժշտության ուժը: Ու թերևս մեզ համար ամենամեծ գնահատականը Մինսկից մի երիտասարդի արտահայտությունն է, որը, համերգից հետո մոտենալով մեզ, ասաց. «Ես կուզենայի հայ լինել միայն նրա համար, որովհետև այդ ժողովուրդը Կոմիտաս ունի»<sup>15</sup>:

Հոգվածս ուզում եմ ավարտել Կոմիտասի երաժշտության մշակման վերաբերյալ Հ.Չեքիջյանի՝ դեռևս 45 տարի առաջ արտահայտած մի մտքով, որն արդիական է նաև այսօր. «Կոմիտասը այն մեծությունն է, որն արվեստի մարգագետնից միայն ծաղիկներ է քաղել: Այդ ծաղիկները, շեշտում եմ, կատարյալ են և կարիք չունեն մշակման: Կոմիտասը ինքը շատ անգամ նշել է, որ իր խմբերգային ստեղծագործությունները հարկավոր է կատարել առանց որևէ գործիքի ընկերակցության: Դժբախտաբար շատ-շատերը ուզում են վերամշակել Կոմիտաս, որը առնվազն հանդուրժելի չէ: Կոմիտասի խմբերգային ստեղծագործությունները մի մարգարտաշար են, որտեղ մի նոտայի փոփոխության դեպքում ամեն ինչ կխախտվի»<sup>16</sup>:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոգվածում հեղինակը ներկայացնում է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանին՝ որպես Կոմիտասի խմբերգային ստեղծագործությունների լավագույն մեկնաբանի և պրոպագանդիստի:

<sup>14</sup> Ասատրյան Ա., Կոմիտասի Պատարագի ծայնագրությունը ներկայացված է պետական մրցանակի, Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

<sup>15</sup> Չեքիջյան Հ., Իմ Կոմիտասը, «Գարուն», 11, 1969, էջ 7-8:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 8:

Ողջ կյանքում ծառայելով կոմիտասյան երաժշտության տարածմանը, աշխարհի տարբեր բեմահարթակներից հանդես գալով կոմիտասյան խմբերգերի կատարումներով՝ նրա հոգևոր կարևորագույն ու մեծածավալ ստեղծագործության՝ «Պատարագի» ձայնագրությամբ Հ.Չեքիջյանն ամբողջացրեց կոմիտասյան աշխարհիկ և հոգևոր խմբերգերի չեքիջյանական մեկնաբանությունների գանձարանը:

***Բանալի բաներ*** - Կոմիտաս, Հովհաննես Չեքիջյան, խմբերգեր, «Պատարագ»:

## ОГАНЕС ЧЕКИДЖЯН И ИНТЕРПРЕТАЦИЯ ХОРОВЫХ ПРОИЗВЕДЕНИЙ КОМИТАСА

ЭММА АРАКЕЛЯН

В статье автор представляет Народного артиста СССР, Лауреата Государственных премий СССР и Армянской ССР, профессора Оганеса Арутюновича Чекиджяна как наилучшего интерпретатора и пропагандиста хоровых произведений Комитаса. Всю свою жизнь посвятив распространению комитасовской музыки, во многих городах мира выступая с исполнением комитасовских хоров, записав его важнейшее и масштабное духовное произведение – “Литургию”, Чекиджян пополнил сокровищницу собственных интерпретаций светских и духовных хоров Комитаса.

***Ключевые слова*** – Комитас, Оганес Чекиджян, хоры, “Литургия”.

## OHANNES TCHEKIDJIAN: THE INTERPRETATIONS OF KOMITAS' CHORAL PIECES

EMMA ARAKELYAN

The author of this article presents Ohannes Tchekidjian, the conductor and art director of the Armenian State Academic Choir, a People's Artist of USSR, a recipient of both USSR and Armenian state prizes, as the best interpreter and promoter of Komitas' choral works.

Tchekidjian has dedicated all his life to the promotion of Komitas' music. He has Performed many of Komitas' choral works at different concert halls of the world. By recording the "Badarak", Komitas' most important, huge-scale liturgical composition, Tchekidjian complemented his treasury of the interpretations of Komitas' both secular and spiritual choral compositions.

**Key words** – Komitas, Ohannes Tchekidjian, choral works, "Badarak", liturgy.

## ԷՄԻՆ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ «ՍՈՆԱՏ 81-83»<sup>1</sup>-Ի

### ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

#### ԼԻԼԻԹ ԱՐՏԵՄՅԱՆ

Էմին Արիստակեսյանի<sup>2</sup> դաշնամուրային երկմաս Սոնատում ներկայացված է տոնատային շարքի անսովոր մեկնաբանում՝ թե՛ տոնատայնության մասին դասական պատկերացման առումով, թե՛ նույնիսկ երաժշտական ավանգարդի տեսանկյունից: Կոմպոզիտորն առաջիններից էր, ով ուշադրություն է դարձրել ոչ այնքան ստեղծագործական նոր տեխնիկային, որքան կերպարայնության իրականացման համար նոր ձևերի ներմուծմանը: Եթե փորձեինք նրա ստեղծագործությունները վերլուծել ավանգարդիզմի որևէ օրթոդոքսալ տեխնիկայի տեսանկյունից, ապա, հավանաբար, անհնարին կլիներ ճշգրտորեն նույնացնել նրանցից որևէ մեկի հետ: Դրա հետ մեկտեղ, երաժշտական ընթացքի ամբողջական ընկալման իմաստով կոմպոզիտորի ստեղծագործությունը, անկասկած, վերաբերում է ավանգարդիզմի ոճաբանությանը՝ թեկուզ այն պատճառով, որ նրա մեջ ակնհայտորեն համադրված են ատոնալիզմը և տոնայնական գրելաոճը, որը միտված է դեպի հայ երաժշտական ֆուլկլորից քաղված ինտոնացիոն միջավայր: Նշենք, որ այս համադրությունը կերպարայնության մարմնավորման երկու բևեռային ձևերի համաձայնություն չէ, այլ ընդհակառակը. կերպարային ոլորտները հակադրված են, և այն էլ՝ ոճական առումով: Եվ այստեղ երևում է տոնատային «Allegro»-ի նոր գաղափարը: Տարաբնույթ կերպարների կոնֆլիկտն արտահայտված է ոճական հակադրության միջոցով, որը ներկայանում է որպես բարձր կարգի գեղարվեստական և տեխնիկական երևույթ:

Քննարկենք էքսպոզիցիան: Գլխավոր թեմայի դերում է տոնորային ֆակտուրային նյութը՝ առանց դասական իմաստով թեմատիզմի հատկանիշների: Գլխավոր տարրերը ֆորշագների տարբեր տեսակներն են, որոնք անընդմեջ

<sup>1</sup> Ստեղծագործության ստեղծման տարեթիվը չհաջողվեց ճշտել:

<sup>2</sup> Էմին Արիստակեսյանի առնչությամբ հիմնվել ենք հետևյալ ուսումնասիրության վրա՝ **Ананян А. Эмин Аристакесян, Ереван, «Советакан грոх», 1984:**



առկա են՝ միահնչյուն, երկհնչյուն կամ հիմնական նոտաներին նախապատրաստող ֆունկցիայով:

Օրինակ 1



Հնչյունի «ճոճքի» հնարը՝ ելակետային a հնչյունից երաժշտական նյութի աստիճանական զարգացումը, հիշեցնում է արևելյան մեդիտատիվ երգեցողություն, մակրո կամ հնդկական ռազա: Հենց այս ձևն է ուշադրությունը բևեռում եզակի հնչյունի վրա, որպես ինքնաբավարար երևույթ, որն ունակ է տնօրինելու իր սեփական կերպարային խորությունը: Իսկ նոտաներին ավելացված ֆորշլագները երանգավորում են յուրաքանչյուր հնչյունի անհատական տպավորությունը և նպաստում ձայների աստիճանական աճին՝ սկզբում երկձայն, այնուհետև՝ եռաձայն և քառաձայն համահնչյունի մեջ: Սակայն համահնչյուններն ու ակորդները, շնորհիվ հնչյունները որպես ինքնուրույն գեղարվեստական օբյեկտներ առանձնացնելու ֆակտուրային առանձնահատկության, նույնպես ընկալվում են որպես հնչյունային միավոր: Էներգետիկ առումով դրանք ավելի խիտ են, սակայն ավանդական տրամաբանական հաջորդականության մաս չեն: Նյութը ներկայացնելու այս ձևը մեդիտատիվ տպավորության է հանգեցնում: Հեղինակի կողմից նշված Allegro sostenuto տեմպը, հավանաբար, պետք է մեկնաբանվի առավել դանդաղ, իսկ տվյալ ֆակտուրայում մետրի բաբախումները երաժշտական ընթացքի մեջ պետք է մեղ-

մացվեն մինչև ուժեղ հարվածների զգացողության բացակայության մակարդակ<sup>3</sup>:

Շարադրանքում պայմանական գծերի (պարտիաների) զարգացման ընթացքը կապված է երաժշտական տարածություն նվաճելու սկզբունքի հետ: Առաջին՝ a հնչյունից դուրս գալով, վերևի ծայնն աստիճանաբար շարժվում է դեպի վեր՝ հաջորդաբար ընդգրկելով ավելի բարձր հնչյուններ, իսկ ներքևի ծայնը՝ նույն կերպ դեպի վար (սա երևում է վերը նշված օրինակում), մինչև լրմբարդական ակորդային ռիթմական կառուցվածքի ի հայտ գալը: Հետագա շարժումն արդեն նշված սկզբունքին չի ենթարկվում: Ֆակտուրան հնչյուններ է վերցնում գործիքի տարբեր ռեգիստրներից, որոնք կա՛մ միմյանց հետ հարևանությամբ են գտնվում, կա՛մ միմյանցից շատ հեռու են դասավորված՝ ստեղծելով տարածական հենարանի բացակայության զգացողություն<sup>4</sup>, այսինքն՝ ավելի անսահմանափակ տարածություն: Ատոնալ գրելաճը դրսևորվում է տոնայնական հենքի «ուղենիշի» բացակայությամբ:

Հնչյունային դաշտը դիտվում է ատոնալ անգամ գլխավոր դեր ունեցող a նոտային հաճախակի վերադարձի պայմաններում, քանի որ միշտ առկա է կայունությունը «քանդող» հնչյուն: Նույն a հնչյունի կայունությունը «քանդելու» սկզբունքով է ներմուծվում երկրորդ նյութը, որում կարելի է տեսնել ժողովրդական մեղեդու ոճավորումը:

«Քանդող» a հնչյունն այժմ հանդես է գալիս բասի գծում՝ դիսոնանս համահնչյունի տեսքով: Մեծ նոնան հենք է դառնում արտահայտիչ մեղեդու համար, որը հնչում է դորիական ժ լադում: Ներքևի ծայների գծերում շարժումը ոչ մի կերպ կապված չէ մեղեդու շարադրման լադային միջավայրի հետ: Միմյանցից հեռավորության վրա գտնվող երկու երաժշտական շերտերի տպավորությունն ստեղծում է երկու բևեռային կերպարային շարքերի միաժամանակյա շարադրման հիանալի հակադրություն: Ավելի ստույգ՝ երկրորդ տոնայնական թեման ներխուժեց իր «հակառակ» աշխարհը: Կազմակերպվածությունը հակադրված է տարածության մեջ անկազմակերպ ցրված երաժշտական նյութին:

<sup>3</sup> Այս գաղափարները հոդվածի հեղինակի ենթադրություններն են, որոնք բխում են երաժշտական նյութի տրամաբանական էությունից:

<sup>4</sup> «Երաժշտական տարածություն» հասկացությունը կիրառելիս նկատի ունենք Մ. Կոկժանի բնորոշումը: Տե՛ս **Кокжаев М.** Топология музыкального пространства, Москва, «Композитор», 2004, стр. 71-85:

Օրինակ 2



Սա միայն երկու երաժշտական կերպարների հակադրություն չէ, այլ տարբեր երաժշտական աշխարհների:

Ընտագա զարգացումը ենթարկված է այս գաղափարին: Նյութը, որը մշակման փուլում աստիճանաբար էր, եթե չասենք, թե աստիճանաբար ձեռք է բերում հնչյունի բարձրության հստակ կազմակերպում, ապա կարող ենք արձանագրել, որ դառնում է ռիթմիկ առումով հստակ կազմակերպված: Իսկ երգ-թեման ևս երկու անգամ՝ մշակման մեջ և ռեպրիզում, կմտնի երաժշտական հոսքի մեջ իր անկրկնելիությամբ, ոչ միայն որպես էքսպրեսիվ լարվածության հասնող հակադրություն առաջին կերպարի նկատմամբ, այլև ի ցույց դնելով իր անկրկնելի գեղարվեստական գերազանցությունը: Այս կերպ էլ ավարտվում է առաջին մասը. դրական սկիզբը՝ երգը, հաղթում է հնչյունային քաոսին:

Ըստ էության, կոմպոզիտորն ստեղծել է խորհրդանշական երաժշտական պատկեր՝ օգտվելով տոնայնական և աստիճանաբար գրելաոճի տարաբնույթ հնչյունային հատկանիշներից: Այս իմաստով կարելի է պնդել, որ մասի դրամատուրգիան և անգամ կոնցեպտուալ<sup>5</sup> բաղադրիչն իրականացված են սոնորային ձևով՝ հիմնված երկու ստեղծագործական համակարգերի ակուստիկ հակադրության վրա: Սոնատայնության գաղափարը, այսինքն՝ երկու հակադրվող կերպարների կոնֆլիկտը նույնպես իրականացված է օբյեկտիվ և

<sup>5</sup> Տերմինն ըստ Բ. Ասաֆևի: Տե՛ս **Асафьев Б.** Музыкальная форма как процесс, кн. 2, Москва, «Музгиз», 1947, стр. 70:

սուբյեկտիվ էությունների խորհրդանշական հակադրման ձևով: Երաժշտական ընթացքը հակադրվող կերպարների փոխգործունեության զարգացման որոշակի ձև չէ: Այն ուղղակի եռակի հակադրություն է, որն արտահայտում է որոշակի երևույթ. փոխգործունեությունը բացակայում է, առկա է միայն կերպարային անհամատեղելիության փաստը:

Կատարողն այս ստեղծագործությունը յուրացնելու ընթացքում պետք է ճշգրտորեն նկատի ունենա նրա դրամատուրգիան: Տվյալ Սոնատում չկա զարգացում, իսկ դա նշանակում է, որ կատարողական խնդիրը հակադրության ռելիեֆային ցուցադրումն է: Էական է կարևորել ֆակտուրային պայմաններով տարբեր, սակայն դրամատիկական առումով կարևոր երեք կերպարային դրվագները:

Օրինակ 3

The image shows a handwritten musical score for piano, consisting of five systems of staves. The score is written in bass clef with a key signature of one flat (B-flat). The notation includes various rhythmic values and dynamic markings. The first system starts with 'cresc. molto'. The second system begins with 'ff'. The fourth system includes 'ff' and 'ff' markings. The fifth system ends with 'fff'. The score is presented in a clear, legible handwritten style.

Սոնատի երկրորդ մասը կերպարային առումով միատարր է: Այն շատ արագ տոկատ է, որում կարևոր է հարվածային տուշեն: Չնայած խիտ հյուսվածքին՝ ամբողջ մասը դինամիկ չէ, նրանում գրեթե բացակայում են վերելքի ալիքները դեպի կոմպինացիաներ: Միայն վերջում ի հայտ է գալիս մի քանի կլաստերային «բացականչություն»՝ ֆակտուրայի անսպասելի անկումից հետո, որը դրսևորվում է fortissimo-ից հետո՝ ֆակտուրայի «կտրտվածության» հետ միասին:

Զավեշտալի է դիտվում այս մասի ընդհանուր միտումը, որն ուղղված է դեպի ֆակտուրային անկումը: Ներկայացնենք մի օրինակ:

#### Օրինակ 4



Անգամ սկզբնական նյութն է տեղադրված դաշնամուրի ներքևի ռեգիստրում և հնչում է sf երանգում: Երկրորդ մասի կերպարային չեզոք վիճակը, մեր կարծիքով, առաջին մասում ներդրված դրամատուրգիական շարքի շարունակությունն է:

#### Օրինակ 5



Բացառելով զարգացման գործոնը և ունկնդրին ներկայացնելով աշխարհաստեղծման հիմքում ընկած երկու երևույթների՝ դրականի և բացասականի առկայությունը՝ կոմպոզիտորը Սոնատի երկրորդ մասում մտորումների դաշտի հնարավորություն է տալիս, որը երկու տիեզերական բևեռների գոյությունը բացատրող այս դուալիզմի (երկվության) երևույթի իմաստավորումն է:

Կատարողական առումով այս մասը պետք է ներկայացնել որպես մեկ ամբողջություն՝ զուրկ հակադրություններից, ուստի անգամ դինամիկ տատանումները պետք է իրականացվեն հնչյունային ճկունությամբ: Միայն դինամիկայի եզրափակիչ պոռթկումները պետք է նվազել վառ՝ պահպանելով հարցական կերպարայնությունը, քանի որ է. Արիստակեսյանի Սոնատում դրված է աշխարհի գոյության հետ կապված անկյունաքարային հարց:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածը ներկայացնում է Էմին Արիստակեսյանի դաշնամուրային «Սոնատ 81-83»-ը: Տվյալ Սոնատում երևում է սոնատային ձևի նոր զաղափարը: Տարաբնույթ կերպարների կոնֆլիկտն արտահայտված է ոճական հակադրության միջոցով: Աշխատանքում վերլուծվել են ստեղծագործության տեխնիկական հիմքերի առանձնահատկությունները՝ կատարողական տեսանկյունից գեղարվեստական գաղափարը համապատասխանաբար ներկայացնելու համար:

***Բանալի բաներ*** - դաշնամուրային սոնատ, դրամատուրգիա, կատարողական խնդիր, ոճական հակադրություն, ֆորշազների տարբեր տեսակներ, ատոնալիզմ, տոնայնական գրելաոճ:

#### ОБ ИСПОЛНИТЕЛЬСКИХ ПРОБЛЕМАХ ФОРТЕПИАННОЙ «СОНАТЫ 81-83» ЭМИНА АРИСТАКЕСЯНА

ЛИЛИТ АРТЕМЯН

Данная статья представляет фортепианную «Сонату 81-83» Эмина Аристакесяна. В Сонате видится новая идея сонатной формы. Конфликт разнохарактерных образов выражен через стилистический контраст. В данной

работе проанализированы особенности технических основ с целью представления художественного образа в плане исполнительства.

**Ключевые слова** - фортепианная соната, драматургия, исполнительская проблема, стилистический контраст, форшлагги разного рода, атональность, тональное письмо.

## THE PERFORMING ISSUES OF EMIN ARISTAKESYAN'S PIANO «SONATA 81-83»

LILIT ARTEMYAN

This article presents Emin Aristakesyan's piano «Sonata 81- 83» where a new concept of sonata form is observed. The conflict between various images is expressed by means of stylistic contrast. The distinctive features of the technical bases of this piece have also been analyzed in order to present the artistic concept in an appropriate style while performing.

**Key words** - piano sonata, dramaturgy, performing issues, stylistic contrast, different kinds of grace notes, atonality, tonality.

## СИМФОНИЧЕСКОЕ ТВОРЧЕСТВО ТИГРАНА ЧУХАДЖЯНА

МАРТУН КОСТАНДЯН

История сама поставила творчество пианиста и композитора Тиграна Чухаджяна (1837-1898) на то ключевое место, с которого начался отсчет становления и развития светского профессионального музыкального искусства Армении. Не исключено, что и до Чухаджяна музыканты-армяне, жившие в Восточной Армении, в Западной – на территории Турции, и в других странах Европы и Азии, занимались исполнительством, а кое-кто из них и сочинением музыки. Но благодаря яркой самобытности, а главное – творческому патриотическому порыву Т.Чухаджяна, его имя стало той отправной точкой, с которой началось бурное развитие армянской профессиональной композиторской школы.

По сей день образцы фортепианного и оперного творчества Т.Чухаджяна востребованы исполнителями, а комическая опера «Леблебиджи Ор-Ор ага» (иногда именуемая опереттой «Каринэ»)<sup>1</sup> абсолютно справедливо считается шедевром жанра и до сих пор ставится на престижных сценах, вызывая у публики восторг.

В музыкальном наследии Тиграна Чухаджяна важное место занимает симфоническое творчество. Его перу принадлежит целый ряд симфонических полотен, которые, несомненно, имеют оркестровую ценность. Симфонические композиции Чухаджяна были не только известны в Париже – музыкальном центре Европы начала XX века<sup>2</sup>, но он был оценен как первый не только армянский композитор, но и композитор, который первым в музыкальной истории мира соединил в творческой органике восточный мелос и европейскую технику гармонии, контрапункта и оркестровки.

Симфоническое творчество композитора, по дошедшим до наших времен партитурам, достаточно обширно и обладает качествами высокого симфонизма.

---

<sup>1</sup> Если внимательно изучить партитуру этого полотна, то становится ясным, что оно переросло жанр легкой оперетты и является блистательным образцом комической оперы.

<sup>2</sup> К тому же, исполнялись там после смерти композитора.



В своей монографии Анна Асатрян заметила: «В балетных сценах опер Чухаджяна предначертано развитие армянского балета, а оркестровые номера заложили основы армянской симфонии»<sup>3</sup>. Иными словами, Анна Асатрян свидетельствует о том, что именно Тигран Чухаджян был первым в истории музыкального искусства Армении, заложившим основы трех монументальных жанров в национальной культуре – оперном, балетном и симфоническом.

Долго остававшееся в тени симфоническое творчество композитора в последнее время привлекает к себе серьезное внимание симфонических дирижеров и исследователей.

Объектами нашего исследования стали следующие симфонические произведения, особенности которых раскроют все грани мышления композитора. А это, в свою очередь, станет поводом для оценки симфонического стиля Т.Чухаджяна, взявшего на себя смелость создания первых образцов армянского симфонизма.

- Наиболее интересным и объемным, сопоставимым с жанрами симфонической музыки произведением Тиграна Чухаджяна можно считать «Sinfonia» – Увертюру к первой армянской опере «Аршак II», сочиненной композитором в 1868 году<sup>4</sup>. Нет сомнений и в том, что «Sinfonia» Т. Чухаджяна представляет собой великолепный образец симфонического творчества, созданный по всем правилам жанра и имеющий высокое художественное значение не только в качестве первого образца симфонизма в армянской музыке, но и в масштабах всего мирового музыкального искусства.
- Небольшая пьеса для симфонического оркестра – «Мелодия», достаточно оригинальный образец симфонической миниатюры, в которой есть признаки движения к исконно национальным истокам, но она

---

<sup>3</sup> Ասատրյան Ա., Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Երևան, 2011, էջ 450: Asatryan A., Tigran Tchuohadjiani erajshtakan tatrony, Yerevan, 2011, ej 450.

<sup>4</sup> Об Увертюре к опере “Аршак Второй” см.: Ասատրյան Ա., Անվերջանալի ողիսական. Տ.Չուխաճյանի «Արշակ Բ» օպերայի Նախերգանքը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական առաջին նստաշրջանի նյութեր, Երևան, 2005, էջ 6-13: Asatryan A., Anverjanali vodisakan. T.Tchuohadjiani «Arshak B» operayi Nakherganqy, Eritasard haj arvestabanneri gitakan arajin nstashrjan, Yerevan, 2005, ej 6-13. Ասատրյան Ա., Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, էջ 65-74: Asatryan A., Tigran Tchuohadjiani erajshtakan tatrony, Yerevan, 2011, ej 65-74.

никак не связана с явлением «ориентализма». Скорее всего, эта пьеса предназначена для циклического произведения, поскольку участие всей группы медно-духовых связано лишь с двумя аккордами и одним унисоном в заключительном кадансе, хотя без второй трубы, двух тромбонов и тубы, объявленных на первой странице в составе оркестра можно было обойтись. Эта пьеса гораздо ближе к мелодической стилистике Востока, чем “Sinfonia”, и в ней однозначно угадывается стремление композитора к освоению восточных музыкальных традиций. И несмотря на то, что полностью это желание удовлетворить Т. Чухаджяну не удалось, мелодия пьесы не только явно содержит в себе интонационность ориентального характера, но и обладает признаками типично восточных мотивных оборотов. Более того – и в ладовой системе, востребованной композитором, и в ритмоорганизации, и даже в гармонии явно ощутима природа не поддельного, а настоящего восточного колорита. «Мелодия» Т. Чухаджяна представляет собой достаточно яркий образец симфонической миниатюры, не лишенной оригинальности и сохранившей художественную ценность до наших дней. Но самое важное в том, что партитура содержит признаки движения композиторской мысли к своим национальным истокам. Очевидно, что достижение национальных идеалов давалось нелегко, но то обстоятельство, что стремление к ним инициировало создание весьма профессионального и образно яркого опуса, уже является свидетельством свершившегося факта – явления миру одного из первых образцов армянского симфонического творчества.

- «Danse Caractéristique, L'oriental», в отличие от «Мелодии», напротив, умышленно ориентален и, по сути, демонстрирует широту образного охвата замыслов композитора. Он явно отдаляет армянскую музыку от усредненно восточной, ориентальной, о чем свидетельствует и сам характер музыки, и даже название произведения. Одним из наиболее достоверных свидетельств того, что Т. Чухаджян глубоко осознавал свое творческое и историческое предназначение в качестве первооткрывателя светской армянской профессиональной музыки, является партитура «Характерного танца» («Danse Caractéristique»), имеющего в названии еще и дополнение – «L'orientale», что означает «восточный». Уже в самом названии содержится мысль о том, что танец хоть

и обладает признаками восточной мелодики, но все же представляет собой образец ориентального Востока, то есть является таким, каким видится европейцам восточная музыкальная культура. По сути, сам термин «ориентализм» является определением смысловой тенденции в музыкальном произведении – в данном случае само произведение является продуктом европейского мышления (оркестровый инструментарий, форма, система фиксации, ладовая структура в базисной основе, ряд кадансов и т. д.), но в метроритмике и интонационной графике есть признак привнесения восточной специфичности. Тот же факт, что композитор сам объявил эту направленность в своем сочинении, является явным свидетельством художественных намерений композитора, а именно – в сферу привычных для него средств выразительности умышленно вводятся элементы восточной музыкальной атрибутики.

- «*Fantaisie Orientale*» – произведение ориентального склада, в котором ориентальная стилистика, скорее всего, служит определенной формой аллегории – обращение к жанру победного марша может восприниматься как намек на сопротивление турецким гонениям на армян, резко усилившимся в конце XIX века<sup>5</sup>. «Восточная фантазия» Т. Чухаджяна представляет собой сложную с точки зрения формообразования композицию, состоящую из четырех разделов, в которых представлены два контрастных образа, и по параметрам развернутости музыкального материала она могла бы быть экспозицией монументальной симфонической поэмы.
- В небольшой, но очень яркой симфонической пьесе “*Canto Armeno*” осязательно несомненное стремление Т. Чухаджяна к духовности «Земли обетованной» – Армении. К тому же, эта партитура сочинена для полного традиционно-симфонического оркестрового состава, что подтверждает факт свободного владения всеми разновидностями симфонического инструментария. Гимническое начало в музыкальной

---

<sup>5</sup> Известно, что по случаю подписания Сан–Стефанского мира Тигран Чухаджян был награжден императором всероссийским Александром II орденом св. Станислава. Этот факт свидетельствует об участии композитора в движении сопротивления турецким гонениям армян.

характеристике пьесы представляется однозначным проявлением патриотизма композитора, посвятившего все свое творчество и общественную деятельность своей далекой Родине!<sup>6</sup> Основными принципами, которыми воспользовался композитор в данной пьесе, стали ассиметричная повторность в строении мелодии и вариационность – как линий, обрамляющих мелодию, так и вариативность самой мелодии, в которой неточность мотивных повторений, с одной стороны, являлась преодолением мелодической статичности и инициировала эффект безцезурного развития, с другой же – позволяла в общих чертах реконструировать наиболее принципиальные особенности армянской мелодии. И несмотря на то, что музыка пьесы все же в значительной степени принадлежит и явлению ориентализма, Чухаджян в ней сделал важный для музыкальной истории Армении шаг – ему впервые удалось подметить наиболее характерные черты армянского мелоса, которые он воплотил в своем замечательном и высокохудожественном произведении. В сущности, это был прорыв в новое светское музыкальное искусство Армении. И композитор Т. Чухаджян понимал это: именно потому он придал своей пьесе “Canto Armeno” признак гимнического начала!

- «Mouvement Perpétuel» демонстрирует сочетание симфонического мышления композитора с его даром блистательного пианиста. По сути, это концертное полотно, приближенное к жанру одночастного фортепианного концерта, является одной из вершин творчества Т. Чухаджяна наряду с его оперными полотнами и рядом блистательных фортепианных пьес. Кстати, Анна Асатрян рассматривает данное произведение как прототип армянского фортепианного концерта<sup>7</sup>.

Анализ шести симфонических произведений Тиграна Чухаджяна стал достоверным свидетельством высокохудожественного качества каждой из

---

<sup>6</sup> Впрочем, территория Турции включает в себя земли Великой Армении, и, возможно, композитор ощущал себя дома, а не на чужбине.

<sup>7</sup> См: **Ասատրյան Ա.**, Տիգրան Չուխաճյանի ստեղծագործության պատմական նշանակությունը (նվիրվում է ծննդյան 175-ամյա հոբելյանին), «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, թիվ 3 (6), 2012, էջ 94: Asatryan A., Tigran Tchuohadjiani steghagorcutyan patmakan nshanakutyuny, «Akunq», gitakan hodvacneri joghovacu, N 3, 2012, ej 94.

рассматриваемых партитур. Благодаря осуществленному анализу выявились весьма интересные особенности художественного мышления композитора в сферах симфонического жанра.

Так, наиболее важным качеством симфонического мышления композитора является его неумное стремление к освоению типично армянских интонационных основ. Причем Чухаджян четко разделяет сферы исконно армянского мелоса и музыкальный ориентализм, представляя слушателю музыкальные миниатюры, сочиненные и в армянской стилистике, и в восточной манере.

Два опуса – «*Fantaisie orientale*» и «*Danse Caractéristique, L'oriental*», представляют собой образцы музыки усредненного восточного толка, в то время как «*Мелодия*» и «*Canto Armeno*» по характеру мелодизма абсолютно армянские.

К числу типично армянской интонационной музыки следует причислить «*Sinfonia*» – Увертюру к опере «*Аршак II*», и феерически-концертное полотно «*Mouvement Perpétuel*» – в обоих произведениях прочно укоренились черты национально-мелодической традиции.

Т. Чухаджян блистательно владеет формой. В концертном произведении «*Mouvement Perpétuel*» реализована форма рондо, но рондо своеобразное – с признаками двойных вариаций и рондо-сонаты. То есть, это самый сложный образец синтетического формообразования, что свидетельствует о высоком владении техникой формообразования.

В миниатюрах же Т. Чухаджян предельно точен и изящен: почти всегда реализуя репризную трехчастность, он все же каждый из образцов музыки представляет в изысканно своеобразной, неповторимой версии формы.

Особого внимания требуют его инструментально-оркестровые составы: Чухаджян часто пользуется разновидностями инструментов, редко употребляемыми, но очень подходящими для его замыслов. В партитурах не редкость валторны в редко применяемых строях «*in E*», «*in Es*», кларнеты в строе «*in C*», корнеты и трубы в строях «*in A*», «*in F*» и т. д. Например, в «*Fantaisie Orientale*» в одновременности применяются два корнета в строе «*in A*», а вторая пара этой оркестровой четверки – в строе «*in F*».

Это прямое свидетельство тонкого отношения к тембровым характеристикам инструментария в соответствии с композиторским замыслом. Тембровая палитра Чухаджяна напрямую связана с приемами контрапункта – музыкальная

ткань строится так, что все тембровые сочетания прослушиваются рельефно и выразительно. Гармонический язык хоть и приближен к европейскому, но порой основан на ладовых структурах, приближенных к армянской музыкальной традиции. И несмотря на то, что композитор еще не вошел в сферы принципиально ладовых гармоний, но тенденцию к ним явно наметил.

Наконец, достаточно широк охват жанров, связанных с симфонизмом – от изысканных миниатюр до таких развернутых произведений, как «Sinfonia» и «Mouvement Perpétuel», причисляемых нами к монументальным симфоническим полотнам. При этом «Mouvement Perpétuel» представляет собой яркий концертный опус и, несомненно, является первым прообразом жанра, иницировавшим в дальнейшем целую серию сочиненных армянскими композиторами фортепианных концертов.

В пьесе N12 перед юным исполнителем открываются самые разнообразные исполнительские задачи. Здесь мы сталкиваемся с проблемами исполнения мелодики, фразировка которой требует достаточно широкого дыхания, и сочетания в достаточно оживленном темпе разного рода артикуляционных штрихов (лиг, акцентов, *tenuto, portamento*). В пьесе немало и других технических задач, связанных со сменами темпов, совмещения по вертикали разнонаправленных динамических линий и т.п. И (что, наверное, самое главное) все это разнообразие средств и приемов не должно разрушить целостности

звучания темы. Что же касается второй части среднего раздела, то здесь может возникнуть серьезная проблема, связанная с исполнением тех звуков нижнего голоса, которые вынужденно должны быть подхвачены первым пальцем правой руки. Применение столь непростого игрового приема не должно отразиться на естественности звучания единой мелодической линии.

В свете сказанного появляется возможность утверждать, что именно двенадцатая пьеса, в которой впервые в сочинении проявились черты концертного фортепиано, выступает в роли своеобразного финала-обобщения и тем самым придает циклу «12 пьес на народные темы» целостный, завершенный облик.

Подводя итоги, обратим внимание на несколько моментов, которые свидетельствуют о стремлении композитора придать сочинению облик единого, целостного организма. Один из них связан с разнообразием типов «сцепления» соседствующих номеров цикла. В ряде случаев – это «сцепление через контраст» (вторая и третья, шестая и седьмая, седьмая и восьмая пьесы). В других же – номера как бы продолжают друг друга, то есть подчинены логике сквозного развития (тематический материал второго номера, по сути, дублирует тему начальной пьесы, мелодии пятой и шестой, девятой и десятой пьес также практически идентичны). Еще более значимым (в плане макродраматургии) представляется наличие в цикле двух главных опорных точек, его самых развернутых номеров. Это пьеса N4 (*Allegro moderato*, общий объем – 48 тактов) и финальный номер (*Andantino con tenerezza*, затем *Allegro brio* и, наконец, *L'istesso tempo de bravura, marcando*, 48 тактов).

Полагаем, что проведенный анализ всех «12 пьес на народные темы» Комитаса поможет получить представление о том весьма широком и разнообразном круге исполнительских задач, которые придется решать маленькому пианисту и его педагогу, обратившимся к фортепианным произведениям Комитаса. Здесь и создание характерной образной атмосферы, и владение богатым арсеналом тембровых красок, вызывающих в памяти своеобразное звучание народных инструментов, и чуткое реагирование на игру ладовых наклонов. Если добавить к этому проблемы, связанные с исполнением многоголосной фактуры, сочетанием разнохарактерных артикуляционных штрихов и использованием разнообразных приемов педализации, становится очевидным: эти сочинения могут стать для педагогов фортепианных классов серьезным подспорьем в их нелегком профессиональном труде.

РЕЗЮМЕ

В данной статье мы рассматриваем детский фортепианный цикл Комитаса “12 пьес на народные темы”. Этот цикл имеет большую историческую и художественную ценность, поскольку именно в нем, одним из первых в национальной музыкальной литературе, появились репертуарные пьесы, основанные на национальном фольклоре и специально предназначенные для детского начального фортепианного обучения. Полагаем, что проведенный анализ всех «12 пьес на народные темы» Комитаса поможет составить представление о том весьма широком и разнообразном круге исполнительских задач, которые придется решать маленькому пианисту и его педагогу, обратившимся к произведениям Комитаса. Эти сочинения могут стать для педагогов фортепианных классов серьезным подспорьем в их нелегком профессиональном труде.

**Ключевые слова** - “12 пьес на народные темы”, Комитас, Роберт Атаян, армянские, народные, национальные, фольклорные, фортепианные, пьесы, миниатюры, произведения, цикл, песни, детские, адресованные детям, для юных пианистов.

**ԿՈՄԻՏԱՍԻ «12 ՊԻԵՍ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ».  
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ**

**ՍՈՖՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ**

Այս հոդվածում մեր ուշադրության կենտրոնում է Կոմիտասի «12 պիես ժողովրդական թեմաներով» մանկական դաշնամուրային շարքը, որն առանձնանում է թե՛ իր պատմական և թե՛ գեղարվեստական նշանակությամբ: Այն առաջիններից է ազգային երաժշտական ռեպերտուարում, որը հիմնված է ֆոլկլորի վրա և հատուկ նախատեսված է մանկական դաշնամուրային նախնական ուսուցման համար: Մենք կարծում ենք, որ ամբողջ շարքի վերլուծությունը հնարավորություն կտա պատկերացում կազմելու այն լայն, բազմազան խնդիրների և կատարողական հմտությունների մասին, որոնք այս հիասքանչ դաշնամուրային մանրանվագներին դիմելիս պետք է հաղթահարեն փոքրիկ դաշնակահարը և ուսուցիչը:

**Բանալի բառեր** - «12 պիես ժողովրդական թեմաներով», Կոմիտաս, Ռոբերտ Աթայան, հայկական, ժողովրդական, ազգային, ֆոլկլորային, դաշնամուրային, պիեսներ, մանրանվագներ, ստեղծագործություններ, շարք, եր-

գեր, մանկական, երեխաներին հասցեագրված, պատանի դաշնակահարների համար:

## **METHODICAL ANALYSIS OF KOMITAS' 12 PIECES ON FOLK THEMES**

SOPHIA GHAZARYAN

This article elaborates on “12 pieces on folk themes”, piano works for children by Komitas. They are of distinction for both their historical and artistic significance. They are among the first piano pieces in the Armenian national music repertoire, constructed on folk music and especially designed for children just beginning to learn the piano. Ghazarian is of the opinion that the study of all the 12 miniature wonderful pieces of Komitas will open possibilities to envision the different and broad issues and the difficulties of performing them that the very young pianist together with the teachers should overcome.

**Key words** - “12 pieces on folk themes”, Komitas, Robert Atayan, Arminan, popular, folklore, traditional, national, piano pieces, minitures, compositions, songs, music for kids, music for teens.



## ԿՆՈՋ ԿԵՐՊՈՐԸ ԻՐԱՆԻ ԻՐԱՊԱՇՏ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ՄԱՆԴԱՆԱ ՍԵՓԱՍԻ

Իրական աշխարհի պատկերման գործընթացն Իրանում ձևավորվում էր շատ դանդաղ, մոտ չորս հարյուր տարի և քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային ոլորտներում փոխարինում էր տեղական հնագույն ավանդույթներին: Մոհամմադ Ղաֆֆարին (Քամալովուլք, ծնվ. Քաշան 1847թ., մից. 1940թ. Նեյշաբուր) համարվում է այդ ժամանակաշրջանի ամենաակնառու գեղանկարիչը: Նա, որպես Ղաջարների պալատի վերջին նշանավոր նկարիչ, առաջինն էր, որ հրաժարվեց իրանական նկարչության ավանդույթներից և լիովին տրվեց եվրոպական նատուրալիզմին: Քամալովուլքի անվան գեղեցիկ արվեստների դպրոցի հիմնադրումը էապես նպաստեց այդ գործընթացին, քանի որ նա Եվրոպայում ձեռք բերած իր փորձն ու ստացած տպավորությունները փոխանցում էր իրեն հետևողներին, որոնք կտավին էին հանձնում իրենց գլուխգործոցները: Քամալովուլքն ուներ գեղարվեստի իր հատուկ սկզբունքները: Նա ընդունում էր «իրականություն» և «գեղեցկություն» անժխտելի սկզբունքները. իրականությունը պատճառ և հիմք էր համարում, իսկ գեղեցկությունը՝ այն կատարելագործող տարր: Քամալովուլքի գեղանկարչական առանձնահատկություններն էին ավանդույթների խախտումն ու նորարարությունը: Նորարարություններից է հեռապատկերի (perspective) կիրառումը: Նրա գործերում և ուսմունքի մեջ, աչքի ընկնող բոլոր փոփոխություններով հանդերձ, երևում են ավանդական գույների հետքերը, հատկապես տասներեքերորդ դարի ոսկեգույնի և շագանակագույնի երանգները, որ առկա են նաև նրան հետևող դասական նկարիչների կտավներում:

Այլ կերպ ասած, Քամալովուլքը վերջակետ դրեց ավանդական արվեստին՝ մեկնարկելով մի նոր և լուրջ շարժում, որը փոխ էր առնվել Արևմուտքի արվեստից: Ի դեպ, Քամալովուլքի շարժմանը զուգընթաց՝ ժամանակի արևմտյան արվեստն ընթանում էր դեպի իմպրեսիոնիստական ոճը, սակայն Իրանի հասարակական միտքը դեռևս այն աստիճան չէր զարգացել, որպեսզի կարողանար ազատվել անցյալի մտածելակերպից:

Քամալովուլլի գործերում կնոջ ավանդական և ազգային դերի համառոտ ուսումնասիրությամբ կարելի է պատկերացում կազմել նրա աշխատելաճճի մասին, անդրադառնալ այդ ժամանակվա կնոջ հիմնական դերին:

Կնոջ դերի ուսումնասիրությանը նվիրված այս հոդվածում նախ համառոտ անդրադարձ ենք կատարում ընտրված նկարիչների և Քամալովուլլի առաջին ու երկրորդ սերնդի աշակերտների նկարների առանձնահատկություններին, ապա քննարկում կնոջ կերպարն այդ կտավներում:

Քամալովուլլը սերում է արվեստագետների տոհմից: Նրա հորեղբայրը՝ Միրզա Աբուլհասանիսան Ղաֆֆարին (Սանիովուլլը), տասնիններորդ դարի Իրանի նշանավոր գեղանկարիչներից էր, որն անզուգական էր ջրաներկով դիմանկարներ և խնջույքներ նկարելու գործում: Քամալովուլլի հայրը՝ Միրզաբոզորգ Ղաֆֆարի Քաշանին, ևս հանրահայտ նկարիչ էր: Նրա եղբայրը՝ Աբուֆորաբ Ղաֆֆարին, համարվում էր իր ժամանակի շատ տաղանդավոր նկարիչներից մեկը: Դեռահասության տարիքում Քամալովուլլը ընդունվեց Թեհրանի արհեստների բարձրագույն դպրոց և հենց այստեղ էլ սկսեց սովորել նկարչություն հանգուցյալ Մոզայան Օլ-Դոլեի մոտ: Մոզայան Օլ-Դոլեն, ով հանրահայտ նկարիչ էր, և ինչպես Աբուլհասան Ղաֆֆարին (Սանիովուլլը), նա էլ էր ճամփորդել դեպի Եվրոպա և մոտիկից ուսումնասիրել Եվրոպայի արվեստագետների գործերը, այսպես ասած՝ եվրոպամետ նկարիչ էր:

Քամալովուլլըն ուսման մեջ այնպիսի հաջողության հասավ, որ կարճ ժամանակ անց հրավիրվեց արքունիք և շուտով նշանակվեց նկարիչների ավագի («Նաղաշբաշի») պաշտոնում:

Այդ ժամանակաշրջանի նրա գործերի թեման ընդգրկում էր կտավի վրա առանձին պատկերված անձանց դիմանկարներ, թագավորական ճամբարների, այգիների, որսավայրերի տեսարաններ և պալատների ու դղյակների տարբեր հատվածներ: Նասերեդդին շահի մահից հետո (1895թ.) նա ուղեվորվեց Եվրոպա: Այս ճամփորդությունը տևեց երեք տարի և արվեստի մեծերի՝ Տիցիանի ու Ռեմբրանդտի արվեստի գործերին ծանոթանալու և ընկալելու առումով շատ կարևոր էր: Քամալովուլլի՝ այդ ժամանակաշրջանում կատարած բազմաթիվ պատճենահանումներ վկայում են եվրոպական մեծ արվեստագետների հանդեպ նրա ունեցած հետաքրքրության ու վստահության մասին<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Բեհնամ Շաբահանգ**, Դարաբ, Ալի Դեհբաշի, Քամալովուլլի կենսագրությունը, Թեհրան, «Չեքամե» հրատարակչություն, 1987, էջ 311:

Քամալոլմուլը՝ իբրև ավանդույթները խախտող և նորարար, կտավին էր հանձնում կյանքի ակնթարթներն իրենց ամբողջ էությանմբ ու ասպեկտներով՝ հաշվի առնելով հեռապատկերը: Երբ խոսվում է Քամալոլմուլի մասին, նա ներկայացվում է որպես պատմական ու լեգենդար մի անհատականություն, որ շուրջ հիսուն տարի զգալի ազդեցություն է թողել իրանական գեղանկարչական արվեստում:

Քամալոլմուլի առասպելական կերպարը թեև խոչընդոտում է նրա գործերի արդիական ընկալումը, այնուամենայնիվ նա թե՛ դրական և թե՛ բացասական ազդեցությունների օրինակ է, որ որևէ արվեստագետ կարող է թողնել իր ժամանակաշրջանի միջավայրի ու մարդկանց վրա:

Հետևելով Քամալոլմուլի աշխատանքներին՝ մի խումբ աշակերտներ շարունակեցին նրա ոճը, և ոմանք էլ սուբյեկտիվիզմը փոխարինեցին օբյեկտիվիզմով: Անշուշտ, այս պարագայում ընտրյալ դարձան այն նկարիչները, ովքեր ստեղծագործում էին վարպետի ոճով: Քամալոլմուլի աշակերտներից մեկի՝ Ալի Մոհամմադ Հեյդարիանի ստեղծագործություններում կնոջ ինքնությունն արտահայտվում է նկարչական նուրբ դետալների միջոցով: Այս հոդվածի համար ընտրված նրա կտավում կնոջ անհատականությունը կրկնապատկել է նրա վեհությունն ու հաստատականությունը, և դա արվել է ուղղահայաց գծերի օգտագործման շնորհիվ՝ կտավի հիմնական գաղափարը փոխանցելու նպատակով<sup>2</sup>:

Քամալոլմուլի հետևորդները նշված ոճերի օգտագործման համար ազատորեն կիրառել են ձևը, գույնը և բովանդակությունը: Ի վերջո այս նկարիչները մի կողմից հակվեցին դեպի սյուրռեալիստական դպրոցը, իսկ մյուս կողմից՝ նոր և վերացական երևույթները: Այդ ժամանակաշրջանում նրանք օգտագործում էին հեռանկարի խորությունն ու մարդկային մարմնի կառուցվածքը և միաժամանակ դրանք մերժում: Սուբյեկտիվ և օբյեկտիվ հասկացությունները հաղորդելու նպատակով նրանք կիրառում էին անբնական և չափազանցված պատկերներ, օգտագործում հիպերբոլը:

Այս ժամանակաշրջանի նկարիչ Հուշանգ Փեգեշնիան իրականությունը պատկերել է իրատեսական խորությամբ և խոսուն պատկերներով: Այսպես է ստեղծվել «Խարքի կանայք» նկարների շարքը: Իրականում նա նորագույն գեղանկարչությունն Իրան ներմուծող անձանցից էր: Նրա նկարներում Իրանի

---

<sup>2</sup> Տե՛ս Քամալոլմուլը (1985), Քամալոլմուլի դպրոց, Թեհրան, «Աբգինե» հրատարակչություն, էջ 9-10:

հարավային շրջանի կանանց դեմքերը և խուզիստանցի կնոջ հպարտությունն ու արժանապատվությունն արտահայտված են հատուկ որակով ու շեշտադրությամբ: Ալի Աքբար Սանաթին իր կտավներում կիրառել է ռեալիստական և էքսպրեսիոնիստական ոճեր: Նրա կարծիքով նկարչությունն իրականացնում է անորոշ և անհասանելի երազանքներ, որոնք ոգեշնչվում են բնությունից: Մորթեզա Քաթուլյանի «Մերժվածը» կտավում շեշտը դրվում է ստեղծագործության մի հատվածի վրա, որը հանդիսատեսին գրավում է նրա մտավոր կարողություններին համապատասխան: Այս ստեղծագործության ներդաշնակ գույները միմյանց են կապում կնոջն ու մյուս տարրերը:

### **Իրանի ռեալիստ նկարիչների պատմությունը**

#### **Քամալոլմուլքի դպրոցը**

Իրանի ժամանակակից արվեստի և գրականության էվոլյուցիան տեղի էր ունենում սահմանադրական շարժման հետ միաժամանակ՝ սոցիալ-քաղաքական և մշակութային փոփոխություններին զուգընթաց: Պոեզիան և գրականությունն ուղղակի ազդեցություն կրեցին այս շարժումից, ինչը չի կարելի ասել նկարչության և քանդակագործության մասին: Եվրոպայում կրթվելուց հետո՝ 1910թ., Քամալոլմուլքը պետության թույլտվությամբ ու հովանավորությամբ և իր գեղարվեստական հայացքների ու մոտեցման հիման վրա Թեհրանում հիմնադրեց Գեղեցիկ արվեստների դպրոցը: «Այն ժամանակ, երբ Քամալոլմուլքը ղեկավարում էր իր դպրոցը, փորձում էր Եվրոպայից ստացած տպավորություններն ու փորձն օգտագործել իր աշակերտների համար: Մյուս կողմից՝ հնարավորություն ունեցավ ստեղծելու իր գլուխգործոցներից մի քանիսը, որովհետև դրանից հետո այլևս չունեցավ անհրաժեշտ ազատ ժամանակ, իսկ կյանքի վերջին տարիներին նրա հետ պատահած միջադեպերը, կարելի է ասել, նրան հեռացրին իր սիրած արվեստից»<sup>3</sup>:

Վարպետ Քամալոլմուլքն ուներ, ինչպես ասվեց, արվեստի վերաբերյալ իր սկզբունքները: Գեղեցիկ արվեստների դպրոցի հիմնադրմամբ Քամալոլմուլքը նպատակ ուներ ուսանողներին կրթություն տալու եվրոպական ակադեմիական մեթոդներով: Չնայած այս դպրոցը երբեք իսկական ակադեմիա չդարձավ, Իրանում կերպարվեստի զարգացման ուղի բացեց: «Քամալոլմուլքը հավանություն է տալիս հունական արվեստին, որը հիմնված է երկու անժխտելի սկզբունքների՝ իրականության և գեղեցիկի վրա: Նա գտնում է, որ

<sup>3</sup> **Բեհնամ Շաբահանգ**, Դարաբ, Ալի Դեհբաշի, Քամալոլմուլքի կենսագրությունը, Թեհրան, «Չեքամե» հրատարակչություն, 1987, էջ 305:

մոդելը դեռևս ծառայում է որպես օրինակ, քանի որ մարդկությունն իր երկու հազար և հինգհարյուրամյա զարգացումներով հանդերձ չի կարողացել գերազանցել նրան և պետք է այն օգտագործի առաջընթաց ապրելու համար»<sup>4</sup>:

Անցյալ դարի քառասունականներին, երբ ավելի քան յոթանասուն տարի էր անցել Ֆրանսիայում իմպրեսիոնիզմի ի հայտ գալուց, և Արևմուտքի արվեստագետների նոր հայացքները խոստանում էին արվեստի բնագավառում կարևոր փոփոխություններ, որոշ արվեստագետներ Իրանում ջանում էին ընկալել այդ հայացքներն ու օգտվել դրանցից: Ոմանք Արևմուտքում ընթացող զարգացումներն ուսումնասիրելու նպատակով ուղևորվում էին Եվրոպա, իսկ ոմանք դեռևս փորձում էին իրենց գործերում պահպանել գերիշխող կլասիցիզմն ու նատուրալիզմը: Այս ընթացքում որոշ պարբերականներում սոցիալական, պատմական ու գրական հոդվածների հետ սկսեցին տպագրել կերպարվեստի մասին նյութեր: Հարաբերականորեն ձերբազատվելով Իրանի ավանդական նկարչության մի մասից և կլասիցիզմի ու նատուրալիզմի սահմանափակող, զսպող ու փակ ավանդույթներից՝ քառասունական թվականները հնարավորություն ընձեռեցին ականատես լինելու Իրանի արվեստ մուտք գործած և նոր շարժումների ու արժեքների ձգտող վերը նշված վարպետների նորամուծություններին ու զարգացումներին<sup>5</sup>:

Արնուլդ Հաուերը ևս, շեշտելով հասարակության և անհատի պատմական նշանակությունը տվյալ ժամանակի արվեստի արժեքներ ստեղծելու համար, պնդում է, որ «Արժեքներն ստեղծվում են արվեստագետների միջոցով՝ հատուկ կարիքներ բավարարելու համար, ուստի դրանք պատմական փաստեր են»<sup>6</sup>:

### **Քամալունդի դպրոցի կրթական կառուցվածքը**

Գեղեցիկ արվեստների դպրոցի ղեկավարման 15 տարիների ընթացքում, Քամալունդի ջանքերի շնորհիվ, տեխնիկական հմտություններ ձեռք բերեցին մի շարք նկարիչներ ու քանդակագործներ, որոնք հետագայում վարպետի մեթոդներն օգտագործեցին արվեստի ուսուցանման ընթացքում և իրենց ստեղծագործություններում:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 167:

<sup>5</sup> Տե՛ս **Քամալունդը** (1985), Քամալունդի դպրոց, Թեհրան, «Աբգինե» իրատարակչություն, էջ 238-239:

<sup>6</sup> Տե՛ս **Արնուլդ Հաուերը**, Արվեստի սոցիալական պատմությունը, թարգմանիչ՝ Ամին Մոայեթ, Թեհրան, «Դոնյայե Նո» իրատարակչություն, 1983, էջ 49:

Քամալովմուքի դպրոցի յուրահատկություններից մեկն այն է, որ նրա հետևորդները կատարելությունը փնտրում էին տասնիններորդ դարի եվրոպական ակադեմիական արվեստի ոճով աշխատելու մեջ: Նրանց գործերում միշտ կարելի է տեսնել ինչ-որ ռոմանտիկ զգացմունքայնություն: Նրանցից շատերը դասավանդում էին ավագ դպրոցներում ու արվեստի և ուսումնական մասնավոր հաստատություններում: Նկարչության և գծանկարչության ուղեցույց ձեռնարկների հրատարակությունը տարածում գտավ Քամալովմուքի աշակերտների միջոցով: Նրանց ստեղծագործությունները հիմնականում դիմանկարներ էին, նատյուրմորտ, բնանկարներ և ժողովրդագրական պատկերներ: Քամալովմուքի արվեստի դպրոցի հիմնական պարտականություններն էին՝ դաստիարակել արվեստագետ ուժեր, հայտնաբերել ընդունակ կադրեր և ստեղծագործական ու նորարարական ուղիներ փնտրել: Ժամանակների հակամարտությունների բովով անցած Քամալովմուքը, որ բավական փորձ էր ձեռք բերել քաղաքական և հասարակական բնագավառներում, մի քանի աշակերտներ ընդունելով, սկսեց տարածել պատկերի ընդհանուր լեզուն և դրանով մեծ քայլ կատարեց արվեստի կարգավիճակն ու Իրանի արվեստը բարձրացնելու ուղղությամբ<sup>7</sup>:

**Կինը Քամալովմուքի նկարում** (նկար 1, անվանումը՝ Բախտագուշակը, տեխնիկան՝ յուղաներկ կտավի վրա, թվական՝ 1892, չափսերը՝ 1600x800, գտնվելու վայրը՝ Թեհրանի Աբյազ պալատ).



Նկար 1.  
Նկարիչ՝ Քամալովմուք, Բախտագուշակը

Այս նկարում աղջկա հայացքն ու ցանկությունը կարելի է կարդալ ձեր բախտագուշակի դեմքին: Բախտագուշակը տարբեր հնարքներով կանխատե-

<sup>7</sup> Տե՛ս **Քաշյան Հոսեյն** (Բի թա) Քամալովմուք, Թեհրան, Մշակույթի և իսլամական առաջնորդման նախարարության հրատարակություն, 5-րդ տպագրություն, էջ 3-4:

սում է նրա ապագան: Իսկ մայրը սրտացավությամբ դաստերն է նայում ու հույս փայփայում, որ աղջիկը բախտագուշակի խոսքերի շնորհիվ կխաղաղվի և ապագայի հանդեպ հույսով կլցվի: Երիտասարդ աղջիկն իր գեղեցիկ աչքերով ու մտահոգ հայացքով ծերունու աչքերում երջանիկ ու երազանքներով լի ապագա է փնտրում: Նկարիչը գեղարվեստորեն է պատկերել նրանց հայացքները և դրանք առավել ընդգծելու նպատակով ծերունու և կնոջ հայացքներն աղջկա կողմն է թեքել: Արդյունքում այդ երեք հայացքները եռանկյունու պես իրար են միացել: Այս կոմպոզիցիան օժտված է երկկողմ հավասարակշռությամբ: Աղջիկը (ծախսակողմյան ոսկեգույն անկյունի 1/3 հատվածում) հայացքներն իր կողմն է ձգում: Ներդաշնակություն կա նաև հետին ֆոնի գծերի, կերպարների ուղղահայաց բաժանման և լուսամուտից երևացող տեսարանի, ինչպես նաև գորգի թեք գծերի ու հագուստների վրայի գծերի միջև: Ջերմ գույների ամբողջությունը, բաց դեղնագույնի և դարչնագույնի համակցությունը յուրահատուկ հնություն են հաղորդել նկարին, և աղջկա կերպարի ընդգծումը կատարվել է միայն հայացքների միջոցով:

### **Քամալոմոլլի աշակերտների առաջին և երկրորդ սերնդի ռեալիստ նկարիչներն ու նրանց նկարչության առանձնահատկությունները**

Այս նկարիչներից են՝ Էսմայիլ Աջթիյանին, Մահմուդ Օլիան, Ռաֆի Հալաթին, Ալի Մոհամմադ Հեյդարյանը, Յահյա Դոլաթշահին, Ալի Ռոխսարը, Մոհսեն Սոհեյլին, Շոքաթոմոլլուք Շաղայեղին, Ռեզա Շահարին, Հոսեյն Շեյխ Էիյան, Աբուլհասան Սադիղին, Մոհսեն Վազիրի Մողադամը, Հասան Արժանգը, Ռասամ Արժանգին, Ալի Ասղար Փեթգարը, Հուշանգ Փեզեշքնիան, Հուշանգ Փեյմանը, Ալի Աքբար Սանաթին և Մորթեզա Քաթուլյանը:

Ալի Մոհամմադ Հեյդարյանը (1896-1990թթ.) Իրանի արդի նկարչության ամենաազդեցիկ ներկայացուցիչներից է համարվում: Կրթության տարրական փուլն անցնելուց հետո նա ընդունվեց Գեղեցիկ արվեստների դպրոց և վարպետ Քամալոմոլլի մոտ սովորեց նկարչություն: Այնուհետև իր կրթությունը շարունակելու և ուսումնասիրություններ կատարելու նպատակով նա ճամփորդեց Ֆրանսիա և Բելգիա: Իրան վերադառնալուց հետո Գեղեցիկ արվեստների դպրոցի իր համադասարանցիներից մի քանիսի, այդ թվում՝ Վարպետ Վազիրիի հետ միասին հիմնադրեց Գեղեցիկ արվեստների քոլեջը և մինչև հանգստի կոչվելը սրտացավությամբ դասավանդեց ու իր արդյունավետ մասնակցությունն ունեցավ այդ հաստատության գործունեության մեջ: Իրանի այժմյան հայտնի վարպետներից շատերը, այդ թվում՝ Ջավադ Համիդին, Մահմուդ Ջավադիփուրը, Մորթեզա Մոմայեզը, Փարվիզ Քալանթարին և Մոնիր Ֆարման-

Ֆարմայանը եղել են նրա աշակերտները: Չնայած Հեյդարյանն սկզբում աշխատում էր իր ուսուցչի՝ Քամալովուլլի ոճով, սակայն աստիճանաբար ծանոթանալով այլ ոճերի՝ նա հրապուրվեց ուղղակի և ազատ գունազարդման և մաքուր ու թափանցիկ գույների օգտագործման ոճով՝ իմպրեսիոնիզմով, և այս ոճի մեջ բավականին փորձ ձեռք բերեց: Այս ոճից ազդված նրա ստեղծագործությունները կարևոր նշանակություն ունեցան Իրանի արդի նկարչության համար: Հեյդարյանի աշխատելաճը կլասիցիզմն ու նատուրալիզմն են, սակայն երբեմն նրա գործերում կարելի է տեսնել իմպրեսիոնիզմի ազդեցության հետքեր: Նա հմուտ դիմանկարիչ է, ճանաչում է գույնն ու հասկանում նրա արժեքը: Նրա դիմանկարները նման չեն ֆոտոնկարների, որոնք զուտ արձանագրում են պահերն ու հատկանիշները: Նրանցում կարելի է տեսնել արվեստագետի վրձնի, մտքի, տրամադրության և նկարում պատկերված անձնավորության մասին նրա ընկալման արտացոլումը: «Նա ոչ մի ջանք չի խնայում անկենդան բնության պատկերման, մանրամասնությունների և նուրբ տարրերի օգտագործման և բնության արտաքին գեղեցկությունների ներկայացման գործում, թեև ինքը դասական ոճի սիրահար է»<sup>8</sup>:

Իր վարպետի՝ Քամալովուլլի և նրա մյուս աշակերտների ստեղծագործությունների համեմատ նրա գործերն առավել առանձնահատուկ են: Հեյդարյանն ստեղծել է տարբեր բնագավառների ստեղծագործություններ, այդ թվում՝ դիմանկարներ, բնապատկերներ, նաև պատկերել է փակ տարածություններ, օրինակ՝ սենյակ, նատյուրմորտներ և կատարել համաշխարհային նկարիչների գործերի կրկնօրինակներ: «Տարիների ընթացքում Հեյդարյանի աշխատելաճն ավելի ազատ դարձավ: Ինչպես Քամալովուլլը, նա ևս սիրում է կրկնօրինակել անցյալի հեղինակների գործերը: Այդ կտավներից են Շիշկինի բնանկարներից մեկի և Դրեզդենի պատկերասրահի հավաքածուի մաս կազմող՝ Տիցիանի հանրահայտ «Կեսարի դինարը» նկարի կրկնօրինակները: Նրա գործերից կարելի է նշել Միլեյի «Հովիվը» և պոռֆեսոր Պաստորի դիմանկարը, որը պահվում է Փարիզի Պաստորի ինստիտուտում: Նա ջանասեր նկարիչ էր համարվում, սակայն հակված չէր իր գործերը ցուցադրելուն: Այնուամենայնիվ, արվեստի մեծերից շատերը նրան համարում են Իրանի արդի արվեստի ամենաազդեցիկ ներկայացուցիչներից մեկը:

<sup>8</sup> **Քաշեֆի Ջալալեդդին**, Ավանդույթ և նորարարություն. նորն ու հինը նոր հեռանկարների շրջանակում, «Հոնար» ամսագիր, թիվ 11, 1986, էջ 70:

<sup>9</sup> **Քամալովուլլը**, Քամալովուլլի դարոց, Թեհրան, «Աբգինե» հրատարակչություն, 1985, էջ 16:





Նկար 2. Նկարիչ՝ Ալի Մոհամմադ Հեյդարյան,  
Գեղջկուհին

**Կինը Ալի Մոհամմադ Հեյդարյանի կտավում** (նկար 2, անվանումը՝ Գեղջկուհին, տեխնիկան՝ յուղաներկ, թվականը՝ 1958թ., գտնվելու վայրը՝ անձնական հավաքածու). Նկարիչը, ներկայացնելով գեղջկուհու իրական կերպարը, նրան ցուցաբերել է այլ մոտեցում, իրականում մոտեցրել է նատուրալիզմին: Կուժը ձեռքին և զամբյուղն ուսին՝ տեղական տարազով կինը դժվարություններին դիմագրավող աշխատասեր, ուժեղ և կայուն կնոջ մարմնավորում է, և նկարիչ արվեստագետն օբյեկտիվորեն բացահայտել է նրան: Լույսի աղբյուրը թաքնված է հենց կերպարի մեջ: Հետին ֆոնի վրա լույսը պակասում է այնպես, ինչպես ռեալիզմում է: Կնոջ պատկերի ուղղահայաց գծերը նպաստել են էջի կադրի խորությանը, մեծությանն ու հաստատակամությանը և արտահայտում են հպարտություն ու դինամիկա: Ամեն ինչ կայուն է ու ներդաշնակ: Գետնի վրայի հորիզոնական գծերը պահի կայունությունն ու հարմարավետությունն են ցույց տալիս: Ուղղահայաց ամուր ու ցրված հորիզոնական գծերը նկարին տվել են յուրահատուկ չափավորություն: Բնական գույները միախառնվել են գորշի տարբեր երանգներով, և չնայած օգտագործվել են կոնտրաստային դեղինը, նարնջագույնը և մանուշակագույնը, հագուստի և բնության մեջ ստեղծված կիսաստվերը (umbra) նվազեցրել է գույնի մաքրությունը: Այս նկարում կնոջ նկատմամբ նկարչի ջերմ մոտեցումը նկատելի է, նա պատկերել է չարքաշ կին, որի բոլոր ջանքերն ուղղված են ընտանիքի բարօրությունն ապահովելուն, որը ամբողջ օրը տնից հեռու չարչարվում է: Նկարիչը հմտորեն

կարողացել է պատկերել նաև նրա բնական գեղեցկությունը, սլացիկ հասակը, որն Իրանի հյուսիսային շրջանների կնոջ տարագով մարմնավորում է իրանցի գեղջկուհու ավանդական կերպարը: «Նրա արվեստը մոտ է նատուրալիզմին: Նա հետևել է մեծն վարպետ Քամալոմուլքին»<sup>10</sup>:

Անցյալ դարի սկզբներին ծնվեց Հուշանգ Փեզեշքնիան, որ ապագայում պետք է հայտնի դառնար որպես Իրանի մոդեռնիստ նկարիչ: Նա այն սակավաթիվ արվեստագետներից էր, ով այդ տարիներին բարձրացրեց մոդեռնիզմի դրոշը: Սակայն լարված ու ալեկոծ կյանքը նրան խանգարեցին դառնալու Իրանի գեղանկարչության ասպարեզի եզակի դեմք<sup>11</sup>: Հուշանգ Փեզեշքնիան (1917-1972) Իրանի արդի նկարչության ներկայացուցիչներից է: Նա մի շարք իրանցի ուսանողների հետ ուղևորվում է Եվրոպա, սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով Եվրոպայի ճանապարհը փակվում է, և նա ստիպված հանգրվանում է Թուրքիայում: Այնուամենայնիվ, նա շարունակում է նկարել և բախտի բերմամբ ծանոթանում է Թուրքիա քստորված ֆրանսիացի նկարչի՝ Լեոպոլդ Լևիի հետ, որը քաջ ծանոթ էր քսաներորդ դարի նկարչության ընթացքին: Վերջինս 1943-1946թթ. Փեզեշքնիայի ուսուցիչն էր Պոլսում և օգնեց նրան հայտնագործել մոդեռն նկարչությունը: Փեզեշքնիան ուսումը ստանում է այդ նկարչի մոտ և ստացած գիտելիքներով վերադառնում Իրան:

Իրանցի գեղանկարիչն իր գուաշ և ջրաներկ գործերի ընտրանին, որ ստեղծել էր եվրոպական արվեստից ներշնչվելով, առաջին անգամ ցուցադրեց Փարիզում: Ապա որոշեց դա ներկայացնել Իրանում: Նա հավաքեց իրանցի եռանդուն երիտասարդությանը և անհատական ու կոլեկտիվ ցուցահանդեսների օգնությամբ կարողացավ ամբողջ երկրով մեկ հետաքրքրություն առաջացնել արվեստի նոր հասկացությունների նկատմամբ<sup>12</sup>:

«Դժվար թե հնարավոր լինի հստակ որոշել Փեզեշքնիայի արվեստի ուղղությունը: Թուրքիա ճափորդելուց առաջ նա աշխատում էր հին ոճով: Ճամփորդությունից հետո միառժամանակ հետաքրքրվում էր իր ուսուցանած տեխնիկայի, այդ թվում՝ Պիկասոյի և Բրաքի կուբիզմի ու Մատիսի ֆովիզմի ցուցադրմամբ: Վերջում նա հոգնեց փոխառված այս մեթոդներից ու հրաժարվեց

<sup>10</sup> Այաթոլլահի Հաբիբոլլահ, Արվեստի քննադատության եղանակների ընկալումը, Թեհրան, «Սուրեյե Մեիր» հրատարակչություն 2005, էջ 85:

<sup>11</sup> Տե՛ս Էնդադյան Յաղուբ, Ռույին Փաքբազ, Դեպի ուղեկիցների այգին, Թեհրան, «Նազար» հրատարակչություն, 2000, էջ 169:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 160:

դրանցից: Հուշանգ Փեզեշքնիայի գեղանկարչությունն անցել է ոլորուն ճանապարհներով և հուզաարտահայտչական երանգներով պատկերել արևադարձային վայրերի սևացած դեմքերը: Գուաշի և ջրաներկի օգնությամբ նա արտացոլում է Իրանի գյուղական բնությունն ու գյուղացու՝ արևից կիզված դեմքը: Նա սիրում էր Իրանի գյուղական բնությունն ու գեղջուկների խանձված դեմքերը, որոնց մեջ տեսնում էր մի տեսակ ազնվականություն և հպարտություն և շատ էր ցանկանում դրանք արտացոլել իր կտավներում: Երբ Փեզեշքնիան դուրս եկավ «իզմերի» պատյանից, փաստորեն գտավ ինքն իրեն:

Իրականում Հուշանգ Փեզեշքնիան այն երեք-չորս նկարիչներից էր, որոնք 1941 թվականին Իրան ներմուծեցին նոր պատկերացում նկարչության մասին:

Գիտակցության ու ճանաչման այն աստիճանը, որն այսօր առկա է Իրանի գեղարվեստի մթնոլորտում, անխուսափելիորեն ինչ-որ չափով նրանց ջանքերի շնորհիվ է: Նրանցից առաջ նկարչությունը քիչ թե շատ սահմանափակվում էր Քամալուլմուլքին և նրա աշակերտներին ընդօրինակելով<sup>13</sup>:



Նկար 3. Նկարիչ՝ Հուշանգ Փեզեշքնիա, անվերնագիր

**Կինը Հուշանգ Փեզեշքնիայի կտավում** (նկար 3, անվերնագիր, տեխնիկան՝ ջրաներկ՝ սովարաթոթի վրա, թվական՝ 1970, չափսերը՝ 255x150սմ, գտնվելու վայրը՝ անձնական հավաքածու). նա նկարում է հարավային այրված դեմք, միայնակ և թախճոտ կին, ով իր ուսերին կրում է կյանքի ամբողջ բեռը և

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 167:

մարտնչում ապրելու համար, փնտրում է կյանք և երբեմն էլ՝ անէություն: Կերպարի դեմքի, ձեռքերի և կիսանդրու վրայի արտահայտիչ զծերը կրում են դառնություն, վիշտ, մենություն ու անօգնականություն: Այս ստեղծագործության հավասարակշռության պահպանման համար մեծ նշանակություն ունեն օգտագործված ուղղահայաց, կոր և շեղ զծերը: Գորշավուն կապույտն այս նկարում լավագույնս արտահայտում է կնոջ հոգում կուտակված վիշտը: Այս կոմպոզիցիայի հաստատուն և հզոր զծերը նպաստում են ստեղծագործության իմաստը փոխանցելուն:

Մորթեգա Քաթուլյանը ծնվել է 1943թ. հուլիսի 3-ին Թեհրանում: Մանկուց հետաքրքրվում էր նկարչությամբ: Մասնագիտությամբ՝ գրաֆիկայով, և նկարչությամբ սկսեց զբաղվել 1960 թվականից և նախագծեց բազմաթիվ պաստառներ, գրքերի կազմեր, բրոշյուրներ ու լոգոներ: Նա նախահեղափոխական տարիների գրաֆիկների արհեստակցական միության հիմնադիրներից է, երկու տարի եղել է նրա տնօրենների խորհրդի անդամ: Մասնակցել է գրաֆիկայի և նկարչության բազմաթիվ ցուցահանդեսների: Մինչ օրս նա ունեցել է իր ստեղծագործությունների չորս ցուցահանդես և մասնակցել է նաև խմբային մի շարք ցուցահանդեսների: Ավելի քան 30 տարի է, որ գեղանկարիչը զբաղվում է նկարչության դասավանդմամբ, և նրա ուսանողներից ոմանք արդեն դասախոսներ են: Քաթուլյանի գործերից շատերը գտնվում են Թեհրանի ժամանակակից արվեստի թանգարանում, տեղական և արտասահմանյան մասնավոր հավաքածուներում և աշխարհի տարբեր թանգարաններում:

Քաթուլյանը Իրանի ժամանակակից փորձառու նկարիչներից է: Նա այն արվեստագետներից է, ում գործերը գրավել են հանրության ուշադրությունը<sup>14</sup>:

Վարպետ Քաթուլյանի գործերից հանդիսատեսները ջերմություն ու հարազատություն են զգում: Արվեստագետի գործերն ազդում են մարդու հոգու վրա: Չնայած նա կերտել է շատ արժեքավոր նկարներ, սակայն դրանք արարչի ստեղծած գեղեցկությունների միայն մի փոքրիկ մասնիկն են: Քաթուլյանի գործերը ռեալիստական են, դրանք պարունակում են նաև մոդեռնիստական և սյուրռեալիստական տարրեր: Նրա ստեղծագործության թեմաներից են սպասումը, մտահոգությունը և հետզհետե նվազող ուրախությունը:

<sup>14</sup> **Գուլարզի Մորթեգա**, Հեղափոխության արվեստն Իրանում, Թեհրան, «Ֆարհանգեստան Հոնար» հրատարակչություն, 1999, էջ 184:

Քաթոլիկյան իր նկարներում անդրադարձել է այնպիսի հասկացությունների, որոնց կողքով մենք ամեն օր պարզապես անցնում ենք: Քաթոլիկյանի գործերի խոր իմաստներն ու գաղափարները հավերժ մնայուն են: Նա ասում է. «Իմ կարծիքով արվեստը ժամանակակից մարդու կյանքի բովանդակությունը ներկա և ապագա սերունդներին փոխանցելու մշակութային ամենակարևոր միջոցներից է»<sup>15</sup>:

Նրա նկարներից յուրաքանչյուրն արտացոլում է նկարչի մտքերն ու ընկալումները: Քաթոլիկյանի գործերը չեն համապատասխանում որևէ կոնկրետ ոճի չափանիշներին, և հետևաբար դրանք հնարավոր չէ վերլուծել մեկ ոճի չափանիշներով: Բոլոր բնագավառներում նա ընկալում է տարբեր ոճերը սեփական ճաշակով: Նա մեկ նկարում է ռեալիստական, մեկ՝ սյուրռեալիստական, իսկ մեկ այլ դեպքում նատուրալիստական ոճով: Քաթոլիկյանը բոլոր վերապահումներից ազատ նկարիչ է: Նրան կարելի է սրտի նկարիչ անվանել:

Նրա նկարներից շատերում հանդիսատեսը տեսնում է կյանքի սովորական, անցողիկ պահերը: Նրա ընկալումն այնպիսին է, որ կարծես արվեստագետը միայն ցանկացել է նկարել ու ցուցադրել իր տեխնիկական հմտությունը և ամենափոքր մանրամասները: Այս մտածելակերպն արտահայտվում է գույների և թեմայի ընտրությամբ և ստեղծագործության ներկայացման միջոցով: Նկարչի առաքելությունն է մարդկանց համար բացահայտել երևույթներով լեցուն աշխարհի ինչ-որ դուռ:



Նկար 4. Նկարիչ՝ Մորթեզա Քաթոլիկյան, Մերժվածը

<sup>15</sup> **Քաթոլիկյան Մորթեզա**, Մորթեզա Քաթոլիկյանի գեղանկարչական ստեղծագործությունները, Թեհրան, «Նեգարե» հրատարակչություն, 1992, էջ 11:

**Կինը Մորթեգա Քաթուզյանի կտավներից մեկում** (նկար 4, անվանումը՝ Մերժվածը, տեխնիկան՝ յուղաներկ կտավի վրա, թվական՝ 1984, չափերը՝ 70x50, գտնվելու վայրը՝ անձնական հավաքածու)։ պատի անկյունում կնոջ ճմլված մարմինը, չադրայի մեջ փաթաթված ոտքերի, ձեռքերի և մարմնի շարժումները խստացրել են նրա թշվառության պատկերը։ Կտավում կինը գտնվում է տեսանկյան կենտրոնում, որ բավականին մեծ զգացմունքային լիցք է արտացոլում։ Արվեստագետը, օգտագործելով նարնջագույնի, օխրայի, գորշավուն կանաչի և դարչնագույնի տարբեր երանգների ներդաշնակ գույները, կարողացել է ընդգծել կնոջ թախիժը, հուսահատությունը, մտամոլորությունը, մենությունը և թշվառությունը։ Կտավի ռեալիստական արտահայտությունը փոխանցում է անապաստանության գաղափարը, որ կերպարը կործանված է, միայնակ ու հոգնած։ Արդյոք կա՞ որևէ ապահով տեղ։ Նրա համար լույսի ու հույսի նշույլ անգամ չի երևում։ Կտավի գույները հիշեցնում են աշնան մայրամուտը, որը վշտի և տխրության սկիզբ է ազդարարում։ Քաթուզյանը կարողացել է այցելուների մեջ արթնացնել կարեկցանք և սրտացավություն՝ պատկերելով տխուր մի տեսարան, որի բազմաթիվ օրինակներն առկա են հասարակական կյանքում։

Անշուշտ, Իրանի արվեստագետների ու վարպետների՝ Քամալոլմուքի դպրոցի երեկվա աշակերտների ստեղծագործություններում ստեղծվել էր մտքի և զգացմունքի հակասություն նորության փնտրտուքների և հին մտածողության միջև, ինչը կյանք և շարժում արտահայտող արվեստագետի ներքին պահանջն է։

Քամալոլմուքի դպրոցի նկարիչներն իրենց գործերում ուշադրության են արժանացրել կնոջ կերպարի սոցիալական ասպեկտները և նրա էության չափանիշները։ Ռեալիզմն ամբողջությամբ առկա էր քամալոլմուքյան շրջանի նկարչության մեջ և տվյալ դեպքում արտահայտվել է կնոջ կերպարում։ Նկարիչները հատկապես շեշտադրում էին հասարակական կյանքում նրա՝ իբրև մոր, դերը։

Երկրորդ սերնդի գեղանկարիչները ևս, բացի ռեալիստական միտումներից, որոնք գալիս էին վարպետ Քամալոլմուքից, հակված էին իմպրեսիոնիզմին և էքսպրեսիոնիզմին։ Նրանք կնոջ ներքին վիճակները ներկայացնում էին էքսպրեսիոնիզմի դիտանկյունից և պատկերմամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կնոջ գործությանն ու հաստատակամությանը։

## ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հետազոտությունն ուսումնասիրում է կնոջ կերպարը և կնոջ սոցիալական ինքնությունը իրանցի ռեալիստ նկարիչների գործերում: Նկարիչներից յուրաքանչյուրի գործերի ուսումնասիրության ժամանակ անդրադարձ է կատարվում հասարակության մեջ կնոջ բազմազան կողմերից ինչ-որ որոշակի ասպեկտի վրա, ու կնոջ ֆունկցիան դիտարկվում է նրանց տեսանկյունից: Կարևոր հանգամանքն այն է, որ գեղանկարիչների գործերի ուսումնասիրությամբ, բացի նրանց ոճն ու կնոջ մասին նրանց հայացքները բացահայտելուց, կարելի է հասկանալ իշխող սոցիալական պայմաններն ու հասարակության մեջ կանանց վերաբերյալ ժամանակի տարածված կարծրատիպերը: Այնուամենայնիվ, նկարիչների ստեղծագործություններում, բացի տարբեր տեսանկյուններից հասարակության մեջ կնոջ գործնական դերի ընկալումից, նա ներկայացված է որպես իդեալական, առասպելական և օրինակելի կերպար, որպես գեղեցկության մարմնավորում:

***Բանալի բաներ*** - կին, նկարչություն, զարգացումներ, արվեստ, դեր, կառուցվածք:

## РОЛЬ ЖЕНЩИНЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ ХУДОЖНИКОВ-РЕАЛИСТОВ ИРАНА

МАНДАНА СЕПАСИ

Данное исследование проводится с целью изучения различного проявления женского образа в работах иранских художников-реалистов. Во время изучения работ каждого из художников делается ссылка на какой-то определенный аспект, с различных сторон рассматривается роль женщины в обществе и культуре. Важным обстоятельством является то, что изучение работ живописцев, кроме выявления их стилей и их взглядов на женщину, дает возможность понять господствующие социальные условия и распространенные стереотипы о женщинах этого времени. Тем не менее, в творениях художников, кроме восприятия практической роли женщины в обществе с разных точек зрения, она представлена как идеальный, сказочный и образцовый образ, как воплощение красоты.

***Ключевые слова*** - женщина, живопись, развитие, искусство, роль, структура.

## WOMEN IN THE WORKS OF IRANIAN REALISTIC PAINTERS

MANDANA SEPASI

This article is a study of the social identity and image of women in the paintings of Iranian realistic artists. Sepasi, while studying the works of each of these artists, makes reference to certain attributes of women in society from various standpoints, including the perspective of the artists that he examines.

It is notable to perceive that while studying these paintings, Sepasi, beside identifying the artists' styles and their opinion about women, could understand the prevailing social conditions and the existing stereotypes of women in this society. These artists, in addition to presenting the different roles of women in Iranian society in their paintings, depict them as ideal, mythical, exemplary, and as embodiments of beauty.

**Key words** - woman, painting, development, art, role, structure.



---

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| <b>ԱՆԴԻՆՄԱՅԱՆ Թամարա</b> – Կնոջ կերպավորումը Լևոն Բաշալյանի արձակում .....                                  | 3  |
| <b>ԴԱՐԱՔԻ Խոսրով Խանմորադ</b> – Մարդու օտարացման թեման Թեննեսի Ուիլյամսի «Ապակե գազանանոցը» դրամայում ..... | 18 |
| <b>ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Աիդա</b> – Լուսեղեն երկրի առասպելը. Վահան Տերյան .....                                       | 25 |

### ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| <b>ԱՍՏՏՐՅԱՆ ԷԴԻՏԱ</b> – Բացասական գնահատման դրսևորումը վերաբերմունք արտահայտող խոսքի մասերում (տեսական և կիրառական քննություն) ..... | 49 |
| <b>ԲԱԴԱԴՅԱՆ Մարիանա</b> – Անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքների ձևաբանական առանձնահատկությունները .....                      | 58 |
| <b>ԶԱՔԱՐՅԱՆ Շուշան</b> – Ժամանակակից թուրքերենի կրավորական սեռի իմաստագործատական առանձնահատկությունները .....                        | 69 |
| <b>ԽԱՐԲԵՐՏՅԱՆ Սոնա</b> – Բառային շեշտի առանձնահատկությունները հայերենում և անգլերենում .....   | 78 |
| <b>ՄԱԴՈՅԱՆ Արփինե</b> – Քննադատական ներագդեցության հաղորդակցական տարատեսակները անգլերենում .....                                     | 87 |
| <b>ՔԻԼԱՐՋՅԱՆ Ալվարո</b> – Փոխաբերությունը Վահան Թեքեյանի չափածոյում ..   | 95 |

### ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

|  |     |
|--|-----|
| <b>ԶԱՏԻԿՅԱՆ Հովհաննես</b> – Սփյուռքահայության պայքարը Հայկական հարցի լուծման ուղղությամբ .....                                 | 102 |
| <b>ԹԻՆՈՅԱՆ Դավիթ</b> – Հայ իշխանական տները և նրանց մնացորդները 15-րդ դարի վերջին քառորդին, 16-րդ դարի առաջին քառորդին .....    | 122 |
| <b>ՄՈՆԹԱԶԵՐԻ Օմիդ</b> – Մարզպանական Հայաստանը և Սասանյան Իրանը VI դարի 70-ական թվականներին .....                               | 133 |
| <b>ՊԵՏՐՈՍՅԱՆ Նելլի</b> – Հայ ազգային մատենագրության ստեղծումը .....  | 142 |
| <b>ՍԱՐԻԲԵԿՅԱՆ Էլյա</b> – Գրիգոր Տաթևացու Հոբի գրքի լուծմունքի ազդեցությունը Պետրոս Բերդումյանի նույնանուն մեկնության վրա ..... | 156 |
| <b>ՎԱՐԴԱՆՅԱՆ Ռաֆիկ, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն</b> – «Ժամանակական կանոնը» .....   | 165 |

### ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

|  |     |
|--|-----|
| <b>ՌԱՄԵԶԱՆԻ Մորթեգա</b> – Իրանի շրջափակումների դերը գլոբալացման գործընթացին միանալու հարցում ..... | 195 |
|--|-----|

### ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

|  |  |
|--|--|
| <b>ԲՈՅԿՈ Ստանիսլավ, ՖՈՄԻՉՅՈՎԱ Աննա</b> – Բիլինգվիզմի էությունը, բովան- |  |
|--|--|

|   |     |
|---|-----|
| դակությունը և գործառույթը. սոցիալ-փիլիսոփայական ասպեկտը .....   | 207 |
| <b>ՂԱԶԱՐՅԱՆ Կարեն</b> – Գեղարվեստական մտավորականության սոցիալական ակտիվության էությունը .....   | 220 |
| <b>ՅԱԶԴԻ Ալիռեզա Շարիֆի, ԶԱՍԼԱՎՍԿԱՅԱ Մարիա</b> – Իրանական հասարակության արդիականացման մոդելի առանձնահատկությունները ժամանակակից արդիականացման մոտեցումների համատեքստում ..... | 230 |
| <b>ՍԱՖԱՐՅԱՆ Արեգ</b> – Աշխատանքային վարքի սոցիոլոգիական վերլուծության որոշ հասկացությունների ճշգրտումներ .....  | 240 |

**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

|  |     |
|--|-----|
| <b>ՄԱԴԱԹՅԱՆ Արման</b> – Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրների ինտեգրումը և Մաքսային միության ձևավորումը ..... | 247 |
| <b>ՎԱՀՐԱԴՅԱՆ Էդգար</b> – Մոր կողմից նորածին երեխայի սպանության առանձնահատկությունները .....                          | 255 |

**ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

|  |     |
|--|-----|
| <b>ԱՌԱՔԵԼՅԱՆ Էմմա</b> – Հովհաննես Չեքիջյանը և Կոմիտասի խմբերգային ստեղծագործությունների մեկնաբանությունը ..... | 263 |
| <b>ԱՐՏԵՄՅԱՆ Լիլիթ</b> – Էմին Արիստակեսյանի դաշնամուրային «Սոնատ 81-83»-ի կատարողական խնդիրների շուրջ .....     | 272 |
| <b>ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Մարտուն</b> – Տիգրան Չուֆաճյանի սիմֆոնիկ ստեղծագործությունը .....                                | 280 |
| <b>ՀՈՍԵԻՆԶԱԴԵ Նաղադե Յաշար</b> – Նոր լոգիստիկ փաստարկումը Դուբայի պայմաններում կենսունակ դիզայնում .....       | 288 |
| <b>ՂԱԶԱՐՅԱՆ Սոֆյա</b> – «12 պիեսն ժողովրդական թեմաներով». մեթոդական վերլուծության փորձ .....                   | 296 |
| <b>ՍԵՓԱՍԻ Մանդանա</b> – Կնոջ կերպարը Իրանի իրապաշտ նկարիչների ստեղծագործություններում .....                    | 313 |

## СОДЕРЖАНИЕ

### ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

|   |    |
|---|----|
| <b>АНДРЕАСЯН Тамара</b> – Образ женщины в прозе Левона Башаляна .....                                   | 3  |
| <b>ДАРАБИ Хосров Ханморад</b> – Тема отчуждения в драме Теннеси Уильямса<br>“Стекланный зверинец” ..... | 18 |
| <b>МАТИРОСЯН Аида</b> – Легенда лучезарной страны: Ваан Терьян .....                                    | 25 |

### ЯЗЫКОЗНАНИЕ

|  |    |
|--|----|
| <b>АСАТРЯН Эдита</b> – Выражение отрицательной оценки в частях речи с реля-<br>ционными значениями .....             | 49 |
| <b>БАДАДЯН Мариана</b> – Морфологические признаки глагольных фразеологиз-<br>мов, выражающие качества человека ..... | 58 |
| <b>ЗАКАРЯН Шушан</b> – Семантико-функциональные особенности пассивного<br>залога в современном турецком языке .....  | 69 |
| <b>ХАРБЕРТЯН Сона</b> – Особенности словесного ударения в армянском и<br>английском языках.....                      | 78 |
| <b>МАДОЯН Арпине</b> – Коммуникативная характеристика перлокутивного воз-<br>действия критики в английском .....     | 87 |
| <b>КИЛАРДЖЯН Алвард</b> – Метафора в стихах Вагана Текеяна .....   | 95 |

### ИСТОРИОГРАФИЯ

|   |     |
|---|-----|
| <b>ЗАТИКЯН Ованес</b> – Борьба армянской диаспоры за решение армянского<br>вопроса .....                                      | 102 |
| <b>ТИНОЯН Давид</b> – Армянские княжеские дома и их остатки в последней<br>четверти 15-го – первой четверти 16-го веков ..... | 122 |
| <b>МОНТАЗЕРИ Оmid</b> – Марзпанская Армения и Сасанидский Иран в 70-х годах<br>VI века .....                                  | 133 |
| <b>ПЕТРОСЯН Нелли</b> – Создание армянской национальной литературы .....  | 142 |
| <b>САРИБЕКЯН Эля</b> – Влияние толкования книги Иова Григора Татеваци на<br>идентичную трактовку Петроса Бердумяна .....      | 156 |
| <b>ВАРДАНЯН Рафик, САРГСЯН Левон</b> – «Хронологический канон» .....  | 165 |

### ПОЛИТОЛИГИЯ

|   |     |
|---|-----|
| <b>РАМЕЗАНИ Мортеза</b> – Роль блокады Ирана в вопросе присоединения к<br>процессу глобализации ..... | 195 |
|---|-----|

### ФИЛОСОФИЯ И СОЦИОЛОГИЯ

|   |     |
|---|-----|
| <b>БОЙКО Станислав, ФОМИЧЕВА Анна</b> – Сущность, содержание и функции<br>билингвизма: социально-философский аспект ..... | 207 |
| <b>КАЗАРЯН Карен</b> – Сущность социальной активности художественной интел-   |     |

|   |     |
|---|-----|
| лигенции .....  | 220 |
| <b>ЯЗДИ Алиреза Шарафи, ЗАСЛАВСКАЯ Мария</b> – Специфика модернизации модели иранского общества в контексте современных подходов модернизации ..... | 230 |
| <b>САФАРЯН Арег</b> – Некоторые понятийные уточнения в социологическом анализе трудового поведения .....  | 240 |

#### ЮРИСПРУДЕНЦИЯ

|  |     |
|--|-----|
| <b>МАДАТЯН Арман</b> – Интеграция государств-членов ЕврАзЭС и формирование Таможенного союза ..... | 247 |
| <b>ВАГРАДЯН Эдгар</b> – Особенности убийства матерью новорожденного ребенка .....                  | 255 |

#### ИСКУССТВОЗНАНИЕ И АРХИТЕКТУРА

|   |     |
|---|-----|
| <b>АРАКЕЛЯН Эмма</b> – Оганес Чекиджян и интерпретация хоровых произведений Комитаса .....                        | 263 |
| <b>АРТЕМЯН Лилит</b> – Об исполнительских проблемах фортепианной «Сонаты 81-83» Эмина Аристакесяна .....          | 272 |
| <b>КОСТАНДЯН Мартун</b> – Симфоническое творчество Тиграна Чухаджяна .....  | 280 |
| <b>ХУСЕЙНЗАДЕ НАГАДЕ Яшар</b> – Новая логистическая аргументация в жизне-способном дизайне в условиях Дубая ..... | 288 |
| <b>КАЗАРЯН Софья</b> – “12 пьес на народные темы” Комитаса: опыт методического анализа .....                      | 296 |
| <b>СЕПАСИ Мандана</b> – Роль женщины в произведениях художников-реалистов Ирана .....                             | 313 |

ԿԱՆԹԵՂ  
Գիտական հոդվածներ  
КАНТЕХ  
Научные труды  
KANTEGH  
Articles

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան  
Անգլերեն տեքստերի խմբագիր՝ Սիրարփի Կույումջյան  
Շապիկի ձևավորումը՝ Վարդան Գաբրիելյանի  
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4,  
հեռ. 58-18-51, հեռապատճեն՝ 58-11-09

Адрес редакции: Ереван 0019, пр. Маршала Баграмяна 24/4,  
тел. 58-18-51, факс 58-11-09

Address: 24/4 Marshal Baghramian av., Yerevan 0019, Armenia,  
tel. 58-18-51, fax 58-11-09

Էլ. փոստ՝ instart@sci.am  
Эл. почта: instart@sci.am  
E-mail: instart@sci.am

Պաշտոնական կայքէջը՝ <http://Kantegh.am>  
Официальный сайт: <http://Kantegh.am>  
<http://Kantegh.am>



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում  
Ֆորմատ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 130:  
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)  
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)  
Հեռ. (374 1) 54.49.82, 53 65 88, 62.38.63 (տպարան)  
Էլ. փոստ՝ info@asoghik.am





